


Թատրոն և թատերախոսություն



Թատրոն և
թատերախոսություն

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թատրոն
թատերախոսություն

ՀԵՂԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թատրոն և թատերախոսություն



ԱՐԳԻՄ ԽԱՉԻՆՅԱՆ

Ո՞Վ Է ՓԱԿԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ

Թատրոնի փակելը լավ նշան չէ: Եվ, այնուամենայնիվ, իրողություն է:

Համարել այդ վարչակազմակերպական պարզ միջոցառում, կապել մեկ թատրոնի ու մեկ անձի հետ, կամ թատրոնի ճգնաժամը միայն թատրոնով բացատրել նշանակում է տեսնել իրողության սոսկ մակերեսը:

Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը բացակա է, վարագույրն իր տեղում չի բացել, թատերաշրջանը չի սկսվել: Սա աննախադեպ փաստ է թատրոնի յոթանասուներեք տարվա պաշտոնական պատմության մեջ, և մշակույթի նախարարությունը վավերացրել է այդ վարչական իրավունքով: Տեղի է ունեցել օրինական լուծարք (դա կարող էր լինել նաև թատրոնի ներկայության պայմաններում), որին հաջորդելու է վերակազմումը ձևականորեն այլ անուն կրող մի նոր հաստատության:

— Ես դրան համաձայն չեմ, — ասում է դերասան Յուրի Ամիրյանը:

— Ես էլ համաձայն չեմ, — ասում եմ, — բայց թատրոնը վաղուց գոյություն չունի:

— Որոշումը նույնիսկ ուշացած է, — ասում է դրականագետ բարեկամ՝ Հենրիկ Բախչինյանը, որ ժամանակին թատրոնի դրական մասն է վարել:

Այո՛, այնքան է ուշացած, որ արձագանք չի տալիս: Իսկ գարեջատնային մակարդակի զրույցները թատրոնի խնդիրը չեն շոշափում, այլ Խորեն Աբրահամյանի անձը, որ աստանդական է դարձել անորոշ ժամանակով: Այս ամենն այնքան անլուրջ է, որքան թատրոնի գոյությունն է անլուրջ արդեն քանի տարի:

Թատրոնի քայլայումը մեկ անձի հետ կապելը հեշտ է ու պարզ, մանավանդ եթե այդ անձն ամեն ինչ անում է այդ «պատիվն» արդարացնելու համար:

— Նա ֆիզիկապես է սպանել թատրոնը, — ասաց նկարիչ Եվգենի Սաֆրոնովը, — բարոյապես մեռածին սպանել է ֆիզիկապես:

Սա ամենադիպուկ խոսքն էր, վիճակի թերևս ամենածիտ գնահատականը:

Հասկանալի է, բայց արդյո՞ք բարոյական մահը վերաբերում է մեկ խմբի: Մեկ խումբը կարող է ստեղծագործական հոգնածություն ապրել ու սպառել իրեն: Ամենակենսունակ խմբերն էլ (այդպիսին է եղել Սունդուկյանի անվան թատրոնը) թարմությունը պահում են այնքան, որքան դերասանական մեկ սերնդի լիարժեք ստեղծագործական կյանքն է՝ երեք տասնամյակ:

Բարոյական մահն այլ բան է:

Նախարարության հրավիրած ժողովում (1995 թ., նոյեմբերի 24), երբ փակման որոշումն արդեն մտածված էր ու հայտարարվեց, այնպիսի հանգստություն էր ոմանց դեմքին, կարծես աղետը շատ հեռու է իրենց դռներից: Յուրաքանչյուր թատրոնի ղեկավարի համար գոյություն ունի իր թատրոնը, ինձ համար՝ հայ թատրոնի գաղափարը, որ կարեոր չէ, թե ինչ հարկի տակ է իրականանում: Այդ գաղափարն է վտանգված, և գլխավոր թատրոնի փակումն այդ է ասում: Պատճառները մեկ թատրոնում չեն և միայն թատրոնում չեն:

— Մտավորականությունը թատրոն չի գալիս, — ասաց

Սոս Սարգսյանը հունվարի 28-ի իր հեռուստազբույցում, և խոսքը միայն Սունդուկյանի անվան թատրոնի մասին չէր:

Իսկ ո՞վ է թատրոն եկողը: Պարզվա՞ծ է այսօրվա փոքրաթիվ հանդիսատեսի ընկերային-դասային կազմը: Այդ ի՞նչ «վերնախավ» է:

Երեսուն տարուց ավել է, որ գրագետ մարդկանց մի մեծ խավ հեռու է թատրոնից.

— Գնամ, ո՞ւմ տեսնեմ...

Այս խոսքն են ասում ավագ սերնդի մարդիկ, մտավորական, թե ոչ մտավորական: Նրանցից շատերը թատրոնում եղել են հրդեհից առաջ, երբ հին շենքի դռներին գեռ երեւում էր «այսօրվա տոմսերն սպառված են» հայտարարությունը, երբ տոմսարկղի մոտ հարցնում էին՝ «ո՞վ է խալում», և լինում էին տոմսը վերադարձնողներ, երբ պարզվում էր, որ գլխավոր դերակատարը փոխված է: Եվ գլխավորը մեկը չէր:

Եղել է այդպիսի ժամանակ: Ոչ ոք թող չփորձի ժմտել՝ հանուն այսօրվա թատրոնի չունեցած հեղինակության:

Մեր ազգային թատրոնի հոգեվարքը վաղուց է սկսվել՝ այն օրվանից, երբ սկսեցին կոլեկտիվ հայտեր պարտադրել, թատրոն բերել թատրոնի կարիք չունեցողների և շրջակա գյուղերի բնակիչներին՝ հատուկ, կազմակերպված ձևով: Վերջ: Քաղաքային կենցաղի խորհրդանիշը զրկվեց իր խորհրդից: Քաղաքայիշական զգացմունքների մարումով թատրոնը կորցրեց իր հասարակական հողը, կամ մեզանում չկար այլևս քաղաքացիական կյանք, չկային հասարակական ձգտումներ: Չկային, բայց պահպան էին որոշ ձեւական նշաններ, մեկն էլ՝ թատրոնը, որպես ուշացած քաղքենիության կենցաղի զարդ: Թվում էր, թե այդ հաստատության փակման անորոշ լուրը որոշ վերաբերմունք է առաջացնելու, բայց ոչինչ էլ չեղավ: Թատրոնը գոյություն

չուներ հասարակայնության համար, և հասարակությունն էլ՝ թատրոնի:

Այս է, որ կա թատրոնի բարոյական մահը:

Ասված է և անվիճելի է, որ «Թատրոնն իրականանում է ոչ թե բեմում, այլ հանդիսականի սրտում» (Մ. Վոլոշին): Բայց ո՞ւր է հանդիսականը, ո՞վ է, ի՞նչ սիրտ ունի, զգացմունքների ի՞նչ որակ, և ի՞նչ է փնտրում: Թատրոնը չի կարող հույսը դնել մտավորականության կամ ինչ-որ, այսպես կոչված «էլիտայի» վրա: Թատրոնը վերնախավային արվեստ չէ, և չկա էլ այդպիսի արվեստ: Վերնախավը կեղծ հասկացություն է քաղաքակիրթ հասարակության մեջ: Իսկ թատրոնը հասարակական համերաշխության վայր է: Դահլիճի ավանդական նվիրակարգային տիպը նախատեսում է հասարակության բոլոր խավերին: Եթե հասարակության բոլոր խավերն այնտեղ չեն, նշանակում է թատրոնը մասնակից չէ ժողովրդի կյանքին, չի մտել նրա երակը: Ի՞նչ արժե այլևս թատրոնի ֆիզիկական գոյությունը, ի՞նչ արժեն հատուկ բեմադրված խոնարհման («պոկլոն») տեսարանները, կեղծ ծափահարությունները, ծաղիկները, համբույրները և այլն...

Ինչքա՞ն կարելի է խնամել այս կեղծիքը, փայփայել մեռած մի գաղափար:

Ինձ համար վաղուց արդեն ծանր պարտականություն է թատրոն մտնելը, առավել ևս՝ գրիչ շարժելը...

Թատրոնը տարբերվում է բոլոր արվեստներից իր հասարակական վիճակով: Սա ոչ ներփակ է, ոչ էլ ազատ, շարժվում է իրականությանը համընթաց, որպես նրա բարումները: Նրա բարոյա-հասարակական դերը հաճախ գերազանցում է գեղարվեստականին, և այդ արտագեղարվեստականն է թատրոնի խարիսխը: Թատրոնը խախտվում է, եթե խախտվում է նրա բարոյա-հասարակական հողը: Հայ իրականության մեջ եղել է այդ խարիսխը. բեմն ընդունվել է որպես հայրենիքի

խորհրդանից, կենդանի առասպել և հավաստում ազգային-քաղաքացիական իդեալների, մարմնավորել հավատի ու սպասման գաղափարները՝ մի «Արշակով» կամ «Վարդանով», «Համլետով» կամ «Դոկտոր Շտոկմանով»։ Եվ այդ նույն գաղափարների պարտությամբ կամ արժեքրկումով էլ արժեքրկվել է բեմը։ Քաղաքական մետամորֆոզներն այստեղ կարեոր չեն, կարեորը հասարակության զգացմունքների որակն է։

Եվ այսպես, մայրամուտի շեփորը հնչել է 1961 թվին, «Իմ սիրտը լեռներում է» բեմադրությամբ, որ ունեցավ մեկ հայտնություն՝ Վարդուհի Վարդերեսյանի Ձոնին։ Այստեղ երեաց Հրաչյա Ներսիսյանի ստեղծագործական հոգնածությունը, ապա՝ Վահրամ Փափազյանի Փիզիկական սպառումը։

Այս ներկայացմանը հաջորդեց ճակատագրական հրդեհը։

Սունդուկյանի անվան թատրոնի պատմությունն այստեղ ավարտվում է։ Նրա վերջին վկան՝ Գուրգեն Ջանիբեկյանը վախճանվել է տասնութ տարի առաջ։

Թատրոնի հետագա ընթացքն այլ է։

Այն, ինչ եղել է վերջին երեք տասնամյակի ընթացքում, լուսավորված է անցյալի աղոտ ցոլքով։ Դերասանական նոր սերունդը, որ այսօր ավագ է, բերեց եռանդ ու թարմություն, բայց ոչ գեղարվեստական նոր գաղափար։ Եթե եղավ մի դերասան, որին տեսնելու համար մարդիկ թատրոն էին գնում, Մհեր Մկրտչյանն էր։ Այս մասին գրել եմ քսանմեկ տարի առաջ։ Եվ մեկն էլ եղավ՝ Խորեն Աբրահամյանը, որ ինքնաստեղծվեց իր անձով, որպես անձնականացման արվեստի կրող, վարպետացավ որպես հոգեբան դերասան, բայց հոգեսոր բովանդակությունից զուրկ և չդարձավ այն դեմքը, որին տեսնելու համար մարդիկ թատրոն գային։ Հանդիսականի միջին խավը համակրեց Սոս Սարգսյանին, նրա դիմագծերում փնտրելով ազգային առաքյալի իր պատկերացումը։

1961 թվականից այս կողմ ստեղծվել են ինչ-ինչ արժեքներ, եղել են գերասանական հայտնության պահեր (Էդգար Էլբակյանի Գիքոն «Պեպոյում», 1966-ին, Սոս Սարգսյանի Սացակը «Հացավանում», 1981-ին), բայց գեղարվեստա-ոճական նոր որակ չի ստեղծվել, նոր թատրոնի գաղափար չի ծնվել։ Ընդհակառակը՝ գլուխ է բարձրացրել թատրոնի քաղքենիացումն ու գոեհկացումը և, որպես հակազդում, գավառական մոդեռնիզմը։ Բարոյական չեղոքությունը հասցըց բարոյական կուրության, և սոցիալական դեմագոգիան ծախվեց որպես համարձակ խոսք («Անավարտ մենախոսություն», բեմադրությունը Խ. Աբրահամյանի), թարսվեցին «Խաթաբալան» ու «Մեծապատիվ մուրացկանները» (բեմադրությունը Հ. Ղափլանյանի), կանխվեց քննադատությունը, հետ վերադարձեցին հոգվածներ...։

Դե, հիմա «Փրկեք մեր հոգիները»։

Այս բեմադրությունը եղավ ճիշտ ժամանակին (1990 թ., Ն. Ծատուրյան)։ Դա փլող իրականության ամենազգայուն արձագանքն էր, նատուրալիստական փոխակերպումը սպասվող փակուղու, առարկայական և իրային ճշմարտությամբ, հոգեբնախոսական ու վերանցումային (տրանսցենդենտ)։ Թվում էր, ահա, թատրոնը բռնեց կյանքի երակը, բայց ոչ...։

Զհանդուրժվեց։

— Ես թույլ եմ տվել, — ասաց ղեկավարը հպարտ ու վիրավոր։

— Թույլ ես տվել, որ բեմադրիչը բեմադրի՝, — հարց-րեցի։

— Հա՛։

Փակեց ավտոմեքենայի դռւոր Խորեն Աբրահամյանն ու հեռացավ։

Այն, ինչ ծագելու էր իր գլխում, ծագել էր ուրիշ տեղ։ Զէր կարելի։

Թատրոնը քանդված էր, և խորհրդակերպվեց այդ

պատկերը առաստաղից կաթող ջրի ձայնով, կոյուղու խողովակներով, խավարով, և ու մութ զգեստներով, և հանդիսաբան ներխուժող քամին թուղթ ու փոշի փչեց մեր աչքերին («Դոկտոր Ստոկման», բեմադր. Խ. Աբրահամյանի, 1991թ.): Չտեսանք ղեկավարի ուսին թառած «ոսկե թռչունը», որ եկել էր հյուպիսային մեծ թերակղզուց:

— Ես պետք է այնպես անեմ, որ հայ թատրոնի անունը սավառնի ամբողջ աշխարհում,— ասաց նա Հայաստանի թատերական գործիչների միության նախորդ Համագումարում:

Թատրոնի փետուրները ցրիվ են եկել: Հեռացածները կազմել են երկու առանձին խումբ, և նրանցից մեկն ընդունել է ավանդապահության դրոշը:

— Պահպանողականությունը թատրոնի ուժն է,— ասում է Սոս Սարգսյանը:

Այո՛, ակադեմիական թատրոնի նպատակը նաև թանգարան լինելն է: Ես ոչ գավառական մողեռնիզմի կողմնակիցն եմ, ոչ էլ տեղական ավանդարդիզմի, գիտեմ, որ թատրոնն ավանդական արվեստ է ու չպետք է կորցնի իր պատմական առանցքը: Բայց նա իրականության կենդանի գուգահեռն է, հասարակական առաջադիմության ծանրաչափը և անսխալ ցույց է տալիս եղանակը: Մտեք որևէ երկրի մայրաքաղաք, ոչինչ մի տեսեք, թատրոնը տեսեք, ամեն ինչ կիմանաք:

Եթե ժողովուրդն ունի հասարակական ինքնակազմակերպման սեփական փորձ, իր բարոյա-հասարակական իդեալները, կունենա նաև քաղաքացիական կյանք, կունենա թատրոն: Քաղաքակիրթ հասարակության մեջ թատրոնը ծնվում է ինքնին: Թատրոնը չեն փաթաթում հասարակության վղին: Քաղաքակիրթ հասարակության մեջ է արժեքավորվում անհատը, դրսերվում արտիստը: Եթե հասարակությունը քաղաքակիրթ է, կրթված մարդը չի թաքնվի, չի կորչի, և արտիստն էլ չի կորչի,

դուրս կդա հրապարակ, միջավայրը կտեսնի ու կբարձրացնի նրան:

Թատրոնը չէ, որ կյանք է ստեղծելու մեր աշխարհում: Կյանքն է թատրոն ստեղծելու: Թատրոնն արմատ չէ, ծաղիկ է և ծաղկում է, եթե հող ունի և արմատ: Եթե նա թոշնում է, թերթերն ու ցողունը խնամելով չես փրկի: արմատը ջրիր կամ տնկիր նոր ծաղիկ, ցանիր նոր սերմ: Չի՝ աճում, հողն է արատավորվել…

Թատրոնի խնդիրը թատրոնի խնդիր չէ:

Թատրոնը կբացվի, բայց ո՞ւմ համար, ի՞նչ հասարակական անհրաժեշտությամբ, բարոյա-գաղաքարական ի՞նչ ձգտումներով, ի՞նչ հոգեսոր բեռով, գեղարվեստական ի՞նչ իդեալով:

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՄԻ ԽՐԱՏԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ

Անսպասելի չէ, գարմանալի չէ պարոն Լևոն Հախվերդյանի բանավիճային ելույթն ապրիլի 4-ի «Ազգ»-ում, ի մերժումն իմ հարցադրման՝ «Ո՞վ է փակել ազգային թատրոնը»:

Ծանոթ են բառերը, չափանիշները, փաստարկները, նույնիսկ հրամայական ու սաստողական վերնագիրը՝ «Զի կարելի: Ոչ մի դեպքում չի կարելի»:

Նորն ու զարմանալին հեղինակի տակտիկան է: Իմ հոդվածը տպագրվել է փետրվարի 14-ի «Ազգ»-ում: Պարոն Հախվերդյանը դանդաղ կարդացող չէ, դանդաղ դրող չէ, ոչ էլ ժամանակ ունի երկար մտածելու: Բայց այս անդամ երկար է մտածել՝ քառասունինն օր, «մինչև դարձնան կլի ձեն ածելը»: Նա հետաձեկ է իր թախիծը, և ընթերցողի համար դժվարացնել է պարզել՝ ինչ է ասված Հենրիկ Հովհաննիսյանի փետրվարի 14-ի հոդվածում, և ինչն է վիճարկում Լևոն Հախվերդյանը ապրիլի 4-ին:

Պատասխանիս նպատակն է պարզել՝ ի՞նչ դիրքից է պարոն Հախվերդյանը «բարձր գնահատում» Հենրիկ Հովհաննիսյանի թատերագիտական աշխատությունները հայ հին, միջնադարյան և XIX դարի թատրոնի վերաբերյալ և ի՞նչ դիրքից է կայացնում իր հարցական վճիռը նրա «գեղագիտական կուրության», «ժամանա-

կակից թատրոնի թյուր ըմբռնման, թե մի ուրիշ բանի» մասին, որ, ինչպես խոստովանում է, չգիտե՞ ինչ է:

Պարոն Հախվերդյանի թատերագիտությունը (ըստ գրքերի) սահմանավորված է 1901–65 թթ. հայ թատրոնով և այդ ժամանակահատվածի իր մեկնաբանությամբ, ոչ ավելին: Ինչ վերաբերում է վերջին երեսուն տարիների աղքատությանը, որ, ըստ Հախվերդյանի, «պետք է դասել այդ թատրոնի ամենալավ էջերի շարքը», մեր տեսած մոտավոր անցյալն է, դեռևս ընթացիկ խոսք ու զրոյցի նյութ: Սա, ինչպես պարզվում է, պարոն Հախվերդյանի անդաստանն է, և ոչ ոք իրավունք չունի տեսնելու՝ ինչ են ցանել այնտեղ, որ չի ծլում:

«Ի՞նչ իրավունքով, – բացականչում է տերը, – ի՞նչ խղճով, ի՞նչ կովանների հիման վրա է թատերագետն այդպես անգիտորեն աղքատացնում ազգային թատերական մշակույթի պատմությունը»:

Չեմ ըմբռնում այս աղիողորմ ոճը:

Ոչ ոք չի կարող «անգիտորեն աղքատացնել» պատմությունը, քանզի պատմությունն ինքն անգութ է:

Ասածս կարելի է ստուգել պարզ ընկերաբանական հարցումով: Ներկայիս ավագ սերնդի հիշողությունից չի ջնջվել Սունդուկյանի անվան թատրոնի 40–50-ական թվականների գերասանական սերնդի դեմքը, և նույն մարդիկ ամենեին ոգեսորված չեն խոսում 60-ական թվականներից այս կողմ եղածի մասին:

Թատրոնը ժառանգություն կամ ունեցվածք չէ, այլ ամեն պահ անցյալի վերածվող մի ընթացք, որ անհնար է աղքատացնել կամ հարստացնել: Հասարակական օրգանիզմում դա այն երակն է, որ ժամանակից շուտ է ցամաքում և ցույց է տալիս սպասվելիք վլուզումներն ու ճնաժամերը: Եթե թատրոնի դերը նվազում է հասարակության ու անհատի կյանքում, ուրեմն հասարակության ապագան կասկածելի է: Թատրոնով է որոշվում «դարի բարոյական ջերմաստիճանը» (Գր. Արծրունի), և

եթե քաղաքագետները կարողանային ըմբռնել այդ...

Այո, թատրոնի ճգնաժամը մեզանում վաղուց է սկսվել, հասկանալի է ինչու և ինչպես: Այս է փետրվարի 14-ի «Ազգ»-ում տպագրված իմ հոդվածի ելակետային դրույթը:

Ինչ վերաբերում է Խորեն Աբրահամյանի վերջին տարիների վարքագծին, որ ավելի կարևոր է թվում իր ինտրիկային-«դետեկտիվ» կողմով, ապա դա սոսկ միջադեպ է այս պատմության մեջ, նարդի խաղացողների զրույցի թեմա: Խորենը չէր կարող մի ազգային թատրոն ջախջախել, եթե այդ թատրոնը նախապես մեռած չլիներ: Պարոն Հախվերդյանը սարսափում է, իմանալով, որ, իր խոսքերով ասած, «մեղքը գործված էր ավելի քան երեք տասնամյակ առաջ»: Նրան ավելի է հետաքրքրում Խորեն Աբրահամյանի մեղքը, ինձ ուրիշ բան՝ թատրոնի բարոյա-հասարակական հողի խարիսլումը: Ես թողնում եմ թատրոնի փակման ակնհայտ պատճառները, թողնում եմ թատրոնական օրգանիզմի դանդաղ մահացման սուբյեկտիվ գործոնները (դա առանձին խոսսակցության նյութ է) և առայժմ խոսում եմ հողի ու արմատի մասին: Ծաղկելը թոշնում է, թերթերը խնամելով չի փրկվի, հողն է արատավորվել, ասում եմ, և նոր չէ արատավորվել: Պարոն Հախվերդյանի համար այդ հարցը գոյություն չունի: Ասում է «մեր իրականության անբնական պայմանները» և որոշում՝ «կարգին մարդկանց տնօրինության պայմաններում թատրոնի պատմությունն այլ ընթացք կունենար»:

Դժվար է վիճել մի մարդու հետ, որն արհմարհում է միտքդ և իր սեփական չափերին է հարմարեցնում ամեն ինչ:

Ընթերցողին հասկանալի լինելու համար չեմ կարող ավելորդ անգամ վերարտադրել գրվածը, կոպեկանոցների վերածել հարցը: Բայց հետևելով հիմնական դրույթի տրամաբանությանը, ստիպված եմ ասել, որ թատրոնը

կարող էր մեռնել նաև իրականության բնական պայմաններում, «կարգին մարդկանց տնօրինության պայմաններում»: Այդպես էլ եղել է: Միանդամայն կարգին մարդ է եղել Վարդան Աճեմյանը և, ոչ մի կասկած, տաղանդավորագույն, բայց նրա օրոք թատրոնն արդեն բռնել էր վայրէջքի ճանապարհը: Հասարակական հողն սպառում էր իրեն արդեն 50-ական թվականների կեսին, և մյուս կողմից ծերանում էր թատրոնը գերասանական տարիքով, գեղարվեստական ու ոճական նկարագրով: Բնական է, ուղղության ու ոճի կրողը լինում է մեկ սերունդ, և թատրոնի կյանքն էլ ավարտվում է մեկ սերնդի աստիճանական հեռացումով: Շարունակությունը լինում է թատրոն, նախկին շենքում և նախկին անունով, բայց նոր թատրոն: «Սերնդափոխություն» ասվածը կեղծ հասկացություն է: Նոր սերունդը, հայտնի բան է, եթե գառնում է ոճի և ուղղության ավանդապահը, մեռցնում է թատրոնը: Իսկ եթե վարպետություն է սովորում (դա այլ բան է) և գալիս իր ոճով ու գեղագիտությամբ, ծնունդ է տալիս նոր թատրոնի:

Պարոն Հախվերդյանը վշտանում է, իմանալով, որ յուրաքանչյուր թատրոնական կազմակերպություն գոյատեսում է երեք տասնամյակ (գեղարվեստա-ոճական առումով, ոչ թե կազմակերպական): Նա օրինակ է բերում «Կոմեդի Ֆրանսեզի» երեք հարյուր տասնվեց տարին, մոռանալով, որ թատրոնն անցյալում անհամեմատ պահպանողական հիմնարկ է եղել: «Կոմեդի Ֆրանսեզն» իր պատմական դերն ավարտել է ոռմանտիզմի դարաշրջանում, և այսօր հպարտ է ոչ որպես կենդանի թատրոն, այլ հարյուր հիսուն տարվա թանգարան: Մոսկվայի Փոքր թատրոնի օրինակն էլ տեղին չէ: Այս թատրոնն էլ ավարտել է իր պատմական դերը XIX դարի 90-ական թվականներին, երբ ազգային-ավանդական կենցաղագիտությունը տեղի էր տալիս գեղարվեստական թատրոնի հոգեբանական նատուրալիզմի առաջ: Վերջապես,

Գեղարվեստական թատրոնն էլ ավարտեց իր պատմական դերը ՀՀ դարի 30-ական թվականներին:

Թատրոնի պատմությունը, ըստ պարոն Հախվերդյանի, պիեսների, բեմադրիչների, ներկայացումների ու դերակատարների շարք է: Բայց դա պատմության փաստագրությունն է միայն: Պատմությունը գեղարվեստական համակարգերի, ուղղությունների և ոճերի շրջափոխությունն է և հարաբերությունը կյանքի վայրիվերումների, ժամանակի բարոյա-հասարակական ձգտումների հետ:

Այսպես մտածենք ու տեսնենք, թե փոխվե՞լ է արդյոք Սունդուկյանի անվան թատրոնի գեղարվեստա-ոճական ուղղությունը 50-ական թվականների կեսին, Վարդան Աճեմյանի «Նամուս»-ով, որ այնքան թմբկահարել են պարոն Հախվերդյանն ու իր միջավայրի քննադատները: Ավանդապաշտ վարպետն այդտեղ ընդամենը շահարկել էր երիտասարդ դերասանների ակներև հնարավորությունները: Իսկ ո՞րն էր այդ երիտասարդների (այսօրվա ավագների) գեղարվեստական նոր աշխարհայացքը: Թող այս հարցին պատասխանի պարոն Հախվերդյանը, և իմանանք՝ «Նամուս»-ը ինչ փոխեց, ինչ ուղղություն բերեց: Կամ դրանից առաջ վերականգնված «Ժայռը», որ նույնպես գլուխգործոց է համարվում, ինչո՞վ էր բարձր ավանդական, կենցաղագիտական, միավան, անհետաքրքիր ակադեմիզմից: Եվ «Ժայռը», և «Լիր արքան», և «Քառուր» եղել են անկենդան թատրոնի դրսերումներ, բնական է՝ տանելի գծերով, տանելի դերակատարումներով:

Վշտանալու ոչինչ չկա, եթե Սունդուկյանի անվան թատրոնի մայրամուտի շեփորը հնչել է 1961-ին, «Իմ սիրաը լեռներում է» բեմադրությամբ, որ շատ տարբեր էր Աճեմյանի բոլոր նախորդ բեմադրություններից: Դա գեղեցիկ մայրամուտ էր: Պարոն Հախվերդյանը գուցե և ներքուստ համաձայն է ինձ հետ, բայց ինքնախաբեռության սովորույթը, իր՝ քննադատի անցած ճանապարհը

պաշտպանելու մղումը թույլ չեն տալիս խոստովանել: Կամ գուցե ի՞նքն էր ասելու այդ խոսքը: Համեմայն դեպք նա խուսափում է արմատական հարցադրումից: Մոռացել է 1974-ի իր հրապարակային գեկուցումը դերասանական արվեստի մասնագիտական աղքատացման մասին: Դա հավաստումը չէ՞ր արդյոք նախորդ տարիներին սկսված վայրընթաց շարժման: Եվ ի՞նչ, այդ գեկուցումից հետո թատրոնը ծաղկե՞ց, թե շարունակվեց նրա աստիճանաբար արագացող փլուզումը, որ հասցնելու էր այսօրվան:

Ոչ մի կասկած, որ 1961-ից հետո ստեղծվել են ինչ-ինչ արժեքներ՝ բեմադրական և դերասանական, բայց ամեն ինչ եղել է մայրամուտի ֆոնի վրա և նվազելով նվազել:

Ոչինչ միանգամից, մեկ մարդու ձեռքով ու մի հարվածով չի ավերվում: Ավերմունքը վաղուց է սկսված, և այսօր է ասվում՝ թատրոն չկա, որովհետեւ դա պաշտոնապես վավերացված է: Նախկինում էլ ասվել է այդ խոսքը, բայց չի տպագրվել: Արմատական խոսակցություն մամուլում և հրապարակավ չէր կարող լինել: Ասել, թե մեռնում է թատրոնը, նույնն էր, թե մահավճիռ կարդալ խորհրդային-սոցիալիստական հասարակությանը: Վերնաշենքային մի երկույթի անկումը տեսնողը բնականորեն կասկածի էր մղելու, թե որքանով բանական ու կենսունակ են նրա սոցիալ-տնտեսական և բարոյահասարակական հիմքերը, կամ որքանով ճիշտ են հասարակությունը կազմակերպող քաղաքական կառույցները: Այս ամենը պարզ է, ինչպես նաև պարզ է՝ որտեղից է գալիս պարոն Հախվերդյանի «չի կարելի»-ն: Ժամանակին նրան ոգևորել է «սովետական արվեստի հետ ոչ մի կապ չունեցող էսթետների ու ֆորմալիստների ջախջախումը»: Ինչ «ջախջախման» է մասնակցել, պարզ է: Հիմա այդպես չի կարող խոսել, բայց և չի ազատվել նախկին իներցիայից ու տոնից: Համոզված եմ, որ քննադատության կանխումը մոտավոր անցյալում սոսկ

անձնական պայքար չի եղել, և պարոն Հախվերդյանն էլ այսօր անձնական պայքար չի մղում: Նա պաշտպանում է իր և իրեն շրջապատողների, իր մտայնությունը (մենթալիտետ) կրողների անցած ճանապարհը, շարունակում է իր միջավայրի ու սոցիումի բնազդական մղումը՝ տեր կանգնել միջակ արժեքներին: Բայց հանուն ինչի՞ց: Հանուն ինչի՞ց է նա մեր առջև դնում այս ցուցակը. Գ. Բորյան, Գ. Տեր-Գրիգորյան, Ն. Զարյան, Ա. Արաքսմանյան, Ա. Պապյան, Ժ. Հարությունյան, Սաղ. Հարությունյան, Զ. Դարյան, Վ. Դավթյան, Պ. Զեյթունյան:

Եվ հարց է տալիս՝ «որտե՞ղ դնենք դրամատուրգիական այս հարստությունը»:

Իզուր է մտահոգվում: Եթե հարստություն է, կգտնի իր տեղը: Բայց թող թույլ տրվի ուրիշներին սեփական կարծիք ունենալ «այս հարստության» մասին և հարց տալ, թե ո՞րն է, այնուամենայնիվ, ժամանակակից թատրոնի ճշմարիտ ըմբռնումը: Գուշե դա որոնենք իր վաղ շրջանի «քննադատական գրություններում» (իր բառերն են), ուր առանց իմանալու, թե ինչ է անում, անարգում էր «արտասահմանյան անկումային կուլտուրան ու նրա մի մասը կազմող մեռնող ու այլասերվող թատրոնը» և հատկապես «Սարտրի ու Անույի, Ռւայլդի ու Սարոյանի դրամատուրգիան» (տե՛ս «Սովետական գրականություն և արվեստ», 1949, № 8, էջ 137): Ժամանակին ո՞ւմ թելադրանքով և ի՞նչ նպատակով էր այսպես խոսում և հիմա ի՞նչ է մտածում: Համենայն դեպս, շատ էլ առաջ չի գնացել: Իր «Թատերական տերմինների բառարանում» նման բառերով է որակում XX դարի թատրոնի մի ուղղություն՝ աբսուրդի թատրոնը:

Բայց ո՞րն է ժամանակակից թատրոնի իր ըմբռնումը:

Իսկ այն «մի ուրիշ բանը...»: Մի բան իսկապես չի կարելի: Դա պայքարն է հանուն քաղքենիական չափավորության և միջակության: Զիա ավելի վնասակար բան արվեստում և արվեստագիտության մեջ:

ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴԸ. ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՑԱՆ

Երևանի ամենակուլտուրական թաղամասում, ուր մեծացել եմ, համալսարանի, պոլիտեխնիկական ինստիտուտի, հանրային գրադարանի, կոնսերվատորիայի կողքին, ինձ քաշում էր թատերական ինստիտուտի եռահարկ, ծիրանագույն շենքն իր խաղաղ փակուղում, չին երևանից մնացած բանջարանոցների հարևանությամբ։ Կողքից նայում էի այդ շենքին, որի պատերի ներսում տեղի էր ունենում «խորհուրդ մեծ և սքանչելի»։ Մտածում էի, որ այդտեղ ամեն ինչ գեղեցիկ է, մաքուր ու կատարյալ՝ մարդիկ, իրերը, հարաբերությունները, որ այդտեղ ուսուցանվում է ամենախորհրդավոր գիտությունն աշխարհիս երեսին, և ամեն ձեռվ պատրաստում էի ինձ դրա համար։ Կարգում էի թատրոնին վերաբերող ամեն ինչ և մի օր էլ գեմ առա Ստանիսլավսկուն։ Իմացա, որ գերասանի աշխատանքն ամենաբարդ բանն է, ամենապատասխանատու վիճակը մարդուս համար։ Ներկայացնել ճշմարիտ հոգեկան կյանք հանրության հայացքի առջև։ Հնարապո՞ր է արդյոք։ Հեղինակի այն միտքը, որ հազարներն են մտնում բեմ, և շատ քչերն են մոտենում արվեստի, ինձ հետ պահեց։ Ակսեցի ճշմարտության չափանիշով դիմել բոլոր ներկայացումները, և շատ քիչ բան էր դիմանում քննության։ Ի վերջո գլխիցս հանեցի

այդ ու որոշեցի լինել թեկուզ ամենահետին արհեստավորը բեմում: Արվեստի աշխատողների տան քննարկումները, որոնց միշտ ներկա էի, նոր միտք տվեցին, ու կանգ առա Վարդան Աճեմյանի այն խոսքի վրա, որ ինձ ասել էր աշակերտական մի քննարկումից հետո. «դու թատերագետ ես, գնա համալսարան»: Բայց համալսարանն ինձ չէր հետաքրքրում: Իրավիճակն ինձ համար ավելի պարզվեց, երբ հանդիպեցի ինձ հետ թատերական ինստիտուտի քննության պատրաստվող Արմեն Զիգարիանյանին: Երկու խոսքից իրար լավ հասկացանք: Երկար զրուցում էինք, ուշադիր լսում միմյանց ու համաձայնում: Հրաշալի էին մեր զրույցները, մեր ձգտումները վեհից վեհ, ինստիտուտի ծառազարդ, փոքրիկ բակը՝ մեր ակադեմիան:

— Եթե թատերագիտական ֆակուլտետը փակված չլիներ, — ասացի մի օր, — երեք թե վատ չէր լինի, հա՞...

— Չէ, — ասաց Արմենը, — արվեստում՝ միայն ստեղծագործող:

Մոածեցի՝ լավ է, որ չկա թատերագիտականը:

Ինստիտուտն ինձ դժվար ընդունեց:

Գնացի Աճեմյանի դուռը, նա կրկնեց իր նախկին խոսքը.

— Երեանում համալսարան չկա՞ , ինչ է, գնա համալսարան և այլ, և այլ, թատերագիտություն... Կարելի է սովորել թատերական ինստիտուտում, գերազանց սովորել, գերազանցությամբ ավարտել և դերասան չդառնալ: Դերասան կարելի է դառնալ նաև առանց ինստիտուտում սովորելու:

Ես համաձայն չէի և չէի ուզում համաձայն լինել:

— Համաձայն չե՞ս: Ես ճիշտ չե՞մ ասում:

— Չդիտեմ:

Ընդունելության քննությունները հանձնել էի, ինձ մեկ միավոր էր պակասում, և դիմում էի Աճեմյանի օգնությանը, որպես «Հին ծանոթի»: Զէր մոռացել ազգանունս և թատրոնում կամ արվեստի աշխատողների տան սրահում հանդիպելիս պատասխանում էր բարեկիս հին ծանոթի նման՝ «բարեկ, Հովհաննիսյան»: Գիտեր նաև հորս, ոչ շատ մոտ, բայց համակրում էր և հետագյում էլ չէր մոռանում՝ «բարեկներս հաղորդիր հայրիկիդ»:

Այս ծանոթությունն էր, որ ինձ տարել էր Աճեմյանի տուն 1954-ի հուլիսին:

Միջնորդություններն այն ժամանակ էլ դեր ունեին, բայց մարդկային հարաբերությունները նորմալ էին, շահի խնդիր չկար, և կարելի էր դիմել մարդուն պարզ ու բացահայտ: Ես էլ այդպես պարզ ու բացահայտ նստած էի Աճեմյանի տանը և լսում էի նրա խորհուրդը:

— Ուր էլ գնաս, քո տեղը թատերագիտությունն է, — ասաց: — Ընդունվիր համալսարան, ֆիլոլոգիական ֆակուլտետ: Ի՞նչ գործ ունես: Խելքը գլխին մարդն ի՞նչ գործ ունի....

Համալսարանն ինձ չէր հրապուրում: Դա երեսում էր թատրոնից ու արվեստից հեռու մի տեղ և այդպես էր:

— Պետք է առողջ նայել հարցին... — շարունակում էր Աճեմյանը:

— Ես առողջ եմ նայում, — ասացի:

— Չես պատկերացնում քո կյանքը թատրոնից դուրս, հա՞:

— Չեմ պատկերացնում:

— Ես էլ ասում եմ՝ թատերագիտություն...

— Ինստիտուտում միայն դերասանական ֆակուլտետ կա:

Աճեմյանը ծիծաղեց.

— Եթե թատերագիտական լիներ, ի՞նչ էիր ասելու: Ես պատասխան չունեի:

- Համալսարանն ինձ չե հետաքրքրում, — ասացի:
- Պետք է առողջ նայել հարցին: Հայրիկդ ի՞նչ է ասում:
- Նույն բանը:
- Տեսա՞ր...

Աճեմյանն ինձ ճանապարհեց կրկնելով իր խոսքը՝ «պետք է առողջ նայել...»: Ես, իհարկե, «առողջ» չնայեցի: Ընդունվողների ցուցակում անունս չկար: Առանց շփոթվելու մտա ռեկտոր Արա Սարգսյանի առանձնասենյակը, խնդրեցի դասի նստելու թույլտվություն, որպես պայմանական ուսանող՝ ազատ ունկնդրի պես մի բան, ասացի՝ գերազանց եմ սովորելու: Զհանդիպեցի ոչ մի դիմադրության, բացի Աճեմյանի դիմադրությունից...

Աճեմյանը, երկու շաբաթ էր դասերն սկսվել էին, չէր երևում: Վերջապես մի օր եկավ տասնհինգ րոպե ուշացումով: Բարեկց ու նայեց լսարանին.

— Այդպե՞ս...

Նստեց, հանեց «Կազբեկի» տուփը, ծխախոտը վառեց, ծուխը բաց թողեց օղակ-օղակ, նայեց ծխի օղակներին, առաստղին, հետո նայեց իմ կողմը.

— Դո՞ւ էլ էստեղ ես, Հովհաննիսյան:

Այդ խոսքը, լուրջ էր, թե կատակ, ինձ չդիպավ: Ես համոզված էի, որ պետք է այդտեղ լինեի, ինչպես և համոզված էի, որ համոզելու եմ Աճեմյանին:

Նա լուռ նստել էր, ծխում էր, նայում էր մեղ, մենք էլ իրեն՝ ուրախ ու հուսալից հայցքներով:

— Շատ եք, — ասաց Աճեմյանը:

Խումբը տասնչորս հոգուց ավել չպետք է լիներ, մինչդեռ նրա դիմաց նստած էին քսանչորսը: Խցկել էինք «երեսի զոռով», և խցկվածների մեջ միայն ինձ գիտեր: Քննությունն ինքը չէր ընդունել, ինքը չէր որոշել իր ստուդիական թատերախմբի կազմը: Նա «պայմանականներիս» ընդունեց որպես ազատ ունկնդիր, կարող էինք ներկա լինել, և կարող էր ժամանակ չտրամադրել մեղ:

- Զեղանից ովքե՞ր են խաղացել ինքնագործ խմբերում, — հարցուց:

Խաղաղողները վստահ ներկայացան, բացի մեկից, որ պրոֆեսիոնալ բեմում էր եղել տասներկու տարեկանից:

— Ի՞նչ եք խաղացել:

— Դոննա Աննա:

— Ի՞նչ:

— Պուշկինի «Քարե հյուրը»:

— Որտե՞ղ:

— Արաբկիրի ակումբում:

Աճեմյանը զվարթացավ.

— Էստեղ Դոն Գուան էլ կա՞:

— Կա, — պատասխանեց Արաբկիրի Դոն Գուանը:

— Օհո՛...

Աճեմյանը երկիմաստ ժպտում էր և ծխախոտի ծուխը օղակ-օղակ փչում առաստաղին: Էլի խաղացված դերերի անուններ տրվեցին: Աճեմյանը մի քիչ լոեց, գրալանից հանեց մի փոքր թաղբեհ, պտտեց, գրալանը դրեց, վեր կացավ.

— Զեզ կարելի է կոչումներ տալ պատրաստի դերասաններ եք, լուրջ գերեր եք խաղացել, փորձ ունեք, վաստակ ունեք և այլ, և այլ:

Կատակով էր խոսում, բայց հաջորդ նախադասությունն արտասանեց շատ լուրջ:

— Մոռացեք, ինչ խաղացել եք, չեք խաղացել, մոռացեք: Լսե՞լ եք, մի բառ կա՝ «դիլետանտիզմ»: Գնացեք, կարդացեք, կիմանաք՝ ինչ է նշանակում: Ինձ հետաքրքրում են նրանք, ովքեր ոչ մի գեր ոչ մի ակումբում, ոչ մի թատրոնում չեն խաղացել:

Նա երկար չբացատրեց իր միտքը: Այնքանն ասաց, որ դիլետանտը հեշտությամբ սովորում է խաղի արտաքին մի քանի կերպաձեր և կրկնում մեքենայորեն, պատրաստի և կրկնվող կերպաձերը բացառում են ստեղծագործությունը, և նա, ով սովորել է ակումբային

խաղի այդ եղանակին, շատ դժվար է հաշտվում ներքին վերապրումի, ներքինից դեպի արտաքինը գնացող խաղի հետ, կամ չի կարողանում յուրացնել դա, եթե անդամ հասկանում է: Աճեմյանը գործածեց «շտամպ» բառը, բացատրեց դրա իմաստը շատ կարճ ու հապճեպ, ասաց, որ ակումբային բեմերում խաղում են պարզունակ ու էժանագին շտամպների օգնությամբ, և ակումբային բեմի «վարպետը» նույնը կմնա ամբողջ կյանքում:

Աճեմյանը, որքան հիշում եմ, այսքանով ավարտեց իր առաջին դասի ասելիքն ու արագ գնաց, զանգից տաստաննինդ ըստե շուտ, կարծես փախավ, ազատվեց: Հաջորդ դասին եկավ դարձյալ ուշացած և էլի շուտ գնաց: Պարզվեց, որ դա նրա սովորությունն էր: Գալիս էր արագ, ձեռքին մի բան՝ թաղբեհ, փայտի կտոր խաղացնելով, և, թվում էր, թե մի բան ունի դրսում թողած, որ ավելի կարևոր է, քան դասը: Հարց էր տալիս և կարծես չէր լսում պատասխանը, հետո մի բառ էր ասում, պարզվում էր, որ շատ լավ էլ լսել է: Նրա ամբողջ վարքագծում կար մի տեսակ ըստեականություն ու հեգնանք, որ ասում էր՝ ինչ-որ անում ենք, լուրջ չէ, իսկականը չէ: Մի անգամ միայն, դա երրորդ, թե չորրորդ դասն էր, նա սկսեց լուրջ ու կենարոնացած: Կանգնեց ամբիոնի մոտ և խոսեց մի քառասուն ըստե անընդմեջ: Այն, ինչ ասում էր, կարծես, նորություն չէր, ծանոթ էր Ստանիսլավսկու աշխատություններից, որ թերթել էի, ինչ-որ բան մանրասման կարդացել նախքան ինստիտուտ մտնելս: Բայց Աճեմյանի ասածը շատ ավելի հետաքրքիր էր ու տրամադրող: Ոչ մի նախադասություն չեմ գրառել այդ զրույցից: Դա ամենահետաքրքիր խոսքն էր, որ երբեք լսել եմ մեր թատրոնի մարդկանցից և հենց Աճեմյանից: Տեսական մտքի բացառիկ մի իմպրովիզացիա էր դա, իսկապես ըստեական ճառագում: Նա խոսում էր բեմական ճշմարտության մասին, այն մասին, թե ինչ ասել է վիճակի անմիջականություն, դրության

օրդանականություն, երբ մարդը պահն ընդունում է այնպես, կարծես նոր է ապրում: Խոսքը բեմական հակազդման ու փոխադղորդակցման մասին էր, գործող անձի վարքագծի ամբողջականության, անընդմիջության, նպատակայնության մասին: Չեմ գրառել և չեմ ուզում որևէ ուղղակի ձեւակերպում բերել, չեմ ուզում հորինել: Նա մի միտք էր զարգացնում, այն է՝ արվեստը բացառում է կրկնությունը, բացառում է մակերեսային ցուցադրականությունը: Այսպես խոսեց, խոսեց ու կանգ առավ, նայեց հարցական՝ պե՞տք էր, թե՞ պետք չէր.

— Լավ, հետո...

Ասաց ու արագ դուրս գնաց, ինչպես միշտ՝ առանց «ցտեսություն» ասելու:

Մի օր էլ հանեց «Կազբեկի» տուփը, ծխախոտը վառեց ու նայում էր տուփի նկարին, կարծես նոր էր տեսնում: Ես նկատել էի նրա այդ սովորությունը՝ ծանոթ, ամեն օր տեսած առարկային նայել անծանոթի նման, զննել որպես նորություն: Այդպես նայեց նկարին ու մեզ հարց տվեց.

— Ի՞նչ բան է արվեստը, ձեր կարծիքով:

Նա համառորեն պատասխանի էր սպասում:

— Ի՞նչն է ձեզ բերել այստեղ, ի՞նչ եք փնտրում, ի՞նչ եք ուզում...

Նա ծխախոտի տուփը նկարի կողմով պահեց մեր առջև.

— Սա ի՞նչ է, արվե՞ստ է, թե՞ արվեստ չէ:

— Արվեստ չէ, — շտապեց պատասխանել մեկը:

— Ինչի՞ց իմացար: Ինչո՞ւ:

— Արվեստ չէ, — ասաց մեկ ուրիշը:

— Ինչո՞վ:

Պատասխան չկա:

— Շտամպ է, — կամացուկ, կիսակատակ ասաց մյուսը:

— Բառ է, սովորել եք... Շտամպ: Իհարկե, գործարանը շտամպ խփելով բաց է թողել այս տուփից հարյուր

Հազարներով: Արան ասում են «շիրպոտրեք», մասսայական արտադրություն: Արվեստն ի՞նչ կապ ունի մասսայական արտադրության, լայն սպառման առարկաների հետ: Սա լայն սպառման առարկա է, արվեստ չէ:

Նա լոեց ու հարցական նայեց:

— Ուրեմն, սա արվեստ չէ, հա՞... ի՞նչ եք կարծում: Ես ջանում եմ ճիշտ հիշել, հնարավորին չափ ճիշտ վերարտադրել հիսուն տարի առաջ լսածս, որ եղել է գեղագիտության իմ առաջին դասը:

— Ուշադիր նայեք այս նկարին,— ասաց:— Ի՞նչ եք տեսնում: Գիշերային մուգ կապույտ, սառը երկինք, ձյունապատ լեռ, միայնակ ձիավոր՝ սև ստվեր: Տեսնո՞ւմ եք սառնությունը... Լեռը սառույցի մեծ բեկորի նման, ձին գայթում է սառցապատ ճանապարհին... Նկարիչը տեսել է իր երեակայության մեջ, կամ վերարտադրել է տեսածը, որպես հիշողություն, վերապրել է մի զգացում և ստեղծել է արվեստի գործ, անկրկնելի, որ մի հատ է, իր մոտ կամ որևէ տեղ: Դա այն է, ինչ հեղինակինն է: Սա հեղինակինը չէ, գործարանային կրկնությունն է: Այստեղ ոչ մի զգացում էլ չկա: Հարյուր հազարավոր օրինակներով բազմացվել է և ամեն ախմախի գրպանում կա, ընկած է փողոցում, աղբանոցում: Սա այլևս արվեստ չէ, շիրպոտրեք է: Օրիգինալը մեկն է: Սա որոշ գաղափար է տալիս օրիգինալի մասին: Զենք կարող ասել, թե որքանով է հեռացել օրիգինալից:

Կարեռը ստեղծագործության կենդանի հետքն էր, որ այստեղ չէր կարող պահպանված լինել: Ամեն մի պատճենահանում սպանում է այդ հետքը, այն է՝ բուն արվեստը: Այս էր Աճեմյանի միտքը, և, այդ մտքից ելնելով, նա չէր ընդունում կինոն:

— Կինոն ի՞նչ է, շիրպոտրեք, արվեստ չէ:

Աճեմյանի այս խոսքը, նույն բառի շեշտումով, լսել եմ նրանից նաև քսան տարի հետո՝ 1974-ին: Կինոն չընդունելու պատճառը գուցե այն էր, որ այնտեղ եղածը

եղած է, հնարավոր չէ ջնջել, նորից գրել, ինչպես թատրոնում: Որքան կարողացել եմ նկատել, Աճեմյանին ավելի էր ներշնչում ստեղծագործության կենդանի ընթացքը, քան վերջնական արդյունքը: Չեմ հիշում դեպք, որ նա հիացած լիներ իր որևէ բեմադրությամբ: Նա բեմադրում էր հայտնագործելով ու ջնջելով և կանգ էր առնում որևէ տարբերակի, ըստ իս՝ ոչ լավագույնի վրա: Փորձերի կենդանի ընթացքը և միջամտելու հնարավորությունը ամեն ինչ էր Աճեմյանի համար: Ընթացքը նպատակ էր, և ինքը պետք է մշտապես ընթացքի մեջ: Ներկայացման կրկնությունը պատճենահանում չէ, — ասում էր Աճեմյանը, թատրոնը հակադրելով կինոյին:— Թատրոնում ստեղծագործական ակտը տեղի է ունենում առաջին ու վերջին անգամ:

Նա մի անգամ այսպիսի հարց տվեց.

— Ի՞նչ է արտադրում թատրոնը:

Լուռ մնացինք:

— Թատրոնի ստեղծածի անունն ի՞նչ է: Անունը տվեք:

— Արվեստ, — ասաց մեկը:

— Դե լավ, է՛... արվեստ: Կոնկրետ առարկայի անունը տվեք:

— Բեմադրություն:

— Դա ընդհանուր խոսք է: Դուք ասեք՝ բեմադրության նպատակը ո՞րն է, արդյունքը, հետապնդվող արդյունքը...

Երեսում էր, որ մտքում մի բառ ունի և ուզում է այդ բառը, այդ միակ գոյական անունը լսել մեզանից: Կարծես հանելուկ էր առաջարկել, որի պատասխանը լինելու էր մեկ բառ:

— Ա՛յ, օրինակ, կոշիկի ֆաբրիկան արտադրում է կոշիկ: Դա նրա արտադրանքի անունն է: Թատրոնի արտադրածն ի՞նչ է:

Ի վերջո ինքը պատասխանեց իր հարցին.

— Մարդ:

Զասաց «կերպար», «տիպ», «բնավորություն», «գործող անձ»: Թատրոնը պետք է տարբերվեր թատերագրությունից, նաև՝ կերպարվեստից, որոնց օբյեկտը նույնպես մարդն է: Աճեմյանի հարցադրման մեջ միշտ կարևոր երանգ կար, որ հուշեց ինքը մեկ ածական ավելացնելով.

— Կենդանի՝ մարդ:

Նրա խոսքի շարունակությունը, որի ձեւակերպումներն ու մանրամասները չեմ հիշում, այն մասին էր, որ թատրոնը սոսկ «սինթետիկ արվեստ» անվանողները շատ քիչ բան են ասում, չեն մոտենում բեմական արվեստի սպեցիֆիկումին՝ այն հատկությանը, որով նա տարբերվում է բոլոր արվեստներից:

— Կինոն նույնպես սինթետիկ արվեստ է, հետո ի՞նչ...

Պարզ է, շարժման պատկերային գրառումը, ինչ արդյունք ու տպավորություն էլ տա, կենդանի մարդ ստեղծել չի կարող, չի կարող հեռանալ շարժալուսանկարից, հետեւաբար և չի կարող փոխարինել մարդուն: Ես ուզում եմ շարունակել Աճեմյանի հարցադրումը ժամանակի Բարդոյի խոսքերով. «Թատրոնը մարդկային կենդանի փարքագծի արվեստն է»: Ասելով, ուրեմն, «սինթեզ», տարածական ու ժամանակային, խոսքային ու պատկերային ձևերի համադրություն՝ ոչինչ չենք ասում, եթե մեզ հայտնի չէ համագրության, դիմերենցիալ հիմքը:

— Թատրոնի արդարացումը,— ասաց Աճեմյանը, — կենդանի մարդն է, որպես նպատակ և արդյունք: Թատրոնը հետաքրքիր և հարուստ է այնքանով, որքանով հետաքրքիր և հարուստ է այդ արդյունքը՝ կենդանի մարդը: Այս է, ուրիշ ոչինչ: Վերջ:

Ասաց «վերջ» և շարունակեց.

— Մնացած բոլոր կոմպոնենտները (նա այս բառը գործածեց)` բեմ, դեկոր, լույս, երաժշտություն և այլ, և այլ, և այլ... Պարզ է, հասկանալի է՝ ծառայում են մեկ նպատակի, ստորագրաված են հիմնական նպատակին:

Աճեմյանը խոսում էր ընդհատուն և արագ, կարճ դադարներով և երբեմն «ը՛...» ձգելով: Բանն ասում էր կարծես իմիջիայլոց, այնպես որպես թե դիմացինի համար ամեն ինչ շատ պարզ է: Նա ոչինչ չէր բացարում երկար ու հանգամանալից, չէր փաստարկում, ապացուցում կամ ուսուցանում, այլ ընդամենը ակնարկում էր: Նրա ակնարկները (հետագայում եմ հասկացել) դիպուկ էին, անսխալ ուղղված էին նշանակետին: Պետք էր կռահել, եթե խոսքը չէր ավարտում: Նրա հետ շփփողը պետք է ունենար իր ներքին կոնտեքստը: Ուսանողը դա չուներ և չէր կարող ունենալ, ուստի՝ Աճեմյանն ուսանողի համար չէր, այլ՝ իմացության ու փորձի որոշակի պաշար ունեցող մարդու: Ի՞նչ էի ես կարդացել իմ ուսանողական առաջին տարում: Մեկ-երկու գլուխ Ստանիսլավսկու «Դերասանի աշխատանքից» և նրա «Արհեստը» մի քանի անգամ, մանրամասն և ուշադիր: Այս էր իմ կոնտեքստը, մյուս կողմից՝ 50-ական թվականների վարպետների, մասնավորապես Փափազյանի խաղը: Աճեմյանը տալիս էր միայն Ստանիսլավսկու անունը, թերևս պահպանելու համար ընդունված ուսուցողական դավանանքը (դոգմատիկա): Հստ այդ դավանանքի, թատրոնում ունալիղմից դուրս ոչինչ չէր կարող լինել, և այդ ունալիղմը ենթադրում էր բացարձակ հավաստիություն, որին ներհակ էին և՝ Աճեմյանը, և՝ նրան շրջապատողները: Ուսումնական փուլում, իհարկե, բնական է իրականության ճշգրիտ վերարտադրության սկզբունքը, և՝ նկարչի, և՝ դիմասանի համար: Դրան էր հետեւում նաև Աճեմյանը: Նա մեզ հանձնարարեց կարդալ Ստանիսլավսկու «Իմ կյանքը

արվեստում» դրբի առաջին դլուխը և հաջորդ օրը հարցրեց՝ ինչի մասին է, և դժգոհ մնաց.

— Զեք հասկացել: Իմ պահանջն էլ չեք հասկանում: Մի պատմեք դրվածը, բացատրեք իմաստը:

Նա սպասողական հայացքով նայեց իմ կողմը.

— Ի՞նչ կասես:

Ես ցույց տվեցի ընդգծած տողերը. «Բեմում անիմաստ անգործության հետևանքով առաջացած անհարմարությունը, հավանորեն անդիտակցաբար, դեռ այն ժամանակ ես զգացի, և այն օրվանից մինչև այսօր ես ամենից շատ դրանից եմ վախենում» (Հայերեն հրատ. Եր., 1954, էջ 7):

— Եզրակացությունդ...

— Անիմաստ անգործությունից ազատվում են իմաստավորված գործելով:

Աճեմյանի ուղած պատասխանը չէր: Նա պահանջում էր մեկնաբանություն և ինքը դիմեց մեկնաբանության, ելակետ ունենալով հեղինակի խոսքերը. «Իբրև թե և ոչ թե իսկապես... ինչո՞ւ իբրև թե...» (էջ 7):

— Ճշմարտության զգացումն ու գաղափարը պետք է ունենալ և իսկապես գործելու ցանկություն, որպեսզի ստացվի «իբրև թե»: Առանց ճշմարտության պահանջի չկա ոչ մի պայմանականություն: Հասկանալի՞ է:

Իհարկե, հասկանալի չէր: Հասկանալի չէր և այն ժամանակ չէր էլ կարող հասկանալի լինել, որ պայմանականությունը դերասանի սոսկ խոսելակերպի ու գործելակերպի մեջ չի արտահայտվելու, այլև նրան շրջապատող անիրական միջավայրում: Ենթադրվող առարկաներ, դեկոր, չորրորդ պատ և այն, այն ամենի մեջ, ինչը ստորագասված էր հիմնականին՝ կենդանի մարդուն: Առարկայական միջավայրի չգոյությունն էր լինելու պայմանականության պայմանը:

Ես սա մտածում եմ այսօր՝ երկխոսության մեջ մտնելով հիշողությանս հետ:

Խոսքս վերաբերում է իրական ու ենթադրվող հանգամանքների հակասությանը՝ թատրոնի մեծ առեղծվածներից մեկին, որի բացատրությունը չեն տալիս թատրոնի մարդիկ՝ ո՛չ ստեղծագործողները, ո՛չ քննադատները: Ստեղծագործողները երբեմն զգում են մի բան. եթե գործողության մեջ առարկան աներևույթ է կամ պայմանական, վերակատարի վերաբերմունքը լինելու է իրականին շատ մոտ (Հավատացնելու համար, թե կա առարկան), իսկ եթե առարկան իրական է՝ «իբրև թե»: Այս երկրորդը շատ նուրբ բան է և դժվար է հասկացվում:

Այսպես կոչված «աֆեկտիվ» վարժությունները նպատակ ունեն սրելու հիշողությունը, պատկերացումն ու երևակայությունը իրային միջավայրից դուրս:

— Ո՛չ մի խոսք, ո՛չ մը նկարագրություն կըմ բացատրություն...

Ասել է, թե վարժության մեջ խոսքի պայմաններ չպիտի լինեին, և խոսքի անհրաժեշտությունը չպիտի ծագեր:

— Ինստինկտ, միայն ինստինկտ:

Ոչ ոք պատրաստ չէր ըմբռնելու Աճեմյանի պահանջը, և բառն էլ հասկանալի չէր: Պետք է գտնվեր հակագլման բնազդային կերպը կոնկրետ հանգամանքներում: Դատողություն, նկարագրություն պետք չէր, պետք էր պարզ վերաբերմունք՝ ամենադժվար բանը: Դրա տպավորությունը տալու համար պետք էր պատկերացնել առարկան, զգալ քաշը, գույնը, ջերմությունը և այլն:

Աճեմյանը մի օրինակ բերեց իր «Արա Գեղեցիկ» բեմադրությունից (Լենինականի թատրոնում): Մի տեսարանում գերակատար Գաղաղյանը խաղող է ուտում, ընդամենը մեկ հատիկ իր առջև դրվող բուտափորական ողկույզից՝ «իբրև թե»: Այդ մեկ հատիկ խաղողը գոյություն չունի, դերասանի հիշողության ու պատկերացման մեջ է միայն, բայց...

— Ինչպես էր նա զգում կլորությունը, սառնությունը:

նը, քաղցրությունը և մի բան էլ՝ ատամի տակ ընկնող կորիզը և՝ զարմանք, թե ի՞նչ էր:

Նման օրինակներ կան թատերական գրականության մեջ: Իսկ եթե խաղողն իրական լիներ, ո՞վ կհավատար: Սա արդեն իմ հետագա եղրակացությունն է: Առարկայականությունը և իրականի զգացումը գերասանի մեջ կառաջացնեի՞ն արդյոք զգացմանը ձև տալու, պայմանականացնելու, տեսանելի դարձնելու ցանկություն: Խնդիրն այն է, թե ե՞րբ է ավելի ակտիվ մարդու խաղային բնագգը՝ իրակա՞ն, թե՞ անիրական հանգամանքներում: Բեմ ձգտող մարդը ներշնչված է լինում ինչ-որ խոսքերով, գալիս է արտասանելու ինչ-որ բան, բայց ահա նրան առաջարկում են անխոս իրավիճակներ՝ տեսնել չեղած բաներ, լսել չեղած ձայներ, շոշափել անտեսնելի առարկաներ:

Արդ, խոսքի՞ց, թե՞ լոռությունից է սկսվում ներկայացումը:

Աճեմյանի համար լոռությունից էր սկսվում:

Խոսքից առաջ եղել է լոռություն, և խոսքը եղել է լոռության մեջ:

— Տեսե՞լ եք երբեք Լևոն Զոհրաբյանին, — ասաց Աճեմյանը: — Նա շատ վատ է լսում: Գրեթե խուլ է: Բայց ինչպե՞ս է նա լսում բեմում: Նրա պես լսող դերասան չկա:

Ի՞նչ էր դա նշանակում, չբացատրեց Աճեմյանը:

— Պատկերացրեք մի պահ, — ասաց նա, — որ նստած եք համերգային դահլիճում, երաժշտություն եք լսում: Որոշեցեք՝ որտե՞ղ եք, ի՞նչ եք տեսնում, ի՞նչ եք լսում: Լսե՞ք, լա՛վ լսեք...

Մենք իբրև թե լսում էինք: Նա նայում էր մեր դեմքերին, ուզում էր մի բան կարդալ մեր աչքերում:

— Ի՞նչ եք տեսնում, — ասաց:

Տեսնվելիք բանի մասին ոչ ոք չէր մտածել: Հորինվեցին վերացական մտացածին պատկերներ, որպես թե

երաժշտությունից ծնվող ձայնային պեյզաժներ՝ էլ ծովու փոթորիկ, անտառ, գիշեր ու լուսին և ի՞նչ ասես, բացի այն կոնկրետ առարկայական միջավայրից, որտեղ իրականանում է երաժշտությունը:

— Ի՞նչ եք տեսնում ձեր դիմաց, ոչինչ չե՞ք տեսնում...

— Գետը հոսում է...

— Ո՞ւմ եք տեսնում, ոչ մեկին չե՞ք տեսնում:

— ...

— Զարմանալի է: Ոչ մեկը դիրիժորին չի տեսնում:

— Ա'...

— Իսկ ի՞նչ էիք կարծում:

Բաներ էինք հորինում իրերի իրականությունից դուրս, մինչդեռ խնդիրը շատ պարզ էր: Թվում էր, թե պարզ էր: Պետք էր փոխհարաբերություն ստեղծել ենթադրվող առարկայական միջավայրի հետ, տեսնել երևակայվող ակներեւությունը.

— ... ձեանում եք, բաներ եք հորինում:

Ահա թե որտեղից է սկսվում անկեղծությունը, ոչ միայն դերասանի, նաև գրողի, նկարչի: Իրականությունը տեսնել անկեղծորեն, միենույն է՝ երևակայվող, թե իրական, բարդ բան է:

— Մի ստեք, — ասում էր Աճեմյանը:

Հեշտ է ասել...

— Կարողացեք տեսնել, հիշել:

Այսպես կոչված «ափեկտիվ գործողությունները» կամ էտյուդները երևում են անմիտ ու փուչ բաներ և ամայացնում են մարդու հոգին, եթե ուսուցանվում են միջակ մարդու միջոցով: Էտյուդներով ուսուցանողը պետք է տաղանդավոր մարդ լինի և բնական մարդ, ոչ թե թատրոնական քաղքենի (ինչպես իմ իմացած շատերը), այլապես բեմը դառնում է ենթադրությունների անապատ, բեմադրողը շատախոս ու դատարկաբան, դերասան՝ ցամաք առուն ընկած գորտ:

Աճեմյանին հետևելով հասկացա, որ էտյուդ ասվածը պարզ մի վիճակ է՝ աճելու, ծավալվելու ներակայությամբ (պոտենցիալ): Գտնել նման վիճակ կամ իմաստակիր մի պահ, նշանակում է գրել պիեսի առաջին նախադասությունը: Դա չատ գժվար բան է և, ըստ իս, իզուր է այդ բանը պահանջվում անփորձ ուսանողից: Աճեմյանը, թվում է, գիտեր կամ գդում էր այդ, և ինքն էր հորինում նման պահեր ու թելադրում ուսանողին: Նա հորինում էր զարմանալիորեն հեշտ, բացարձակորեն դատարկ տեղում, զրոյական կետից: Դա մարդկային պարզ բնազդների գործնական ուսումնասիրություն էր, էքսպերիմենտալ հոգեբանության դաս, որի մասին բնավ չէր մտածել Աճեմյանը, բայց առնչվել էր դրան մոսկովյան թատերական կրթության միջավայրում, եզրենի վախթանգովի անմիջական աշակերտի՝ Ռուբեն Սիմոնովի դասարանում: Դա ուսասական բեմական դպրոցի մի փոխակերպումն էր իր ելակետային սկզբունքով, այն է խոսքին ու խոսքային նյութին նախորդում է գրությունը, և խոսքն ի հայտ է գալիս որպես դրության ակամադրսներում, որպես գործողության օրգանական, անբաժանելի տարր: Պետք էր լավ հետևել բեմադրիչ Աճեմյանի երեակայության խաղերին: Նա ուսանողական լսարանի փոքրիկ մի տարածության մեջ գործում էր ինչպես անսահմանության մեջ, մեկը մյուսի ետևից հայտնագործում գիրքային նորանոր հնարավորություններ, և ո՞րն էր ամենանպատակահարմարը: Պետք էր լավ հետևել այս ընթացքին՝ ըմբռնելու համար, որ թատրոնն ունի իր ներքին, սոսկ իրենից ծնվող տարերքը, որ կյանքն այստեղ հորինվում է ինքն իրենից որպես նպատակ, որ մարդը բեմում ինքն է հորինելու իր վիճակը և ինքնաստեղծվելու:

— Որտեղ կանգնեմ, էնտեղ՝ թատրոն...

Այս խոսքն ասել է Աճեմյանը մի անարժան «ախոյանի» և իմացել է՝ ինչ է ասում: Նա կրում էր իրենում

թատրոնի գաղափարը, ուր էլ լիներ, ինչ էլ աներ, և կյանքը դիտում էր որպես թատրոն: Թատրոնը նրա համար գրական տեքստի իլյուստրացիա չէր և գրականությունից չէր ստեղծվում, այլ ինքնուրույն մի գոյություն էր, որ պետք էր տեսնել ու հանդիպեցնել գրականությանը: Նա ուսուցանող չէր և չէր էլ հավատում ուսուցմանը, լուրջ չէր համարում թատերական ինստիտուտի գոյությունը: Այն, ինչ ասում էր, բացատրում կամ հարցնում, չուներ կարգ ու համակարգ, զրույց էր ըստ պահի ու հանգամանքների, իսկ էտյուդները՝ ծրագիր, կարծես պարտադրված փուլ, որ պետք էր մի կերպ անցնել և որը երեմն հափշտակում էր նրան, երեմն ձանձրացնում: Մեկ էլ տեսար՝ վեր կացավ, գնաց: Հաջորդ օրը կսկսեր մի ուրիշ բան, ուրիշի հետ: Չէր դիմում գերասանի ոչ մտքին, ոչ էլ բնազդին: Ոչինչ չէր բացատրում կամ հիմնավորում, ցուցում էր տալիս՝ այս արա, այս կողմ գնա, այս բանը տես, այս ձայնը լսիր և այլն: Պետք էր ըմբռնել ակնարկը, որսալ վերաբերմունքը: Նա իմպուլսային մտածողության մարդ էր, տիպական ներկայացուցիչն այն արվեստի, որտեղ ամեն ինչ տեղի է ունենում առաջին ու վերջին անդամ: Ուրեմն, պետք էր չկորցնել պահը. հասկացար՝ հասկացար, չհասկացար՝ վերջ: Պետք էր լավ հետևել նրան գիրձի պահին ու տեսնել, որ «գործողությունը գործվում է ինքն իրենից, ինչպես ծառն աճում է իր բնից»: Այս խոսքը կարդացել եմ հետագայում, անցյալ դարի գերասան Սեղբակ Մանդինյանի մի հոդվածում ու հիշել, թե ինչպես էր Աճեմյանը դրություններ հորինում դատարկ սենյակում, ուր սեղաններից ու նստարաններից բացի ոչինչ չկար: Նրա դիմաց կանգնած գերասանցուն ինքնաստեղծվում էր, չիմանալով՝ ինչպես: Աճեմյանը հորինում էր նրա վիճակն ու գերքը, ինչպես չոր փայտը խրեն ավագի մեջ՝ չոր ու անջուր մի տեղ, և ծլի, ծաղկի, ճյուղ տա:

— Խաբուսիկ է,— լսեցի մի անգամ թատերագետ Լևոն Խալաթյանի ակնարկը ոտքի վրա, ինստիտուտի միջանցքում:— Աճեմյանը խաղացնում է, իսկ խաղացողը խաբար չէ իրենից. ի՞նչ կարող է անել առանց Աճեմյանի, ոչ մեկին հայտնի չէ:

Դժվար էր իմանալ Աճեմյանի ձեռքի տակ խաղացողի իրական օժտվածության չափը: Նա ինքնաստեղծվում էր Աճեմյանի ցուցումներով, բայց ինքնանանաչման գալիք էր... իրեն խաղացնողին նա տեսնում ու ըմբռնում էր այնքան, որքան ձեռնափայտը կարող է տեսնել ու ըմբռնել իր տիրողը:

— Աճեմյանին ի՞նչ կա, — ասաց մի անգամ Հայկուհի Գարագաշը, — փայտը կվերցնի ձեռքը, մեկ էլ տեսար՝ փայտից դերասան դուրս եկավ:

Կարլո Հայրիկի և Բուրատինոյի պատմությունն իզուր չէ հորինված:

Աճեմյանին դուր էր եկել տիկին Հայկուհու խոսքը, այնքան էր դուր եկել և մի օր օգտագործեց ըստ անհրաժեշտության.

— Գերանից դերասան սարքեցի:

«Գերանը» դերասան էր, և խոսքը գուցե ըստ արժանվույն չէր, բայց սուր էր ու տեղին: Այս խոսքը թատրոնից դուրս եկավ, ընկավ բերանն այն հանդիսականի, որ անբացատրելի ատելություն ուներ «գերանի» հանդեպ, նրա նեղ ճակատից ու անշարժ վզից այն կողմ ուրիշ բան չէր տեսնում: Աճեմյանը տեսել էր, բայց հետո պարզել էր, որ արտաքին նշաններն էլ մի բան ասում են մարդու մասին:

Այն կարծիքը, թե Աճեմյանը չունի սիստեմ, համակարգված մտածելակերպ, ստեղծվել էր ուսումնական միջավայրում և գուցե ճիշտ էր Աճեմյանի, որպես ուսուցանողի, հանդեպ: Աճեմյանն ուսուցանող չէր, ստեղծագործող էր, և նրա, որպես ստեղծագործողի, նկարագիրն ամբողջական էր, ինքնին համակարգված:

Բնավորության անկազմակերպ գծերն ակնհայտ էին: Դա տեսնում էր ամեն որ: Բայց քանի մարդ էր տեսնում նրա ներքին կենտրոնացումը, ենթագիտակցության շարժումը: Աճեմյանն ինչ էլ հորիներ, չէր դիմում բեմական արվեստից դուրս միջոցների, նրա երևակայությունը գործում էր ըստ բեմական արվեստի սահմանակարգի (կոնստիտուցիա). ոչ մի առկախ նշան, ոչ մի հայտարարողական պահ, ամեն ինչ գործողության լեզվով, ըստ դրության, դրությունից ելնող, դրությունը գարգացնող, և ոչ մի շարժում կամ անցում գործողության տոնայնությունից ու տեմպառիթմից դուրս:

Աճեմյանի ստեղծագործական բնագդը համակարգված էր ինքնին, բնականից, ծնունդով: Աճեմյանը բեմադրիչ էր, բայց ոչ ուսուցիչ, մանավանդ՝ կազմակերպիչ: Այն սիստեմը, որ գործում էր նրա որպես ստեղծագործողի ենթագիտակցության մեջ, չէր բռնում այն վիճակին, որում կամա, թե ակամա դրված էր Աճեմյանը:

Կա այսպիսի ոեժիսուրա. խումբ հավաքել որևէ բեմադրության նկատառումով և ցրել խումբը, երբ բեմադրությունն արդեն մաշվել է: Աճեմյանն, ըստ իս (շատերը կարող են չհամաձայնել ինձ հետ), այդ ոեժիսուրայի կրողն էր, գուցե ենթագիտակցորեն: Կհամաձայնե՞ր նա, կամ նրան բացարձակ մեծություն համարողը, իմ այս մտքին: Ճիշտ եմ, թե սիսալ, այս միտքը ծագել է իմ մեջ ուշ, և առիթ չեմ ունեցել հարցնելու, իմանալու, թե ինչ կասեր ինքը: Նա ղեկավարվում էր պահի թելադրանքով, անմիջական տպավորությամբ, տեսնում էր ակներել, երևութականը: Դա նրա խառվածքն էր ու կենսահայեցողությունը թատրոնում և իրականության մեջ: Իր բեմադրություններում նա ավելի հետեւում էր ակտուալ վիճակներին, շրջանցո՞ւմ էր, թե՞ չէր ուզում իմանալ, որ կան նաև պոտենցիալ վիճակներ՝ հեռանկարային, անտեսանելի, այնկողմնային: Զգիտեմ: Գիտեմ, որ Աճեմյանը տիպական ներկայացու-

ցիչն էր գեղարվեստական այն իրականության, որտեղ ամեն ինչ տեղի է ունենում առաջին ու վերջին անգամ։ Նրա վարքագիծը շրջապատին երևում էր տարօրինակ, բայց բնավ տարօրինակ չէր, այլ շատ բնական՝ մի մարդու համար, որի մտքում ամեն պահ ներկայացում էր կառուցվում, դեմք էր գծագրվում, որ հաճախ անցնում էր թղթին, ու թղթից նայում էին ծանոթ մարդիկ՝ տիպականացված ու անհատականացված։ Ճիշտ էր ասում՝ «որտեղ կանգնեմ՝ էնտեղ թատրոն»։ Ի՞նչ էր դա նշանակում։ Աճեմյանը դիտում էր իր շրջապատը ըստ պահի և ըստ այն ներկայացման, որ տվյալ պահին պտտվում էր նրա երեակայության մեջ։ Նա ուներ իրականության իր տեսանկյունը՝ ըստեական, իմպուլսային, «բլից»։ Գուցե գրանումն էր նրա՝ թատրոնի մարդու հմայքն ու հետաքրքրությունը, բայց ո՛չ թատրոն զեկավարողի, ո՛չ ապագայի համար գերասան պատրաստողի կամ թատրոնի մարդ ընտրողի արժանիքը։

Աճեմյանին հետաքրքրում էր գերասանի (կամ ուսանողի, միենույն էր) ոչ այնքան հեռանկարը կամ ակնհայտ հնարավորությունը, տիպածը՝ ի՞նչ դեր է հուչում տվյալ անձը տվյալ պահին։ Դերասանի ներքին անձը, ըստ իս, նրան չէր հետաքրքրում։ Իսկ ուսանողական խումբը Աճեմյանի համար փորձառական (էքսպերիմենտալ) մի թատրոն էր, ուր փորձում էր իր հանկարծահաս մտահղացումները՝ և տիպամներ էր ընտրում։ Եվ քանի որ իր մտահղացումները հեղհեղուկ ու փոփոխական էին, փոփոխելի էր երեւում նաև խմբի կազմը ամեն պահ։ Ուսանողներից ոչ մեկի դիրքը կայուն չէր, նույնիսկ նրանց, ում հետ Աճեմյանն աշխատում էր երկար ու հանգամանալից։ Այսպես, խմբի առաջնուհին, որ թվում էր, թե վաղը, մյուս օրը դառնալու է մի երկրորդ Մետաքսյա Սիմոնյան՝ ազգային գրամայի հերոսուհու տիպար, իր այդ դիրքը պահպանեց մինչև ինստիտուտն ավարտելը։ Աճեմյանը նրան տարավ թատրոն ու մոռա-

ցավ ինչու էր տարել։ Աճեմյանի դասերից ու փորձերից ես այն տպավորությունն էի ստանում, թե նա իսկապես լուրջ չի ընդունում գերասանական կրթությունն ու այդ կրթությանը հետևողներին։ Նա մի օր մեկի հետ էր աշխատում, մյուս օրն ուրիշի հետ, մեկի հետ լուրջ և ուշադիր, մյուսի հետ՝ իմիջիայլոց, ոմանց հետ՝ բնավ։ Ես այդ երրորդ խմբի մեջ էի, և իմ վիճակն ինձ անհանգստացնում էր։ Հիշեցրեցի մի անգամ, չլսելու տվեց։ Ուներ այդպիսի սովորություն՝ չլսել, այն խոսքը, որի պատասխանը չուներ։ Ոմանց համար դա վարակիչ եղավ. ընդօրինակեցին տաղանդավոր մարդու արատը։ Ես գարճայալ հիշեցրեցի Աճեմյանին։ Ասաց՝ «գնա մտածիր»։ Ասացի, որ մտածել եմ, և իմ մտածածն ուրիշի հետ է փորձում։ Նա ծիծաղեց։

— Գործ չունես։

Ես նրան չհասկացա։ Ես ոչինչ չհասկացա։ Ինչո՞ւ այսինչը գործ ուներ, ես՝ ոչ…

Աճեմյանն ինձ հետ ոչինչ չէր փորձում։ Ես նստած էի լսարանում որպես սոսկ հանդիսական, հաճախ իր կողքին։ Զէ՞ր նկատում։ Շատ լավ էլ նկատում էր։ Երբ իրեն մի բան գուշ էր գալիս կամ գուր չէր գալիս, նայում էր երեսիս, մտովի կարծիքու էր հարցնում «ի՞նչ կասես», և ժպտում էր։ Նա ինձ միշտ բարեկում էր ժպտագեմ, որտեղ էլ լիներ՝ ինստիտուտի միջանցքում, դրսում կամ թատրոնում։ Նրա հետ շփելը հեշտ էր. ոչ մի պատնեշ չէիր զգում։ Բարեկամս էր, երբեմն հարցնում էր հորս որպիսությունը՝ «բարեկիր հայրիկիդ»։ Բայց ես, որպես գերասանական կուրսի ուսանող, գոյություն չունեի։ Կիսամյակն ավարտվում էր, ինչո՞վ էի ներկայանալու ստուգարքի։

Մի երեկո, երբ Աճեմյանը դասը կիսատ էր թողել և շտապում էր թատրոն, դուրս եկա իր հետ։

— Վարդան Նիկիտիչ, փորձեք, էլի՞... Ինչո՞ւ ինձ հետ չեք փորձում։

Հասել էինք Մոսկովյան փողոցին, խաղալիքների խառնութի անկյունը: Ես համառում էի, փորձում էի մի բան համոզել, չէր ուզում լսել, գնում էր:

- Ինչո՞ւ, ինչի՞դ է պետք:
- Պետք է:

Խոսքիս վրա դիմացով սուրաց տրոլեյբուսը, և տեսա՝ Աճեմյանը կողքիս չէր: Տրոլեյբուսն անցավ, տեսա Աճեմյանի թիկունքը դիմացի մայթին: Գնացի, հասա: Իմ թեման չշարունակեց: Բաղրամյան փողոցից թեքվող տրամվայի գծերի մեջտեղում կանգնած էր մի մարդ, լայնեղր գլխարկով, գլուխը վեր: Մուլժ էր, մարդու դեմքը չէր երևում: Նրա կողքին կանգնած էին երկու երիտասարդ: Նրանցից մեկը բռնել էր լայնեղր գլխարկով մարդու թիւը: Աճեմյանը նրանց կողմն էր նայում:

- Թո՛ղ, զավակս, բաժանում եմ այս գաղափարը:

Խմած էր, կանգնել էր տրամվայի գծերի մեջտեղում: Երիտասարդ ուղեկիցը բռնել էր թիւը, բան էր համոզում:

- Պօալս, ծեմս մօս, - ասաց Ներսիսյանն ու թույլ օրորվելով, դանդաղ անցավ փողոցը, նրա հետ՝ երիտասարդները:

- Դո՞ւ էլ այն կարծիքին ես, որ Հրաչյան չկարողացավ Լիր խաղալ, - հարցրեց Աճեմյանը: - Ինչո՞վ էլ լինում:

Իմ թեման չշարունակվեց: Խոսքը կտուրն էր ընկել: Ես բաժանվեցի Աճեմյանից իմ մտահոգությունը մոռացած և առավոտյան միայն հիշեցի նրա հարցական պատասխանը՝ «ինչի՞դ է պետք», հիշեցի, վիրավորվեցի ու ու վիրավորանքը խորացավ մեջս. ինչպե՞ս թե՝ «ինչիդ է պետք»: Ուրեմն, ինձ մնում էր որոշել իմ դիրքն Աճեմյանի հանդեպ, ասել է՝ թատրոնի հանդեպ, կոչման, նպատակի, կյանքի հանդեպ: Կարծում էի, թե թատրոնի բեմում է սկսվում կյանքը և այնտեղ էլ ավարտվում է:

Ես այլևս չդիմեցի Աճեմյանին:

Եկավ ստուգարքի օրը՝ 1954 թվի դեկտեմբերի 30-ը: Կիսատ, անմշակ, անիմաստ մի տեսարանով, անօգնական ու չփոթված, ինքս իմ աչքից ընկած, որպես անկոչ ու պատահական մեկը, ներկայացա պատկառելի հանձնաժողովին: Ինչե՛ր չի կարող անել ոեժիսուրան մարդուս հետ: Աճեմյանի ոեժիսուրան ինձ դրել էր այդ վիճակում: Մտածում էի, որ պետք էր թողնել, հեռանալ, բայց ինչո՞ւ ես, եթե ոչ ուրիշները՝ գաղափարից ու ներշնչանքից հեռու մարդեկ, որ, ինչպես ապագան ցույց տվեց, չծաղկեցրին հայոց թատրոնի անշուրք պարտեզը:

Մտուգարքն ավարտվել էր: Կանգնել, սպասում էինք միջանցքում, ոեկտորի առանձնասենյակի դռանը: Դուրս եկավ Աճեմյանը գրգոված, չփոթված, գունատ.

- Ինչո՞ւ եք կանգնել, ըը՛... գնացեք, - ասաց դողացող ձայնով ու գնաց:

Մեզ ներս հրավիրեցին, հայտնեցին արդյունքները: Դուրս էինք մնում վեց հոգի, տղաներից միայն ես, և հինգ աղջիկների շարքում ամենաշնորհալին՝ Գալյա Նովենցը: Ընտրյալների մեջ ես տեսնում էի մեկ դերասան՝ Արմեն Ջիգարխանյանին:

Շատ մարդ չիմացավ գլխիս եկածը: Իմացողը մի խոսք էր ասում Աճեմյանի դեմ, որ ինձ դուր չէր գալիս: Մեկն ասում էր՝ ծանոթ մեջ գցիր: Ի՞նչ ծանոթ, ծանոթը ես էի, ինձնից էլ լավ ծանո՞թ: Իմ վիճակն անըմբոնելի էր առօրյա չափանիշներով: Իմ վիրավորանքն ու դառնությունը չէր փոխվում հակակրանքի թատրոնի մարդու հանդեպ: Եթե նրան ատեի, թատրոնն էի ատելու: Դառնացած էի, որ թատրոնի մարդն ինձ չի հասկացել, և հույս ունեի, որ հասկանալու է:

Աճեմյանի ստուգարքից հետո ես իրավունք չունեի մասնակցելու կիսամյակի քննություններին, բայց չհարցրեցի օրենք ու իրավունք: Ո՞չ ստուգման գրքույկ ունեի, ո՞չ էլ անունս կար ցուցակում, բայց ինքնա-

գլուխ մտա, հանձնեցի առաջին քննությունը գերազանց և նույն հաջողությամբ՝ մյուսները։ Եվ մինչ կպարզվեր իմ իրավունքի սահմանը, ես արդեն գերազանցիկ էի՝ կատարել էի տված խոսքը։ Իմ օրինակին հետևեցին «որակազրկվածներից» մի քանիսը։ Ինստիտուտի ղեկավարությունը չկարողացավ արգելք լինել։ Կարող էր, եթե օրենքով ղեկավարվեր, ոչ թե բարոյականությամբ։ Բարոյականությունը թույլ չտվեց քննությունները գերազանց հանձնողին դուրս անել։ Ես մնացի։ Մնացին նաև մյուսները։ Երկրորդ կիսամյակում Աճեմյանը լարան մտավ և ժպտաց։

— Բոլորդ էլի էստեղ եք, հա՞...

Նրա վերաբերմունքը չփոխվեց, բայց ճար չուներ. տարեկերջին մեկ-երկու տեսարան հորինեց, մեզ ներկայացրեց քննության։ Քննությանը, ի զարմանալ մերում, նստած էր Արմեն Գուլակյանը։ Մինչ այդ մենք նրան տեսնում էինք բակում, նստարանին մեն-մենակ նստած, անտանելի մուայլ, դիվական մուայլություն ոտքից գլուխ, ու նրան տեսնելիս լրում էինք կամ ցածր էինք խոսում։ Նա հեռացված էր թատրոնից։ Ասում էին՝ վատ մարդ է, դաժան, բռնակալ։ Մտածում էի՝ լավ է, որ գործ չունենք այդ մարդու հետ։ Բայց պարզվեց, որ նա լրջորեն հետաքրքրվում է մեղանով...

— Վարդանն ում որ չի հավանում, ուղարկեք ինձ մոտ։

Այս խոսքն ականջովս ընկավ որտեղից, չդիտեմ։ Գնահատականս էր «Լավ»։ Զգիտեմ՝ ի՞նչն էր լավ, բայց լավ էր՝ դարձա ուսանող։ «Լավը», ինչպես հետո պարզվեց, Աճեմյանի գնահատականը չէր, այլ Արմեն Գուլակյանի։

Ես դարձա Գուլակյանի աշակերտը, ինձ հետ՝ մի քանի հոգի, այդ թվում Գալյա Նովենցը և Արմեն Զիգարիսանյանը, որին Գուլակյանը պահանջեց, և Աճեմյանն էլ չընդդիմացավ։

Գուլակյանի առաջին խոսքն ինձ էր ուղղված։

— Զեր մասին, Հենրի, ես կարծիք չունեմ, բայց չեմ կարծում, թե չեք կարող ուսանող լինել էստեղ։ Ինձ մարդու աշխատանքն է հետաքրքրում։ Մենք պիտի սովորենք ճիշտ աշխատել։

Մենք ճիշտ աշխատեցինք երեք տարի։ Բայց այս մասին հետո...

Աճեմյանի և Գուլակյանի հարաբերությունները, մեղմ ասած, ջերմ չէին։ Նրանց իրար հետ խոսելիս չէինք տեսնում։

— Գործերդ ինչպես են, ի՞նչ դեր ես խաղում, — հարցրեց ինձ Աճեմյանը, երբ արդեն երեք ամիս էր, ինչ Գուլակյանի խմբում էի, և ավարտվում էր կիսամյակը։

Ես թվարկեցի իմ երեք դերերը երեք հատվածներում։ Դրանցից մեկը ժամանակին Ստալինյան մրցանակի արժանացած «Այս աստղերը մերն են» պիեսից էր, ընդամենը մի երկխոսություն երկու պրոֆեսորների՝ պահպանողական և առաջադիմական։ Ես պահպանողականն էի։

— Իզուր զրպարտված մարդ, — ասաց Աճեմյանը։

— Ո՞վ, — հարցրեցի։

— Քո ներկայացնելիք պրոֆեսոր Աթանասյանը։ Դրակա՞ն է, թե՝ բացասական, ի՞նչ ես կարծում։

Դրականն ու բացասականը այն ժամանակ կերպարների հիմնական չափանիշներն էին։ Ես հասկացա, թե ինչ պատասխան էր ակնկալում Աճեմյանը, և լրեցի։

— Դա պիես չէ, զրպարտություն է, — շարունակեց Աճեմյանը։ Մարդիկ, ճիշտ է մրցանակներ ստացան դրա համար, բայց միենույն է... Կարգին պիես չկա՞ր, ինչ է։ Ինչո՞վ է բացասական էդ... ըըը... Աթանասյանը։ Ասում է՝ ի՞նչ գործ ունեք երկնքի աստղերի հետ, ձեռք մի տվեք երկնքի աստղերին։ Ի՞նչ վատ բան է ասում...»

Աճեմյանը ծիծաղեց։ Ես էլ ծիծաղեցի։

— Ճիշտ է ասում, — շարունակեց: — Էղպես էլ կասես զեկավարիդ:

Իհարկե, ոչինչ չասացի զեկավարիս: Երկրորդ կիսամյակի սկզբում Գուլակյանը մի օր հարց տվեց, թե ինչ պիես կարելի է ընտրել: Աճեմյանի խմբում փորձում էին հատվածներ «Ատամնաբույժն արևելյանից»: Ի՞նչ վատ է, մտածեցի և ասացի՝ «Պաղտասար աղբար»:

— Ի՞նչ դեր ես ուզում:

— Օգսեն:

— Գնա Բաղդասար աղբոր դասարանը՝ փաստաբանություն արա: Ուրիշ ո՞վ է ուզում գնալ Բաղդասար աղբոր դասարանը:

Աճեմյանը չէր հետաքրքրվում մեր բեմադրություններով (Սունդուկյանի «Կտակը», Օստրովսկու «Անմեղ մեղավորները»), Մոլիերի «Սեթևեթու Հիները»): Ի պաշտոնե պարտավոր էր հետաքրքրվել դերասանի վարպետության ամբիոնի վարիչն էր: Նրան չհետաքրքրեց, թե «որակազրկվածներս» ինչով էինք զբաղված երեք ուսումնական տարի այն լսարանի դիմաց, որտեղ ամեն օր ինքն էր լինում:

Վերջին կիսամյակում մենք պատրաստում էինք մի անհետաքրքիր, կեղծ պիես՝ «Անհանդիստ ծերություն»՝ հեղափոխության թեմայի որպես թե հոգեբանական մեկնություն: Գուլակյանը վզիս էր կապել մի դրական ու լավատեսական դեր՝ Բոչարով, որի դրական լինելը հեղափոխական լինելու մեջ էր: Զէի գտնում այդ դերի ներքին գիծը, անհատական կյանքի նշանը: Փորձում էի այնքան անհետաքրքիր, որ ավելին հնարավոր չէր: Գուլակյանը դժգոհ էր.

— Միրե՛լիս, կարո՞ղ ես ավելի անհետաքրքիր լինել:

Ես էլ այնքան դժգոհ էի դերից, որ հանդինեցի պատասխանել.

— Կարող եմ:

— Ուրեմն, եղիր ավելի անհետաքրքիր, սիրե՛լիս:

Այսքանն ասաց և՝ դու քո խիղճը: Ու ես քարշ տվեցի շնչիցս կապած քարը մինչև ավարտական քննություն, տանջվելով ներսում տիրող դատարկությունից: Պետք էր կառչել դերի որևէ անհատական գծից, իսկ միակ անհատական գիծն այն էր, որ առաջին գործողության մեջ այդ մարդուն ասում էին՝ «դուք դարձյալ չեք սափրվել»: Բայց ինչո՞վ քողարկել ներքին դատարկությունը, «խորիմաստ» լուռթյա՞մբ: Ես զբաղվեցի արտաքին տիպական նշաններով՝ մորուք (երկրորդ գործողություն), հնառն փոքր ակնոց, կաշվե բաճկոն, և այսպես դուրս եկավ մի:

— Գլեք Մաքսիմիլիանովիչ Կրժիժանովսկի, — ասաց այդ պահին գրիմանոցի դռան մոտ կանգնած Վավիկ Վարդանյանը:

Դերի արտաքինը գտել էի, ուրիշ ոչինչ: Բեմ մտնելու ցանկություն, միևնույն է, չկար: Կանգնած էի բեմ տանող դռան մոտ և մտածում էր, որ ատում եմ թատրոնը:

— Էդ գո՞ւ ես, — լսեցի Աճեմյանի ձայնը: — Ուրեմն, ես սխալվե՞լ եմ: Դու դերասան ես եղել, ես չե՞մ իմացել: Հա, էլի... Լավ է, շատ լավ է:

— Լավ չի, Վարդան Նիկիտիչ: Սա իմ դերը չի: Բան չի ստացվել...

— Ինչո՞ւ: Ի՞նչ վատ է: Ինչ որ տեսնում եմ, լավ է:

— Ներքին գիծ չունի, — ասացի: — Չեմ գտել ներքին գիծը: Բեմում անելիք չունեմ:

— Ներքին գիծ, չէ՞ մի... Բան եք հնարել: Արտաքինը գտել եւ՝ բավական է: Ի՞նչ անելիք: Հեղափոխություն ես անում... ըը՛ը... դրա ներքին գիծը ո՞րն է: Մտնում ես բեմ, ձայնդ վատ չի, խոսքդ մաքուր է, միզանացենը դրված է... Ուրիշ ի՞նչ... Բարդացնել պետք չէ: Դերը խաղալու համար է, քննադատելու համար չէ:

Ինձ մի քիչ ուրախացրեց «ես սխալվել եմ» խոսքը, բայց արդեն չունեի դրա կարիքը: Զիմացա, ինձ հետ խոսելուց առաջ Աճեմյանը դիտե՞լ էր խաղի սկիզբը,

թե՞ իր տեսածն այն էր, ինչ տեսավ: Ինձ թվաց, որ այդ էր: Նրան տիպամի ակներեւությունն էր հետաքրքրում, իսկ ներքին գիծը, ըստ նրա, վերաբերում էր, ինչպես հետագայում էլ համոզվեցի, բեմադրողին միայն: Այդպես էր բեմադրել «Նամուսը»: Այդպես էր «Չար ողին» ուսանողական բեմում: Դերասանական նախաձեռնություն չկար Աճեմյանի 60-70-ական թվականների բեմադրություններում նույնպես: Ներքին գիծը բեմադրողինն էր, և գերասանն անտեղյակ էր գրանից: Աճեմյանը փայլուն կերպով շահարկում էր գերասանի ակներեւովյալները, այն տիպականը, որ գրված է մարդուս երեսին: Դա չէր վրիպում նրա աչքից նաև առօրյա հանգամանքներում: Իմ թշվառ ինտելիգենտ հեղափոխականի դերում ես գտել էի ընդհանուր, երևութական մի բան, որը նկատելու համար պարտադիր չէր տեսնել ներկայացումը, գրիմանոցի դռանը հանդիպելն էլ բավական էր, կամ, գուցե այդտեղ էլ պետք էր կանգ առնել: Այդ արտաքինը, ես համոզված եմ, լավ էր այնքանով, որքանով ինքս ինձ հետ էի և ինքս էի, ոչ թե բեմական հարաբերություններում:

Ներկայացման վերջում գրիմանոց եկավ Դավիթ Մալյանը, որ ժամանակին խաղացել էր այդ գերը, և չնորհավորեց.

— Լավ ա:

Ես գիտեի, որ խրախուսանքի խոսքերով բեմական կերպար չի ստեղծվում: Վստահությունը ելակետ չէ, եթե չի գտնված դերի ներքին, անհատական իմաստը: Այս էր սովորեցրել Գուլակյանը, և չէի կարող լուրջ ընդունել որևէ գովեատ: Ամենազարմանալին իմ գնահատականն էր՝ գերազանց: Հաջորդ օրը Գուլակյանը միջանցքում մոտեցավ ինձ, ձեռքը ուսովս գցեց, տարավ լուսամուտի մոտ.

— Գիտես, չէ՞ որ էդ գերազանցն իմ գնահատականը չի:

— Կարծում եմ, — ասացի:

— Ճիշտ ես կարծում: Գերազանց առաջարկեցին, ես ինչի՞ պիտի դեմ կանգնեի: Բայց մենք հո գիտենք... Զարմանալի մարդիկ են. կողքից անց են կենում ու որոշում:

Զիմացա՝ ով էր եղել գերազանց առաջարկողը:

Դերերի պաշտպանությունից առաջ Գուլակյանը ինքը որոշեց՝ ով ինչ դեր պիտի ընտրի որպես մասնագիտական հիմնավորման նյութ: Իմը որոշեց՝ «Կտակի» Մամիկոնը: Պետական հանձնաժողովում Վավիկ Վարդանյանը զարմանք հայտնեց, թե ինչո՞ւ չի ընտրված «լավագույն դերը»՝ Բոչարովը: Իմ բացատրությունը պարզ ու կարծ էր, Գուլակյանը գլխով արեց, Վավիկը ժպտաց իր բարի ու բարեկիրթ մարդու ժպիտով.

— Դուք գիտեք, բայց ես, ինչ մեղքս թաքցնեմ, հավանել եմ: Վարդանն էլ է հավանել:

Վարդանն, իհարկե, ներկա չէր: Նրա հավանելը կարեւոր էր ինձ համար իր բարոյական իմաստով: Այդքանը: Գուլակյանը դաստիարակել էր մեր մեջ ինքնագնահատման կուլտուրա, այն է՝ իմանալ սեփական գործի թերությունները և քիչ նշանակություն տալ արտաքին, թեկուզ և շատ հեղինակավոր գովեստներին:

Ի՞նչ պահանջով ու չափանիշներով էր մոտենում Աճեմյանը դերասանական անձին: Մտածել եմ ու ջանացել հասկանալ նրան նաև հետագայում՝ ի մի բերելով մտքումս տարբեր ժամանակ նրանից լսածս խոսքերը: Բավական էր մեկ-երկու խոսք փոխանակել հետը՝ համոզվելու համար, որ նա, եթե խոսքը լուրջ արվեստին է վերաբերում, մաքսիմալիստ էր և ուներ ոչ միայն կայուն, այլև նուրբ և ստույգ չափանիշներ: Այն, ինչ իր շուրջն էր, լուրջ չէր իր համար: Լուրջ ու խորն էր այն, ինչ պատկանում էր իր և իր նախորդ սերնդին, այն, ինչ անցյալ էր կամ անցյալ էր դառնում: Այստեղ էր, որ նա լուրջ ու խիստ էր դառնում, և հետը զրուցելիս

Հասկանում էիր՝ ինչ ասել է թատրոն և գեղասան:

Երկար չեմ զրուցել հետը, ինքն էլ երկար զրույցի մարդ չէր, բայց նրա ո՛չ մի խոսքը, ո՛չ մի հարեւանցի ակնարկը պատահական չէր, եթե անդամ կիսատ էր կամ չձեւակերպված, մտածել էր տալիս, եզրակացությունների բերում:

Մի անդամ երեկոյան քայլում էինք ու զրուցում Աճեմյանի հետ ներկայիս կոնսերվատորիայի դիմացի այգում (կոնսերվատորիայի շենքը դեռ չկար): Ուսանողներից մեկը թիֆլիսեցի, հիացած խոսում էր մեզ անձանոթ մի դերասանի՝ Բարեկեն Ներսիսյանի մասին և այն է՝ դնում էր Փափազյանի կողքին:

— Երբեք, ո՛չ մի դեպքում, — ասաց Աճեմյանը, — ո՛չ մի կապ, ո՛չ մի ընդհանուր բան...

— Ինչո՞ւ, — համառում էր թիֆլիսեցին:

Աճեմյանը խուսափում էր պատասխանից, բայց պատասխանեց.

— Արտաքին տպագորությամբ մի շփոթվեք: Որոշ մաներաներ, ըստ... ֆասոններ... Դրանք ոչինչ չեն նշանակում: Եվ առհասարակ խուսափեք նման համեմատություններից:

Դարձյալ մի հիացական խոսք ասաց թիֆլիսեցին, և Աճեմյանը տվեց իր անսպասելի, մեզ համար անհասկանալի վճիռը.

— Նա չի մտնի հայ թատրոնի պատմության մեջ:

Ես չհասկացա, թե ինչ էր նշանակում այս խոսքը: Ոչ մեկը չհասկացավ:

— Ինչո՞ւ, — հարցրեց թիֆլիսեցին: — Թիֆլիսում է՝ դրա՞ համար...

Աճեմյանը տվեց ավելի անհասկանալի պատասխան.

— Նրա գիծը զբաղված է իրենից առաջ:

— Ի՞նչ նշանակություն ունի, — շարունակեց թիֆլիսեցին և էլի բաներ ասաց, վկա բերեց երիտասարդությունը, ասաց՝ ապագան ցույց կտա և այլն:

— Նա ավարտված դերասան է, — ասաց Աճեմյանը: — Երիտասարդությունը ոչինչ չի նշանակում: Ուշացած է... Ֆրանց Մոոր, էլազիս բաներ և այլ, և այլ...

Աճեմյանն, ինչպես միշտ, կիսատ թողեց խոսքը. միտքը պարզ էր իր համար: Ես չպատկերացրի անծանոթ դերասանի նկարագիրը, բայց քանի որ համեմատականը Փափազյանն էր, հիշողությանս մեջ մնացին Աճեմյանի խոսքերը և սպասումն անծանոթ, ուշացած արտիստի: Այդ զրույցում մի անուն էլ հոլովեց՝ Լուսինյան: Աճեմյանը կարծես չլսելու տվեց: Ուրիշ անդամ էլ տրվեց այս անունը, Աճեմյանը ոչինչ չասաց: Երկու տարի անց Բարեկեն Ներսիսյանը Սունդուկյանի թատրոնի բեմում տվեց իր փառակոր դերյուտը. Մառլիսիո՛ «Ծառերը կանգնած են մահանում» խոպանական պիեսում:

— Ա՛յ, դերասան եմ ասել, — ասաց Արմեն Զիգարյանը:

— Փափազյան կա՞՝ հարցրեցի:

— Զէ՛, բայց... հա՛, համարյա թե, էնքան էլ հեռու չի...

Այս խոսքերը և Աճեմյանից երկու տարի առաջ լսածս մտքումս՝ գնացի, տեսա և... հա՛ էլի, համարյա թե... բայց մի բան այն չէր, ի՞նչ էր, չէի գտնում ձևակերպումը: Հույժ տպագորիչ էր և այս էր ու այս, ինչ ուներ-չուներ, այդպես էլ գնաց: Խաղաց մի դեր ևս՝ Գերգի «Նույն հարկի տակ» պիեսում. կրկնվող մաներայնությամբ, որ միայն տոնով էր տարբերվում պոլսեցիների ասած «Էֆեկտներու դպրոցից»: Այս արտաքին տպագորության տակ Խուրեն Զարյանն շտապեց և տվեց իր հապճեպ, էմոցիոնալ գնահատականը.

— ...նա փոխարինելու է Վաղարշյանին, Ներսիսյանին, գուցե և Փափազյանին: Իզուր չէ, որ նրա ազգանունը Ներսիսյան է:

Վաղարշյանը վրդովկեց: Հաջորդ օրը ինստիտուտի պրոֆեսորական սենյակից լսում էինք նրա պաթետիկ ձայնը.

— Ում ուզում է փոխարինի, Վաղարշյանին փոխարինել չի՝ կարող...

Եվ այսպես, վեճի առարկա արտիստը տարիներ շարունակ քարշ տվեց ոռմանտիզմի դիմակը, և ես վերջնականապես հասկացա Աճեմյանի խոսքերի իմաստը. «Ֆրանց Մոոր, էդպես բաներ...»: Իսկ երբ թիֆլիսում տեսա Լուսինյանի Օթելլոն, պարզ դարձավ նաև Աճեմյանի խուսափողական, ամոթխած լուսությունը: Հետագայում առիթներ եղան նկատելու, որ Աճեմյանը չէր սիրում խոսքի նյութ դարձնել չհավանած բանը: Թվում էր (չգիտեմ որքանով է ճիշտ իմ տպավորությունը), նա ամաչում էր դրանից: Գուլակյանն անխնա ծաղրում էր ֆալը և որակումներ տալիս («արևի տակ հավի ծերտն էլ աբասի կերեա», «էդ խառը կանաչի ծախողի ձենով չխոսես», «ի՞նչ ես քոռ աշըդի պես մատդ մի լարին պնդացրել» և այլն), իսկ Աճեմյանը միայն սրտնեղում էր: Այդ վիճակը ես հետագայում ավելի լավ հասկացա: Կեղծիքն խկապես ամաչեցնող է: Թվում է, ինքդ ես հեղինակը թեկուզ և հանդիսատեսի վիճակում: Թատրոնը սիրողը գուցե պետք է չտեսնի կամ կարողանա դիմանալ կեղծիքի ներկայությանը, իմանալով, որ դա չափում է տոննաներով, իսկ ճշմարտությունը՝ գրամներով, և գուցե այդ գրամներն ստանալու համար է պահպում կեղծիքի որջն՝ այդքան հանդիսավոր:

Չորս տարվա ընթացքում պարզեցի (իհարկե՝ մոտավոր), որ թատրոնի գաղափարն եմ սիրում, ոչ թե նրա իրականությունը: Ի՞նչ իմանայի, որ դա թատրոնի գիտությունն է: Ճիշտ էր Աճեմյանը, որ ինձ մղում էր այդտեղ, և ես էլ ճիշտ էի, որ գաղափարից առաջ իրականությունն էի շոշափում: Ժամանակ էր պետք ըմբռնելու համար, որ թատրոնի պատմությամբ զբաղվելը

գաղափարի զտումն է, քննադատությունը՝ գաղափարի պաշտպանությունը:

Եվ այսպես, Աճեմյանի հետ մեկ էլ հանդիպեցի, երբ զբաղված էր գաղափարի զտումով:

Խոսում էինք «Պեպոյի» իր բեմադրության (1966) մասին: Լուռ, զարմանալի ուշադիր լսում էր: Սպասում էի առարկության, բայց ոչ մի խոսքիս չառարկեց: Նման բանի չէի հանդիպել ու հետագայում էլ չհանդիպեցի: Մինչև օրս ոչ մի ոեժիսոր չի լսել ինձ այդպես՝ շփոթեցնելու աստիճան ուշադիր: Ես երկու առարկություն ունեի: Առաջինը վերաբերում էր Բարկեն Ներսիսյանի Պեպոյին՝ էլեմնոգրաֆիական պճնանքով, վստահ ու անկիրք: Աճեմյանը լսեց ժպիտով և ինձ ծանոթ ամոթխածությամբ, կարծես ինքն էր խաղացողը: Ասացի, որ ինձ արամադրում է Խորեն Աբրահամյանի Պեպոն՝ պարզ ու անհավակնոտ, հոգսի տակ ընկած բնական մարդ:

— Զմշկյանի գիծն է,— ասաց Աճեմյանը:

Զէի մտածել այս մասին: Հետո մտածեցի, որ ավանդությունը միայն ոճին չի վերաբերում, գուցե ավելի շատ՝ ներքին իմաստին: Այլապես ավելի ավանդական է երեսում Բարկեն Ներսիսյանի Պեպոն՝ իր էլեմնիկական ոճավորման տարրերով և դիմահայաց, ցուցադրական խաղով ու գեղեցկայնության ձգտումով:

— Իսահակ Ալիխանյանից է գալիս,— ասաց Աճեմյանը:

Այստեղ ես հիշեցի նրա տասներկու տարի առաջ ասած խոսքը: ԱՇ թե ինչ ասել է՝ «նրա գիծը զբաղեցված է իրենից առաջ»: Հիշեցրի, չհիշեց, զարմացավ ու զվարթացավ.

— Ես էդպես բա՞ն եմ ասել, հա՞ն եմ ասել:

— Վաղուց, — ասացի, — 1954 թվին, երբ Բարկեն Ներսիսյանը դեռ թիֆլիսում էր:

Աճեմյանը ծիծաղեց.

— Զի՞, դու վտանգավոր մարդ ես եղել: Ո՞նց թե՝ գիծը բոնված է... Ուրեմն, քո ասելով...

— Դա իմ խոսքը չէ:

— Դո՛ւ ես հիշում: Ուրեմն, նա պիտի թիֆլիսում էլ մնա՞ր, եթե գիծը... ինչ ասացիր, զբաղեցվա՞ծ...

— Ալիխանյանն ինչո՞ւ ժամանակին չմնաց Երևանում,— ասացի:

— Դժվար հարցեր են: Բայց ես համաձայն եմ: Բարկենի Պեպոն իմ պատկերացրածն էլ չի: Խորենն էլ, եթե ուզում ես իմանալ, իմ պատկերացրածը չի: Զմշկյանի գիծը... ես մոտավոր բան եմ ասում: Որպես ըմբռնում: Դա նկատի ունեմ: Թե չէ, ո՞վ է տեսել Զմշկյանին:

Իմ մյուս առարկությունը վերաբերում էր առաջին տեսարանին: Շուշանը բակում է, Կեկելը՝ կտուրին: Գյուղական տեսարան է թիֆլիսյան համայնապատկերի փոնի վրա: Սունդուկյանի նախատեսած իրավիճակները հիմնականում սենյակային են, ինչպես XIX դարի ամբողջ դրամատուրգիայում, եթե նկատի չառնենք դարի առաջին կեսի արկածային մելոդրամաները: Համենայն դեպս, «Պեպոյի» բոլոր տեսարանները սենյակային են: Այս ասելով, ես նկատի ունեի անձանց խոսքը, բայց Աճեմյանն ընդհատեց ինձ, ակամա մղելով մտքիս շարունակությանը.

— Քո կարծիքով, ինչպե՞ս է որոշվելու միզանացենը, ըստ հեղինակի ռեմարկների՝ և նախնական ցուցումների՝: Ռեժիսորն իրավունք չունի՝ խախտելու հեղինակի՝ փակագծում ասված խոսքերը:

— Կարող է, — ասացի: — Միզանացենը փակագծում տրված ցուցումներով և ռեմարկներով չի որոշվում, անկախ նրանից, դրանք պահպում են, թե ոչ: Միզանացենը որոշվում է գործող անձանց խոսքի բովանդակությամբ ու տոնայնությամբ:

— Մի օրինակ բեր, — ասաց Աճեմյանը, — տեսնեմ՝ ո՞ր խոսքը նկատի ունես:

— «Ով գիդի, ջուրը մինձացավ, ո՞վ գիդի, իմքնի եղնեն ննդավ ու ինքն էլ հիդը գնաց...»:

Աճեմյանը լսեց ու մտածկոտ նայեց ինձ.

— Որոշիր՝ որտե՞ղ է երկում միզանացենը:

— Խոսքի ուղիղ իմաստի ու տոնայնության մեջ, — ասացի: — Սա որդու կյանքի վրա դողացող մոր տագնապի արտահայտությունն է: Մայրը կարո՞ղ է այս խոսքը բարձր արտասանել՝ բակից կտուր կանչելով: Սա, ըստ իս, շշուկով ասվելիք խոսք է, սենյակի լոռության մեջ...

Սպասում էի Աճեմյանի պատասխանին: Շատ զարմացաց. պատասխան չեղավ: Ուշադիր նայում էր ինձ. սպասում էր, որ էլի բան ասեմ: Ես ասելու բան չունեի, այսինքն՝ առարկություն չունեի այլեւ:

— Դու որտե՞ղ էիր մինչև հիմա, — հարցրեց: — Թարունից հեռու ես պահում քեզ: Ինչո՞ւ:

Ասացի, որ քննադատը պետք է հանդիսատեսի մուտքից մտնի թատրոն, տոմսի համար վճարելով, ոչ թե գերասանական մուտքից՝ բեմադրողի հրավերով, որպեսզի ճիշտ տեսնի ներկայացումը, չկորցնի անաչառությունը: Ասացի նաև, որ մեր այս զրույցը սխալ է՝ կանխում է գրելիքը. ինչ որ ասվեց, ասված է, չի կարող գրվել, ուրեմն՝ իմ առարկությունները թատերախոսականում չեն լինելու:

— Ո՞չ մի կաշկանդում, — ասաց Աճեմյանը: — Ինչ մտածում ես, գրում ես. վե՛րջ:

— Բայց այն, ինչ չեմ ասել, — պատասխանեցի:

— Ուրեմն, եթե կարծիքդ ըը՛... դրական է, մտքումդ պահիր:

Մեր զրույցն ընդհատվեց նախրի Զարյանի մարտական մուտքով: Նա եկավ ներքուստ հուզված և հուզումը զսպած: Բարեկեց, նստեց, իր ասելիքն ասաց հանգիստ ու դանդաղ.

— «Արա Գեղեցիկը» տանում եք Բեյրութ: Իսկ եթե

Հանդիսատեսը ցանկություն ունենա տեսնելու հեղինակին, ի՞նչ եք պատասխանելու:

Աճեմյանը պատասխանը գտավ տեղնուտեղը.

— Հանդիսատեսը կարող է ցանկություն ունենալ տեսնելու նաև ըը՛... Վիլյամ Սարոյանին:

— Սարոյանի հանգամանքն...

Առանձնասենյակ մտավ Գուրգեն Զանիբեկյանի զանգվածը, և Զարյանի տոնն ընկավ.

— ...ուրիշ:

— Էդ ո՞վ ա ուրիշ, — խոսքին անտեղյակ միջամտեց Զանիբեկյանը:

— Նաիրի Զարյանը, — ասաց Աճեմյանը:

— Ընչի՞... հա՛, հա՛, հա՛, — ծիծաղեց զանգվածը՝ տարածուն ու թափշածայն:

— Էդպես... ըը՛... Մերձավոր Արևելքի բնակչությունը պահանջում է, որ նա ներկայանա... անհապաղ:

— Ո՞վ է վճռում այդ հարցը, — շանում էր պահպանել իր գուստ տոնը Զարյանը:

— Գուրգենը, — ասաց Աճեմյանը կեղծ բանսարկուի ժպիտով, կարծես սպասելով, որ մարդը բացվի:

Աճեմյանն աչքիս առաջ դրամատուրգիական կոլիզիա էր ստեղծում: Ինձ թվաց, որ ահա երկու հզոր զանգված բախվելու են: Ես տեղիցս ելա. ուզում էի դնալ:

— Դու մի գնա, — ասաց Աճեմյանը, — սպասի՛ր, խոսելու բան կա:

Թվում էր, թե այս է՝ երկրաշարժ է լինելու: Բայց Զանիբեկյանն իսկույն կռահեց կատակը: Զարյանը ձևանում էր անվրդով, խոսում էր անհամարձակ, կարծես ամաչում էր իր պահանջից: Վիճակը չսրվեց: Զանիբեկյանն ու Զարյանը խաղաղ զրուցելով դուրս եկան: Աճեմյանն սպասողական ժպիտով հետևեց նրանց դուրս գալուն և՝

— Տեսա՞ր... Ուզում էի կովացնել, չեղավ: Նկատե՞լ

ես, աչք չկա Զանիբեկյանի խաղում, աչքերով չի շփվում, նրա ոեակցիան ձայնային է, և տոնը լավ է պահում:

Հիշեցի Զանիբեկյանի երկու մատիտանկար պատկերները՝ Աճեմյանի ձեռքով արված, մեկը՝ դիմահայաց, մյուսը՝ կիսադեմ, երկու տեղում էլ աչք չկա, աչքերի տեղում թուղթն սպիտակ է, ոչ մի կետ, ոչ մի գիծ: Մարդը սեհուուն նայում է առաջ առանց աչքերի, հոնքերով ու ծնոտով, աչքի կարիք չի զգացվում: Այդպես էր և Զանիբեկյանի խաղը, հատկապես վերջին շրջանում: Նրա վերջին գլուխգործոցները՝ Վարրավինը («Դատական գործ») և Սոլոմոնը («Գինը») կույր էին իրենց շրջապատի հանդեպ: Խաղակցին նայելիս շրջվում էր ամբողջ զանգվածը: Դա տալիս էր ուժի և կենտրոնացման տպավորություն:

Աճեմյանի դիտողականությունը սուր էր և յուրահատուկ: Նա տեսնում էր տիպաժը և գերասանական ֆակտուրան, ինչպես ոչ ոք: Տեսնում էր ձևախախտումները, «պակասությունները» որպես առանձնահատկություն, նկատում էր իմաստ թելադրող ձեեր և կանգ էր առնում մեկ-երկու տիպական գծերի վրա: Դերասանին նա տեսնում էր նկարչի, ոչ միշտ հոգեբանի հայացքով:

Մի անգամ խոսք եղավ Վաղարշյանի մասին, Աճեմյանը տվեց նրա արտաքին բնութագիրը.

— Աչքերը խորն էին, քայլը՝ սահուն, դեմքը՝ անշարժ: Խորեն Աբրահամյանի մասին.

— Որ ճակատ չունի, ոչինչ. ներքին պլաստիկան ճնշված է մարմնի մասսայի մեջ: Անմիտ զգում է սիտուացիան և... նեղութում է, զոռում: Նա շփման ուրիշ ձև չունի...

Մհեր Մկրտչյանի մասին.

— Կմախք չունի, մարմինը ցած է թափվում վերարկուի նման, աչքերը՝ անօգնական... ա՛յ, այսպե՛ս, — ասաց ու թերը ցած թողեց, քիթը կախ, աչքերը վեր,

ասես՝ մարդն ընկնում է և առաստաղից կառչելու տեղ է փնտրում...

Աճեմյանի բնութագրումները միշտ կարծ էին, խուսափողական: Նա նկատում էր բաներ, որ չէին երևում շատերի աչքին, և շրջանցում էր բաներ, որ շատ տեսանելի էին: Բնութագրումների մեջ նա ավելի մերժողական էր, քան հաստատող: Միշտ ուզեցել եմ պարզել, թե որտե՞ղ էր Աճեմյանն անվերապահ, ի՞նչն էր նրան հիացնում կամ զարմացնում: Փափաղյանի կողքին էր, բայց այնպես էլ չիմացա, թե ինչ էր մտածում Փափաղյանի մասին: Փափաղյանի կարծիքը մոտավորապես հայտնի էր.

— Վարդա՞նը... Ափոս, որ մարդը եվրոպա չի տեսել. եթե տեսած լինե՞ր...

1967 թվի աշնանը երկանում էր Մադլեն Ռոբինսոնը իր փոքր խմբի հետ: Առաջին օրը ներկայացրեցին Ժան-Պոլ Սարտրի «Դոնֆակ» պիեսը՝ հանդիսատեսին և ընթերցողին բացարձակորեն անծանոթ գործ: Վարդագույրը փակվեց, պարտերի առաջին կարգերի միջանցքում գիմացս կանգնած էր Աճեմյանը մի տեսակ շփոթված ժպիտով: Իր ծանոթ հարցական հայացքով նայում էր ինձ: Առաջին գեպքն էր, որ պիեսին անծանոթ լինելով ու լեզուն չիմանալով՝ չէր կարդացել կոռահել իրադրության մոտավոր իմաստը:

— Լեզուն չգիտենք, պիեսին ծանոթ չենք, — ասացի:

— Համոզված եմ, — ասաց Աճեմյանը, — որ լեզուն իմանալու դեպքում էլ ոչինչ չէինք հասկանալու:

— Հավանաբար, — համաձայնեցի ես:

— Համոզված եմ: — Աճեմյանը կրկնեց իր խոսքը և շարունակեց: — Դու կարծում ես՝ լեզուն իմացողները որևէ բան հասկացե՞լ են: Բառերն են հասկացել: Լեզուն չիմացողներս մեր արդարացումն ունենք, իսկ նրանք հիմար գրության մեջ են: Ինչի՞ մասին է պիեսը, չգիտեմ, բայց գիտեմ, որ անհասկանալի է, մեզ համար չի գրված:

— Ես պարզեցի, թե ինչի մասին է պիեսը, — ասաց այդ պահին մեզ մոտեցած Հայկուհի Գարագաշը: — Ուրեմն, այս երեք հոգին մեռած են, և ուղարկվել են դժոխք: Սենյակը դժոխքն է՝ դուռը հավերժորեն փակ, և այս երկու կանայք ու երիտասարդը դատապարտված են մնալու փակ դռների հետևում:

— Ասացի, չէ՞՝ ծիծաղեց Աճեմյանը, — այս պիեսը մեզ համար չի գրված: Սիտուացիան պարզվեց, և ոչինչ պարզ չէ:

Հնդմիջումից հետո ներկայացվեց Ժյուլ Ռենարի «Տան Հացը», որտեղ Հոգեվիճակներն ու փոխհարաբերությունը տեսանելի էին այնքան, որ բառերը հասկանալու կարիք չկար: Վարագույրը փակվեց, փնտրեցի Աճեմյանին, չգտա: Երկու օր անց, Մադլենի երրորդ ներկայացումից դուրս գալիս (դա ժան Կոկտոյի «Զայն մարդկային» պիեսն էր) Աճեմյանը կողքիս էր և երևում էր, որ հիացած էր: Ուզեցի խոսեցնել.

— Եթե մի բան հասկանալի է, — ասացի, — հասկանալի է նաև առանց բառերի: Կարեոր չէ, թե ինչ է ասվում, կարեոր է, թե ինչ է կատարվում մարդու հետ:

— Կդնաս և կգրես, — ասաց Աճեմյանը, — մտքումդ պահիր ասածդ:

— Գրել առանց գրական հիմքն իմանալո՞ւ:

— Եթե բեմական հիմքը պարզ է, ի՞նչ կարեոր է գրական հիմքը: Ի՞նչ հիմքով է ստեղծվում պիեսը, գրակա՞ն, թե՞ բեմական:

Կանգնած էինք դերասանական մուտքի մոտ: Ուզում էի պարզել Աճեմյանի լրիկ տպավորությունն ու կարծիքը:

— Ի՞նչ վարպետություն, — ասացի, — զարմանալի վարպետություն: Ես զարմացած եմ:

— Ինչ որ ասում ես, համաձայն եմ, — պատասխանեց Աճեմյանը, — վարպետություն, տաղանդ, կուտուրա, ամեն ինչ, բայց ես զարմացած չեմ:

— Քանի՞ այսպիսի դերասանուհի ունի ֆրանսիական բեմը, չգիտեմ... Գուցե՛ Մարիա Կազարես, Մաղլեն Ռենո...

— Գուցե՛ և այս մեկը, — պատասխանեց, — բայց ես զարմացած չեմ:

— Զէ՛, — ասացի, — ինձ գարմացնում է:

— Ի՞նչը, վարպետությո՞ւնը:

— Այո՛:

— Դա ի՞նչ զարմանալու բան է: Ամեն ինչ պարզ է...

— Հենց այդ պարզությունը... Զարմանալի չէ՞ թե ինչպես է ինքնստեղծվում՝ հանդիսատեսի աչքի առաջ մեկառմեկ ի մի հավաքելով կառուցվածքի մասերը:

— Ոչ մի գաղտնիք չկա, — անառարկելի վերջակետ դրեց Աճեմյանը:

— Դուք առեղծվա՞ծ եք ուզում, Վարդան Նիկիտիչ:

— Ըստ՝ գտա՛ր: Առեղծված չկա, զարմանալու բան չկա:

Դերասանուհին մտածված կերպով ի ցույց էր դնում կերպարի տոնային ու պլաստիկական կառուցման ընթացքը՝ վարպետության բոլոր տարրերի հստակումով, թե այդ տարրերը որոնող կամ ճանաչող լիներ: Ես համաձայն չէի Աճեմյանի հետ, թե չի կարելի զարմանալ վարպետության վրա: Հետագայում պարզեցի, որ խաղի այս եղանակը հատուկ է ֆրանսիական դպրոցին: Զարմանալին այն էր, որ Մաղլենի խաղը «չէր ջնջում հիշողությունից»՝ ինչպես ասել էր նրա մասին Մարկ Ժիլբեր Սովածոնը, և ասաց մեկ տարի հետո Փափագյանը՝ «դուք տեսա՞ք այդ կնոջը. չի մոռացվում»:

Աճեմյանի հետ այս մասին խոսելու առիթ, պարզ է, չեղավ: Ինձ համար դա խնդիր չէր: Բայց խնդիր էր, թե ո՞րն է դերասանական արվեստի նրա չափանիշը:

1974 թվի ամռանը թատերական ինստիտուտում ընդունելության քննությունների հանձնաժողովում էի, բեմական խոսքի քննություն էի ընդունում: Աճեմյանը

հանձնաժողովում կարծեմ ինչ-որ հսկողական դեր ուներ. չէր գալիս, չէր հետաքրքրվում: Մի անգամ միայն եկավ, բարեեց, գնաց:

— Պրոտեմե չունի՝ չի գալիս, — ասաց մեկը, չեմ հիշում՝ ով:

Բայց ահա քննության մտավ կիսագանգուր գլխով, նեղ ճակատով մի երիտասարդ և ինքնավստահ ու արհամարհական կեցվածքով կանգնեց հանձնաժողովի առջև:

— Աճեմյանի պրոտեմեն, — շշնջաց ականջիս հանձնաժողովի նախագահ Արտաշես Հովսեփյանը:

Ընդունեցի այս խոսքը որպես կատակ: Երիտասարդը նստեց աթոռին, ձեռքով բռնեց ճակատը և մի վերամբարձ, ամբարտավան, կեղծ ողբերգական տոնով ու կեղծված ձայնով սկսեց ողբածայն, հանդիսավոր ողբալ կողկողագին՝ «քամի՛ն, աշնան քամի՛ն...»: Ես՝ ի պաշտոնե լրջորեն լսողս, ամոթահար եղա, բայց զսպեցի ինձ ու փորձեցի բացատրել մարդուն, թե կարելի է այդ նույն խոսքերը մի քիչ ավելի մարդկային տոնով արտասանել: Երիտասարդը լսեց արհամարհանքով և ասաց, որ դա իր ըմբռնումն է, և չի պատկերացնում, թե հնարավոր է ավելի լավ կարդալ: Առարկեն անհնար էր: Նա մի առակ կարդաց ինչ-որ ալիքի ու փրփուրի մասին և «փրփուր» բառը, որ մի քանի անգամ կրկնվում էր, ուղղում էր ուղիղ ինձ ցուցադրական արհամարհանքով: Վերջացրեց, դուրս եկավ:

— Ի՞նչ պատասխան ենք տալու Աճեմյանին, — ասաց Արտաշես Հովսեփյանը:

— Ո՛չ մի պատասխան, — ասացի: — Այս տղան գուցե ապաշնորհ չէ, պատկերացնումներն են սխալ և խոսքի ականջ կախող չէ: Բավարարից ոչ ավելի:

— Շատ լավ: Պատասխանատվությունը ձեր վրա:

Աճեմյանը եկավ մյուս օրը և միջանցքում ինձ կանգնեցրեց.

- Էս ի՞նչ ես արել մեր տղային:
- Այդ մեր տղան ոտքից գլուխ ֆալշ է, - ասացի:
- Ինչո՞ւ... Շնորհը ունի:
- Ամբարտավան է և լկտի, - պատասխանեցի: - Նրան շատ հեշտ կարելի էր անբավարար նշանակել:
- Աճեմյանը մի պահ լռեց և՝
- Լավ չես արել, այսինքն ըը՛... ճիշտ ես արել: Կարելի էր անբավարար, բայց որոշել ես բավարա՞ր: Ել ի՞նչ է ուզում հիմարը:

Աճեմյանի «պրոտեկցիան», թվում էր, այսքանով վերջացավ, բայց... Նա որոշեց իրականացնել իրեն հանձնարարված հսկողական դերը. եկավ նստեց հանձնաժողովի մեջտեղում, մի մատիտ գտավ, մի թուղթ, սկսեց նկարել: Ով էր քննության մտնում, ինչ գնահատական էր ստանում, պետքը չէր: Քննությունը նրան չէր հետաքրքրում: Բայց հանկարծ որոշեց հետաքրքրվել և պաշտպան կանգնեց երկու ապաշնորհների: Երկու անգույն տղա. ո՞չ տեսք, ո՞չ ձայն, ո՞չ լեզու, ո՞չ խելքի նշան: Թվում էր՝ այս մարդիկ կանգնած են եղել փողոցի անկյունում, մեկն ասել է, թե տղերք, չփորձե՞նք դերասան... Այս տղաների ապաշնորհ երկույթը շատ ակներև էր: Հանձնաժողովի չորս անդամներս՝ Արտաշես Հովսեփյանը, Զարեհ Մուրադյանը, Կիմ Արզումանյանը և ես նույն կարծիքին էինք: Միայն Աճեմյանն էր, որ համառում էր և՝ ոչ մի հիմնավորում.

- Գերազանց կամ լավ:
- Չենք զիջելու, - շշուկով ականջիս ասաց Կիմ Արզումանյանը:

Արտաշես Հովսեփյանը նայեց երեսիս, աչքերս փակեցի, գլուխս շարժեցի բացասաբար: Աճեմյանը ոչ մեկիս երեսին չէր նայում: Նա որոշեց վիրավորվել (նրա այս ձևական վիրավորանքն էլ ոմանք ընդօրինակել են) և մատիտը ցած դրեց.

- Դուք էլ կասեք, թե հարգում եք ինձ, հա՞:

Այս խոսքերն ասաց ցածր, դանդաղ, առանց մեկիս երեսին նայելու:

- Դե լավ, - հոգոց քաշեց Արտաշեսը:

Բոլորս միաձայն զիջեցինք մեր արդեն անիմաստ դիրքը: Զափանիշները խախտվեցին: Աճեմյանը վեր կացավ, գնաց: Նրա գնալուց մեկ ժամ էլ չէր անցել, սենյակ ներխուժեց մի զայրացած կին.

- Թատրոնի կործանիչնե՞ր... դուք և ձեր նմանները...

- Տիկի՞ն, նախ հանգստացեք, հետո...

Արտաշես Հովսեփյանի հանգիստ տոնից տիկինն ավելի բորբոքվեց.

- Ընկե՞ր Աճեմյան...

- Ես Աճեմյանը չեմ, ես Հովսեփյանն եմ:

Բողոքավորները շատ չէին՝ երկու, թե երեք հոգի: Ազմուկը շարունակվեց երկրորդ օրը: Արտաշեսն աշխատում էր հանգիստ խոսել, բացատրել, հիմնավորել: Նա կրակն իր վրա էր առել, ոչ մեկին օգնության չէր կանչում և՝ «Հարգելի տիկին, լսե՞ք ինձ... սիրելի՞ս...»: Ես դուրս եկա սենյակից: Աճեմյանը միջանցքում ետ ու առաջ էր քայլում, ձեռքերը մեջքին, գլուխը վեր, անվրդով: Բողոքավոր տիկնոջ ձայնը չէր լսվում: Նա կարծես հանգստացել էր: Բայց հանկարծ լսվեց ուրիշ գոռոց: Արտաշեսի նյարդերը չէին դիմացել: Հիմա էլ նա էր գոռում իր խուլ ձայնով: Դա գոռոց չէր, այլ կողկողագին հառաջանք:

- Ի՞նչ է եղել, այս ի՞նչ ձայն է, ո՞վ է, - զարմացավ Աճեմյանը:

Ասացի, որ երեկվա քննությունից դժուհներ կան, եկել, բողոքում են:

- Հասկանալի է, բայց ի՞նչ կարիք կա... Մարդը ձայն չունի, այդպիսի ձայնով չի կարելի ըը՛ը... գոռզուալ:

Նա բացեց պրոֆեսորական սենյակի դուռը.

— Արի, գործ չունենք աղմուկի հետ:

Ես, անտարբեր ձևանալով, որպես թե իմիջիայլոց հարցրեցի, թե իսկապէ՞ս հավանում է երեկով տղաներին, որ գերազանցով գնացին: Զպատասխանեց: Զիմացա, չլսե՞ց, թե՞ չլսելու տվեց իր հին սովորությամբ: Հարցի գործնական կողմն ինձ չէր հետաքրքրում. ի վերջո տարբերություններն աղաղակող չէին, ընդունվող թե չընդունվող, բոլորն էլ ուղեկորույս, աննպատակ երիտասարդներ: Ես ուզում էի իմանալ, թե ի՞նչ հատկանիշի հիման վրա է նա որոշում մարդու գերասանական ապագան: Աճեմյանը խուսափում էր պատասխանից:

— Հայրիկդ ինչպե՞ս է,— հարցրեց անսպասելի:— Թատրոն գալի՞ս է: Ինձ թվում է, չի գալիս: Վաղուց չեմ տեսել:

— Թատրո՞ն, երեխ տարին մեկ անգամ,— ասացի:

— Պարզ է: Աբելյանի, Հասմիկի, Խաչանյանի հանդիսատեսները հիմա թատրոն չեն մտնում: Գան, ո՞ւմ տեսնեն:

Դուռը բացեց Արտաշես Հովսեփյանը և տանջագրու գունատ երեսով նայեց մեզ:

— Արի՛, արի՛,— կանչեց Աճեմյանը:

Արտաշեսը ներս չեկավ, դուռը ծածկեց, գնաց:

Ես վերադարձա իմ հարցին, որից ամեն կերպ հեռու էր նետվում Աճեմյանը: Ի վերջո ինքը հարցրեց.

— Քո կարծիքով, տարբերությունները շա՞տ մեծ են:

— Շատ չէ,— պատասխանեցի, — բայց կան, զգալի են: Բողոքն իցուր չէ:

— Իգո՞ւր է, իգո՞ւր: Խելքը գլխին մարդն ի՞նչ գործ ունի այստեղ:

Նա ոչ միայն թատերական կրթությունն էր անլուրջ համարում, այլև բոլոր նրանց, ովքեր որևէ ձևով կապված էին դրա հետ: Բոլոր դիմորդներին նա համարում էր մոլորվածներ՝ անխելք ու անլուրջ: Այն մտքին էր, որ

հայ թատրոնում ինչ եղել է, վերջացել է կամ վերջանում է, նոր բան, մեծ բան չի լինելու, չսպասեք: Ես կրկնեցի այն ժամանակ արձարծվող մի միտք, թե միգուցե արվեստի բնո՞ւյթն է փոխվում, և դերասանական անհատի դերը նվազում է: Նա չհամաձայնեց.

— Թատրոնի բնույթն ինչո՞ւ պիտի փոխվի, չեմ հասկանում: Թատրոնը մնալու է թատրոն: Ի՞նչն եք ուզում արդարացնել, ո՞ւմ... Հին ոճ, նոր ոճ, հնարված բաներ են: Արվեստը եթե արվեստ է, չի հնանում են շտամպները և մաշվում են:

Ես հենց այս էի ուզում լսել և շարունակեցի.

— Ուրեմն, այն, ինչն անվանում են հին, մաշված շտամպն է:

— Միայն ու միայն: Ոչ մի տաղանդավոր դերասանի չեն ասում Հին: Թող հիմա Աբելյանի նման մի դերասան լիներ... Մեծ որ ասում են, Աբելյանն էր՝ իմ իմացած ամենածշմարիտ, ամենաէմոցիոնալ դերասանը:

— Չեմ պատկերացնում դերասանական տիպը, — ասացի:— Լուսանկարները չեն տրամադրում:

— Հնարավոր է: Եթե չես տեսել դերասանին, լուսանկարները ոչինչ չեն կարող ասել: Ոչ մեկի մասին հնարավոր չէ լուսանկարով դատել: Դերասանի ներքին հմայքը, էմոցիան չեն կարող երևալ:

— Այնուամենայնիվ, ուզում եմ պատկերացնել՝ ի՞նչ դերասան էր Աբելյանը: Արտի՞ստ էր:

Աճեմյանն անմիջապես հասկացավ, թե դեպի ուր եմ թեքում հարցը:

— Նայած թե ինչ ես հասկանում «արտիստ» ասելով: Փափազյա՞ն:

— Այո՛, — ասացի, — Փափազյա՞ն:

— Այդ ըմբռնումով՝ Աբելյանն արտիստ չէր:

— Շատ լավ, — շարունակեցի ես, ուրիշ չափանիշ ընտրենք. Հրաչյա Ներսիսյան՝ հուզական դերասան:

— Ո՛չ, — ասաց Աճեմյանը:— Աբելյանը շատ տարբեր

Քր: Ոչ մի նմանություն: Նա չուներ Հրաչյայի ո՛չ բեմական հմայքը, ո՛չ էլ բնական արտիստիզմը:
— Ի՞նչ մնաց:

— Օ՛, շատ բան: Աբելյանի հոգեկան խորությունը մեծ էր: Միայն բոպեական պոռթկումներով չի կարելի որոշել դերասանական էմոցիայի չափը: Աբելյանի խորությունը նյուանսների մեջ էր՝ հոգեբանական և խարակտերային նյուանսներ: Հրաչը դա չուներ: Նյուանսների այն հարստությունը, որ Աբելյանն ուներ, ոչ մեկը չուներ:

— Պարզ է, — ասացի, — հիմա հասկացա: Կարեոր մի բան պարզ է:

Աճեմյանը շարունակեց.

— Հրաչյայի խաղը բոնկումներից էր կազմված. Կտոր-կտոր բոնկումներ: Ճի՞շտ է: Դու նյուանսներ նկատե՞լ ես նրա խաղում:

— Պալտասարը...

— Ուրի՞շ... Զես կարող ասել: Թատրոնում, կինոն նկատի չունեմ, դա միակ դերն էր, որտեղ Հրաչյան խարակտերային էր և տիպական: Աբելյանը բոլոր դերերում խարակտերային էր և տիպական: Նրա նյուանսներն այդտեղից էին: Աբելյանի համար չկար ոչ խարակտերային դեր: Նրա համար չկար էմոցիա խարակտերից դուրս: Աբելյանը միշտ կոնկրետ էր: Ոչ մի վերացականություն:

— Ինձ թվում է, — ասացի, — որ այդ խարակտերային կոնկրետությունն է արգելք եղել նրա Համլետ խաղալուն:

— Ի՞նչ պարտադիր էր, որ Աբելյանը Համլետ խաղար:

— Պարտադիր չէր: Ինքն է ուզեցել:

Այս խոսքիս վրա Աճեմյանը հապաղեց մի քիչ ու պատասխանը գտավ.

— Ասացի չէ՞ որ Փափազյանի չափանիշով արտիստ չէր Աբելյանը: Եվ Փափազյանն էլ, եթե Աբելյանի

չափանիշով կողմնորոշվենք, խարակտերային և տիպական էր միայն մեկ դերում Օթելլո: Օրինակ, նրա Համլետի մասին ի՞նչ կասեն:

— Համլետը ո՛չ տիպ է, ո՛չ խարակտեր, այլ տրանսցենդուս: Խարակտերային կոնկրետացում չի պահանջում, ուրիշ բան է պահանջում:

— Զգիտեմ ինչ է դա: Բայց Աբելյանը դրա կարիքը չուներ:

— Ասում են, որ նա ֆրակի դերասան չէր, ճի՞շտ է, — հարցը եցի ես:

— Դրա կարիքն էլ չուներ: Նա առհասարակ հակառակ էր սալոնային ձևերին, հակառակ էր ամեն կարգի մաներայնության: Աբելյանի համար կարեորը կերպարի հոգեկան կյանքն էր:

— Լսել եմ, — շարունակեցի ես, — Գուլակյանն է ասել, որ Աբելյանի խաղի նպատակը հուզական է ֆեկտն էղել:

— Դա ճիշտ է: Նա խաղում էր պոռթկալու համար: Բայց Աբելյանի պոռթկումը ինչ-որ պատահական բոնկում չէր: Նա հետեղականորեն հասունացնում էր հուզմունքը: Այդ հասունացման պրոցեսն էր հետաքրքիր: Այդտեղ էին նրա նյուանսները, գույները... Գո՛ւյն, գո՛ւյն... Գույն ունեցող դերասանը Աբելյանն էր: Ասում եմ, ոչ մեկը նրա գույները չունի: Ռուսների մեջ էլ չեմ տեսել:

Խոսքը եկավ ուսւու դերասաններին:

— Նրանց հետ հեշտ է աշխատելը, — ասաց, — պատրաստ գալիս են, շատ չուտ հասկանում են ասածը: Զարչարանք չկա: Մերոնց հետ, օ՛... Նախկիններին նկատի չունեմ: Խոսքս սրանց մասին է:

Փորձեցի դարձյալ Աբելյանին անդրադառնալ.

— Աբելյանը հինգ տարի խաղացել էր ուռաների հետ, օրինակ՝ Անդրեև-Բուռլակի, Իվանով-Կողելսկու...

— Այս, բայց դա իր արվեստի հետ քիչ կապ ունի:

Նա կարող էր էլի նույնը լինել: Նա ազդեցություն կրող դերասան չէր: Ինքն էր ազդեցություն ստեղծում իր շուրջը: Եթե դերասանն ինքն իրենից չի կարող սովորել, սեփական ինքնաճանաչումով հասնել արվեստի, ոչ մեկը, ոչ մի ազդեցություն, կրթություն, դպրոց...

Քանի որ խոսքը ոռւս դերասաններին էր եկել, փորձեցի մի հարց ևս պարզել.

— Ճի՞շտ եք համարում Յուժին-Սումբատովի կարծիքը Աբելյանի մասին:

— Ես այդ կարծիքին ծանոթ չեմ: Ի՞նչ է ասել:

— Դրական է խոսել, բայց ասել է, թե, ի տարբերություն Սիրանույշի, Աբելյանի խաղում նկատվում են գավառական շտամպներ:

— Զգիտեմ: Ես չեմ նկատել: Ի՞նչ է հասկացել Յուժինը, ասելով գավառական շտամպ: Զէ՛ մի... գավառական շտամպ... Յուժինը կովկասցի էր: Ի՞նչն է համարել շտամպ՝ կովկասցու ծանոթ ձևերը՝ ժեստ, պահվածք և այլ, և այլ: Աբելյանն ուներ ֆիքսացված ձևեր: Իսկ ո՞ր դերասանը, ում ուզում ես ցույց տուր, չունի: Ես չեմ ճանաչում դերասան, որ բացարձակորեն ազատ լինի շտամպից: Հրաշյան չունե՞ր: Նրա խաղի կրկնվող ձևերը մեկ առ մեկ կարող եմ ցույց տալ: Աբելյանն ուներ իր կրկնվող ձևերը, բայց գավառակա՞ն... Ոչ մի դեպքում: Յուժինը սիսալվել է:

Մեր զրույցն այստեղ ափարտվեց:

Սա ամենատևական, ամենահայտնագույն պատճեն էր Աճեմյանի հետ և, ի՞նչ իմանայի, վերջին զրույցը:

1974–75 թվերին թատրոնի պատմություն էի դասավանդում Սունդուկյանի անվան թատրոնի ստուդիայում, դասի էի գնում շաբաթը մեկ անգամ: Անցնում էի Աճեմյանի առանձնասենյակի կողքով, նեղ միջանցքով գնում, բարձրանում վերջին հարկ՝ դասասենյակ: Մի անգամ էլ այդպես անցնելիս՝ առանձնասենյակի դուռը բացվեց, դուրս եկավ Աճեմյանը.

— Անցնում ես դռան մոտով ու գնում, հա՞: Ո՞ւր ես գնում:

— Ստուդիա՝ դասի:

— Ի՞նչ դաս:

— Թատրոնի պատմություն՝ համաձայն Զեր ստորագրած հրամանի:

— Հա՛, իսկապես: Հետո՞՝, ասածիցդ մի բան հասկանո՞ւմ են:

— Լսում են, — ասացի, — հասկանալը չգիտեմ:

— Ոչինչ էլ չեն հասկանում: Կարծում ես, դրանցից բա՞ն է դուրս գալու:

Կարճ խոսեցինք:

— Այստեղով անցնելիս մեկ-մեկ դուռը բաց, ներս արի խոսենք, — ասաց:

— Չեմ ուզում խանգարել, իզուր զբաղեցնել, — ասացի:

— Իզուր չէ, արի խոսենք:

Ամիսներ անց հիշեցի այս խոսքը, ու մտքովս մի բան անցավ... Այդ խոսքն ինձ ասել էր Աբմեն Գուլակյանը 1960-ին, թատերական ինստիտուտի առաջին հարկի միջանցքում, ու դրանից հետո ես նրան չհանդիպեցի: Լինում են կյանքում կրկնվող իրավիճակներ, կրկնվող խոսքեր:

Ես հանկարծ հիշեցի մի օր Աճեմյանի խոսքը՝ «արի խոսենք», և դա նրանից լսած վերջին խոսքն էր:

ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻ ԴՊՐՈՑԸ

Աճեմյանի խմբից Գուլակյանի խումբն անցնելը նման էր մի երկրից մյուսն անցնելուն. քաղաքացիությունը փոխելու պես մի բան: Գուլակյանը կարծես հակադրված էր բոլորին, և բոլորն իրեն: Հակադրման ձեզ ծայրագույն խստապահանջությունն էր և խստագույն կարգը, որով նրա գասարաններն առանձնանում էին բոլորից, դառնում մի տեսակ «պետություն պետության մեջ»: Գուլակյանն այս առումով հակապատկերն էր և հակոտնյան Աճեմյանի: Իսկ որպես ստեղծագործողներ նրանք երկուսն էլ գալիս էին նույն դպրոցից՝ մոսկովյան-վախսթանգովյան: Գուլակյանը հայ թատրոնի դժբախտությունը տեսնում էր հայ դերասանի ծուլության ու անկազմակերպ բնավորության մեջ, և նրա բռնած խստաբարու դիրքը, մանավանդ ուսումնական գործում, կոփվ էր ծուլության, ամբարտավանության ու սնորիզմի դեմ:

— Աշխարհում չկա ավելի ապիկար արարած, քան դերասանը, մանավանդ հայ դերասանը, — ասում էր նա:

Դրա դեմ մեկ միջոց էր տեսնում՝ շրջանակների մեջ դնել մարդուն: Լավ էր, թե վատ, չգիտեմ, բայց, գիտեմ, որ նա մեզ սովորեցրեց սիրել կարգ ու կանոնը և

ճաշակել կրթության դառն արմատները: Նրա սկզբունքը պարզ էր և, ըստ իս, անվիճելի: թատրոնում ամեն ինչ սկսվում է դերասանից և հանգում է դերասանին, ուստի, թատրոնի մարդը, ով էլ լինի, բեմադրիչ, դերեկտոր, դռնապան թե քննադատ, պետք է սովորի նախքեմում գործելու (չէր ասում «խաղալ», այլ՝ «գործել») գիտությունը: Նա թատրոնն ու դերասանի արվեստն անվանում էր «գիտություն» և այդ գործով զբաղվողներին՝ հավերժական աշակերտներ: Ոչ մի ճշմարտություն կամ սկզբունք չէր ներկայացնում իր անունից, չէր ասում երբեք «իմ կարծիքով», այլ՝

— Ես չեմ ասում, գիտությունն է ասում:

Շատ ժամանակ է անցել, և ուզում եմ անաչառ նայել նրա ստվերին: Մտածում եմ, թե ինչո՞ւմն էր այդ խստահայաց մարդու հմայքը: Նա ավելի շատ հեգնում էր ու դժգոհում, և առաջին պահ դժվար էր նրա մեջ տեսնել արտիստին, դժվար էր նրա հետ խոսելիս զգալ արվեստի մարդու հետ շփվելու բավականությունը: Իրականության և իրերի վիճակի գդացողությունը շատ սուր էր նրա մեջ և ներշնչումներն էլ ավելի բարոյական բովանդակություն ունեին, քան էսթետիկական:

Թատրոնը նրա մասնագիտությունն էր, այս հասկացության ամենախոր իմաստով, բայց շատ բան էր ասում թատրոնում. դաժան էր ու հեգնական դերասանական սենտիմենտալ սնափառության, եսամոլության և բացառիկության ձգտումների հանդեպ, եթե անդամ դրանց կրողը լիներ տաղանդավոր մարդ: Հիշեցնում էր, որ բացառիկության զգացումը տաղանդավոր դերասանին կարող է վերածել քաղքենու և ինտրիգանի: Նա մեծ արհամարհանք ուներ վայրի վերո, անհետեղղական, հեղհեղուկ, անսկզբունք, ներքին կարգ ու սիստեմ չունեցող բնավորությունների հանդեպ, ինչ-որ «վերին» ներշնչումների սպասող, իրենց չեղած զգացմունքներով հիացած դերասանների հանդեպ: Եվ չէր սիրում աշխա-

տանքն ու ստեղծագործությունը խանդարող, մարդուն մտքից ու զբաղմունքից գցող, կենտրոնացումը խախտող ամեն ինչ: Զէր սիրում իրենց շուրջը իրարանցում ստեղծող, կեղծ գործնական, հասարակական աշխատանքի անունից ներկայացող մարդկանց: Եվ ամենից ավելի ատում էր քաղքենիություն՝ միտք ու զգացմունք ցուցադրողներին, սնորներին, ինչպիսին էլ լինեին՝ ծույլ, թե աշխատասեր, կրթված, թե անկիրթ, սենտիմենտալ, թե ինտելեկտուալ: Քաղքենիությունն էր նրա հակունյան, թատրոնական մարտնչող քաղքենիությունը, որին Գուլակյանը հաղթել չկարողացավ: Նրա աշխատանքային և ստեղծագործական էթիկան, իր բոլոր սուբյեկտիվ դրսերումներով, աչառու և անաչառ քայլերով, արդարացի և անարդարացի վճիռներով ուղղված էր նախ և առաջ քաղքենիության՝ թատրոնի այդ անկուտրում ուղեկցի գեմ: Գուլակյանի համար պաշտելի հեղինակություններ էին հայ թատրոնում Գեորգ Զմշկյանը, որին չէր տեսել, և Օվի Սկումյանը, որին աշակերտել էր կարճատե մի շրջան: Ռուս նորագույն թատրոնի մեծագույն դեմքը նա համարում էր Ստանիսլավսկուն և իր աշխատանքի ոճով, հատկապես մանկավարժության մեջ հետեւմ էր նրան:

Եվ այսպես, Արմեն Գուլակյանը վարում էր մեր դերասանական կուրսը որպես մի փոքրիկ, օրինակելի թատրոն, որի ներքին կյանքը հայտնի էր միայն իր աշխատողներին: Ինստիտուտում շատերին անծանոթ էր այդ կյանքը, և մեր ուսուցիչն էլ ի ցույց չէր դնում ոչինչ: Ոչ մի արտաքին կարծիք նրան չէր մտահոգում: Գործդր իմացիր, գործիդր նայիր: Ահա նրա սկզբունքը:

Ի՞նչ էր սովորեցնում Արմեն Գուլակյանը:

Նրանից ստացած սահմանում եմ մեկ բառով՝ ինքնաճանաչում, շատ մեծ բան:

Նրա սերմանած հատիկները, ինչպես կյանքը ցույց տվեց, ծլեցին արվեստի բնական օրենքով՝ հարյուրին

մեկ ու երկու: Նա գիտեր այդ օրենքը և ղեկավարվում էր պապենական ասացվածքով՝ «Հասկացողին մեկ, չհասկացողին հազար ու մեկ»: Զանք ու եռանդ չէր վատնում, իգուր չարչարանք չէր քաշում անհեռանկար մարդու հետ: Կասեր, կբացատրեր հանգամանորեն, մի երկու անգամ էլ ցույց կտար... Հազվագեալ էր ցույց տալիս, բայց մեծ վարպետությամբ, տպավորիչ ու ավարտուն, հանգիստ ու թեթև: Այո՛, երբեմն, և հասկացար, թե չհասկացար, աստված քեզ հետ, էլ չեմ կրկնի, չեմ հետապնդի, արա, ինչպես կարող ես: Բայց գնահատում էր աշխատանքը, լրջությունը, արդյունքի հասնելու ձգտումը: Եթե չէր հեգնում, ուրեմն՝ կարելի էր շարունակել: Եվ ուներ ամենաբարձր գնահատականը.

— Ճիշտ եք աշխատում:

Այս խոսքն արդեն ամեն ինչ էր: Իսկ անհասկացողին, մանավանդ չկարդացած ու կարդալ չսիրող մարդուն երբեմն որակում էր ամենաաղի խոսքերով, ժողովրդական սրամտության ու թիֆլիսի քաղաքային ֆոլկլորի ոճով. «թթու ծախող», «տակառ լվացող», «ձվի կճեպից բան չինող»: Կարող էր անսպասելիորեն ընդհատել փորձը և...

— Սիրելի՛ս, գնա գաջի գործարանի ինքնագործ խումբ: Դու էնտեղ առաջինը կլինես, հավատացնում եմ, Կորրագո կիսադաս:

Կար ավելի ծանր որակում:

— Էդ տեսակ ձենով կարելի է խառը կանաչի ծախել, բայց բեմում խոսել չի կարելի:

Եվ էլի անսպասելի մի հեգնանք.

— Օ՛, Վերա Կոմիսարժեսկայան...

Դիմանալ էր պետք ու դիմացող էր պետք: Եվ գիմացող կար: Մեկին երկու, թե երեք անգամ հիշեցրեց.

— Սիրելի՛ս, գնա, գնա ուրիշ տեղ սովորիր: Եթե մնացիր, խոսք եմ տալիս, քեզ երեք կնշանակեմ,

անպայման: Բայց, սիրելի՛ս, դու ինքդ որոշիր ու գնա: Եթե մնացիր, էլի եմ ասում...

Բայց մարդը կարողացավ դիմանալ. չգնաց և հետագայում էլ ձեռք բերեց իրեն ձեռնտու դիրք ու վիճակ, մշակեց իր կեցվածքը, մոռանալով և՛ իր ուսուցչի խրատը, և՛ իր գլխիկոր ու համեստ դիրքը այդ խրատը լսելիս: Իսկ մի դժոջոհ ու հավակնու ուսանողուհու Արմեն Գուլակյանն ասում էր.

— Թատրոն որ գնաս, հանկարծ չհամաձայնես փոքր դերեր խաղալ: Էղպես սխալ բան չանես հանկարծ: Կպահանջես, որ քեզ տան Մեղեա, Ֆեղրա, ամենաքիչը Լեդի Մակրեթ:

Աղջիկը չուզեց կամ չկարողացավ ըմբռնել այս հեգնանքի իմաստը, և թատրոնն էլ, ուր նա ընկավ ափարտելուց հետո, չհանդուրժեց նրան: Բոլորը չէ, որ կարողացան ըմբռնել Գուլակյանի ծայրահեղ երկացող, բայց իրականում տարրական պահանջների էությունը: Բոլորը չէ, որ կարողացան գործադրել կամ խորացնել նրանից ստացածը: Իսկ նրանք, ովքեր կարողացան, երբեմն դժվարանում են բացատրել, թե իրենց աշխատանքում ինչն է գալիս Գուլակյանի դպրոցից:

— Մեծացանք, հասանք նրա այն ժամանակվա տարիքին ու նոր հասկացանք իրեն, — ասաց մի անգամ Խորեն Աբրահամյանը:

— Գուլակյանի սովորեցրածը արվեստի արհեստն էր, — ասում է Արմեն Ջիգարիսանյանը: — Մենք դա լավ չէինք հասկանում: Կարծում էինք, արհեստը վատ բան է: Զգիտեինք, որ արվեստը արհեստով է սկսվում:

Ուսանողական փորձասենյակում Գուլակյանը երկում էր ոչ էսթետ, ոչ արտիստ, այլ փորձագետ և հոգեբանական դպրոցի հետեւրդ: Նրա մոտ պետք էր ոչ թե ձեւանալ, այլ գործել ըստ ենթադրվող իրադրության, գործել ըստ կարծեցյալ հոգեբանական պատճառի: Սա դերասանի խաղի հիմքն է, բայց ոչ դերասանի արվես-

տը: Արվեստը հնարավոր չէ սովորեցնել: Սովորում են նրա տեխնոլոգիան: Տիրապետելով գրան, մարդը հետագայում կարող է հանգել արվեստի կամ մարդը հետագայում էլ գուլակյանն ուսուցանում էր գործնական հոգեբանություն, որը դերասանին մղում էր դեպի արվեստի ճանապարհը: Նա նման էր մի հմուտ արհեստավորի, որի հետ շփկելիս կարելի էր հանգել ստեղծագործության օրինակտիվ հիմքերի ըմբռնմանը, նաև տեսական հստակ եղրակացությունների, թեպետ ուսուցանողն ինքը բնակ տեսաբան չէր: Նրա պահանջը շատ բնական էր. պետք է սովորեն բոլորը, ովքեր հավաքվել են այստեղ, բայց դա չի նշանակում, թե բոլոր սովորողները հասնելու են արվեստի, այսինքն՝ բարձրագույն հմտության: Թվում էր նաև, որ նրան քիչ էր հետաքրքրում ստուգիական դերասանի օժտվածության չափը: Կային մասնագիտական ստուգված սկզբանը ներկայական բանական գրելու եղանակներ, ծմբարիտ և օրգանական լինելու, դրելու տպագորություն թողնելու տարրական միջոցներ, և դրանց պետք էր տիրապետել: Իհարկե, բնմական դործողության այբուբենը յուրացնելով դեռ դերասան չեն դառնում, բայց առանց դրա արվեստի մասին իսուսելու ավելորդ է: Համենայն դեպք, մասնագիտորեն գրագետ պետք է տիրապետել, եթե գաղտնիքը գիտես: Գուլակյանի ուսուցումը մոտեցնում էր դրա ըմբռնմանը: Բայց այստեղ էլ հասկացող էր պետք. բոլորը չէ, որ կուահում էին, թե ուր կացող էր պետք. բոլորը չէ, որ կուահում էին, թե ուր էր մղում նա իր մանրախնդիր, երբեմն անհետաքրքիր թվացող պահանջներով: Նա մեզ համառորեն հրում էր դեպի բնմական մասնագիտության հիմքը: «Բոլորդ հոգեպի

դերասան չե՞ք գառնալու», — երբեմն ասում էր նա: Բայց գիտեր ու կրկնում էր, որ բոլորն աշխատելու են թատրոնում կամ թատրոնի համար: Գուլակյանը թատերական գործ էր ուսուցանում, ոչ թե դերասանի կամ ռեժիսորի արվեստ, թատերական գործ, այս հասկացության լայն առումով: Ով ինչ կվերցներ նրա տվածից կամ ով ինչ կդառնար, թվում է, նրան չէր հետաքրքրում: Բայց ամեն օր ու ամեն ժամ նա մեխում էր մեր գիտակցության մեջ այն միտքը, որ թատրոնի հիմքում դերասանի աշխատանքն է, որ բեմական մասնագիտության կրողը դերասանն է, և ամեն ոք, ով զբաղվելու է թատրոնով, բեմադրիչ դառնա, թե ազմինիստրատոր, թատրոնի դիրեկտոր, թե քննադատ, այստեղից պետք է սկսի, պետք է իմանա, ինչ է բեմը, ինչ է նշանակում կանգնել լուսավորված բեմում թեկուզ մի քանի տասնյակ հանդիսատեսի հայացքի առջև: Ով այս բանը չի փորձել կամ չի սովորել, ես համոզված եմ, երբեք չի կարող հասնել թատրոն կոչող արվեստի մասնագիտական ըմբռնմանը: Շատ պակասավոր է ներկայացումը դիրեկտորական օթյակից ճանաչող թատերագետի ըմբռնումը:

Դերասանի աշխատանքը որպես թատրոնի գործնական ու տեսական ճանաչման հիմք. Գուլակյանի համար սա անվիճելի սկզբունք էր:

— Ես չգիտեմ, — երբեմն ասում էր նա, — ինչ բան է ռեժիսուրա ասվածը: Ամբողջ կյանքումս ռեժիսոր եմ եղել ու չեմ հասկացել էդ բանը: Ռեժիսոր, հասկանում եմ, բայց ռեժիսուրան, որպես մասնագիտություն, չեմ հասկանում: Հավանաբար, դա այն է, ինչով մենք զբաղված ենք, ինչ ես ձեզ սովորեցնում եմ: Ռեժիսորը պետք է մասնագիտությամբ դերասան լինի, բեմը հասկանա և զգա դերասանի նման: Առանց դրա ի՞նչ ռեժիսոր: Դուք գիտե՞ք, որ Ստանիսլավսկին հիանալի դերասան էր: Գորկու Սատինը ոչ մեկը նրա պես չի

խաղացել: Ներկայացման վերջին տեսարանում հաջրածքեմ էր մտնում և պարում էր, բայց ո՞նց էր պարում: մտքում: Երկու-երեք շարժում էր անում, ոտքը մի անգամ խփում էր գետնին ու անշարժ կանգնում: Հանդիսատեսը տեսնում էր, որ էս մարդը մտքում պարում է մի զուլում պար: Եվ մի ժեստ էլ վերջում էր անում ու պարն ավարտում: Անշարժ կանգնած հարբած մարդ, ծանր գլխով, և իրեն թվում է, թե պարում է: Ես էղպես դերասան շատ քիչ եմ տեսել:

Մի ուրիշ անգամ պատմում էր Վախտանգովի մասին: Ասում էր, որ Վախտանգովը 900-ական թվականների մեծ դերասաններից էր, Միխայիլ Զեխովից ոչ պակաս:

— Գիտե՞ք, ինչով էր վարպետ: Ավարտվածություն կար նրա ամեն մի տեսարանում, ամեն մի հոգեվիճակում. տեսնում էիր, որ մի վիճակ ավարտվեց, սկսվեց մյուսը, և կա մի վիճակ էլ, որ չի վերջանում, շարունակվում է, աճում, գույներ ստանում: Բնավորություն ստեղծել գիտեր, տպավորվող, չմոռացվող բնավորություն: Մի ժեստ կաներ, մի հայացք կցցեր, և խարակտերը պատրաստ էր: Մի բանի վրա չէր կանգնում, միշտ բան էր փնտրում ու գտնում և միշտ անսպասելի ու սուր: Արածը կոնկրետ էր, պարզ: Ու ներսից զարմանալի հանդիստ էր երեսում էդ մարդը. տեսնում էր իրեն:

Գուլակյանը թատերական գործ էր ուսուցանում, և դա սկսվում էր սկ աշխատանքից: Նա սարսափելի չէր սիրում «տաղանդ» և «հանճար» բառերը: Շատ էր սիրում երկու բառ՝ «գիտություն» և «մասնագիտություն»:

— Պետք է մասնագետ դառնալ, պրոֆեսիոնալ: Վարպետ որ ասում են, նշանակում է պրոֆեսիոնալ, մասնագետ: Եվ վարպետ պետք է դառնալ ժամանակին, հիմա, ամենաառւշը երեսուն տարեկանում, թե չէ ամեն

ծերացածի վարպետ են ասում: Ծերանալուց հետո վարպետի անունն ո՞ւմ է պետք: Եթե ջահել տարիքում չես վարպետացել, պառավելով չես վարպետանա:

Դերասանի վարպետությունը, ինչպես և ամեն մի վարպետություն, ըստ Գուլակյանի, սկսվում էր տարրական բաների յուրացումով և մասնագիտական վերաբերմունքից տարրական բաների հանդեպ: Նա ատում էր մասնագանդ այն դիլետանտական բնավորություններին, որոնք հանգամանքների բերումով ընկել էին պրոֆեսիոնալ միջավայր:

— Դիլետանտները ամեն տեղ գործը փչացնում են, — ասում էր, — և՝ գործն են փչացնում, և՝ շրջապատը: Նրանք վատ օրինակ են տալիս. գործը հեշտ են պատկերացնում ու հեշտ էլ անում են: Էդ տեսակ մարդկանց համար դժվարություն չկա: Եվ հետները խոսեն էլ շատ դժվար է. ամեն բանի պատասխանը գիտեն: Լսած կա՞ք՝ սիրող գիտնական, օրինակ՝ սիրող բժիշկ կամ սիրող քիմիկոս: Իսկ ինչո՞ւ, դուք ինձ ասացեք, ինչո՞ւ պետք է լինի սիրող դերասան: Ի՞նչ է, կարծում եք դերասանին գիտություն պետք չի՞: Դերասանությունը գիտություն է, եթե ուղում եք իմանալ: Դե՛, Հիմի դուք պատկերացրեք սիրող քիմիկոսի արածը: Սիրող դերասանի արածը դրա նման մի բան է:

Նա օրինակ էր բերում Օվի Սևումյանին.

— Իսկական պրոֆեսիոնալ էր, լուրջ, համեստ: Զգիւտեմ, տաղանդավո՞ր էր, թե չէ, բայց ճիշտ էր գործում, բեմում ոչ մի անտրամաբանական բան չէր անի, ոչ մի պատահական միզանացեն չէր դնի:

Հաճախ էր հիշում Ստեփան Քափանակյանին, որի աշակերտն էր եղել Ներսիսյան դպրոցում:

— Շատ կրթված ու գրագետ մարդ էր. իսկական ինտելիգենտ: Գրականություն լավ գիտեր և գրականությունից էր թատրոն գալիս: Էդպես մարդիկ շատ քիչ են թատրոնում:

Պրոֆեսիոնալիզմ ասվածը կազ չունի տաղանդի կամ օժտվածության հետ. արվեստում, մասնավորապես թատրոնում (Ստանիսլավսկին էլ գրել է), շատ են եղել տաղանդավոր դիլետանտներ: Գուլակյանն ամենայն հետեւողականությամբ մեզ մղում էր այն գիտակցությանը, որ պրոֆեսիոնալիզմ նշանակում է ամենից առաջ մասնագիտական վերաբերմունք գործի հանդեպ և մասնագիտական գրագիտություն, տարրերի իմացություն: Պրոֆեսիոնալիզմը աշխատանքի եղանակ է, մեթոդ, ստեղծագործական բնավորություն և սեր ոչ այնքան աշխատանքի արդյունքի, որքան պրոցեսի հանդեպ: Մասնագետը պետք է սիրի գործի ընթացքը, տեխնոլոգիայի գաղտնիքները, գործի ոչ հաճելի կողմերը: Նա մեզ հարկադրում էր մտնել և աշխատանքի մեջ, ուշադրություն դարձնել բոլոր կարգի մանրուքներին՝ սկսած տեքստի կետագրությունից, բառարան նայելուց մինչև զրիմի և զգեստի մանրամասները, կոճակն ու թելլ, գեկորներ տեղափոխելը, ներկայացման համար անհրաժեշտ իրը ձեռք բերելը, ձեռնոցի ու ցիլինդրի հետ վարվելը, մի գեպքում ֆրակ ու այցեղեստ, մյուս դեպքում արխալուզ, այլ գեպքում զինվորականի զգեստ հագնելը: Պետք էր սեփականացնել ոչ միայն հեղինակի տեքստը, որին չափազանց մեծ նշանակություն էր տալիս, այլև խաղի մեջ գործածվող իրերը (ձեռնափայտ, ծխատուփ, ժամացույց և այլն), հագուստը («Էդ շրջը հագիդ երկար պահիր, որ սովորես, քոնը դառնա»): Կամ, օրինակ, ինչո՞ւ է Սունդուկյանն այստեղ միջակետ դրել. մի բան մտածել է, որ դրել է, դու էլ պիտի մտածես, գերասան, պիտի հարմարվես և տեքստին, և՝ իրերի դրությանը, պատմական միջավայրն ակնարկող առարկաներին:

Ես մինչև օրս էլ այն մտքին եմ, որ Գուլակյանը, որպես ուսուցանող, բացառիկ էր: Իմ մասնագիտական նկարագրով և աշխատանքային բնավորությամբ ես նրա

աշակերտն եմ: Այն, ինչ սովորել եմ նրա գործնական դպրոցում, չէի կարող սովորել ոչ մեկից, ոչ մի գրքից ու տեսությունից: Բայց Գուլակյանի հետ շփվելը դժվար էր: Հնարավոր չէր հետը զրուցել, մտքեր փոխանակել, անզգույշ հարցեր տալ: Նա ինքն իր բնավորությամբ, թերեւս ակամա, այնպիսի մի պատճեց էր դրել իր և ուսանողի միջև, որից ինքն էլ նեղվում էր երբեմն: Դասից գուրս հանդիպելիս մտերիմ էր, ձեռքը դնում էր ուսիր, ժպտում: բայց դիմացինը, միևնույն է, շփոթվում էր, մնում կաշկանդված, և դա կաշկանդում էր նաև իրեն՝ Գուլակյանին: Երբեմն անտանելի սրամիտ էր, խոսքերը թթու, հագեցված թիֆլիսյան քաղաքային փոլկորի աղով: Իհարկե, սկզբունքի մարդ էր, բոլորի համար ստեղծում էր հավասար վիճակ, մարդուց պահանջելով այն, ինչ նա կարող էր տալ՝ կարողության բարձրագույնը, և դժգոհում էր, հեգնում՝

— Սիրելիս...

Պեղանտություն ու անհարկի ծայրահեղություն էին տեսնում շատերը Գուլակյանի վարքագծում: Բայց դա ավելի շատ մասնագետի հետևողականություն էր: Այդ հետևողականությունը հասնում էր նաև վարչարարի խստության: Ու վա՛յ անգրագետին, վա՛յ նրան, ով կենտրոնանալ ու մտածել չգիտեր: Ի՞նչ բեմադրող և ի՞նչ դերասան, որ հեղինակի տեքստում չի տարբերում խնդիրն ու ենթական, վերջակետն ու մտքի պարբերությունը: Ի՞նչ դերասան, որ ներկայացման մեջ, մուտքից ազատ պահերին անեկոտ է պատմում կամ ծիծաղում: Նա պահանջում էր այդ պահերին լոել, ներքուստ առանձնանալ միջավայրից և մտքում անցնել «դերի հեռանկարը» (իր սիրելի բառերից էր սա), այն է՝ մտովի տեսնել վարքագծի ընթացքը առարկայական ու ենթադրվող հանգամանքներով և կարողանալ լոել, դեսուդեն չգնալ, քանի որ լուսթյունն ու պասիվ վիճակը կենտրոնացնում են մարդուն: Եթե սիրում ես մասնա-

դիտությունը, մշակիր մասնագիտությանդ համապատասխան բնավորություն, կարողացիր ճանաչել ու կըել նաև գործի գառնությունները, ոչինչի մի նայիր կողքից, օտարի նման, ոչինչից վեր մի գասիր քեզ, կյանքի բոլոր հանգամանքներում աշխատիր գտնել գործիդ համար օգտակար մի բան: Դերասանի համար նա կարելոր էր համարում հատկապես ընթերցանությունը և շրջապատը դիտելու կարողությունը:

— Դերասանը բեմ մտավ, արտասանեց մեկ-երկու նախադասություն, և անմիջապես կերեա, թե նա քանի գիրք է կարդացել: Ներկայացումից ներկայացում, դերից գեր հետևեք դերասանին և անպայման կիմանաք, նրա իմացածին կամ կարդացածին բան ավելացե՞լ է, թե ոչ: Բեմական խոսքի վարժությունները, մանավանդ վոկալ վարժություններն ու երգը պետք են, բայց դերասանի խոսքը խելոք լինել չի կարող, եթե նա չի կարդում: Կարդացեք, թեկուզ օրվա մեջ երեք էջ, տարվա մեջ կստացվի հազար իննառունհինդ էջ՝ համարյա երեք գիրք: Դա շատ չէ, սիրելիս, բայց դա չկարդալուց լավ է:

Ի՞նչ էր ասում դիտողականության մասին:

— Հետեւեք ձեր շրջապատի մարդկանց, անձանոթ մարդկանց. տեսեք, ինչ են անում, ինչպես են իրենց պահում: Եթե մի քիչ ուշադիր լինեք, շատ բան կիմանաք նրանց մասին: Կիմանաք, թե մարդը ինչ վիճակում է, ինչ է քաշել կյանքում, բարի է, թե չար, գոհ է, թե գժգոհ, հիվանդ է, թե առողջ: Հետևեք մարդկանց արարքներին, գործելու եղանակին, նայելու, խոսելու, շարժվելու ձևերին: Կարողացեք տեսնել մարդկանց, բայց էնպես, որ նրանք չիմանան, թե իրենց հետեւում եք:

Այն, որ դերասանը պետք է աշխատասեր լինի, շատերն են ասում, շատերն են գրում: Բայց ինչի՞ց է կազմված այդ աշխատանքը, ի՞նչ պետք է անել, ի՞նչ

եղանակով պետք է գտնել ստեղծագործության ճանապարհը, ինչպե՞ս պետք է հասնել ստեղծագործական վիճակի: Այս է խնդիրը:

Գուշակյանը չէր սիրում հատկապես «կերպար» բառը, չէր ասում, թե պետք է կերպար ստեղծել: Նա իր շուրջն ստեղծում էր աշխատելու և մտածելու միջնորդ, խնդիրներ էր գնում մարդկանց առջև, մանր ու խոշոր խնդիրներ, շեղվելու հնարավորությունից զրկում էր բոլորին: Այս ամենը տանում էր գեղի ստեղծագործելու ուղին: Մարդիկ սովորում էին և պատրաստվում էին ըմբռնելու մի բան, որը վերջ չուներ: Ի՞նչ «արվեստ», ի՞նչ «կերպար»: Դրանք շատ հեռու գաղափարներ էին: Դրանց համելու համար կամ արվեստի անունից խոսելու համար ինչքա՞ն բան կար անելու: Նրա նպատակն էր, ինչպես հետագայում ես հասկացա, դաստիարակել մասնագետի բնավորություն: Օրինակ, նա դիետանտություն էր համարում աննպատակ զրույցը արվեստի հարցերի շուրջը, անառարկա դատողությունները, գիրքն առանց ընդգծումների կամ առանց զրառումների կարդալը, հիշողության վրա հույս դնելը, բանավոր մտքերով զեկավարվելը: Նա դերասանին ուզում էր տեսնել գիրքն ու գրիչը ձեռքին և համառորեն պահանջում էր դերի տեսրում գրանցել միզանսցենը, արարքները, հոգեբանական խնդիրները, ենթատեքստային իմաստները: Պահանջում էր ամեն անգամ վերընթեռնել, ստուգել ու ճշտել գրվածը և գտնել վիճակը բնութագրող ամենաստույգ բառը, այնպիսի խոսքեր, որ մղեն գործողության, ունենան ոչ թե սոսկ դատողական, այլ հուզական ուժ: Բայց պետք էր ամեն ինչ կարծ ու նպատակահարմար ձեակերպել, բառերը ճիշտ գործածել, տերմինները ճիշտ թարգմանել, հասկացությունները չշփոթել: Այսպես, մի բան է գործողությունը, այլ բան է նրա տարրը՝ արարքը, մի բան է տրամաբանական արարքը, այլ է արարքների տրամա-

բանությունը, մի բան է վիճակը, այլ է նրա արտաքին կերպը՝ միզանսցենը: Բառերը սխալ գործածելու դեպքում, թեկուզ հարյուրերորդ անգամ, կստիպեր ուղղել և ուղղել գրավոր, անպայման նշել, ընդգծել: Զէր սիրում նույն խոսքը շատ կրկնել, հիշեցնում էր այլ կերպ:

— Ի՞նչ ես գրել, գրածդ նորից կարդա: Գրում ենք, որ հիշենք, հասկանանք ու մտածենք, իմանանք ինչ ենք մտածել ու մեզ ճշտենք: Իմացեք, սխալ ձեակերպումը, սխալ բառը բերում է սխալ քայլ:

Զէր սիրում նաև շտապողականություն, հապճեպություն, երբ գործին վրա են տալիս վերջին օրերին: Ստիպում էր աշխատել հանգիստ, անաղմուկ, անշտապ, առանց գրոհների: Զէր սիրում տոնականություն, արտակարգ վիճակներ, իրարանցում: Աշխատանքը նադիմում էր որպես առօրյա կյանք, բնականոն վիճակ, մարդու սովորական կենսաձև: Եվ չէր հոգնեցնում, չէր հյուծում մարդկանց, չէր տալիս ուժերից վեր հանձնարարություններ, չէր հասցնում ցայտնոտային վիճակների, ծիծաղում էր այն մարդկանց վրա, որոնք գործը թողնում են վերջին օրերին ու ժամերին և ընկնում ոլիսակորույս վիճակի մեջ: Եվ աշխատում էինք ամեն օր, սահմանված չափով, առանց սեփական անձը իզուր տանջելու, և գործի ավարտը նույնպես դառնում էր սովորական աշխատանքային պահ: Ներկայացման վերջին փորձերը լինում էին ավելի հեշտ, և առաջին ներկայացումը լինում էր դերասանի համար ոչ թե լարված ու տագնապալից, այլ խաղաղ տոնական: Այդտեղից էլ սկսվում էր ստեղծագործությունը, որի բավականությունն զգում էիր հանգիստաեսի հետ շփման ընթացքում: Դժվար է ասել, թե հասնում էինք արգեստի, բայց զգում էինք, որ մոտենում ենք հետաքրքիր վիճակի: Գուցե դա արգեստի հետ շփման ընթացքումն սկսվում էր այդ կետից, և մեր ուսուցիչն այդտեղ արդեն

աղատ էր թողնում մեզ, թողնում էր, որ դործի բնազդը, և պատահական «հայտնությունները» չէր կանխում: Աշխատանքը մտնում էր նոր փուլ: Պատրաստված բեմադրությունը տասնյակ անգամներ խաղացվում էր Հանդիսատեսի առջև՝ ինստիտուտի բեմում, քաղաքի ծայրամասերի գործարանային ակումբներում, որևէ գյուղական ակումբում: Բարձում էինք դեկորները բեռնատար ավտոմեքենային, մենք էլ դեկորների հետ, և դեպի որևէ շինմոնտաժային տրեստի ակումբ, Արաբկիրի ակումբ, Կառլչուկի առաջին մաս, Սովետաշեն... Դատարկում էինք դեկորները, բեմը դասավորում, զգեստավորում ու գրիմ անում նույն հետեղականությամբ, խաղում, բեմը հավաքում, բարձում ավտոմեքենային, վերադառնում, դատարկում, ամեն ինչ դնում իր տեղը և հոգնած ու ջարդված դեպի տուն:

— Դե՛, հիմա էլ իմացեք, թե ինչ է շըջիկ թատրոնը, իմացեք, թե ինչերի եք հանդիպելու կյանքում:

Ի՞նչ կա որ. Զմշկյանն ու Ամերիկյանը անցյալ դարի 60-ական թվականներին Թիֆլիսից սայլով հասան երևան, և նրանք սիրողներ չէին բնավ, այլ իսկական պրոֆեսիոնալներ: Պետք էր սեփական բախտի ու ճակատագրի սթափ դիտակցություն, աշխատավորի խաղաղ համբերություն: Եվ ոչ մի տրտունջ, ոչ մի բողոք. տրտունջները նա լսում էր ժպիտով, համարում էր անլրջություն: Դերասան ես ուզում դառնալ, իմացիր, թե ինչքան դժվարություններ կան այդ մասնագիտության մեջ, խաղ ու պար չկարծես և հաճույքներ փնտրելուց առաջ սովորիր դառնություններ կրել:

Ստանիլավսկին իր հիմնական տեսական աշխատություններում ունի մի գլուխ, որ վերնագրված է «Դիլետանտիզմ»: Գուլակյանն ստիպում էր լավ կարդալ, միշտ կարդալ այդ գլուխը ու հիշեցնում, որ սիրողականությունը հեշտ է, հրապուրիչ ու վտանգավոր. մեկ որ դրա ձեռքն ընկար, կորած ես, խաչ քաշիր վրադ:

Եվ հեռու էր վանում իրենից գիլետանտական բնակություններին, անհետելողական ու անլուրջ մարդկանց: Ժամանակ էր պետք ըմբռնելու համար, որ պրոֆեսիոնալիզմը կազմված է շատ մանր, երկրորդական թվացող բաներից: Կյանքի փորձ էր պետք իմանալու համար, որ այս աշխարհում կան ոչ միայն սիրող գերասաններ, այլև... սիրող պրոֆեսորներ: Ժամանակ էր պետք հասկանալու համար, որ դիլետանտիզմը «ուղղություն» է և սոցիալական կատեգորիա, որ դա ամենուրեք և ամեն ինչում հանդեցնում է մակերեսային վերաբերմունքի, որ դիլետանտը պրոֆեսիոնալ միջավայրում քաղքենի է և վտանգավոր մարդ, մանավանդ, երբ գործի գլուխ է անցնում: Ժամանակ էր պետք ճանաչելու համար մասնագետի քղամիդ հագած դիլետանտներին, որոնք հեշտությամբ միջավայր են ստեղծում, և պրոֆեսիոնալները նման միջավայրում երեսում են պեղանտներ ու պահպանականներ: Դիլետանտի տնավարությունը քանդում ու քայլացում է ամեն ինչ և՝ արվեստում, և՝ գիտության մեջ: Այդպես է ամենուրեք: Ի՞նչ բանասեր կամ գրականագետ, որ գործ չի ունեցել արխիվի, ձեռագրի ու բնագրի հետ, որ իր սեփական ձեռքով չի արտադրել իրեն հարկավոր գրական փաստը կամ չգիտե այն հեղինակի լեզուն, որի ստեղծագործության շուրջը մտքեր է հայտնում, ի՞նչ ճարտարապետ, որ սեփական ձեռքով չի շոշափել ու չափագրել թեկուզ մեկ պատմական հուշարձան, ի՞նչ արվեստի տեսաբան, որ չի տարբերում արվեստի ֆիզիկական, արտահայտչական ու բովանդակային նյութը: Տառից մինչև գաղափարներ, ֆիզիկական նյութից մինչև գեղարվեստական պատկեր, կարդալուց ու արվեստի գործը հակասական, ծայրահեղորեն տարամերժ կողմեր շատ ունի: Գուլակյանը փորձում էր մեզ հաղորդակից դարձնել այդ դրսից պերճաշուրք, ներ-

թատերական գործը հակասական, ծայրահեղորեն տարամերժ կողմեր շատ ունի: Գուլակյանը փորձում էր մեզ հաղորդակից դարձնել այդ դրսից պերճաշուրք,

սից անհրապույր աշխարհին: Առօրյա միակերպ աշխատանքից, հոգեբանական պարզ խնդիրներից, նա մեղերեմն մղում էր ավելի ցած, երբեմն էլ վեր՝ մտքի ու բարոյական բարձր ճշմարտությունների աշխարհը: Եվ մի անգամ էլ մեղ հասցրեց մոսկովյան բեմ: Խաղացինք իսկապես հարմարավետ ու կատարյալ մի բեմում, մանրամասնորեն մշակված դեկորներով, ակադեմիական լուսավորությամբ (ուամպայի լույս), նուրբ, լավ կարված զգեստներով, գեղանկարչորեն կատարյալ գրիմով, որի հեղինակը Գեղարվեստական թատրոնի տարեց գրիմորն էր, և՝ օժյակավոր, գեղեցիկ դահլիճի ու լեզուն չիմացող հանդիսատեսի առջև: Կատարյալ մայրաքաղաքային, գաստրոլային վիճակ: Դա թատերական ինստիտուտների և ստուդիաների համամիութենական ստուգատեսն էր, 1958-ին, Մոսկվայի Բառևմանյան շրջանի դրամատիկական թատրոնի շենքում: Օ՛, զարմանք... Մեզ գնահատեցին բավական բարձր՝ Գեղարվեստական թատրոնի ստուդիային հավասար: Շատ զարմացանք: Բնավ չէինք սպասում: Գուլակյանը զսպեց իր հրճվանքը և ասաց.

— Մի զարմացեք: Մենք զարմանալի ոչինչ չենք արել: Երեկի ճիշտ ենք աշխատել:

Եվ ի՞նչ էր նշանակում այդ ճիշտ աշխատանքը. դրությունների հայտնագործում տեքստային նյութի մեջ, դրդապատճառների հստակ գիտակցում, ամեն մի խոսքի, ամեն մի արարքի ներքին բացատրություն. ճիշտ գործել, ուրիշ ոչինչ:

Այս ամենից բացի նա ինձ լծել էր մի յուրահատուկ գրական աշխատանքի: Հանձնարարեց ուսումնասիրել Սունդուկյանի «Կտակ» կատակերգության տեքստի տարբերակները: Մի անդամ էլ թույլ ակնարկ արեց, թե՝ ավելի ճիշտ կլիներ ծանոթանալ Սունդուկյանի ձեռագրին: Սա արդեն ինձ թվաց շատ ծայրահեղ, և ներքուստ սրտնեղեցի: Հետագայում հասկացա, թե ինչ ակնարկ էր դա:

Մի անգամ, կարծես թե պատահաբար (նա պատահաբար ոչինչ չէր անում) ընդմիջման պահին կանչեց ու իմ առջև դրեց թղթի մի կտոր.

— Դու ձեռագրից ո՞նց ես գլուխ հանում: Այստեղ մի բառ կա, չեմ կարողանում կարդալ:

Թուղթը հին էր և որակյալ: Սև թանաքով գրված էր մի բանաստեղծություն:

Աշուն է նստել սեղանիս, ճակատին թորշոմած վարդեր. Թախիծը թվում է սպեղանի, խնդությունը թույն է արդեն: Օ՛, երազն այս, երազն այս պատիր, այս ցնորքը միշտ գրավիչ...

Բայց դժվար թե նա ազատի քեզ գերող անլուռ այս ցամկից: Սեղանիս նկարն այս գունատ, սեղանիս վարդերն այս դեղին ու հուշերը, հուշերը...

Մի բառ վեցերորդ տողամիջում անընթեռնելի էր. ոչ մի կերպ չկարողացա կարդալ:

— Արտագրիր, եթե ուզում ես: Տեսար, որ Զարենցինն է: Ճիշտ արտագրիր: Եղ անհասկանալի բառը երկու վանկ ունի. գտիր, ինչ բառ կլինի, և ընդգծիր, որ իմանաս քո դրածն է:

Ես արտագրեցի.

Ու հուշերը, հուշերը դաժան, և չկա ոչ մի ուղի...

Վերջերս միայն, թերթելով Զարենցի անտիպ երկերի ժողովածուն, գտա այդ բանաստեղծությունը: Անընթեռնելի բառը վերծանված էր, չգիտեմ՝ ճիշտ, թե սխալ:

Ու հուշերը, հուշերը թունոտ, և չկա ոչ մի ուղի. Նա գնաց անդարձ, այդ ցնորքը, այդ ուրուն քո մտերիմ Բայց իր մութ շիրիմի խորքից դեռ երկար քեզ կգերի...

Բանասերը պետք է կարողանա գրողի ձեռագրից

գլուխ հանել: Ես չէի էլ մտածում բանասիրության մասին, իսկ նա անուղղակիորեն մղում էր ինձ այդտեղ:

Գուլակյանն ինձ հանձնարարեց Օստրովսկու «Անմեղ մեղավորներ» և Ռախմանովի «Անհանգիստ ծերություն» պիեսների հայերեն թարգմանությունները համեմատել ուսւերենի հետ, թարգմանության ոճը ազատել ուսւարանությունից, դարձնել հայկաբան: Հայկաբան ոճի լավ զգացողություն ուներ ինքը. բերում էր Ներսիսյան դպրոցից: Ուսւերենից թարգմանել տվեց Մոլիերի «Սեթեկթուհիները»: Հանձնարարեց գրել երեք ընդարձակ շարադրություն՝ մեկը Մոլիերի մասին, մեկը Սունդուկյանի, մյուսը «Կտակ» պիեսի ստեղծագործական պատմության մասին և պարզել հեղինակի այդ ու նախորդ գործերի ներքին կապը:

Նա տարբեր մարդկանց տալիս էր տարբեր բնույթի հանձնարարություններ, և թույլ չէր տալիս, որ մեկը միջամտի մյուսի գործին: Մեկին գրական աշխատող էր պատկերացնում, մեկին հուշարար, մյուսին թատրոնի ադմինիստրատոր: Ինչ վերաբերում էր գերասանի վարպետությանը, իր բառերով ասած՝ «քեմում ճիշտ գործելու գիտությանը», դա վերաբերում էր բոլորին, բոլորը պարտավոր էին կարծիք ունենալ ու աշխատել հավասար: Նրա համար չկային գերակատարների առաջին ու երկրորդ կազմեր, մեծ ու փոքր գերեր: Բայց կար մեկը, որին փոքր գերեր չէր տալիս, պատրաստում էր մեծ բեմի համար: Դա Արմեն Զիգարիսանյանն էր:

Գուլակյանը չէր սիրում որևէ մեկին դնել առաջատարի վիճակում, հակադրել մյուսներին, և Արմենին էլ չէր գովում: Արմենն էլ համեստ ու բարի մարդ էր, ինչպես Գուլակյանը կասեր, փափուկ բնավորություն ուներ: Նա իրեն բնակ չէր զգում առաջատարի վիճակում, ցույց չէր տալիս ոչ մի հավակնություն: Արմենն ինչոր առումով արդեն պատրաստ գերասան էր, մի քիչ միակերպ, բայց առանց կեղծիքի, առանց ցուցա-

դրականության: Երևանի ոռւսական թատրոնի օժանդակ կազմի գերասան էր նա, թեպետ զբաղված էր նաև ոչ երկրորդական գերերով: Թատրոնի աշխատանքը նրան երեխմն ստիպում էր բացակայել, մի բան, որ Գուլակյանը չէր ներում, բայց այստեղ աչք էր փակում: Բացակայության համար նա մարդիկ էր հեռացրել թատրոնից և մեկին էլ՝ մեր խմբից, ու բոլորիս ահաբեկել: Եվ արել էր այդ բանը մեր միաձայն քվեարկությամբ. պարզապես ստիպել էր ձեռք բարձրացնել՝ որոշ կայացնել: Ու հիմա նման մեղավոր վիճակի էր մոտենում իր համար սիրելի, օժտված ու խելոք մի մարդ: Գալիս ենք փորձի, Արմենը դարձյալ չկա, և մերդիկ չովհաննիսյան, գնա պարզիր՝ ուր է լնկերդ: Ես էլ գնում էի, մի քիչ շրջում ինստիտուտի շենքի մոտ, էլ գնում էի, մի քիչ շրջում ինստիտուտի շենքի մոտ, վերադառնում ու հայտնում, որ Արմենը հրվանդ է: Նորից էր ուղարկում, թե գնա այսինչ խորհուրդը տուր, «ասա, թող չմըսի...»: Ես կրկնում էի ծանօթ միզանացենը: Ստում էի, իսկ նա լսում էր լուրջ, առանց աչքերիս նայելու: «Եթե պարզի, երկուսս էլ կորած ենք, բայց նա քեզ չի կարող չհավատալ», – ասում էր Արմենը: Երկու տարի, ժամանակ առ ժամանակ խաղացինք այս կեղծ տեսարանը. նա լսեց նույն լրջությամբ, ասաց «Լավի» տեսարանը. նա լսեց նույն լրջությունն: Ու մեր «ճշմարտությունն» ընդունեց ի գիտություն: Ու մեր աշխատանքի ամենավերջում. պարտական վերջին ներկայացումից հետո հրավիրեց բոլորիս իր տուն և այդ զուսպ ու անաղմուկ խնջույքի պահին դիմեց ուղիղ ինձ, ասաց այն, ինչին սպասում էի երկու տարի:

– Էն, որ դու ինձ երկու տարի խաբում էիր, կարծում էիր, հավատո՞ւմ էի: Զիի ուզում քեզ անհարմար վիճակի մեջ դնել: Տեսնում էի, որ դու էլ քեզ առանձնապես հարմար վիճակում չես զգում: Եթե ես մի անգայացումից հետո հրավիրեց բոլորիս իր տուն և այդ զուսպ ու անաղմուկ խնջույքի պահին դիմեց ուղիղ ինձ, ասաց այն, ինչին սպասում էի երկու տարի:

շել էի երկուսիդ էլ հավատալ: Մարդու խոսքի ճիշտն ու սուտը պարզելը դժվար բան չի:

Ժամանակին մեզ ասել էր, որ կեղծ խոսքերի տոնը, կեղծ խոսքերի միմիկան միանման են ու աղքատ: Մարդկանց մեծ մասը կեղծում է միատեսակ: Բայց ճշմարտության մեջ մարդիկ շատ բազմազան են, հետաքրքրեիր ու գունեղ: Ճշմարդիտ վիճակի արտահայտության կերպերը բազմազան են և չեն կրկնվում: Նա մեզ սովորեցրել էր մի շատ կարեռ բան ևս, այն է՝ կեղծ վիճակը մարդու համար ամենածանր վիճակն է. պետք է դուրս գալ դրանից, ազատ լինելու համար, թեկուզ հարաբերություններ տանուլ տալով, թեկուզ վնասներ կրելով: Նա մեզ սովորեցրել էր նաև տարբերել կեղծիքն ու ճշմարտությունը բեմում, և կյանքում, առօրյա հարաբերություններում ամեն անգամ ցույց չտալ, թե նկատում ենք սուտը, մարդկանց անհարմար վիճակի մեջ չընելու համար: Այս դեպքում իմ սուտը այն մարդու օգտին էր, որի մեջ ինքը հեռանկար էր տեսնում և, ինչպես կյանքը ցույց տվեց, չէր սիսալվում:

Էական կետերում Գուլակյանը մարդկանց դնում էր հավասար վիճակի մեջ: Ոչ մեկն ազատ չէր ֆիզիկական աշխատանքից: Պետք էր օգնել բեմի բանվորին: «Կարծում եք, նա ձեզանից պահա՞ս մարդ է, – ասում էր, – մի օր էլ նա պիտի դերասան կամ ռեժիսոր դառնա»: Այստեղ էլ նա ճիշտ դուրս եկավ: Ընդմիջումներին ոչ մեկը հանգստանալու իրավունք չուներ. պետք էր տեղափոխել փոշոտ հարթակներն ու իրերը, բայց այնպես, որ փոշու ոչ մի հետք չմնար բեմական հագուստի վրա: Ինչ ուղղում է լիներ հագիդ, միենույն էր: Եթե արտիստ եք, կարողացեք իրերի հետ վարվել ամենանպատակահարմար ձեռվ. փոշոտ իրերի հետ վարվեք այնպես, որ փոշին չկպչի ձեռքերիդ ու հագուստներիդ: Եվ պահանջում էր այդ ամենն անել արագ, անաղմուկ, առանց խոսք ու զրույցի, առանց թրխկոցի ու քաշըու-

ցի: Դա վարպետություն էր պահանջում, իսկապես դերասանի վարպետություն: Եվ այդպես էլ նայում էր նա այդ «կեղտոտ» գործին.

– Արտիստը ամեն գործում պետք է արտիստ լինի, ամեն ինչ մաքուր անի, ամեն գործի միջից մաքուր դուրս գա:

Այստեղից՝ նրա բարոյական ընդհանրացումը.

– Կեղտոտ տեղում լինելը ոչինչ. կարողացեք կեղտոտ տեղում չկեղտոտվել: Թատրոնում ամեն տեսակ կեղտ կա: Թատրոնում պետք է աշխատեք էնպես, որ կեղտը ձեզ չկպչի, ընդհակառակը՝ ձեր շուրջը մաքրվի:

Բարոյախոսությունն ու խրատը ընդունված միջոցներ էին Արմեն Գուլակյանի համար: Եվ հետաքրքիր էր նրան լսել, երբ անցնում էր բարոյախոսության: Նա շատ բան էր բերել հին դպրոցից, հայոց ավանդական վարժապետներից: Գուլակյանին հիշելով միշտ անվերապահորեն դրական իմաստ եմ տեսնում «վարժապետ» բուն հայերեն բառի մեջ: Ինձ թվում է, հին դպրոցից էր գալիս նրա խոսքի պարզ, առօրեական ոճը, միշտ հստակ ու կոնկրետ դատողությունը, խոսակցական դարձվածքներով, երբեմն կենցաղային հնչերանգներով, և միշտ սրամիտ, համեմակած ժողովրդական ասացվածքներով, առակով ու անեկդոտով: Պատմելու հրաշալի մի ձիբք, ժողովրդական պատմողի փայլ ու հմայք: Եվ խորում էր անշտապ, հանգիստ, միջին տոնով, առանց կեցվածքի, առանց բազմանշանակ դադարների, առանց բառեր որոնելու: Նույնը պահանջում էր մեզանից՝ ավելացնել բառեր չգործածել և բառեր չորոնել, չասել, թե լորդ բառեր չգործածել պահանջում բացատրել. Եթե մի հասկանում եմ ու չեմ կարողանում բացատրել. Եթե մի հասկանում եմ ու չեմ կարողանում բացատրել. Եթե մի հասկանում եմ ու չեմ կարողանում բացատրել. Եթե բառ գիտես, գիտես բառերով ու նախաղասություններով, եթե բառ չեմ գտնում, ուրեմն միտքդ պարզ չի: Նրա ամբողջ վարքագծում չկար թատերայնության հետք, ինքնացուցադրման նշույլ: Ոչինչ չէր սովորեցնում իր անունից, չէր ասում «իմ կարծիքով» և թույլ

չէր տալիս գործադրել նման ոճ, համարում էր այդ անհամեստություն: «Քո կարծիքը թող,— ասում էր,— ի՞նչ է ասում գիտությունը, դու էդ ասա»: Նրա համար կային ստուգված սկզբունքներ, ոչ թե հեղինակություններ: Հեղինակություն էր նրա համար Ստանիսլավսկին, որի «Ռազու ակտերա հած սօնոյ» գիրքը մեզ երկու տարի շարունակ կարգալ տվեց ու հարցրեց: Պահանջում էր ոչ թե վերարտագրել, այլ բացատրել, մեկնարանել, թարգմանել տերմինները: Եվ երկու տարի (չհաշված երրորդ տարին, երբ ավելի շատ գործնական աշխատանքով էինք զբաղված) մենք զբաղված էինք այդ «կտակարանի» մեկնությամբ: Ստանիսլավսկուն վկայաբերողներն ասում են «վերապրում» և դա մերձեցնում են ինկարնացիայի (հոգեփոխության) կեղծ միստիկական տեսությանը: Գուլակյանը չէր գործածում «վերապրում» բառը: Նա այս ուսմունքի մեջ առանձնացնում էր վարքագծի տեսությունը (այն, ինչը փոխառված էր նոր ձեւափորփող բիհեւորիկմից, XX դարասկզբին), այն է՝ գործել ենթադրվող պայմանի համաձայն: Սա ինձ հետագայում հանգեցրեց այն մտքին, որ Ստանիսլավսկու ուսմունքը կարելի էր շարադրել անհամեմատ կարճ, քան այն երկու մեծ հատորը, որից շատ քչերն են գլուխ հանել: Համոզված եմ, որ ինքս ինքնուրույնաբար չէի ըմբռնելու այդ ուսմունքի հությունը, գուրս քաշելու այնտեղից ճշմարտության թելը: Բեմադրությունների փորձերն ու այդ գրքի մեկնությունը գնում էին զուգահեռ և վերջ չկար: Ամեն դեպքում, ամեն հարցի բացատրության մեջ նա վկայակոչում էր իր համար ստուգված սկզբունքները՝ «գիտությունը», ինչպես սիրում էր ասել: Կատեղորիզմ կար նրա մեջ և այդ կատեղորիզմն ինչ-որ չափով փոխանցվեց մեզ: Բացարձակ արժեքներից չէր խոսում նա, բայց համոզում էր, որ արվեստում կան ճշմարիտ և ոչ ճշմարիտ ճանապարհներ, որ ճշմարտությունը վիճելի չպետք է լինի,

վիճելի կարող են լինել բացատրությունները, խոսքային ձևակերպումները: Ուրեմն, պետք է մտածել ու դատել կատեղորիզմներով, ճիշտ և ստուգված տերմիններով ու բառերով և քիչ խոսել, լեզվին չտալ: Նա սովորեցնում էր բեմական գործողության (ոչ թե դերասանի արվեստի) քերականությունը, և այստեղ պետք էին ճիշտ սահմանումներ:

Բեմադրության որևէ տեսարան պատրաստելուց հետո դնում էր քննարկման, խոսեցնում էր բոլորին և պահանջում էր կոնկրետ ու կարճ խոսք, ստիպում էր դատել մասնագիտական հասկացություններով, չէր սիրում մակդիրներ, անառարկա դատողություններ, հարցի շուրջը գես ու գեն պտտվող խոսքեր, մտքի աղքատությունը քողարկող զաղարներ: Նրա համար գոյություն չունեին «լավ» կամ «վատ» հասկացություններ, կային ճիշտ և սխալ սկզբունքներ: Բոլոր գեպքերում հարցը վերաբերում էր նրան, թե որ սկզբունքին ենք մոտ: Անորոշ վիճակներ այստեղ ենթադրվել չէին կարող, չէր ընդունվում ոչ մի տեսակի ուելյատիվիզմ: Ինչո՞ւ էր այդպես: Շատ պարզ. Գուլակյանը ուսւական հոգեբանական ուելիզմի հետևորդ էր, այն գծի հետևորդը, որ հայ թատրոնում արմատավորել էին Գևորգ Զմշկյանը, Գևորգ Պետրոսյանը, Օվի Սեռումյանը: Այլ կերպ լինել չէր կարող: Նա մեծացել էր թիֆլիսում, սովորել էր Մոսկվայում և ինչ էլ աներ, չէր կարող հեռանալ իր դաշտանած ուղղությունից: Նա երիտասարդ տարիներին եղել էր մողեռնիստ, ներշնչվել դարասկզբի նորագույն հոսանքներով, որոնց կենտրոնը Մոսկվան էր, տեսել ու ըմբռնել էր և՝ վախտանգովին, և՝ թաիրովին, մեկ տարուց ավել հաճախել էր Մեյերխոլդի դասերին, համարձակ ու հետաքրքիր փորձարարությունների էր զիմել ու հանգել էր հոգեբանական դպրոցին: Խոսքը բոլոր գեպքերում վերաբերում էր մարդկային վարքագիծը հոգեբանորեն ճշմարիտ վերաբարդելուն, և հասկանալի

Էր, որ այստեղ կարելի էր լինել ճիշտ կամ սխալ, ոչ թե լավ ու վատ: Պատրաստվող բեմադրության յուրաքանչյուր տեսարան և մանրամասն, դրամատիկական գործողության բոլոր աստիճանները, բոլոր գլխավոր ու երկրորդական պահերը, հոգեվիճակի առաջնային ու երկրորդային պլանները, գործող անձի և դերակատարի վարքագծի բոլոր շերտերը՝ հեղինակային մտահղացումից մինչև բեմադրական մտահղացում, պերսոնաժի ընդհանուր գծերից մինչև դերակատարման կոնկրետ գծերը, դերակատարի բնավորության ու նկարագրի անհատական, ակներև գծերից մինչև կերպարով թելադրվող բնութագրական մանրամասները, ներքին, թաքնված հոսանքները, նա ստիպում էր տարրալուծել ու բացատրել և չդիմել ոչ մի անորոշ դատողության: Այսպես, մի անգամ նա ուսանողներից մեկին հարցըց, թե բեմում փորձողները ճիշտ էին, թե՞ սխալ: Հարցը վերաբերում էր հետեւյալին. դերակատարներն ունեն ներքին, հոգեբանական մղումներ, ի՞նչ մղումներ են դրանք, և ճիշտ արարքներով են արդյոք արտահայտվում, կամ՝ արգելքի («Հակագործողության») գիտակցում կա՞ նրանց արարքներում, և ինչպես են գործում իրենց կամքին հակադրված հանդամանքների դեմ: Ուսանողը պատասխանեց. «կարծես ինչոր բան չի կպչում»: Պատասխանին հետեւ Գուլակյանի հեղնանքը:

— Սա ի՞նչ բառապաշար է. «չի կպչում», «չի պոկվում»: Սա ի՞նչ խոսելու ձև է: Խոսեք մասնագիտական լեզվով. ասեք ինչն է ճիշտ և ինչու է ճիշտ, ինչն է սխալ և ինչու է սխալ:

Եվ ամենատարբեր օրինակներով, կյանքի ու բեմի փաստերով նա բացատրում ու բացատրում էր, որ բեմական գործողության պարզագույն տարրը արարքն է, որ դերասանը արարքներով է արտահայտվում, որ մարդկային վարքագիծը արարքների շղթա է, և այդ

շղթայի ամեն մի օղակ կյանքում պատճառաբանված է, բեմում էլ պետք է պատճառաբանվի, որ պիեսի տեքստի խորքում պետք է հայտնաբերել այդ արարքների շղթաները, գտնել նրանց օղակները, տարբերակել այդ օղակների մեծն ու փոքրը, գլխավորն ու երկրորդականը, ստորակարգել դրանք ըստ ետևառաջության, գտնել, թե արարքներից որը պետք է խոչորացվի, ընդգծվի, լուսավորվի, որը թողնվի ստվերում, ինչ գեպքերում կարող է անկարեւոր արարքը դառնալ առաջնային, և կարեւոր երկրորդային, ինչպես պետք է արարքը կամ բառը չշնչտելով, անկարեւոր դարձնելով ընդգծել: Նա երբեք չէր գործածում «խաղալ» բառը, ասում էր «գործել»: Առաջին հերթին գործողության ճիշտ, հոգեբանորեն պատճառաբանված պլան, վարքագծի տրամադրանություն, մեստի, անցումի, հայացքի պատճառաբանվածություն: Եվ միշտ հարցնում էր՝ ինչո՞ւ, ինչո՞ւ արվեց այսպես, բացատրիր, հիմնավորիր մասնագիտորեն, եթե չունես հիմնավորում, մի արա:

Գուլակյանը երբեք չէր գործածում «զգացմունք» բառը: Զգացմունք վերաբաղրել չէր կարելի, պետք էր ճիշտ գործել, գիտակցել այս կամ այն արարքին մղող պատճառը, կենտրոնանալ այդ պատճառի վրա: Նա հետեւյալական ուացիոնալիստ էր, բայց պաշտում էր տաղանդավոր ինտուիտիվիստներին, հուզական տարերքի գերասաններին, օրինակ՝ Աբելյանին ու Ներսիսյանին: Ներսիսյանի մասին ասում էր, որ նա գերի տեքստը երբեք լավ չի իմանում, բայց անհնար է, որ անտրամարան նախադասություն արտասանի: Ասում էր, որ Ներսիսյանի ինտուիցիայի մեջ խորը տրամաբանություն կա, բայց մենք չենք կարող ու չպետք է փորձենք հույս գնել մեր ինտուիցիայի վրա. դա ամեն դերասանի գործ չէ: Ամենից շատ Գուլակյանը սիրում էր Հասմիկին: Նա չէր ճանաչում Հասմիկից ավելի ծշմարիտ դերասանունի: Ասում էր, որ Հասմիկի բեմական գործելակերպում

դարձյալ ինտուիցիան էր դեր կատարում և դարձյալ խոր տրամաբանություն կար այդ ինտուիցիայում։ Ասում էր, որ Հասմիկի խաղում պարզ ու անսպասելի էին վճիռները, հույզը առարկայական էր ու կոնկրետ, չկային անորոշ էմոցիաներ, չպատճառաբանված վիճակներ, իրարանցում, տրանս։ «Ես չեմ հավատում, — հաճախ ասում էր նա, — իմ չտեսած դերասանուհու՝ Սիրանույշի մեծությանը, եթե գրում են՝ նա հրդեհվում էր բեմում և այրվում անմնացորդ։ Որ ի՞նչ, հետո ինչ։ Ես ի՞նչ հասկանամ դրանից։ Թող ինձ ասեն, նա ինչ էր անում, ինչպես էր գործում»։

Դերասանի «ներքին» ասելով նա հասկանում էր հոգեբանական դրդապատճառների կոմպլեքս, «արտաքին» ասելով՝ արարքների կոմպլեքս։ Այս հասկացության մեջ էր տեղափորում նաև դերի «պլաստիկական վճռի» գաղափարը (չէր ասում «լուծում», այլ՝ «վճիռ»)։ Գործող անձի պլաստիկական բնութագրման համար պահանջում էր գտնել որևէ բնութագրական, միայն տվյալ գործող անձին հատուկ շարժում, ժեստ, սովորություն, որը լիներ ընդգծված, տպավորվող, բայց չատ չկրկնվող։ Ասում էր, որ այդպիսին է եղել Վախտանգովի խաղը։ Բայց արտաքին մանրամասները չպետք է մոռացնեին վարքագծի ներքին ոլորտը։

Որպես կատարյալ օրինակ նա բերում էր Միխայիլ Զեխովին։ Ինչո՞ւ, ասում էր, նրա Համլետը, Մալվոլիոն, հլեսատակովը ոչ մի կետում չէին հիշեցնում մեկը մուսին։ Պատճառն այն է, որ Զեխովը տարբեր դերերում գործում էր տարբեր հոգեբանական խնդիրներով, վերանայում ու փոխում էր իր դերասանական վարքագծի դրդապատճառները։ Թվում է, չատ պարզ բան է սա։ Բայց ոչ. դրդապատճառներ գտնելու մեջ է դերասանի ստեղծագործական երևակայությունը՝ մի բան, որը Զեխովի համար սահման չուներ։ Օրինակ, ասում էր, Զեխովը, Մալվոլիոյի դերը պատրաստելու շրջանում

երբեմն միջավայրի հանդեպ չատ աւարօրինակ ու արտառոց դիրք էր բոնում՝ գործում էր իր դերի ենթադրվող դրդապատճառներով։ կարող էր, ասենք, տրամվայ բարձրանալ և տոմսավաճառի հետ կատակել Մալվոլիոյի դիրքերից։ Գուլակյանը պատմում էր նաև Զեխովի արտասովոր կենտրոնացման մասին, կենտրոնացում, որ բերում էր նաև չատ օրգանական ու տպավորիչ պլաստիկական վճռ։ Ասում էր, որ Զեխովի Համլետը մի տեսազան ուներ, երբ լուռ, անշարժ ու կծկված նստում էր բեմի մի անկյունում, սանդուղքի աստիճանին, և նրա լարված անշարժությունը արտասովոր կերպով տպավորիչ ու ողբերգական է եղել, միաժամանակ՝ չատ պարզ, հոգեբանորեն բացատրելի։

Դերասանի աշխատանքի մյուս սկզբունքային կետը վերաբերում էր Հեղինակային տեքստի ու դերասանական վարքագծի հարաբերությանը։ Փորձերի նախնական շրջանում տեքստը նրա համար սրբություն էր։ Ստիպում էր կարդալ միայն ըստ տրամաբանության ու քերականության, անտարբեր, գրեթե շշուկով, ցույց չտալ ոչ մի վերաբերմունք, ոչ մի հույզ։ Մկզբում չատ տարօրինակ էր թվում այս միատոն ընթերցանությունը, և ինքն էլ չէր բացատրում իր պահանջի իմաստը։ Հետագայում հասկացա, թե ինչ էր հետապնդում ընթերցման այդ անտարբեր եղանակը։ Դա նշանակում էր նախ պասիվ դիրք բոնել խոսքի հանդեպ, այնքան ժամանակ, մինչև որ խոսքն ինքը կներգործեր, կթելադրեր իր տրամադրությունը։ Պետք չէր ձայնով հարձակվել տեքստի վրա, պետք էր սպասել, որ սեփական գիտակցության մեջ նստի ոչ սեփական խոսքը, և նրա հուզական ուժը ներգործի ինքնին, այն է՝ շփումը գեղարվեստորեն մշակված խոսքի հետ առաջացնի ուեալ հույզ։ Դա կարող է լինել ուժեղ կամ թույլ, բայց ոչ կեղծ։ Մի գրույցի ժամանակ Խորեն Աբրահամյանը, որ գուլակյանի սիրելի ուսանողներից էր եղել, ասաց, թե

բառերը էմոցիոնալ ուժ ունեն, ճիշտ ընտրենք բառերը սխալ հույզերի մեջ ընկնելու, միմյանց ճիշտ հասկանալու համար։ Մեծ ծշմարտություն կա այստեղ։ Համոզող է այն դերասանը, որ իրեն նախ զգում է հեղինակի ստեղծած գեղարվեստական հույզերի ոլորտում։ Յածրաձայն ընթերցանությունը ակամա մղում է կենտրոնացման և ենթագիտակցական դիմադրության տեքստի առաջացրած հույզերի հանդեպ։ Իսկ եթե կա դիմադրություն, հույզը ձգտում է արտահայտվել։ Սա յուրահատուկ ինքնահայեցողություն է՝ ինտրոսպեկտիվ վիճակ, որի մասին Գուլակյանը գուցե և չէր մտածել, բայց ոչ մի կասկած, որ այդտեղ կար ուսւ թատրոնի, ուսւ գերասանական արվեստի փորձը։ Երբ տարիներ առաջ բեմական խոսք էի դասավանդում ինստիտուտի դերասանական կուրսերից մեկում, փորձեցի ընթերցման այդ եղանակը կիրառել, և ինձ համար պարզվեց, որ ճշմարիտ լինելու համար խսկապես պարտադիր չէ հուզական մեծ ուժ ունենալ, կարելի է բեմից արտասանվող խոսքի մեջ օրգանական լինել և տպավորություն ստեղծել հուզական միջին, նույնիսկ միջինից ցածր ուժով։

Խոսքի ինտոնացիոն մշակումն այստեղ չէր ավարտվում։ Աշխատանքի երկրորդ փուլում Գուլակյանն ստիպում էր գտնել խոսքի այնպիսի դրդապատճառներ, որոնք հեղինակը չի թելադրում։ Բեմական գործողության և առանձին դերակատարների գործողությունների պարտիտուրը հայտնաբերելով, մղում էր բեմական ենթատեքստի հայտնաբերմանը։ Եվ որպեսզի չկորչեր հաղիվ շոշափվող տրամադրությունը, նա միզանացենի մեկ անգամ գտնված ու մշակված գծագիրը չէր փոխում։ Կարեորը արտաքին դրությունների տարբերակները չէին նրա համար։ Գուլակյանը մտածում էր մեկերկու տարբերակով, և ոմանց թվում էր, թե նրա երևակայությունը սահմանափակ է։ Բայց տարբեր բաներ են երևակայությունն ու հնարամտությունը։ Բեմադրական

գծագրի պահպանումը, կարծում եմ, ենթադրում էր կարեոր մի սկզբունք։ Կարեորը արտաքին դրությունների տարբերակները չեն (դրանք կարելի է անընդհատ փորձարկել ու չգտնել ամենաճիշտն ու կատարյալը), կարեորը հոգեբանական ու խարակտերային երանգների անընդհատ հայտնաբերումն ու նրբացումն է նույն տարբերակի սահմաններում։ Սա, ըստ իս, ավելի լուրջ ուժիսուրա է, քան հնարամտության ցույցը։ Բեմահարթակի ուղղանկյունը անսահմանափակ ու զատարկ տիեզերք է, և դերասանն այնտեղ կարող է իրեն զգալ անհենարան ու անօգնական։ Գուլակյանը գերասանի համար ստեղծում էր կայուն հենարան՝ գերասանին ամրապնդում էր մեկընդմիշտ գտնված որոշակի կետերում ու անցումներում, երկար էր գործել տալիս այդ դրության մեջ, այնքան, մինչեւ որ արտաքին վիճակները դառնային սովորություն, գերասանը ակամա տեր դառնար այդ վիճակներին ու ներքին ազատություն ձեռք բերեր, ակամա սկսեր երանգներ գտնել։ Եվ ահա այստեղ Գուլակյանը գերասանին աստիճանաբար, աննկատելիորեն մղում էր խոսքի գրական իմաստից դուրս, շեղում էր բառի ու դարձվածքի ակներև տրամադրությունից, երբեմն էլ փորձում էր նրան հակոտնյա տրամադրությամբ մոտեցնել խոսքին։ Այս կերպ հեղինակային տեքստում հայտնագործվում էր նոր, անհայտ մի շերտ՝ ստեղծվում էր բեմական, արտատեքստային բովանդակությունը ի հակակշիռ տեքստային բովանդակության։ Վիճակները դառնում էին ավելի կարեոր, քան խոսքը և վերջինս էլ նոր իմաստ էր ձեռք բերում բեմում ստեղծված իրադրության ու տրամադրության լույսի տակ։ Չէր կարելի այլևս խոսք խաղալ, մանավանդ բառեր խաղալ, խոսքի մակերեսային իմաստը ցուցադրել, պետք էր ամեն դեպքում գտնել պատճառը, և խոսքը իմաստավորել որպես դրություն, հոգեվիճակ։

— Մարդիկ ուրախանալիս, — հաճախ կրկնում էր

նա,— անպայման ուրախ խոսքեր չեն ասում, ուրախ բանի մասին խոսելիս անպայման չեն ծիծաղում ու պար գալիս: Մարդն ամեն տրամադրության մեջ էլ նախ աշխատում է հաղթահարել իրեն: Ամեն տրամադրություն էլ մարդու մեջ առաջացնում է դիմադրություն: Մարդիկ ամեն պահ հաղթահարում են իրենց տրամադրությունները, ոչ թե ցուցադրում: Եթե տեսնում եք, որ որևէ մեկը ցուցադրում է իր ուրախությունը, կասկածեք նրա անկեղծության վրա: Էմոցիաներ խաղացող մարդիկ կամ պրիմիտիվ են հոգով ու խելքով, կամ կեղծ են:

Հոգեբանական ճշմարտության այս ըմբռնումը Գուլակյանը բերում էր ուստական հոգեբանական ռեալիզմի և նրա խոշորագույն տեսաբան Ստանիսլավսկու դպրոցից: Բայց, ինչպես գիտենք, Ստանիսլավսկին ենում էր նաև եվրոպական բեմի խոշոր վարպետների փորձից: Դաստիարակվելով այս համոզմամբ, Արմեն Զիգարիսանյանի հետ դիտում էինք Փափազյանի Արքենինը ու տեսնում, որ հույզը հաղթահարելով ու դիմադրելով դրսեորելու ամենակատարյալ օրինակը Փափազյանն էր տալիս, այն դերասանը, որ ամենեին էլ Ստանիսլավսկիով չէր դեկավարվում:

Հետագյում իհարկե շեղելու էի մտքիս ուղղությունը, պարզելու, որ կա խաղի տեսություն, և դա թերևս ավելի մոտ է արվեստագիտությանը: Այսօր իմ վերապահություններն ունեմ ուսուցչիս հանդեպ, բայց ո՞վ էր ձեռքս տվել կողմնացույցը, եթե ոչ նա՝ մի մարդ, որ իր կրթությամբ հեռու էր գիտության բնագավառից և այնուամենայիվ դատում էր մշակված հասկացություններով ու ստուգված եզրերով և դիմացինին մղում էր պրոֆեսիոնալ մտածողության, ավելին՝ գիտական մտածողության, եթե մարդն ուներ դրա բնական հակումը: Մոքովս էլ չէր անցնում, թե հետագյում իմ տեղը գիտական հաստատությունն է լինելու, բայց երբ այդպես եղավ, զգացի իմ ստացած դաստիարակության առավե-

լությունը նրանց հանդեպ, ում համար թատերագիտությունը գրական զբաղմունքի մի ձև էր, ուրիշ ոչինչ:

Գուլակյանի ուսուցման մյուս կարեոր սկզբունքը կապն էր հանդիսատեսի հետ: Այսպես կոչված, «Հրապարակային մենակության» գաղափարը չէր կարող մեղանում իրականացվել միայն ծանոթների միջավայրում: Պետք էր ավարտվող աշխատանքը դնել օտար հայացքների առջև: Պետք էր շփվել ամեն կարգի հանդիսատեսի հետ, ամենից ավելի ոչ մասնագետ մարդկանց հետ: Ուսումնական ծրագիրը պահանջում էր հիսուն հրապարակային ելույթ յուրաքանչյուր ուսանողից: Գուլակյանի դասարանները գերազանցում էին այդ թիվը: Աշխատանքը նա երբեք ավարտված չէր համարում, քանի դեռ չէր ներկայացվել հանդիսատեսին: Միայն հրապարակային ներկայացումից հետո էր ուսանողի խաղը հանձնվում քննության: Եվ այսպես, ուսանողական բեմադրությունները տասնյակ ու ավելի անդամներ խաղացվում էին հանդիսատեսի առաջ: Չէր սիրում, երբ մարդիկ դժոնում էին հանդիսատեսից: Նա այդ համարում էր դերասանական վատ բնագործություն:

— Հանդիսատեսին հանդիսատ թողեք,— ասում էր,— մտածեք ձեր մասին: Թատրոնում հանդիպելու եք ամեն տեսակի հանդիսատեսի: Հանդիսատեսը նրա համար է, որ խանդարի:

Արմեն Գուլակյանի ուսուցման սկզբունքներն ու եղանակները թերևս հնարավոր չէ ի մի բերել հարեանցիորեն, կարծ մի շարադրանքում: Դա յուրահատուկ դպրոց էր, որտեղ ուսուցանվում էին բեմական արվեստի ստուգված ու անվիճելի օրենքները: Այստեղ հայտնություններ ու գյուտեր չէին արվում, ձեր քմահաճ որոնումների չէին պատրաստվում, այլ սովորում էին բեմական գործողության այբուբենն ու ուղղագրությունը:

Այն, որ թատերական ինստիտուտը համալսարանա-

կան կրթություն չէր տալիս (այսօր էլ չի տալիս), ինձ սկսեց մտահոգել ուսման վերջին տարում, երբ պաղել էր իմ պատանեկան սերը թատրոնի հանդեպ, և ակամա հրաժարվում էի բեմից:

Ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը:

— Որ մտածելով ես գործում, լավ ես անում,— ասաց մի անգամ ուսուցիչս,— բայց կասկածելով մի գործիր:

Մի անգամ էլ վերցրեց իմ առջև դրված Ստանիսլավսկու հիմնական աշխատությունը, սկսեց թերթել ու դարձավ մեզ.

— Ո՞ւմ գիրքն է:

— Իմը,— ասացի ես:

— Ճիշտ է,— ասաց,— գիրքն էսպես կկարդան: Ամենակարևոր տեղերը գծել ես: Քանի՞ անգամ ես կարդացել: Երեք գույնի մատիտ եմ տեսնում: Ամենակարևոր տեղերը... Տեղ չի մնացել, աղել ու մաղել ես: Ես քեզ էլ ի՞նչ հարց տամ:

Աշխարհիս ամենախորհրդավոր թվացող արվեստը խորհրդագրկվել էր աչքում Ստանիսլավսկու անողորմ տեսությամբ, որ ընդունել էի որպես վերին ճշմարտություն, կարծելով ինչքան լավ իմանամ այդ, այնքան լավ կիսազամ: Մեծ մոլորություն: Դա նույնն է, թե լարախաղացին բացատրես հավասարակշռության բանաձևը, և մարդը հեռուն նայելու փոխարեն ոտքի տակ նայի ու ընկնի: Ստանիսլավսկին իրենում իսկ սպանել էր խաղային տարերքը, մոտեցել սրտի տագնապի ու հրաժարվել բեմից: Ստանիսլավսկու կիրառական հոգեբանության դասընթացում շատ բան կա գիտական, բայց չկա գեղագիտություն, չկա այն երկրորդված կյանքի հմայքը, որ մարդուս ձգում է դեպի «դատարկ տիեզերք» (Բրուքի խոսքն է՝ empty space): Խաղային տարերքին օտար այդ տեսությունը շեղում էր ինձ իմ անկեղծ ձգտումից, և չգիտեի՝ ինչու եմ դառնում անտարբեր: Դժվար էի գիտում իտալական նեռուեալիստական Փիլ-

մերը, մտածելով՝ ի՞նչ բարդ բան է հոգեբանական ճշմարտությունը բեմում, որին իրբեւ թե պարտավոր էինք հասնել: Ու երբ եկա այն համոզման, որ հարկ չկա նման խնդրով ապրել և մտքիցս հանեցի դերասան դառնալը, կյանքը հեշտացավ, խաղն էլ հետք: Ոչ մի պարտավորություն այլևս բեմի հանդեպ. Թող խաղանա, ով հեշտ է պատկերացնում այդ գործը: Հասկացա, որ սիրել եմ թատրոնը ոչ որպես կենսաձև, այլ գաղափարը, և այդ գաղափարն իմն էր ու իմն է մինչ օրս: Թատերագիտությունը կեղծ գիտություն է, եթե չի սկսվում բեմից: Ես այդտեղից էի սկսել ու չէի սխալվել:

Մարդս ինչ էլ սովորի, ինչ կրթություն ու գիտելիք էլ ձեռք բերի, ունենում է ելման կետ, առանցքային իմացություն, որից սկսում է և որին վերադառնում է, որով չափում ու մեկնում է իր տեսածն ու իմացածը: Ես իհարկե անբավական եմ իմ ստացած պաշտոնական կրթությունից և գիտեմ այն, ինչ գիտեմ, ինչը կրել եմ մինչեւ իմանալս, որպես տեղ իմացության: Քառասուն տարուց ավել գիտական աշխատանքում եմ և ամոթ ու վախ եմ զգում, երբ լսում եմ ինձ ուղղված «գիտնական» բառը: Կիսակատակ հիշեցնում եմ, թե ինչ է գրված իմ կրթության վկայականում: Այդ է իրականությունը, և կրում եմ այդ որպես հիմնավոր արդարացում իմ զբաղմունքի, որպես անձի ներքին եղանակ:

ԻՆՉԻ՞Ց Է ՍԿՍՎՈՒՄ ԴԵՐԱՍԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ. «ՓՈՔԻ» ԴԵՐ

Սունդուկյանի «Կտակ» կատակերգության երրորդ գործողությունում, երբ դատական կատարածուի ձեռքով բացվում է հարուստ հանգուցյալի՝ Դավիթ Ալուբյանի կտակը, տեսարանում նշված են «երկու վկա՝ 40–50 տարեկան, եվրոպական հագուստներով»։ Այս անձինք գալիս են դատական կատարածուի հետ, ներկա գտնվում կնքված սնդուկի ու նրանում պահված ծրարի բացմանը, ստորագրում կազմված արձանագրությունը և հեռանում։ Նրանցից մեկն արտասանում է՝ ընդամենը մեկ նախադասություն, մյուսը՝ լուր է մնում և լուս հրաժեշտ տալով գնում է։ Ովքե՞ր էին ներկայացնելու այս փոքր ու անխոս դերերը ուսումնական բեմադրության մեջ (1956), երբ բոլորս զբաղված էինք խոսող դերերով։ «Նրանք, ովքեր ազատ են այս գործողությունում», – որոշեց Գուլակյանը։ Ազատ էի ես, որ դեր ունեի (Մամիկոն Կորիգյան) երկրորդ և չորրորդ գործողություններում, և Օթար Տեր-Հովհաննիսյանը (Բժշկապետ), որ մեծ տեսարան ուներ չորրորդում։ Պետք էր փոխել արտաքինը, գալ, կանգնել, ստորագրել, գնալ։

Զկա ավելի հեշտ միջոց դերասանի համար, քան արտաքուստ անձանաչելի դառնալը։ Զհամարելով այդ

լուրջ բան, ես փոխեցի իմ արտաքինն ամենակոպիտ եղանակով։ Հիմնական դերի՝ թիֆլիսյան պճամոլ Մամիկոնի սալոնային արտաքինը, որ մշակել էի հոգատարությամբ՝ բեղերից մինչև կոշիկների ծայրը, ջնջեցի ու ծպտվեցի ճերմակած բեղերով, նոսր պարիկով, հնամաշ, գունաթափ ունդինգոտով, հին կոշիկներով ու մի եզրավոր գլխարկով։ Պճնամոլից մնացին օլայած օձիքն ու թիթեռնիկ փողկապը, որպես նշաններ կրթվածության ու ինքնահարգանքի։ Եվ այսպես, մտանք «երկու վկաներս», կանգնեցինք, սպասեցինք, ստորագրեցինք, դուրս եկանք ու վերականգնեցինք մեր նախկին վայելուչ արտաքինը։

– Երեսը ներկելով, շորը փոխելով մարդը չի փոխվում, – ասաց Գուլակյանը։ – Դուք ձեր խնդիրը պիտի փոխեք, մտադրությունը։ Կենսագրություն պիտի ունենաք և էստեղ գալու պատճառ։ շատ էլ՝ թե խոսք չունեք. դա ոչինչ չի նշանակում։

Փորձը կրկնվեց հաջորդ օրը։ Արդյունքը նույնն էր։ Մյուս օրը՝ դարձյալ նույնը։

– Դու նույն մարդն ես, սիրելիս, – ասաց, – ներսումդ բան չի փոխվել։ Պարզի՞՛ ով ես, ինչ տեղից ես գալիս, ինչ շահով…

Տեսականորեն պարզ, անվիճելի պահանջ էր դրվում, բայց ինչպե՞ս իրականացնել, ի՞նչ խոսքից ելնելով։ Գործող անձանցից ոչ մեկը չի նկատում այս մարդկանց ներկայությունը, խոսք չի ուղղվում նրանց, բացի դատական կատարածուի մեկ ֆրազից՝ «Համեցեք, պարուն վկեք», մեկ էլ վերջում՝ «դուք ազատ եք»։ Իսկ այն միակ հրաժեշտի խոսքը, որ արտասանում էր ընկերս, ինձ ոչինչ չէր ասում։

– Եթե կարծում ես, թե տեքստը բան չի հուշում, սխալվում ես, – իր պահանջն էր հետապնդում Գուլակյանը։ – Բոնելու տեղ կա՝ մի բարակ տեղ։ Գտիր, եթե գրականագետ ես։

— Գրականագե՞տ...

— Հա, ի՞նչ կա որ, սիրելիս, էստեղ գրականագիտություն է պետք:

Նա ասում էր «սիրելիս», երբ դժգոհ էր: Բայց միևնույն է, չէր պարզվում այս անխոս մարդկանց ով լինելը: Նրանց ներկայությունը մնում էր դատարկ: Պիեսի կոնտեքստից պետք էր կռահել որևէ բան՝ բեմական արդարացում:

Պատճառը պետք էր հորինե՞լ, թե գտնե՞լ: Գտնելու կամ հորինելու համար միակ հիմքը, թվում էր, ներկա իրադրությունն է և մարդուն տրված կոչումը՝ «վկա»:

— Որտեղի՞ց են գտել, բերել էս մարդկանց:

— ...

— Ես հուշում եմ. ու՞մ հետ են եկել:

Դատական կատարածուի հետ եկած մարդը որտեղի՞ց կարող էր դալ: Պարզ է՝ դատարանից: Բայց ի՞նչ աստիճանի ու վիճակի մարդ է, որ հանձնն է առել այսքան նվաստ մի պարտականություն: Ես փնտրում էի հասարակական սանդուղքի մի աստիճան՝ թերեւ ամենացածրը դատախրավական հաստատությունների շուրջ, և այդ աստիճանը չկար: Իմ անխոս հերոսը կյանքից դուրս մնացած մարդ էր լինելու:

— Որտե՞ղ էիր մինչև էստեղ գալդ:

— Դատարանի դռանը, — ասացի առանց մտածելու:

— Ի՞նչ գործի էիր էնտեղ:

— Ոչ մի գործի:

— Էնտեղ պարապ մարդ՝ ինչքան ուզես, մեկն էլ դու: Պարապ ես եղել, պարապ մարդու գործ են տվել՝ վկա:

Դերի կենսագրության ծայրը բացվում էր:

Այստեղ հարկ է վերհիշել ու վերաձեակերպել ոռւս փելիսոփայի՝ նիկոլայ Բերդյանի հայտնի խոսքը. «Մեր «ես»-ը մի փաթեթ է, և գիտակցության կայծը լուսավորում է այդ հսկայական փաթեթի վերջին տողերը»:

Ինչի՞ն է ՍԿՍՎՈՒՄ ԴԵՐԱՍԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ. «ՓՈՔԻ» ԴԵՐ

Այս՝ բոլոր կենսագրությունները հորինվում են մարդու կյանքի այն կետից, ուր նրան հանդիպում ենք: Բոլոր կենսագրությունները հետադարձ անդրադարձումներ են (ոետրոսպեկցիա): Այս մարդու հետ իմ հանդիպման կետն այս սենյա՞կն էր, ուր մի սնդուկ էր բացվելու, թե՝ մինչ այդ՝ դրսում, դատարանի դռանը...

— Գրիմին ու հագուստին գեմ չեմ, — ասաց Գուլակյանը, — կարող ես էդպես էլ թողնել, բայց նախ և առաջ՝ գերի կյանքը բեմից դուրս՝ մուտքից առաջ և հետո: Սկսում ես պատճառից ու նպատակից, որ տեսնես հեռանկարը: Մի կետ պարզել ենք:

Անձանաչելի դառնալու պարզունակ խնդրով՝ գրիմով ու հագուստով, ես պատահաբար մոտեցել էի այդ կետին, և «դատարան» բառը հուշեց ինչ-որ բան: Ես գտել էի արտաքին նշաններ, բայց ոչ նշանակյալը: Գրիմանոցի մեծ հայելում, մի քիչ հեռվից, ուշադրություն դարձրեցի հնամաշ կոշիկներիս: Մարդու սոցիալական վիճակը բնութագրող այս նշանի հետ անհամատեղելի էին ճերմակ, օսլայած օձիքն ու փայլուն թիթեռնիկ-փողկապը: Այս նշաններն առանց ներքին ձևի չարժեխն ավելին, քան «զատկի ձվի կճեպ», ինչպես ասում էր Գուլակյանը, երբ հանդիպում էր արտաքին ձևացումների: Ենթագիտակցությունն, այնուամենայնիվ, ինձ հուշում էր, թե կոշիկների ու փողկապի անհամատեղելիությունը հարմար է, բայց ինչու՝, ի՞նչ ասելու համար:

Մի բան սկզբում տարօրինակ էր: Գուլակյանը հետապնդում էր այս անխոս պարոններից մեկին միայն՝ ինձ: Մյուսին թողել էր՝ ինչ ուզում է անի, անդեմ ու անհայտ իր միակ նախադասությամբ, և ասում էր՝ «խոսքդ լավ ասա»: Եվ քանի գեռ փորձը լսարանում էր, առանց գրիմի ու զգեստի, խոսք չկար անխոս վկայի կենսագրության ու վիճակի մասին: Այդ հարցը ծագեց բեմում, երբ ասպարեզ բերվեցին արտաքին նշանները,

այն է՝ կենսագրության վերջին տողերը, պատահաբար։ Գուլակյանին սկսեց հետաքրքրել անխոս վիճակից կենսագրություն ու կյանք դուրս բերելու, փոքր դերը մեծացնելու խնդիրը։

Այս մասին մտածել եմ հետագայում և հիմա եմ գտնում բացատրությունը քառասունհինդ տարի առաջ արվածի։

Արտաքին նշանները, եթե կոնկրետ են, կարող են համգեցնել դերի կենսագրության ու վարքագծի մանրամասներին։ Անձի արտաքինը նույնպես գործողության պայման է՝ իրական կամ անիրական։ Եթե ֆրանսիական բեմական դպրոցին նայենք, պետք է իմաստ հորինենք՝ համապատասխան գտնված կաղապարի, որ նշանակում է սկսել հակառակ ծայրից։ Բայց մեր դաշտանքը ուսւական դպրոցն էր, և Գուլակյանը՝ դրա ծրագրված հետեւողը։ Հակառակ ծայրից գալով, կարելի էր հետեւանքներ ձևացնել, հանդել ինչ-որ կրկնատիպերի, որ բացառված էր։ Իսկ եթե արտաքին նշաններն իմաստ են հուչում կամ մղում են ներքին ձևի զգացողությանը... Ստանիսլավսկին դեմ չի եղել այս եղանակին գործնականում, բայց, որպես տեսական սկզբունք, ուղղակի շրջանցել է։ Գուլակյանի համար սա հինգ մատի պես պարզ էր, անվիճելի, բայց, ի հետեւողություն պաշտոնակես ընդունված սկզբունքի, չէր հայտարարվում, երբեմն ակնարկվում էր։ Եթե ներքին խնդիրները (կամ կամքի առանցքը) հիմնավոր էին երկում, նա դնում էր, իր բառերով ասած, պլաստիկական վճռի հարցը և երբեմն ինքը թելադրում էր որևէ արտաքին նշան։ Իսկ երբ արտաքին նշանը, թեկուզ և շատ հետաքրքիր ու սուր, տեսնում էր պատրաստի ու ավարտված, կանխում էր՝ «պատճառը, սիրելիս... կպարզես պատճառը»։ Ինչ-որ բան պարզելուց հետո, հաջող կամ անհաջող, մարդը վերադառնում էր դարձյալ նախկինին ու տարակուսում, թե ինչու՞ սկզբում չէր կարելի այդ, և հիմա կարելի է։

Ինչի՞ն է ՍԱԿՎՈՒՄ ԴԵՐԱՍԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ. «ՓՈՔԻ» ԴԵՐ

Գուլակյանն ինչ-որ մանրամասներ սրբագրում էր այդ «վերջին տողերում», հաճախ կրծատում, քիչ բան էր թողնում, երբեմն թվում էր ձևականորեն, ցույց տալու համար, որ միշտ ներքին գծով ենք գնում, հետևանքներ ձևացնելը բացառված է։ Բոլոր կարգի պատճառները, նաև բարոյագղղափարական (որոնց շուրջն ընդունված է խոսել ու շեղվել), նա հանգեցնում էր հոգեբանական վարքագծին ու կամային նշաններին, հարցը ծայրագույնս պարզեցնելով։ բեմ մտնողը «ըստ էության է գործում, թե ոչ»։ Դրդիչները պետք է պարզ լինեն, կոնկրետ, գիտակցված, և այստեղ նա, իհարկե, ծայրահեղ էր. բնագգի մասին ոչ մի խոսք։

— Բնագդս ո՞րն է։ Դա հիմնավորում չի, պատասխան չի. ամեն ինչ պատճառ ունի և նպատակ՝ մտածված, ձևակերպված։

Եվ այսպես, մտածելով ու ձևակերպելով բոլոր պատճառներն ու հիմնավորումները, նայում էի գրիմանոցի մեծ հայելուն։ Դիմացս մի խեղճ ու անհեթեթ մարդ էր մտավորականի արժանապատվության նշաններով։ Եթե դատարանից է գալիս, իրավունքի ու օրենքի մարդ է լինելու, տուժած, ձախողակ, թերես գործ չունեցող մի փաստաբան։ Կյանքից դուրս մնացած մարդուն ի՞նչ է պետք, մի բան, որ իրեն արթեք տա իր սեփական աչքում և նշանակություն միջավայրի աչքում։ Ահա պատճառ, և ահա խնդիր։ Դատական կատարածու ոմն Խնձուրյան ասել է, թե՝ «արի հետո, հարուստ կտակ է բացվելու, վկա եղիր»։ Հրաշալի է։ Ոչինչ այլևս անորոշ չէր ինձ համար։ Ոչ մի խոսք պետք չէր։ Եթե վիճակը պարզ է, ըստ պատճառի ու նպատակի, խոսք լինի, թե ոչ, միենալուն է։ Այս վիճակը հազար անգամ հետաքրքիր էր, քան բեղերը սրած թիֆլիսյան փատը՝ Սամբկոն Կորիզյան կոչված, որի կորիզը չէի տեսնում, կեղեն էի միայն տեսնում՝ կնամոլ, պճնամոլ և աննպատակ, ֆրանսիական սալոնային վողեկիներից դուրս թռած,

ընկած հայոց բեմ: Մամիկոնի թատերական շտամպը հայտնի էր: Իսկ անխոս վկան չուներ այդ և միտք էր տալիս, իրադրություն էր հուշում և պահվածք իրադրության մեջ:

Ես այնքան ներշնչվեցի այս անխոս ստվերով, որ սկսեցի հավատալ նրա իրական գոյությանը, և մուտքից առաջ սիրտս անհանգստացավ, զգացի այն, ինչ պետք էր՝ կենտրոնական համակարգի գրգռված վիճակ: Հիանալի է, եթե հուզված ես և խոսք չունեմ: Ի՞նչ է արվելու, եթե ոչ զսպվելու է անհանգստությունը: Ինչպես՞ս: Կոշիկների մեծությունն ինձ օգնեց. քայլվածքս դարձավ անհամարձակ, և պահեցի այդ վիճակը: Անհամարձակ քայլվածքի պատճառը ֆիզիկական էր, և դա առաջ բերեց անհարմարության զգացում: Դրանով ամրապնդվեց իմ մեջ այն միտքը, թե ի՞նչ փոքր, ի՞նչ աննշան մարդ է այս անձը, որ կոչվում է Վկա: Ներշնչվեցի այդ մտքով և անհամարձակ ու անհամաշափ քայլքով բեմ մտա, զլխի զուսպ շարժումով, հարգալից բարեկեցի մարդկանց: Ոչ մի ուշադրություն, ոչ մի պատասխան, և ինձ համար պատրաստ էր նոր իրադրություն ու նոր պայման: Իմ բարեկը նախատեսված չէր. ոչ մեկին չէր ասված, թե կարելի է պատասխանել այս անձանոթի բարեկին: Ես կրկնեցի իմ զլխի շարժումն ավելի զուսպ և ակամա կես քայլ հետ գնացի, ոտքս ուղեցի առաջ գնել ու հետ դրեցի, մնացի այդպես՝ դռան մոտ կանգնած: Այս դիրքն ինձ հիշեցրեց, որ այստեղ ես ամենավերջին մարդն եմ, ու մտքումս ծնվեց դրա հակագդումը՝ «իսկ ինչու...»: Այս հակագդումը պետք է արտահայտվեր որևէ կերպ՝ որևէ տեսանելի նշանով ի պատասխան դրության: Իսկ դրությունը շփոթվածությունն է՝ մի բան, որ անչափ դժվար է ներկայացնել. ձևացնել հնարավոր չէ, պետք է գտնվի շփոթմունքը հաղթահարելու արտաքին կերպը, և շփոթվածի տեսքը պատրաստ է:

Վիճակը չեն խաղում, — քանիցս ասել էր ու կրկնում էր գուլակյանը, — վիճակը հաղթահարում են:

Ինչպես պետք էր հաղթահարել շփոթմունքը: Պետք էր ցույց տալ հակառակը, այսինքն՝ ամենելին շփոթված չեմ: Շփոթմունքի նշանն արդեն ցույց էի տվել: Դա այն կարեոր կես քայլն էր ի հետեանք անպատճախան բարեկի: Կես քայլից ավել թերես չէր կարելի, քանի որ անկոչ չէի, եկել էի պաշտոնական գործով և պաշտոնյայի հետ: Հետեւաբար, անկարեոր չէի և մտքումս իմ դերն այդ գործում որոշեցի համարել շատ կարեոր: Իմ մեջ գլուխ բարձրացրեց իմ կարեորության գիտակցությունն ի հակազդում վիրավորված արժանապատվության, և ումից ու ինչից էի վիրավորված, ինձ չբարեող անձանոթներից, թե՞ կյանքից ու իմ վիճակից առհասարակ: Այդպես էլ որոշեցի. ես վիրավորված եմ, զսպում եմ ինձ, այդպես է պետք, ու մնացի տեղումս կանգնած զուսպ ու արժանավայել դիրքով, գլխարկը ձեռքիս, որպես շատ կարեոր անձ, առանց որի նախատեսվող ակտը տեղի ունենալ չի կարող, այո՛, այլապես ինչու՞ են ինձ հրավիրել: Այս էր իմ անխոս վիճակի բեմական արդարացումը, որպես ներքին ձևի հիմք: Իսկ պայմանական կարեորն այն էր, որ իրադրության մեջ անկարեոր էր, և այդ անկարեորությունն էր ինձ ստիպում կարեոր ներկայանալ: Իմ դերի ներքին գործողության ամբողջ բովանդակությունը դրան էր հանգում: Ոչ ոք իմ կողմը չէր նայում, և դա ես ընդունում էի որպես խաղային պայման ու կանգնած էի նույն դիրքում, հայացքս վեր՝ առաստաղի անորոշ մի կետի, սրտումս խորին վիրավորանք «որպես թե...», այսինքն՝ մեծագույն բավականություն, որ դատարկ չեմ բեմում. խոսք չունեմ, բայց մտքումս, օ՛, իմ ճակատագիրն ու ներկա աննշան վիճակը: Սա նշանակում էր արդեն առանձին թեմա, որ ոչ ոք չէր նկատում ու չէր կարող նկատել, բացի հանդիսականից, քանզի նրան էի նախատեսում, նրա վերաբերմունքը:

Բեմում սպասողական պահ է: Դատական կատարածուն (Ալեքսանդր Քոչարյան) կազմում է արձանագրությունը, բոլորը լուս սպասում են, ես նույնպես՝ հայցքս առաստաղին: «Պրծա», — ասում է կատարածուն, և այս բառի հետ հայցքս իջեցնում եմ առաստաղից: Արձանագրությունը կարգացվում է: Ես լսում եմ ծանոթ բառեր, որոնցից ո՞չ օգուտ ունեմ, ո՞չ վնաս: Բայց ես ունեմ իմ ներքին խարիսխը, որ իմ արժանապատվությունն է, և ջանում եմ ոչ մի պահ չմոռանալ այդ այս հարուստ և օտար տանը, կուշտ ու հագնված մարդկանց միջավայրում: Այսպես մտածելով, ես լսում եմ արձանագրության ընթերցումը տեղյակ մարդու նման, որպես թե ես եմ գրել կամ թելադրել. միենույն է, ծանոթ է, ինքս էլ շատ եմ կազմել նման գրություններ:

Գործողությունը շարունակվում է, և անխոս վկային ինքնին թելադրվում են վարքագծի պայմաններ: Այսպես. կտակի սնդուկը բացելուց առաջ դատական կատարածուն մոտ է հրավիրում բոլորին: Ես մոտենում եմ գգույշ քայլերով, երկյուղած, հանդիսավոր ու քաղաքավարի, մտքումս խոսքեր՝ «Ես չեմ խանգարի, միայն տեսնեմ...»: Կատարածուն հանում է սնդուկի մոհյուրը, պարզում առաջին վկային, հետո ինձ: Ես վերցնում եմ մոհյուրը հաճույքով և աչքերիս մոտեցնելով ու հեռացնելով, շրջանաձև պտտելով, կարգում եմ տառերը և հանձնում եմ կատարածուին, հայցքումս հավանության նշան՝ «այո՛, ճիշտ է, կեղծիք չկա»: Ի՞նչ է խոսվում շուրջը, չեմ լսում, ինձ չի վերաբերում, ես գործունեմ միայն թղթերի, ստորագրությունների ու կնիքների հետ և սպասում եմ անվերաբերմունք, որպես պաշտոնական պարտականություն: Բացվող սնդուկից դուրս բերվող ծրաբը հանձնվում է հանգուցյալի եղբոր դերակատար Արմեն Զեփարխանյանին: Լուս, լարված վիճակ է, բոլորի հայցքներն ուղղված են Արմենին: Ես, որպես թե գործ չունեմ, անշարժ ու անիմաստ նայում եմ վեր,

ԻՆՉԻՑ Է ՍԿՍՎՈՒՄ ԴԵՐԱՍԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ. «ՓՈՔԻՐ ԴԵՐ

անորոշ մի կետի: Արմենը բացում է ծրաբը, ուզում է կարդալ...

— Ինձ գումարն ասեք, — հիշեցնում է կատարածուն: — Երկու միլիոն մանեթ:

— Ու՞հ...— զարմանքի ու հիացումի հոգոց են արձակում բոլորը:

Դա ինձ չի վերաբերում: Ես հայցքս իջեցնում եմ անորոշ կետից, գլուխս կախում, ասել է թե՝ ինձանից շատ հեռու է երկու միլիոնը: Ես տիսրությամբ եմ ընդունում մեծ գումարի լուրը: Գլուխս կախ շրջվում եմ, գնում, կանգնում իմ նախկին տեղում, նախկին արժանավայել գիրքով, որպես թե ոչ մի միլիոն ինձ չի զարմացնում, ինչի՞ս է պետք, շատ եմ տեսել...

Վիճակի այս պայմանին հաջորդում է մյուս պայմանը՝ արձանագրության ստորագրումը: Առաջին վկան ստորագրում է արագ, առանց թուղթը կարգալու, և դրանով ինձ որոշ զարմանքի պայման է տրվում: Տարակուսած նայում եմ նրան, որպես թե՝ «կարելի՞» է ստորագրել մի թուղթ առանց կարգալու»: Այս մտքով մոտենում եմ բեմի աջ անկյունում դրված փոքրիկ, կլոր սեղանին, նստում, վերցնում գրիչն առանձին հածույքով, ապա շատ արագ, շտապելով, վերից վար աչքի անցկացնելով թուղթը, ստորագրում եմ երկար, առանձին մի բավականությամբ, որպես կյանքի նպատակ, անձի ու արժանապատվության վերջնական, անհերքելի հաստատում: Ստորագրելը դառնում է իմ վարքագծի գլխավոր շեշտը, բարձրակետը գործողության անհատական պարտիտուրում: Ես գրիչը վայր եմ դնում, հիացած նայում իմ ստորագրությանն ու ուրքի ելնում ինձանից գոհ, բարոյապես բավարարված, մի մեծ գործ, մեծ առաքելություն իրականացրած մարդ:

— Պարոններ, դուք ազատ եք, — ասում է կատարածուն:

Առաջին վկան մոտենում է հանգուցյալի այրուն,

միսիթարանքի խոսք ասում և գնում դեպի դուռը։ Ես քաղաքավարությամբ գլուխ տալով, հետեւում եմ նրան...

— Պարուն վկա, — շշուկով ինձ է դիմում Արմենը, ես շրջկում եմ իր կողմը, նա ձեռքը ծոցագրպանն է տանում...

Դիեսում այս խոսքը չկա, բեմադրողն էլ չէր նախատեսել և հորինվեց տեղնուտեղը, պատահաբար, բայց ըստ էության, որով ինձ առաջադրվեց նոր պայման։ Աննշան մի ծառայության համար աննշան մի մարդու վարձատրում են, և դա նրա համար որպես թե անսպասելի է. «Օ՛, ինչ եք անում, անհարմար է...»։ Այս խոսքը մտքումս, ձեռքերի հրաժարական, դիմացինին կանխող ժեստով ես հետ-հետ եմ գնում դեպի դուռը, շրջկում և՝ գուրա։ Արմենը հետեւում է ինձ. «Քող պետք չի՞», — ասում է ու հետ վերադառնում, չգիտեմ՝ դեմքի ինչ արտահայտությամբ, որ պիտի նշանակեր, թե ամեն ինչ կարգին է՝ վկային վարձատրեց։ Ես անցնում եմ կուլիսների նեղ կիսամութով, զգույշ բարձրանում փայտե ճռացող սանդուղքը, հասնում գրիմանոց՝ շտապ վերականգնելու Մամիկոն Կորիզյանի էլեգանտ արտաքինը։

— Ճիշտ ես գործում, — ասաց Գուլակյանը։ — Ես էդ մարդուն ճանաչեցի։ Բայց տես, չափը չանցնես. ինչքան զուսպ, էնքան լավ, ըստ էության։

Եվ չափն անցավ «ըստ էության»։ Մի երեկո, սնդուկի բացման տեսարանում, որտեղ թեթև իրարանցում էր ստեղծում հանգուցյալի կրտսեր եղբայր Սիմոնը (Ռուբերտ Եղյան), ես, համաձայն այս նոր պայմանի, որպես թե պատահաբար, ոտքի տակ ընկա, և պահը մի ակնթարթ լուսավորվեց լուսանկարիչ Աղասի Կլեկչյանի կայծակով։ Հաջորդ օրն իմանալով «պատահականության» մասին, Գուլակյանը կրկնել տվեց տեսարանը և ասաց «պետք է»։ Պետք էր թերեւս մի ցնցում, որի

կրողը լինելու էր կողմնակի մի անցորդ, դրուժյունից դուրս մեկը։ Սա նշանակում էր էպիզոդային կերպարանքը հրել առաջին գիծ, դարձնել մի պահ գլխավոր, այսինքն՝ տեսարանի շեշտը՝ մի պահ շեղել, գլխավոր թեման և բուն իրադրությունը, հետ տանել նորից առաջ բերելու համար։ Այստեղ էպիզոդային դեմքը ոչ միայն արժեքավորվում է ինքնին, այլև դառնում է իրադրությունն իմաստավորող կարևոր տարր։

Թվում էր, թե անխոս դերի բոլոր պայմանները նկատի էին առնված։ Ոչ։ Մնում էր սպիտակ մի կետ, որ այդպես էլ մնաց։ Մոռացված էր մի հանգամանք՝ երկու վկաների հարաբերությունը միմյանց հետ։ Ժանո՞թ էին նրանք մեկը մյուսին, թե՞ ոչ։ Դա պետք է երեար որևէ նշանով. որպես երրորդական մոտիվ։ Բնմում ոչինչ անկարեռ չէ։ Մոտիվը կարող է երրորդական լինել ըստ իր տեղի ու կշռի, բայց ոչ ըստ արժեքի, այնպես, ինչպես նկարում ոչ մի մանրամասն անկարևոր չէ, և տարածության բաց կետերն էլ աչք են ծակում։ Անսովոր աչքը բեմում դա չի նկատում. չի նկատում, որ անձի ներկայությունը, որպես այդպիսին, բավական չէ, նա պիտի իմաստ կրի։

Ընդհանուր մի բան կա անխոս դերի և մնջկատակի արվեստի միջև։ Երկուսն էլ գործում են մենակ և իրենք են իմաստավորում իրենց վիճակը։ Տարբերությունն այն է, որ մնջկատակն ինքն է իրադրություն ստեղծում իր համար և իր շուրջը, մինչդեռ անխոս դերակատարն իր դիրքն ու վարքագիծը որոշում է համաձայն իրեն առաջադրված պայմանների և գրական ու բեմադրական կոնտեքստի։ Երկու գեպքում էլ սակայն գործում է նույն օրենքը՝ ուր է ուղղված մարդու կամքը, ինչ ենթարեկի պայման է կրում մարդն իր ներսում, ինչն է շարժում նրան։ Սա մի վիճակ է, որ խոսքային արտահայտության կարիք չունի, դրությունն ըմբռնելի է ինքնին, և արտաքին բացատարություն չի խնդրում։ Բայց այստեղ

միսիթարանքի խոսք ասում և գնում դեպի դուռը։ Ես քաղաքավարությամբ գլուխ տալով, հետեւում եմ նրան...

— Պարուն վկա, — շշուկով ինձ է դիմում Արմենը, ես շրջկում եմ իր կողմը, նա ձեռքը ծոցագրպանն է տանում...

Դիեսում այս խոսքը չկա, բեմադրողն էլ չէր նախատեսել և հորինվեց տեղնուտեղը, պատահաբար, բայց ըստ էության, որով ինձ առաջադրվեց նոր պայման։ Աննշան մի ծառայության համար աննշան մի մարդու վարձատրում են, և դա նրա համար որպես թե անսպասելի է. «Օ՛, ինչ եք անում, անհարմար է...»։ Այս խոսքը մտքումս, ձեռքերի հրաժարական, դիմացինին կանխող ժեստով ես հետ-հետ եմ գնում դեպի դուռը, շրջկում և՝ գուրա։ Արմենը հետեւում է ինձ. «Քող պետք չի՞», — ասում է ու հետ վերադառնում, չգիտեմ՝ դեմքի ինչ արտահայտությամբ, որ պիտի նշանակեր, թե ամեն ինչ կարգին է՝ վկային վարձատրեց։ Ես անցնում եմ կուլիսների նեղ կիսամութով, զգույշ բարձրանում փայտե ճռացող սանդուղքը, հասնում գրիմանոց՝ շտապ վերականգնելու Մամիկոն Կորիզյանի էլեգանտ արտաքինը։

— Ճիշտ ես գործում, — ասաց Գուլակյանը։ — Ես էդ մարդուն ճանաչեցի։ Բայց տես, չափը չանցնես. ինչքան զուսպ, էնքան լավ, ըստ էության։

Եվ չափն անցավ «ըստ էության»։ Մի երեկո, սնդուկի բացման տեսարանում, որտեղ թեթև իրարանցում էր ստեղծում հանգուցյալի կրտսեր եղբայր Սիմոնը (Ռուբերտ Եղյան), ես, համաձայն այս նոր պայմանի, որպես թե պատահաբար, ոտքի տակ ընկա, և պահը մի ակնթարթ լուսավորվեց լուսանկարիչ Աղասի Կլեկչյանի կայծակով։ Հաջորդ օրն իմանալով «պատահականության» մասին, Գուլակյանը կրկնել տվեց տեսարանը և ասաց «պետք է»։ Պետք էր թերեւս մի ցնցում, որի

ԻՆՉԻ՞Ց Է ՍԿՍՎՈՒՄ ԴԵՐԱՍԱՆԻ ԱՐՎԵՏԱԾ. «ՓՈՔՐ» ԴԵՐ

կրողը լինելու էր կողմնակի մի անցորդ, դրուժյունից դուրս մեկը։ Սա նշանակում էր էպիզոդային կերպարանքը հրել առաջին գիծ, դարձնել մի պահ գլխավոր, այսինքն՝ տեսարանի շեշտը՝ մի պահ շեղել, գլխավոր թեման և բուն իրադրությունը, հետ տանել նորից առաջ բերելու համար։ Այստեղ էպիզոդային դեմքը ոչ միայն արժեքավորվում է ինքնին, այլև դառնում է իրադրությունն իմաստավորող կարեռը տարը։

Թվում էր, թե անխոս դերի բոլոր պայմանները նկատի էին առնված։ Ոչ։ Մնում էր սպիտակ մի կետ, որ այդպես էլ մնաց։ Մոռացված էր մի հանգամանք՝ երկու վկաների հարաբերությունը միմյանց հետ։ Ժանո՞թ էին նրանք մեկը մյուսին, թե՞ ոչ։ Դա պետք է երեար որևէ նշանով. որպես երրորդական մոտիվ։ Բնմում ոչինչ անկարեռը չէ։ Մոտիվը կարող է երրորդական լինել ըստ իր տեղի ու կշռի, բայց ոչ ըստ արժեքի, այնպես, ինչպես նկարում ոչ մի մանրամասն անկարևոր չէ, և տարածության բաց կետերն էլ աչք են ծակում։ Անսովոր աչքը բեմում դա չի նկատում. չի նկատում, որ անձի ներկայությունը, որպես այդպիսին, բավական չէ, նա պիտի իմաստ կրի։

Ընդհանուր մի բան կա անխոս դերի և մնջկատակի արվեստի միջև։ Երկուսն էլ գործում են մենակ և իրենք են իմաստավորում իրենց վիճակը։ Տարբերությունն այն է, որ մնջկատակն ինքն է իրադրություն ստեղծում իր համար և իր շուրջը, մինչդեռ անխոս դերակատարն իր դիրքն ու վարքագիծը որոշում է համաձայն իրեն առաջադրված պայմանների և գրական ու բեմադրական կոնտեքստի։ Երկու գեպքում էլ սակայն գործում է նույն օրենքը՝ ուր է ուղղված մարդու կամքը, ինչ ենթարեկի պայման է կրում մարդն իր ներսում, ինչն է շարժում նրան։ Սա մի վիճակ է, որ խոսքային արտահայտության կարիք չունի, դրությունն ըմբռնելի է ինքնին, և արտաքին բացատարություն չի խնդրում։ Բայց այստեղ

վարքագիծն ունի նույն տրամաբանությունը, իրական ու անիրական պայմանները։ Գալիս է ծաղրածուն, մտնում է դատարկ տիեզերք, ուր ոչ մի հետակետ չունի (չկա հետնապատ ու կուլիս), և բերում է իր հետ իր ենթադրելի պատճառներն ու նպատակները ներկայացման կոնտեքստից դուրս։ Նրա վարքագծում արտաքին հանգամանքները չնշին դեր ունեն կամ բնավլ դեր չունեն։ Նա ինքն է հորինում ամեն ինչ։ Ինքն է իր սուրյեկտիվ «արատներով» (արիստոտելյան էթոսը՝ բարք) ստեղծում անախրոնիկ վիճակներ իր համար և ինքն էլ, որպես փորձանք իր գլխին, հարկադրվում է պատասխանել իր իսկ ստեղծած իրադրությանը։ Զկա որևէ արտաքին պատճառ, ինքն է պատճառն էլ, պատճառի ու հետևանքի պատասխանատուն էլ։ Այն, որ գործողության պայմանը գործող անձի մեջ է, մեզ մղում է ամենալուրջ ու խոր մտքերի։ Կյանքն է այդպես։ Կրկեսային ծաղրածուն, կամ մնջկատակը (Լեոնիդ Ենգիբարյան), տալիս է գերասանի արվեստի հստակ մի պայմանաձև (մոդիֆիկացիա), որի իմաստն այն է, թե ոչինչ մարդուց դուրս չէ, մարդը պայմանաբար իրեն դրել է մի իրադրության մեջ, որին որպես թե չի տիրապետում և որի հետ նույնանում է։ Սա գործողության և բնավորության անխղելիությունն է ելակետը և կատակերգականի, և ողբերգականի։ Այս տրամաբանությունն իր մաքուր դրսերմամբ առկա է նաև բեմում։ Երբ անխոս գերակատարը բերվում է առաջին գիծ, կամ առանձնանում է, նրա առջև դրվում է գրեթե նույն խնդիրը, ինչ կրկնային ծաղրածուի կամ մնջկատակի։ Մարդը դատարկ տարածության մեջ հորինելու է իր կյանքը, որոշելու է իր կամքի առանցքը։

ԿՐԿԵՍԸ ԱՄԵՆԱԻՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ Է

- Դու կրկեսը համարում ես արվե՞ստ, – հարցրեց ինձ Լուիզա Սամվելյանը։
- Իհարկե, ուրիշ ի՞նչ։
- Զէի սպասում։
- Իսկ ի՞նչ է, եթե արվեստ չէ։
- Ի՞նչ իմանամ։
- Կրկեսը դրամա է իրական ու իրային պայմաններում՝ դրամայի հոգեֆիզիկական պայմանաձև։
- Տարօրինակ է։ Երևի թե մի օր ինձ համոզե՞ս։

Առիթը, ցավոք, չներկայացավ, որ համոզեի նրան, թե մարդկային կենդանի վարքագծի արվեստն սկսվում է իրականության մեջ Հորինվող իրային պայմաններից, և դրամայի ներքին օրենքները հասկանալու համար արժեն, ինչպես Ստանիսլավսկին է ասել, «Հետեւ այն զարմանալի մարդկանց կյանքին, ովքեր ապրում են մշտապես մահվան կողքին և կատակով վտանգում են իրենց <...> իսկ եթե դա նրանց կյանքի վերջին ըոպեն է...»։ Կրկեսային աճապարարի կամ օդամարդիկի գործողու-

թյունները կամքի գործողություններ են նախ և առաջ. Հստակ է ուշադրության ուղղությունը, կոնկրետ է գործողության օբյեկտը: Այստեղ կեղծիք, չպատճառաբանված փիճակ չի կարող լինել. մարդկային կամքը գործում է նպատակահարմար ու մաքուր, պարզ է՝ «ինչից է խուսափում և ինչի է ձգտում» (Արիստոտել): Շարժումը, որպես հոգեվիճակի փոխակերպված, էքսցենտրիկ դրսերում, ստուգված է, ճշտված, և որքան ճշգրիտ, այնքան գեղարվեստորեն ճշմարիտ ու ներգործուն: Ասում են՝ սա ուժի, երիտասարդության, համարձակության արվեստն է: Թերևս, բայց համարձակությունից ավելի՝ բնավորության: Կրկեսը կենտրոնացման, հավասարակշռության, ճշգրիտ վճիռների ու անսպասելիության արվեստն է, կենցաղի իրականության մերժում, հեգնանք առօրեականության հանդեպ և արտահայտությունը տիեզերքի մեծագույն ճշմարտության՝ հավասարակշռություն և խախտում, տարերք և չափ, հիմքում պյութագորյան թիվը: Կրկեսն ունիվերսալ մեկնահիմք է (ինտերալլետանտ), ինչպես երաժշտությունը, ճշգրիտ ու հստակ մի պայմանաձև. (մոդիֆիկացիա) գեղարվեստական մտածողության օրինաչափությունները բացատրելու համար: Կրկեսն ունի դրամատիկական և թատերային մտածողության բոլոր գծերը մեկ սկզբունքային տարրերությամբ. դրաման ենթադրվող պայմանների իրականություն է, կրկես՝ առաջադրվող իրային պայմանների:

Այս մտքով էլ մտնում ենք կրկես՝ կամքի ու կենտրոնացման հանդիսավայրը: Թվում է, թե վագրերի ու առյուծների հետ ասպարեզ մտնողները կամ օդամարդիկները երկյուղ չունեն ո՞չ գաղանից, ո՞չ էլ բարձրությունից: Այդպես չէ: Նրանց ներքին դրաման ու խաղային տարերքն այդտեղ է՝ վախը հաղթահարելու գործողության մեջ, և այդ է նրանց հավասարակշռում ու կենտրոնացնում: «Վագրը մնում է վագր, — ասում էր իրինա Բուգրիմովան, — նրան ոչ մի պահ դուրս չպետք

է թողնես քո ուշադրության դաշտից, հանկարծ թիւկունք չդարձնես, կորած ես»: Կրկեսային արտիստն ունի իր առարկայական հենակետերն ու որոշված ուղղությունները. մանեթի չափերն ամեն տեղ նույնն են, գամերի ու կեռերի տեղերը հայտնի, գրությունները կրկնվող: Ի՞նչ է մնում մարդուն, եթե ոչ չկորցնել կողմնորշումը, հավատարիմ մնալ ներքին կենտրոններին, այսինքն՝ լինել անհամեմատ լուրջ, քան կենցաղում, առավել կենտրոնացած, քան դրամայի դերասանը, որովհետեւ շեղումն ու կեղծիքն այստեղ կարող են թանկ նստել: Եվ մթնոլորտն էլ կրկեսի կուլիսներում անհամեմատ լուրջ է: Մարդիկ այստեղ բարձր չեն խոսում, կատակը քիչ է, զուսպ, կամ չկա: Մուտքի սպասող աճպարարը փորձում է ու փորձում, կրկնում ու կրկնում, և բոլորը՝ նույնը, որքան որ հնարավոր է սառը, ցեմենտե հատակին, միայն թե ակտիվ փիճակում լինի կենտրոնական նյարդային համակարգը: Ոչ մեկը կողք չի նայում, կողմնակի զրույցով չի զբաղվում, ոչ մեկն անհոգ չէ: Օդամարդիկները լուռ քայլում են հետ ու առաջ, դեմքերը լուրջ, հանգիստ, հավասարակշիռ: Օդամարդիկի մտքում իր առաջին քայլն է, ուշադրության երկրորդ գծում՝ շարունակությունը, դերի հեռանկարը, ապա սյուժեի ամբողջությունը, այնուհետեւ արտաքին միջավայրը, որ տեսնում է և պահում ուշադրության ամենահետին գծում: Սա բացարձակորեն դերասանական կենտրոնացնում է՝ առաջին քայլից մինչև հաջորդ փուլերը, բոլոր կետերը մտքում դասավորված, ինչպես դիտվող փողոցը՝ աստիճանաբար հեռացող-փոքրացող կետերով, որպես անցնելիք ճանապարհ: Մոտենում է մուտքի պահը. մարդիկ շարքով հավաքվում են վարագույրի մոտ. լուռ, դեմքերը մտածելու: Հայտարարվում է մուտքը, և դեմքերն ակնթարթորեն զվարթանում են. խումբը մանեթ է վագում զվարթ ու ժպտադեմ: Ժպիտը դիմակ է, գիտենք, բայց դա առաջին քայլի պայմանն է՝

կենտրոնացման տարր: Սա բարոյակամային խնտենսիվ վիճակ է, հոգեկան վերելք, խնդնամերչնչում: Բացառում է անտարբերությունը, բացառվում է այն ներքին տաղտուկն ու հեղնանքը սեփական գործի ու անձի հանդեպ, որ դրամատիկական թատրոնում սովորական է: Կրկեսում անհնար է քայլ անել առանց տրամադրության ու ներշնչանքի: Ներշնչումը պարտադիր պայման է և սովորություն, ուեֆլեքս, բնավորություն, ապրելու կերպ: Կրկեսի արտիստն ամեն օր սպասում է դրան, պատրաստվում է խաղալու վտանգի հետ և անում է ամեն ինչ չկորցնելու համար ներշնչումն ու կենտրոնացումը: Եվ դա բնավորություն է. մանեժից դուրս լուրջ, անժպիտ, մանեժում ժպիտով դիմակավորված և ներշնչված: Մարդը կրում է այդ վիճակը, և նրա երեխն մտահոգ, ինչոր պահերի կարեկցանք առաջացնող դեմքը մի բան է ասում. իր ճակատագիրն է այս, իր ընտրած վիճակը, որից հրաժարվել չի կարող:

1987 թվի գարնանը երեանում կրկեսային մի խմբի հետ ելույթ էր ունենում մի շատ երիտասարդ օդամարդուհի՝ Ելենա Պանովա, տասնյոթ տարեկան: Գմբեթի տակ, ամենաբարձր տեղում, նա ճոճվում էր հորիզոնական ձողից (շտամբերտ) կախված և անսպասելի թուիչք էր գործում դեպի հանդիպակաց ճոճվող հորիզոնական ձողը, կառչում ոտքերի ծայրով, հաջորդ պահին վերադառնալով ձեռքերով բռնում ձողը, և այսպես՝ մի քանի անգամ: Սա կոչվում է «մահվան օղակ»: Աղջիկը որսում էր պահն ակնթարթային ճշգրտությամբ (այլ կերպ լինել չէր էլ կարող), ենթարկված ճոճանակի հաճախականությանը, և պոկվում էր ձողից լայն բացված աչքերով, շեկ մազափունջը ճակատին թափված, աչքերը վառվում էին կատաղի փայլով, ասես հուր էին արձակում: Տպափորությունն այնպիսին էր, որ դա հոգեկան պոռթկում է, ամպրոպի ու կայծակի բռնկում՝ մազափունջը ճակատին թափված, մի հրաչյա աղջկա տեսքով,

որ հանդիսականին երևում էր շատ մոտ, ու թոփչքի պահին կանգ էր առնում հանդիսականի սիրտը, լսվում էր մեկ մարդ դարձած հանդիսականի շունչը, երբեմն զապված մի ճիչ՝ «ա՛հ...»: Աղջիկը կոփկ էր տալիս մի բանի հետ, ներշնչված ու կատաղի, և ի՞նչ էր զգում, ի՞նչ էր մտածում, ինքը գիտեր...

Յերեկային փորձի ժամին ես նրան չճանաչեցի: Մանեժի կողքին, ծնկները գրկած, նստած էր մի կարծես դպրոցահասակ երեխա, սովորական սպորտային արտահագուստով, անտարբեր ու անարտահայտիչ, կողմնակի հանդիսականի նման:

— Ահա, ինքն է, — ասաց կրկեսի գլխավոր ոեժիսորը՝ Սոս Պետրոսյանը:

— Երեկվա գաղտ՞նը, — զարմացա ես:

— Հիմա կտեսնեք:

Մանեժում փորձողները վերջացրին իրենց գործը, գնացին: Գմբեթի տակից կենտրոն կախվեց պողպատեն ուղալարը, ծայրն օղակ: Աղջիկը վեր կացավ ու դանդաղ, մտածկոտ, արտաքուստ ծույլ ու անտարբեր, մոտեցավ ուղալարին, բռնեց օղակը, նայեց ու անսպասելի սուրաց վեր: Նա նստեց հորիզոնական ձողին, թեր գցեց ձողը պահող ճոպանին, որ միակ բռնելու տեղն էր ու մնաց այդպես նստած: Նստել էր ու անշտապ, դանդաղ շփում էր ձեռքերը, ափերի մեջ կանիփոլի փոշի: Այդպես նստել էր բարձունքում կախված ձողին, կարծես նստելու համար, անտարբեր, աննպատակ...

— Հետո՞...

— Նստելու է այդպես մի տասը լոռպե, — ասաց Սոսը, — սովորում է բարձրությանը:

— Ի՞նչ, վախենու՞մ է:

— Անպայման:

Աղջիկը կենտրոնանում էր ներքին տագնապը թաքցրած: Դրաման սկսված էր, կամ գուցե սկսվել էր ներքեւում: Նկատեցի, որ գոտուն ոչինչ չէր ամրացրել:

Ապահովող ճոպանը կողքին էր, ազատ կախված: Սոսն ինձ բացատրեց, որ նա ճոպանը կամրացնի գոտուն, երբ վախը հաղթահարված լինի վերջնականապես: Պարզ էր, որ կենտրոնացման ընթացքն ինքնին մի դրամա է՝ լուրջ փոխարաբերություն վախի զգացման հետ, ներքին գործողություն, դեյլիսիս: Նա նայելու է վախի աչքերին մի տասը ըոպե՛ այնքան, մինչեւ նրան ընկճելը...

Աղջիկը ճոպանն ամրացրեց գոտուն:

— Վախն անցավ, — ասաց Սոսը:

Դրամայի երկրորդ փուլն ավարտվեց: Առաջին փուլը ներքեռում էր, մինչև ճոպանին մոտենալը, երբ ոչ ոք ոչինչ չէր տեսնում, ամեն ինչ դերասանուհու մտքում էր: Հիմա սկսվելու էր երրորդ փուլը՝ բուն փոթորիկը: Դերասանուհին ապահովել է իրեն վտանգից, երբ արդեն հաղթահարել է վտանգի զգացումը: Ուրեմն, ի՞նչ աստիճանի անվախ է նա հիմա, այդ բացարձակորեն ապահով վիճակում:

Նա նույնությամբ և նույն տրամադրությամբ կրկնեց այն, ինչ տեսել էի նախորդ օրը, երեկոյան: Թոփչքի պահին դարձյալ փայլատակեցին լայն բացված աչքերը, շեկ մազափունջը ճակատին թափվեց: Նա թոփչը կրկնեց մի քանի անգամ ու նստեց հորիզոնական ձողին, թեր գցեց ձողը պահող պողպատալարին, արձակեց ապահովող լարը: «Մահվան օղակը» հաղթահարված էր: Այդպես նստած մնաց մոտ երեք, թե հինգ ըոպե՛: Ավարտում էր այնպես, ինչպես սկսել էր: Դրաման ավարտված էր, և կարիք կա՞ր այլևս մնալու վերեռում:

— Հիմա նրա համար՝ էնտեղ նստած, թե էստեղ, աթոռին. ոչ մի տարբերություն, — ասաց Սոսը:

Բարձունքում հիմա նրա դեմքին նույն անտարբերությունն էր, ինչ ներքեռում, մանեմի եղրին: Ներքեռում սկսված դրաման նույն լուռթյամբ ավարտվում էր վերեռում: Պարզ է, որ վախի հետքն իսկ չկար այլես նրա մեջ: Եվ, այնուամենայնիվ, պետք էր միասումանակ

մնալ բարձունքում, որտեղ հանդիպել էր վախին, մնալ առանց ապահովող գոտու, մինչև վերջնական անտարբերություն, մինչև ցնդեր վախի հիշողությունից ելնող ծխի վերջին քուլան:

Աղջիկը ցած իջավ: Ոեժիսորը մոտ կանչեց նրան: Մեզ մոտեցավ մի ամաչկոտ երեխա, անգույն աչքերով:

— Սարսափելի չէ^o, — հարցրեցի:

— Հետո^o ինչ, — պատասխանեց մեղավորի նման:

— Չե՞ք վախենում:

— Եթե չփորձեմ մեկ-երկու շաբաթ, երեկի վախենամ:

— Եթե մի ամիս չփորձի, երեկի թե՛ վերջ, շատ դժվար կլինի, — կողքից ցածրաձայն և հայերեն ասաց Սոսը:

— Իսկ հիմա^o...

Աղջիկը լուռ, շփոթված նայում էր մեղ:

— Բայց երեկ երեկոյան, — շարունակեցի ես, — վերեռում չէիք սպասում, սկսում էիք անմիջապես:

— Եթե ցերեկը փորձում եմ մի անգամ, նայում եմ դատարկ գալիճին, ուրեմն պատրաստ եմ երեկոյան ներկայացմանը: Վախեցնողը դատարկ գալիճն է: Երեկոյան դաշլիճը լիքն է, հեշտ է:

Ուրեմն, հանդիսականն իր շնչառությամբ մասնակից է գործողությանը: Դիտողի հոգեբանական մասնակցությունը պարտադիր է, ինչպես դրամատիկական թատրոնում: Ռասինի պամուսը լինի, Զեխովի իմպրեսիոնիզմը, թե այս «մահվան օղակը»: Եթե հանդիսական չկա, գերասանը կամազրկում է, իմաստ չի տեսնում իր վարքագծում, չի ներշնչվում, դժվար է կենտրոնանում: Փորձի ժամանակ դերասանը գիտե, որ պիտի նկատի ունենա հանդիսականի ներկայությունը և գործում է այդպես: Այստեղ ուրիշ է. մարդը նախապես կոիվ է տալիս. ցերեկվա փորձին սպանում է վախը, երեկոյան անվախ է:

— Իսկ վերջում ինչու^o գոտին արձակեցիք ու անմիջապես չիջաք, — շարունակեցի իմ հարցուփորձը:

— Որովհետեւ այլևս ոչինչ սարսափելի չէ, — ժպտաց նա ամաչկոտ:

— Իսկ եթե ներքեռում ցա՞նց լինի...

— Ո՛չ, ի՞նչ եք ասում, — ասես վիրավորվեց աղջիկը:

— Ապահով կլինի, — ասացի:

Աղջիկը լռեց շփոթված, լռեց, լռեց ու գտավ պատասխանը.

— Անհետաքրքիր կլինի, — ասաց հաստատ ու համոզված, և աչքերը փայլեցին:

Ամպրովը շղթայված էր նրա ներսում: Դրամայի գաղտնիքը չէր կարելի մերկացնել դրաման ենթագիտակցորեն կրողի համար: Վտանգի ու վախի հարցը չէր կարելի շոշափել նրա հետ: Արտիստուհին իրեն պատրաստել էր երեկոյան ներկայացման համար: Սկսել վախի թեմայից, նույնն էր թե վերադարձնել նրան դրամայի առաջին փուլին, մանավանդ որ մեր զրույցը տեղի էր ունենում այն տեղի մոտ, ուր նա նստած էր թռիչքի պատրաստվելուց առաջ: Ես խոսում էի վտանգի կողքին ապրող, վտանգի հետ խաղացող ու իր խաղից բավականություն ստացող մի հանդուզն երեխայի հետ, որ գուցե չգիտեր՝ ինչ էր անում: Նա ամեն օր սկսում ու ավարտում էր իր ընտրած դրաման, ապրելու իր կերպը, որի բովանդակությունը վախն էր ու վախը ճնշելու բավականությունը՝ միանդամայն իրական տագնապով ու իրական հրճվանքով: Ապահովող ֆիզիկական պայմանը՝ գոտին, նրան պետք էր միայն վախը հաղթահարած լինելու դեպքում, ոչ որպես վիրկության օղակ, այլ մի պայման ուշադրության ամենահետին գծում: Իսկ ապահովության երկրորդ պայմանը՝ ցանցը, որ հիշեցրի ես, պետք չէր իսկապես դրանով կչեղոքանար դրաման, կիմաստազրկվեր ամեն ինչ:

Կրկեսը դրամա է իր և՝ առարկայականությամբ, և՝ պայմանականությամբ, ունի իր իմաստաբանությունը, մարտահրավեր է ու հեգնանք կենցաղի իրականության

ու առօրյա առողջ բանականության հանդեպ, ստեղծում է լարում ու հանգստություն, երկյուղ և հիացմունք, զարմացնում է երեխային, անտարբեր թողնում կրթվածքաղքենուն, ողջամտությանն ու խորհրդածությանը մղում փիլիսոփային:

Այստեղ ամեն ինչ հակառակ է առօրյա տրամաբանությանը և ճշմարիտ է, որպես մաքուր խաղ, հնարավոր հրաշք իրային պայմաններում, և կեղծիքն այստեղ հավասար է աղետի կամ խայտառակության:

Դրամատիկական թատրոնում դժվար է տեսնվում կեղծիքը, դժվար է գիտակցվում աղետը, որ ֆիզիկական չէ, բարոյական է, ուշմ է վնաս... Քաղքենին կեղծիքի ճահճում վայելում է իր վիճակը, հրճվում, ծափահարում, որպես «դաստիարակված» քաղաքացի, և հեռանում գոհ ու հոգեպես դատարկ, ինչպես որ եկել էր ժամանակն սպանելու:

* * *

Կրկեսը թատրոն է և այդպես էլ կոչվել է միջնադարում: Դա ամենաանկեղծ թատրոնն է, և այստեղից է դաս առնելու դրամայի գերասանը: Երեսութը պատկերացնելու համար գարձյալ վերադառնալու ենք կրկես: Բայց սա արդեն կրկեսը չէ, այլ կրկեսի գաղափարը, նրա պատկերացումը անիրական պայմաններում:

1971–72 ուսումնական տարում Երևանի թատերական ինստիտուտի տիկնիկային արվեստի դասարանը (ղեկավար՝ Խոլանդա Խարազյան) քննության ներկայացավ կրկեսային պատկերների բեմադրությամբ: Դատարկ բեմահարթակ, շատ փոքր, կապույտ հետնավարագույրով և հարթակին ուղղված կարմիր լուսարձակներ: Վարագույրը բացվում է իսահակ Դունակալու «Կրկես» կինոնկարի համար գրված երաժշտությամբ: Սա արդեն կրկես պատկերացնելու մեկ պայման է՝ երաժշտություն,

որ հնչում է կրկեսային բազում սրահներում: Այս երաժշտության ուղեկցությամբ երևակայական մանեժ բեմ են վազում ձեռնածուներ, և առանց առարկաների՝ «թալեմ-բռնեմ, բռնեմ-թալեմ...», ակրօբատներն իրար ուսերի վրա են բարձրանում, թռչում գլխիվայր պտույտներով, և այս ամենը՝ «իբրև թե...»: Ոչինչ իրականում տեղի չի ունենում, ամեն ինչ երևակայության ու պատկերացման մեջ է. փոքրիկ բեմահարթակում ցույց են տրվում էքսցենտրիկ գործողության ինչ-ինչ նշաններ միայն, ամեն ինչ ունի սկիզբ ու ավարտ և, ամենակարևորը, մթնոլորտի ու տրամադրության մեջ է: Չկա ո՞չ տարածություն, ո՞չ լրիվ շարժում, չկա թռիչք, չկա վայրէջք, բայց կա սկիզբ՝ մարդը պատրաստվում է թռիչքի, և ավարտ: Բեմ է մտնում «գազանավարժը» երևակայական գազանի հետ, երևակայական մտրակը ձեռքին, կենտրոնացած, գազանին իր տեսադաշտի մեջ առած: Համոզիչ է կենտրոնացումը, տեսանելի է սպասումը, զգացվում է լարում, ակնթարթը որսալու պահը, հաղթական ավարտը, ժպիտն ու հանգստությունը, չեղած ու չլավող ծափահարություններն ընդունելը: Առկա է կրկեսային մթնոլորտը գերասանի երևակայության մեջ, և չկա կրկեսը: Կա կրկեսային էքսցենտրիզմը կրողների վիճակը: Եվ կա հիմնական թեման՝ լարախաղացությունն առանց լարի: Երկու հոգի ձգում են պողպատալարը «իբրև թե...», երկուսն էլ ամրացնում են սյուները, արագորեն, շտապելով ամրացնում պտուտակները: Երաժշտությունը լուել է: Այն երկուսը ձգում են ճոպանի ծայրերը, գցում սյուների ծայրերին, դարձյալ ձգում, ստուգում ամրությունը, կախվում ճոպանից, ճոճվում, ձգում... Լավ է: Եվ դարձյալ հնչում է երաժշտությունը, ապա՝ դադար և թմբուկի դողազարկ, որ նշանակում է ժամանակի կանգառ, սպասում, և՝ լիրիկական մոտիվ... Զվարթ քայլով մանեժ է մտնում ժպտադեմ լարախաղացումին (Գրետա Հակոբյան) ու

չեղած սանդուղքով բարձրանում չեղած կայմի ծայրը, վերցնում է հավասարակշռության չեղած ձողը, գտնում է ձողի կենտրոնը, պահում է ուղիղ, երաժշտությունը մի պահ լուսում է՝ ժամանակի տագնապալից կանգառ, լարախաղացումին աջ ոտքով շոշափում է լարը և ոտքը սեղմած, զգույշ առաջ է հրում լարի վրայով... Հնչում է ուրիշ մեղեղի՝ Սեն-Սանսի «Մեռնող կարապը»: Աղջիկը զգույշ պարաքայլերով հասնում է լարի կենտրոն, թեքվում է աջ, ձողը թեքվում է ձախ, թեքվում է ձախ, ձողը թեքվում է աջ, այսպես՝ զգույշ, անհամարձակ, անվարժ ու ժամանակ, նա մոտենում է հանդիպակաց կայմին և արագացնում է քայլը, կանգնում կայմի ծայրին. Հաղթանակ, ծափահարություն, և հետ է դառնում նույն ճանապարհով...

– Նպատակը ո՞րն է, – հարցնում է ինձ մի պրոֆեսոր:

– Տեսնել, լսել, զգալ, շոշափել գոյություն չունեցող, ենթադրելի պայմանները:

– Երաժտությունը շատ է, ձանձրացնում է:

– Դա իրական պայմանն է, միակը և գեղարվեստական պայման:

– Զլինի, ի՞նչ են անելու:

– Ինչու՞՝: Մարդիկ գործում են գեղարվեստական պայմանականության միջավայրում: Երաժտությունը տոն և իմաստ է տալիս գործողությանը: Սա կրկես չէ, կրկեսի հիշողություն է բեմական պայմաններում, այն, ինչին ասում են աֆեկտիվ հիշողություն:

– Ցիրկ է, ցիրկ չի՞...

– Հոգեբանական վիճակը չե՞ք տեսնում:

– Չեղած տեղը:

– Այո, չեղած տեղը: Ամբողջ թատրոնն է չեղած տեղը:

Չեղած տեղը, այսինքն՝ մտագացական հիշողությամբ: Բեմական գործողության մեջ դա, որպես իրական

պայման, ներքին պայման է. նպատակը՝ ի ցույց դնել, գործողության ու խաղի մեջ ներքաշել արտաքին ենթադրելի պայմանները: Կրկեսն այստեղ ամենախաղարկայինն է երևակայության ենթակա բոլոր առիթներից: Դա, որպես կենտրոնացման առիթ, թերևս համեմատելի է բարդ և նուրբ վիրահատության հետ, որտեղ բոլոր քայլերը լինում են հաշվարկված ու զգույշ: Նման վարժության օրինակի հանդիպել ենք Մոսկվայի թատերական արվեստի ինստիտուտի փորձերից մեկում: Ուսանողներին տանում են վիրահատարան՝ ծանոթացնելու միջավայրին, մթնոլորտին, գործողության առարկայական պայմաններին, ոչ թե վիրահատության երեսութին ու ընթացքին, այլ վիրահատող բժշկի ու նրա օգնականների վիճակին: Սա դրամատիկուն լարված իրական վիճակ է: Ուսանողները կողքից դիտում են մարդկանց, որպեսզի վերարտադրեն նույնը, որպես ենթադրելի պայմանների իրականություն: Եվ ուսանողները դա անում են բացառիկ կենտրոնացումով ու ճշգրտությամբ, ըստ արտաքին կամային նշանների ու ներքին խնդիրների, որպես անընդմեջ, պայմանաբար լարված վիճակ, կողքից միանգամայն հասկանալի գործողություն: Ե՞վ այս, և՛ նախորդ վարժության (էտյուդ) մեջ խնդիրը նույնն է՝ ենթադրելի պայմաններում ու դրություններում գործել «իբրև թե» և ըստ էության այնպես, որ պարզ լինի, թե գործող նաձն «ինչից է խուսափում և ինչի է ձգտում», այն է՝ որոշել կամքի առանցքը ենթադրվող հանգամանքներում, ստեղծել իրականություն դատարկ տարածության և ժամանակի անշարժության մեջ:

«ՄԽԵԴՐԻՈՒՆԻ»

Ինձ հուզողը ոչ հերոսի քրեական անցյալն է, ոչ էլքաղաքական սլատեհապաշտի ֆենոմենը, որպես այդպիսին, այլ նրա հասարակական անտուրաժմ՝ պատվագոր, պատվարժան ու տիտղոսակիր մարդկանց խումբը, որ նրա կենսագրության մեջ է էն գլխից, երբ նոր էր սկսվում հերոսի սխրալի կյանքը, և էս գլխից, երբ հերոսն արդեն արվեստի ու գիտության կաճառում էր: Նրա անձն ու գործը, շրջապատող անուններից մի քանիսը գիտեմ, շատերին չեմ ճանաչում և իմ գրադարանում պահում եմ նրա համեստ ընծան՝ արևելյան մանրանկարչության չքեղ մի ալբոմ՝ իր մակադրությամբ. «Հենրիխ Վագանովիչին ի նշան երախտագիտության. հարգանքով» Զ. Իոսելիխանի. Յ մայիսի, 1983 թ.»:

1982-ին, երբ ես առաջին անգամ հանդիպեցի նրան, մեր ակադեմիայի Արվեստի ինստիտուտի թատերագիտության գծով գոկտորական աստիճաններ շնորհող խորհրդի գիտական քարտուղարն էի: Ինձ զանգահարեց ինստիտուտի տնօրեն և գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Զարյանը, հայտնելով, որ Վրաստանից ժամանել է թատերագետ Իոսելիխանին՝ ի խնդիր գոկտորական գիտերացիայի պաշտպանության: Ազգանունն արտասանվեց հարգանքով, հարուցանելով իմ մեջ կրկնակի

Հարգանք: Հաջորդ օրը ստացա նրա փաստաթղթերը և մի քանի օր անց հանդիպեցի իրեն Զարյանի առանձնասենյակում: Պարոնը բարձրահասակ էր, բարեկազմ, ուղիղ կեցվածքով, փոքր-ինչ շիկավուն ու կարմրադեմ, հայացքը մեղմ, անհավակնոտ, տոնը համեստ ու անհամարձակ: Վրացական ինքնավստահության ոչ մի հետք, ոչ մի հաճոյախոսություն և ավելորդ ժպիտ: Նրա մոխրագույն կոստյումը, անփայլ փողկապը, համեստ պայուսակը և ամեն ինչ հուշում էին, որ մեր առջե է մեր միջավայրի մարդ: Նա ուշադիր լսեց ինձ, ինչ-որ բաներ գրի առավ, ճշտեց ներկայացվելիք փաստաթղթերի ցուցակը, թողեց ինձ իր թիֆլիսյան հասցեն ու գնաց: Մեկ շաբաթ հետո ինձ հանձնվեց նրա դիսերտացիան՝ ստվարածավալ մի մատյան՝ «Վրաց թատրոնի կատակերգական դիմակները և վրացական ծիծաղի առանձնահատկությունները»: Կարդացի մի քանի էջ: Ոճը ծանր էր ու խրթնաբան, գրականության ցանկը՝ Կանտ, Հեգել, Շելլինգ, Կրոչէ, Բերգման, Սպենսեր, մարքսիզմի դասականներ և այլն: Նպատակն էր ցույց տալ, թե ինչ խորին խորհուրդ են կրում թիֆլիսյան «մեյդանի» կինտոներն ու դարաչոխելիները, և ինչ ասել է կատակերգական կոլիզիա: Եվ մինչ թատրոնի բաժնի աշխատակիցներս խորամուխ կլինեինք վրացական ծիծաղի փիլիսոփայության անմեկնելի խորխորատներում, ինստիտուտում հայտնվեց ու անհետացավ մի «տիկին անտեսանելի»: Ասացին, որ նա երեան էր եկել ինձ տեսնելու նպատակով, չէր գտել ինձ, իր հայտնելիքը հայտնել էր կինոյի բաժնի աշխատակիցներից մեկին, պատվիրել, որ ինձ փոխանցվի: Լսածս ինձ կատակ թվաց:— «Իմացեք՝ ում հետ գործ ունեք, — հայտնել էր տիկինը, — ձեզ դիմող դիսերտանտն է... «օրինական գող», նշանափոր գեմք, առասպեկական անուն աշխարհի մեկ վեցերորդ մասում»: Զհավատացի, ծիծաղեցի, հարցրեցի՝ ո՞վ է ասում:

Ես նայեցի դիսերտանտի անձնական թերթիկը...

Լենինգրադի համալսարան, չորս տարի... Զի ավարտել, նշում չկա, ապա՝ աղյուսի գործարան, «Գորիի պոլիգոն», ճանապարհի բանվոր, ասֆալտ է արել: Այսպես՝ մոտ քսան տարի, որին հաջորդել է հեռակա ուսումնառությունը թիֆլիսի թատերական ինստիտուտի թատերագիտական ֆակուլտետում, այնուհետև՝ գիտությունների թեկնածու, ինստիտուտի գասախոս և պրոռեկտոր: Մարդը մոտ քսան տարի տանջվել է աղյուս թրծող վառարանների գիմաց, այրվել արևի ու կպրանյութի: մեջ, տեսել գժոխքի սև տակառների հատակը և հիմա... թերթեցի նրա հաստափոր գիտական շարադրությունը: Տեսա, որ այստեղ իմաստասերի գրիչ է պտտվել ու գլուխկոնծի տվել, որ այս էջերը լրացնողը իտալերեն է ծամել կրոչեի նեռհեղեկանությունը, աղել ու մաղել Բերգսոնի «Մետաֆիզիկայի ներածությունը» ու սապերավիի հետ խմել Սպենսերի ծիծաղի փիլիսոփայությունը: Պարզ էր ամեն ինչ: Դիսերտացիան կարդացվեց ու քննարկվեց թատրոնի բաժնում, և որոշվեց երաշխավորել պաշտպանության: Ի՞նչ սկզբունք, ի՞նչ բան, կեցցե՛ ժողովուրդների բարեկամությունը:

Քննարկումից մի քանի շաբաթ անց եկավ Զարան: Մեկ-երկու դիտողություն արվեց նրան, թե ինչո՞ւ, օրինակ, որոշ հայկական թեմաներ ու կերպարներ (խոսքը վերաբերում էր Սունդուկյանի նախորդ Միքայել Պատկանյանի պիեսներին) վերագրվում են վրաց թատերագրությանը: Պատասխանը պարզ էր.

— Ի՞նչ նշանակություն ունի, այդ բոլորը թիֆլիսում չի՞ եղել: Վերջին հաշվով մենք մի ժողովուրդ ենք, ապրում ենք նույն հողի վրա: Ի՞նչ անենք, որ տարբեր լեզուներով ենք խոսում:

Ես նայեցի Զարայի «չարչարված» ձեռքերին: Մաքուր, հարթ, խնամված ձեռքեր, ուղիղ ու ճկուն մատներ: Ի՞նչ աղյուսի գործարան, ի՞նչ «պոլիգոն», ի՞նչ կպրանյութի տակառ... Ես ոչ մեկին ոչինչ չէի ասել

«անտեսանելի տիկնոջ» այցելության մասին։ Զէի տեսել, իմ ականջով չէի լսել, լսածս լուրջ չէր թփում։ Թերթեցի ստացված կարծիքները, որ Զարան իր ձեռքով էր բերել։ Մոսկովյան, լենինգրադյան ու թիֆլիսյան պատկառելի թատերագետները, փիլիսոփաներն ու գեղագետները գործը գնահատում էին որպես խոշոր գիտական ներդրում, հայտնություն։ Հիացական խոսքերից ու գերադրական մակդիրներից կարելի էր հանգել մեկ անառարկելի եզրակացության։ գործ ունենք մի խոշորագույն գիտնական-արվեստագետի հետ։ Ու մինչ կդարդիս առաջարկեցի պաշտպանության օրը, ականջիս էին հասնում նորանոր անհավատալի լուրեր։ Ինստիտուտի աշխատակիցներից մեկն ինձ հարցրեց, թե գիտե՞մ արդյոք ում հետ գործ ունեմ։ Ասացի՝ չգիտեմ, լսել եմ ինչ-որ բան։ Նա զարմացավ իմ անտեղյակության վրա.

— Այդ մարդը սովորական գող չէ, այլ «օրինական»։

Ու պատճեց իր լսածները։ Զարան բանս է ընկել 16 տարեկան հասակում և մկրտվել որպես «օրինական գող», այս տիտղոսով կրել է երկրորդ կալանքը, փախել բանտից, ուրիշի ազգանունով ընդունվել Լենինգրադի համալսարանի հոգեբանության ֆակուլտետը և գործել աներեակայելի սիրանքներ։ Գնացք է կանգնեցրել ու կողոպտել, մոսկովյան հանրախանութիւն ԳՈՒՄ-ի մեկօրյա հասուլյթի կեսից ավելին դուրս է բերել օրը ցերեկով, ամենաբարեկիրթ եղանակով, գործակալներ ու աշակերտներ է ունեցել, մի ամբողջ սերունդ է ղեկավարել ու կրթել։ Այդ գործը նա վարել է թե ազատության մեջ, թե կալանքում։ Դատապարտվել է 25 տարվա ազատազրկման։ Այստեղից սկսած հերոսի կենսագրության մեջ երեւում են երկու պատվագոր անուններ՝ ժողովրդական արտիստներ Սերգո Զաքարիածեն և Մեղեա Զաքարիածեն։ Նրանց հեղինակավոր միջնորդությամբ Զարան օտար կալանավայրերից տեղափոխվել է հայրենիք և կրել իր «պատիժը» հատուկ կահավորված «մենա-

խցում»՝ մարդագայել բնակարանում։ 40 տարեկանում դուրս է եկել այստեղից, ավարտել երեկոյան դպրոցը և Վրաստանի ֆինանսների նախարար Փառնաող Անանի-աշվիլու հոգատար միջնորդությամբ ընդունվել թիֆլիսի թատերական ինստիտուտ։ Պիեսներ է գրել, որ խաղացվել են Մարգանիշվիլու անվան թատրոնում և հրապարակվել առանձին գրքով։ Այո, պիեսների ժողովածուն իմ ձեռքում էր։ Կուգենայի կարդալ, բայց վրացերեն էր։ Ինձ ասացին նաև, որ հերոսը վաղուց հրաժեշտ է տվել քրեական անցյալին, լուծարքի է ենթարկել իր բանդան և ապրում է որպես օրինական խորհրդային քաղաքացի։ Նրա քրեական կյանքի վերջակետը եղել է մի շքեղ կովկասյան խնջույք Քոփ ափին։ Հավաքվել են մարդիկ բնության կանչագեղ մի վայրում, փռել գետափին մի նախշազարդ արևելյան գորգ, շաղ տվել գորդին տարիների վաստակը՝ ոսկի, արծաթ ու աղամանդ և «Հարիա լալե՛, թարիա լալե՛...»։ Զուրն են գցել հարամ ապրուստը ու մի լավ «քեփ շանց տվել»։ Սա ինձ դուրեկավ, որպես ոռմանտիկական վերջաբան։

Զարան եկավ ձմռան սկզբին, ցուրտ մի օր։ Մերս սենյակում նստել հնարավոր չէր։ Ուղիքի վրա, գողգողաց լով ճշտեցինք մեկ-երկու փաստաթուղթ։ Խորհրդային արտադրության գրիչը դողում էր նրա մատների մեջ։ Վերարկուն նույնքան համեստ էր, ինչպես իր պայուսակն ու գրիչը, և չէր տաքացնում արդեն վաֆտունին մոտեցող մարդու մարմինը։ Նա գնաց մի քիչ տիսուր ու մտահոգ։ Գարնան սկզբին եկավ երկու անգամ։ Գալիս էր առավոտյան գնացքով և մեկնում երեկոյան, կարծեմ ոչ մի օր երեանում չգիշերեց։ Ես գլխից հանել էի լսածս առասպելները։ Նա հակակրանք չէր առաջացնում, պարզ էր իր վարկելակերպով, մտերմություն չէր խաղում, չէր ձեանում։ Նրանից գիտնականի հոս չէր գալիս, բայց որ գերասան էր, ոչ մի կասկած։ Նկատում էի ինչ-որ ներքին ասկետականություն, և դա ձեացում

չէր: Նա զուսպ էր, չափի ու պատշաճության սահմաններում, խոսում էր առանց ավելորդ բառերի, գրիչը բռնում էր խնամքով ու վարժ, գրում էր անսխալ, բառերը լրիկ, ստուգաբանող լեզվաբանի նման: Մեր խոսակցությունները, որ երկար չէին տևում, մակերեսուրեն էին քսվում մասնագիտական հարցերին, և այդ մակերեսում նա թատրոնը գիտեր: Միակ բանը, որ ես չէի համակրում, նրա ստվարածավալ, գիտության հետ կապ չունեցող մատյանն էր, որ կարծես կապ չուներ նաև իր տիրոջ հետ:

Պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ ես նրան խնդրեցի մեկ էջի սահմաններում, կետ առ կետ ներկայացնել ուսումնասիրության հիմնական արդյունքները: Պաշտոնական ու անպաշտոն կարծիքներում չկար որևէ կոնկրետ դրույթ, որ հրմք տար մեր գիտական խորհրդի որոշման նախագծին: Զարքան ներկայացրեց այդ էջը: Ուշադրությունս գրավեց մի կետ՝ հատուկ ընդգծված: Դիսերտանալու հայտնագործել էր կոլիզիա և կոնֆլիկտ հասկացությունների տարբերությունը: Ասացի, որ դա վաղուց հայտնի է: Նա առարկեց.

— Ոչ, հայտնի չէ: Դա ես եմ պարզել: Ես եմ անցկացրել դեմարկացիոն գիծը:

— Շատ լավ,— ասացի, — թող այդպես լինի, բայց ես այդ տարբերությունը գիտեմ վաղուց: Որտեղից գիտեմ դա, եթե իսկապես գիտական հայտնություն է:

Նա բարեկամաբար ժպտաց.

— Ես մեղավո՞ր եմ, որ գուշ ինտելիգենտ մարդ եք, և այդ հարցը պարզել եք ինքներդ ձեզ համար: Ես, իհարկե, Ամերիկա չեմ հայտնագործել, բայց այդ մի բանը հայտնագործել եմ:

Դիսերտացիայի պաշտպանության օրը, որ 1983-ի գարնանն էր, Ակադեմիայի շենքի մոտ կանգնեցին երկու մեծ, կարմիր ավտոբուս: Շենք մտավ զվարթ, բարեկիրթ ու հանդիսավոր մի հասարակություն, գլխա-

վորությամբ ակադեմիկոս Յիցիշվիլու, դոկտոր-պրոֆեսորներ Զանելիձեի, Եթերի Գուգուշվիլու և մի խումբ ժողովրդական արտիստների: Անմիջապես ինձ ներկայացավ «անտեսանելի տիկինը», որ շատ տեսանելի էր ու հանդուժն իր բազմանշանակ ժպտություն: Տիկինը ոտաքորին էր, կոչիկները ձեռքին, ինստիտուտի միջանցքում քայլում էր, ինչպես իր խոհանոցում: Նա ինձ ոչ մի խոսք չասաց: Ներկայացավ, ծանոթացավ ու ժպտում էր ինչպես հին բարեկամուհի: Եթե սա է Զարայի ախոյանը... Ես ներկայացրեցի գիտերտանտի անձնական գործը, կարդացի կենսագրությունը, մեկը դահլիճում փոթկացրեց ու լոեց: Աչքի տակով նայեցի: «Անտեսանելի տիկինը» լուրջ էր: Հասկացա, որ դիսերտանտն ուրիշ ախոյան էլ ունի: Պաշտոնական ընդդիմախոս ակադեմիկոս Յիշվիլին արտասանեց մի բաժակաճառ: Զիմացա՝ կարդացել էր գիտերտացիան: Տպագրությունն այնպիսին էր, թե ոչ չի կարգացել, բացի մեր բաժնի երեք աշխատակիցներից և ինձանից, որ հիսուներորդ էջից այն կողմ չէի անցել: Հմայիչ ու ժպտագեն պրոֆեսորների Եթերի Գուգուշվիլին մի խոսք ասաց, և այդ խոսքը դարձավ ցերեկութիւն նշանաբանը:

— Զեագրվել է մարդը, որն իրավունք ունի դոկտոր դառնալու:

Նիստը վարող Ռուբեն Զարյանը դարձավ ինձ և շշուկով ասաց, թե մերոնց ելույթները քիչ են: Նա ուզում էր ինձ ձայն տալ, ես ասելիք չունեմ: Հրաժարվեցի, ասաց՝ ոչ, ես աղատվելու հնարը գտա.

— Ես կարող է մի անգույշ խոսք ասեմ, և տակնուրբա կլինի այս ամբողջ գործը:

Զարյանը հավատաց խոսքիս:

Պաշտպանության հրապարակային մասն ավարտվեց, սկսվելու էր փակ նիստը: Զարյանը դժվարանում էր դուրս հրավիրել մարդկանց, ասելով, որ հյուրերի հետ այդպես վարվելը հարմար չէ: Ես շշուկով ասացի, որ

դա անհրաժեշտ է, կանոնադրության որևէ խախտում չպետք է լինի, դիսերտանտն ախոյաններ ունի: Հյուրերը կարգը գիտեին և դուրս գնացին: «Անտեսանելի տիկինը» մնում էր տեղում նստած: Ես մոտեցա նրան և ներողություն խնդրելով առաջարկեցի դուրս գնալ: Նա ժպտալով դուրս գնաց: Ամեն ինչ օրինական էր, արդյունքը միաձայն: Ծափահարություններ ու շնորհափորանքներ: Ծարունակությունը լինելու էր խնջույք «Արմենիա» ռեստորանում, ապա՝ «Ախմամարում», եղբափակիչը՝ թիֆլիսում: Հիշեցրեցի մերոնց, որ ՎԱԿ-ի վերջին մի որոշումով պախարակվել են նման խնջույքները: Լավ չընդունվեց իմ հիշեցումը: Ես պնդեցի, որ գիտական խորհրդից ոչ մեկը չպետք է լինի այնտեղ: Զարան մոտեցավ ինձ: Ես բացատրեցի, որ մեր ներկայությունն իր օգտին չի կարող լինել: Նա համաձայնեց, և մենք բաժանվեցինք որպես հավատարիմ բարեկամներ:

Զարա Իոսելիանիի դիսերտացիան ՎԱԿ-ում մնաց մեկ տարի, որից հետո իմացանք, որ դիսերտանտն անհայտ պատճառով հետ է վերցրել գործը: Եղավ երկրորդ պաշտպանությունը որտե՞ղ, չգիտեմ, և ՎԱԿ-ը հաստատեց:

Մինչև 1989-ի թիֆլիսյան դեպքերը ես երբեմն լսում էի նրա մասին: Նա չէր մոռանում ինձ բարեներ ուղարկել: 1989-ի գարնանը նրա անունն արդեն շատերին էր հայտնի: Վիրավոր ազգը գտնելու էր մի կարլ Մոոր, և Զարայի ռազմականացված խումբը՝ «Միեղբիոնին», որ նշանակում է «Ճերմակաձի», հայտնից քաղաքական թոհուրոհի կենտրոնում, որպես Գամսախուրդիայի իրական ախոյան:

... Այս կոլիզիայում ահա Զարա Իոսելիանին դարձավ քաղաքական կալանավոր, տոկունությամբ կրեց քառասուներկուօրյա հացադուլը և քառասուներեքերորդ օրը, ինչպես սրբազն հաղորդություն, հաց վերց-

րեց վրաց եկեղեցու հայրապետ իլյա Երկրորդի ձեռքից: Այս արարողությամբ սրբագործվեց նրա ամբողջ անցյալը:

Մնացածը հայտնի է: Զարան վճռորոշ դեր կատարեց Գամսախուրդիային հալածական առնելու, Շեարդնաձեի քաղաքական դիրքն ամրապնդելու գործում և, ինչպես ինքն է հայտարարել, «Վրաստանում իշխանության եկան հայտնի գողն ու անհայտ քանդակագործը»: Այս վերջինս Թենգիդ Քիթովանին է՝ Զարայի իրական հակակշիռ ուժը, և նրանց ձեռքին է Վրաստանի հանրապետությունը:

Զարա Իոսելիանիի երեսույթը պարզ է ու տեսանելի: Նա մաղե կամուրջներով ու ասեղի ծակերով է անցել: Նրա անձը հայտարարված է, բացահայտ, կարդախոսը որոշակի. «Քանի ես կենդանի եմ, չի անցնի դիկտատուրան»: Այո, նրա ռեալ իշխանությունը, որ քիչ կապ ունի իր պաշտոնական դիրքի հետ (խորհրդարանի երեսփոխան և պաշտպանության խորհրդի անդամ, իսկ հիմա արդեն արտակարգ իրավիճակների կոմիտեի նախագահ), չի հանդուրժելու ոչ մի օրենք, բացի իր աշխարհի ու միջավայրի օրենքներից: Կոլիզիան հասունացել է իրենից անկախ, ինքը դարձել է հեղափոխությունների տրամարեանության կրող:

Արդ, ինչպես է երեսում այդ տրամաբանությունը:

Մի տեղում կոնկրետ ուժն ու հանդուգն վճռականությունն ի չիք են դարձնում ամեն օրենք, մյուս տեղում քրեական տարրը վերաճում է քաղաքականի, այլ տեղում հաղթում է մաֆիականությունը կամ օրինական իշխանությունն իր մեջ հասունացնում է նոր տիպի քրեական տարր: Խորհրդային իրականության մեջ ձեավորված «օրինական գողն» այնքան սարսափելի չէ, որքան նրան իր ուսերին պահող ու բարձրացնող պաշտոնական հասրակությունը, լինի նախարար, գիտնական, թե արտիստ: Այս միջավայրն ստեղծել է ահա մի

կոլիզիա, որ դեռ կայուն է իր գործող անձանցով՝ ոչ ճերմակածի, այլ ճերմակօծիք, փողկապավոր ու դիմակավոր, և այստեղ հայտնի չէ, թե ով ում է պարտական, ով է հովանավոր, ով հովանավորյալ, ով անգիտակ ու անմեղսակից: Միևնույնն է, ընկերային, հասարակական ու պաշտոնական միջավայրը գործում է որպես ժառանգված, անխափան կառուցված, և կռվում են գաղափարի միամիտ զինվորները:

ՓԱՐԻԶՅԱՆ ԷՃԵՐ

Եթև այսպիսի ուժագույն պատճեն պահպանի մասին առաջին պահանջական տեսականությունը պարզաբանվում է առաջնային նպատակության մեջ նկատվող համապատասխան պահպանային պատճենի մասին: Եթև այսպիսի պահպանային պատճենի մասին առաջին պահանջական տեսականությունը պարզաբանվում է առաջնային նպատակության մեջ նկատվող համապատասխան պահպանային պատճենի մասին:

Եթև պարզաբանության մասին առաջին պահանջական տեսականությունը պարզաբանվում է առաջնային նպատակության մեջ նկատվող համապատասխան պահպանային պատճենի մասին: Եթև պարզաբանության մասին առաջին պահանջական տեսականությունը պարզաբանվում է առաջնային նպատակության մեջ նկատվող համապատասխան պահպանային պատճենի մասին:

ՄՈՒՏՔ

Ուշ աշնանային Փարեզը գորշ, թափանցիկ մշուշով, մանր անձրեից ծեծված սալահատակին թափվող դեղնականաչ, դարչնագույն սաղարթներով, բուլվարների ու ավենյուների ջրաներկ հեռապատկերներով թվում է կարծես ծանոթ՝ երեակայությամբ դիտված աշխարհ, որ անսպասելիորեն դառնում է առօրյա՝ խաղաղ, զուսպ, լեցուն, չշլացնող։ Ծանոթ է այդ, իսկապես ծանոթ, ինչպես փնտրված և փնտրումի մեջ ապրված իրականություն։ Նա այնպիսին է, ինչպես Պիսսարոյի «Մոնմարտր բուլվարը», Մարկեի «Սենան», Դեգայի վարդակապույտն ու գորշացող շագանակագույնը, Սեղանի հանգստությունը և Ազնավորի երգը՝ խոր ու խզված, հեռավոր խոստումների ելեէջ։

Աշնան փայլատ ապակին շղարշում է գույները, երեկոյան օւը դառնում է արծաթագորշ կապույտ, և մայթերը շողում են լուսավոր ցուցափեղկերի ու գունագեղ ոեկլամների ջերմությունից։ Հայացքդ ակամա փախցնում ես այդ արգեստական լույսից։ Զլինի թե գիշերային գեղեցկուհու պճնանքը, որ բանտարկում է աչքդ և կարելի է տեսնել ժամանակակից բուրժուական աշխարհի թերեւս ամեն մի անկյունում, ամրանահիշողությանդ մեջ որպես խորհրդանիշն ու խորհուրդը

այս ծանոթ ու անծանոթ և ամեն պահ անցյալի վերածվող իրականության:

Այս է և այս չէ Փարիզը՝ Հեմինգուեյի ասած տոնը, որ լինելու է քեզ հետ:

Սա երեսույթն է, մակերեսը, զարդը, ժպիտը, որ ավելի մատչելի է, ընդառաջ է գալիս ավելի շուտ, քան կհասցնես ընկալել էությունը, տեղափորելու զգացողությանդ մեջ ձեի ու իմաստի ամբողջությունը, ընդունելու արվեստի առօրյա ներկայությունը որպես կյանք և ապրելու առօրյան՝ որպես արվեստ: Այս է, որ դժվարությամբ է տրվում կամ պարզապես չի տրվում ժամանակավոր այցելուին, մանավանդ, եթե ժամանակը սուզ է, և մարդու հոգին ագահ ու անհանգիստ:

Ես փնտրում եմ այդ դժվար տրվողը:

Եվ վաղուց որոշել եմ ինքս ինձ համար, որ առօրյա իրականության ամենաանմիջական ու կենդանի խորհրդանիշը թատրոնն է, կյանքի ոչ անպայման արմատն ու էությունը, այլ ծաղիկը: Հասարակական զգացմունքների ծանրաչափը թատրոնում է: Մտիր այստեղ և իմացիր՝ ինչ երկիր և ինչ քաղաք ես եկել:

Ահա նախկին «Ամբիգյու կոմիկի» տեղում «Ռենեսանս» թատրոնի հին շքամուտքը Բուլանժեի նրբանցքի և Սեն-Մարտեն բուլվարի հատման անկյունում և կողքից նայում է Յոհան Շտրաուսի փոքրիկ կիսանդրուն: Այստեղ է իր բեմական կյանքն սկսել անցյալ դարասկըի բուրժուական ամբոխի դերասանը՝ Ֆրեդերիկ Լեմեթրը, «բուլվարների Տալման»: Այս շքամուտքի մոտ է խոնվել այն ժամանակվա փարիզյան հասարակության միջին խավը, և այստեղ է հղացվել Դոմիեի «Ռոբեր Մակեր» գրոտեսկային նկարաշարը: Հիմա լոռություն է. *repetitions*: Իսկ շենքի ճակատին խոշոր, լուսավոր տառերով շողշողում է փնտրված մի անուն՝ Դելֆին Սեյրիդ: Սա այն դերասանուհին է, որ մեզ հիացրել է երեանում քսաներեք տարի առաջ, Տուրգենևի «Մեկ ամիս գյու-

ղում» պիեսի Նատալյա Պետրովնայի գերով: Փարիզում ինչքա՞ն անձրևներ են եկել, ինչքա՞ն մշուշներ են թափ-կել ծառերին: Դելֆինի աստղը գեռ չողում է:

Անցնում եմ մայթը: Մի քանի քայլ՝ դեպի Հանրապետության հրապարակի կողմը, և աչքս ընկնում է ձախ կողմի շենքի ճակատին. «Թատրոն Պորտ Սեն-Մարտեն»: Ինձ դարձյա՞լ հետապնդում է Ֆրեդերիկ Լեմեթրի ստվերը. Դոն Սեզար, Ժորժ Ժերմանի, Ժակ Ֆերնան, Լիսար... Մելոդրամա: Փարիզի հնահավաքն աղբանոց է նետում Բուրբոնների թագը: Թատրոնի մուտքը զարդարում են ժամանակակից արտիստների հնամերծ դեմքերն ու դերերը: Տոմսերն սպառված են: Դահլիճն զբաղեցնում են «Կոմեդի Ֆրանսեզի» դերասանները: Խաղում են Ժորժ Բերնանի «Կրոնական երկխոսությունները»: Աչցնում եմ Սեն-Մարտեն փողոցով, հասնում «Ս. Նիկողայոս» եկեղեցուն, այնտեղից մի նեղ նրբանցքով՝ Տամպլ փողոցը, և բոլոր տեսանելի անկյուններում աչքի է զարնում մի աֆիչ՝ «Լիոնի սուրհանդակի գործը»: Սա այն արկածային մելոդրաման չէ^o, որ 1879-ին Կ. Պոլսից Թիֆլիս էր բերել Ադամյանը և արժանացել Գրիգոր Արծրունու հեգնանքին: Այդ է: Բեմադրությունը պատկանում է հանրաճանաչ Ռոբեր Օսեյնին: Թերթում եմ գրապանիս թատերական ծրագիրը և տեսնում, որ «Մարինյի» թատրոնում խաղացվում է Դյումայի «Քինը»՝ Սարտրի և Օսեյնի մշակումով և Ժան-Պոլ Բելմոնդոյի մասնակցությամբ:

Ամեն ինչ և չին է, և նոր:

Թատրոնը Փարիզում ապրում է իր բնականոն կյանքով, առանց մողեռն նախապաշարումների, առանց սարսափելու հնի ուրվականից: Կանգուն են հին թատերաշենքերը ծանրոթ անուններով՝ «Օդեոն», «Սառա Բեռնար», «Ժիմնազ», «Մարե», «Պալե-Ռուայալ», «Մոնպանսաս», «Ատելիե» և այլն, երեսում են նոր անուններ՝ «Մոդադոր», «Ֆոնտեն», «Օրանժերի դը Սո», «Վիլե», «Սոլեյ», «Կոլին» և այլն: Փարիզյան թատերա-

կան կյանքը երեռւմ է շատ ավելի հարուստ ու բազմանկար, քան գիտեինք Գրիգոր Բոյաջիկի գրքից՝ 50-ական թվականների մասին։ Խաղում են ամեն ինչ՝ և՝ դասական, և՝ ժամանակակից հեղինակներ, սալոնային, բուլվարային, կլասիցիստական, ուսմանտիկական, ավանդարդային, կրոնական, քաղաքական ու փիլիսոփայական։ Շատ դժվար է որոշել գեղարվեստական ձգտումների ուղղությունը, հասուլ լինել թատերական ձեռնարկությունների ներքին ու արտաքին նպատակներին։ Ասում են՝ մոտ հարյուր թատրոն կա Փարիզում։ Հաշիվն ստույգ չէ, ինչպես ստույգ չէ ուստորանների ու սրճարանների հաշիվը։ Թատրոնները բացվում են ու փակվում, ընդհատում ու վերսկսում ներկայացումները, հին շենքերն զբաղեցնում են նոր խմբեր, պահելով հին անունը, մեկ թատրոնն օրվա մեջ տալիս է երկու, երբեմն երեք ներկայացում՝ ցերեկ, երեկո, գիշեր։ «Կոմեդի Ֆրանսեզն» օգտագործում է երեք շենք միաժամանակ։ Տոմսերի գները տատանվում են՝ նայած գնվող ներկայացումների քանակի, նայած վայրի, խմբական այցելությունների թվի ու չափի։ Մեզ համար, որ սովոր ենք թատրոնի պետական վիճակին և տնտեսական հովանավորվածությանը, շատ բան անըմբունելի է։ Պետական թատրոններ այստեղ էլ կան, որ ավանդականորեն կոչվում են «նասիոնալ»։ Դրանք են «Գրանդ Օպերան», «Կոմեդի Ֆրանսեզը», «Օդեոնը», «Ատելիեն», «Շայոն», «Տեատր դը լա Կոլինը»։ Մյուսները մասնավոր-փայտիրական ձեռնարկություններ են, ինչպես ասել են հնում՝ «սոսյետի»։ Այսպես է սկիզբ առել թատրոնական գործը Փարիզում, երբ հոգեւոր ճեմարաններից փախած այլախոհ եղբայրները հիմնեցին առաջին «սոսյետին»՝ «Բուրգունդյան պանդոկը» (1548)։

Եվ նախքան կրացվեին իմ առջև փարիզյան որևէ հանդիսարահի դռները, ճանապարհը տարավ, կանգնեցրեց «Կոմեդի Ֆրանսեզի» գիմաց...

«ԿՈՄԵԴԻ ՖՐԱՆՍԵԶ»

Դերասանական մուտքի մոտ ինձ, վրաց թատերագիտուհի Իրինա Գոգոբերիցին, կիւցի Վիկտոր Կիսինին և զագախ Դուլաթ Խաբեկովին գիմավորեց «սոսյետեր» դերասանուհի Կատրին Սալվիան՝ Փրանսուհու հրճվալից ժպիտը գեմքին։ Նախարահում, գորգապատ սանելից ժպիտը եղբին Մոլիերի կիսանդրին է։

— Սովորություն է, — ասաց մաղմուազել Կատրինը, — թատրոն մտնող արտիստը ձեռքը պետք է դնի այս արձանին, գործի հաջողության համար։

Մտնում ենք Մոլիերի տունը.

— Բարեկ, Ժան Բատիստ Մոլիեր։

Բոլոր սրահները զարդարված են ակադեմիական ոճի հին նկարներով ու արձաններով։ Ֆրանսուա Ժոզեֆ Տալմա. նստած է հին հոռմեացու դիրքով։ Մեզ դիմավորում են գրքերից ծանօթ դեմքեր։ Միշել Բարոն, Անրի Լեկեն, Ագրիեն Լեկուվրյոր, մաղմուազել Մարս, Իպոլիտա Կերոն, Դյումեզիլ, Արմանդա Բեժար, Պրևիլ... Միքանի տեղից նայում են Ռաշելի աչքերը։ Դերասանական և հանդիսատեսի սրահներում կիսանդրիների շարք է Կորնելի, Ռասին, Վոլտեր, Հյուգո, Բոմարշե, Ալֆրեդ դը Մյուսսե, Ալֆրեդ դը Վինյի, Դյումա-Հայր, Ակրիբ, Սարդու, Կոլեն-ավագ և ամենից ավելի, մի քանի տե-

գերում՝ Մոլիեր: Աչա այն բազկաթոռը, որ ծառայել է նրան Արգանի գերում, որի վրա նա խսկապես հիփանդացել է ու վախճանվել 1673-ի փետրվարի 17-ին, բեմում ավարտելով իր բեմական կյանքը, ծիծաղի ու ծափահարությունների աղմուկի մեջ: Թատրոնի գրադարանում դրված ձեռագիր հուշամատյանի առաջին գրանցումն այդ է: Իսկ այս մաշված ու չորացած մեծ աթոռը դուրս է բերվել թատերական հին կահույքի կույտից ու դրվել այստեղ, ապակու տակ, որպես մեծ կատակերգություն մնացած միակ իրեղին հիշատակը:

Թատրոնական կոմիտեի լուսավոր ու շքեղ սենյակում, Վոլտերի հեգնական, քննախույզ հայացքի տակ գրուցեցինք թատրոնի գրադարանի ու գրական գործի տնօրինուհի Նոելա Ժիբերի հետ: Պարզվում է, որ թատրոնի հիմնադրման օրվանից (1680 թ., օգոստոսի 18) այստեղ պահպանվում են ոչ միայն դասական արվեստի հիշատակները, այլև մասնագիտական բարքերն ու կազմակերպական սկզբունքները: Լյուդովիկոս XIV-ի հաստատած «սոսյետերների» (փայտերեր) խումբը երեք հարյուր տարում քսանութից հասել է երեսունմեկի, և պահպանվում է նույն ժամանակից հաստատված «պետսիոներների»՝ պետական կայուն աշխատավարձ ստացող դերասանների խումբը: Այս թատրոնում աշխատում են նրանք, ովքեր նվիրել են իրենց ազգային դասական թատերագրության և բեմական ոճի ու լեզվի պահպանմանը: Ոչ մի էքսպերիմենտ, ոչ մի ձախ նորարարություն, ոչ մի ոտնձգություն ավանդների, մասնավորապես գրական տեքստի հանդեպ:

— Ֆրանսիական թատրոնը նախ և առաջ խոսքի թատրոն է, — ասում է մադմուազել Նոելան, — բնագրում խորանալով պետք է հայտնագործել հեղինակի պատկերացրած իրականությունը:

Մադմուազել Կատրինը գլխով է անում՝ հաստատում է գրադարանի ավանդապահուհու խոսքերը:

«Կոմեդի Ֆրանսեզի» հանդիսասրահը տեսա նախքեմից: Չափեցի բեմի ճերմակագորչ կտավածածիկ պլան-շետը լայնքով, երկայնքով ու անկյունագծով, մտովի դիտեցի բոլոր անցումները, երևակայությանս մեջ տեղավորեցի «դատարկ տիեզերքի» ակտիվ ու պասիվ կետերը, կանգնեցի կենտրոնում ու գնացի բեմառաջք: Կետերը, կանգնեցի կենտրոնում ու գնացի բեմառաջք: Այստեղ կանգնել են Տալման, Մունե-Սյուլլին, Կոկլենը: Կարմիր թագչապատ, ոսկեզարդ օթյակները լուռ են, գեղագուկ, տոնական և շատ մոտ: Իջա դահլիճ, բարձրագուկ իտալական տիպը բեկված է միապետական դարշարջանի ֆրանսիական տեսապակու մեջ:

Դուրս ենք գալիս հանդիսասրահի կողմից, իջնում փողոց, թեքվում դեպի «Պալե-Ռուայալ», մտնում գրադարան: Թերթում ենք ձեռագիր հուշամատյանը: Այստեղ արտագրված է Լյուդովիկոսի հրովարտակը ճեմարանական եղբայրների հիմնած «Բուրգունդյան սլանդուկի» և «Մարեի թատրոնի» (1634) միացման մասին: Այստեղից է սկսվում ելքուպայի առաջին պետական թատրոնի տարեգրությունը:

Բացվում է այն տուփը, ուր դրված է Տալմայի արծաթե ոսկեզօծ պսակը, որով նապուն Բոնապարտը զարդարել է Ֆրանսիայի առաջին ողերգակ դերասանի ճակատը:

— Կարելի՞ է ձեռք տալ:

— Այո՛, ինչո՞ւ ոչ, — ասում է մադմուազել Նոելան:

Զգուշուեն վերցնում եմ պսակը և դնում... Տալմայի գլխին:

Ֆրանսիայի առաջին ազգային թատրոնը հպարտ է իր պատմությամբ ու ավանդներով: Երեք հարյուր տարուց ավել ամեն օր բարձրանում և իջնում է «Կոմեդի Ֆրանսեզի» ոսկեղբարձր վարագույրը:

Մեկ շաբաթ անց, նոյեմբերի 29-ին, երբ արդեն եղել էի մի քանի թատրոններում, մոտավորապես ծանոթ էի նորագույն ձգտումներին, նորից եկա Ռիշելյոյի փողոց։ Ինձ հետ էին Մոսկվայի թատերական ինստիտուտի արևմտաեվրոպական թատրոնի պատմության դասախոս Կլարա Գլադիչեան և Վիլնյուսի գրամատիկական թատրոնի տնօրեն ժուկաս Յուզասը։ Մեզ դարձյալ դիմավորեց մշտաժպիտ Կատրինը։

Խաղում են Ժորժ Ֆեյդոյի «Պարոնը որսի է գնում» կատակերգությունը՝ անցյալ դարավերջի սալոնային թատրոնի նյութ։ Միրային ինտրիգ, եռանկյունուց քառանկյունի դարձող թյուրիմացություն, կյանքի թղթախաղային իրադրության դրվագ։ Մաղմուազել Կատրինը տանջահար ոռւսերենով փորձեց պատմել պիեսի սյուժեն։

— Տիպը հայտնի է, — ասացի։

Մինչ ես մտածում էի, թե ֆրանսիական սալոնային կատակերգության մողելը կառուցված է ըստ խաղաթղթերի դիմակային փոխհարաբերության, մաղմուազել Կատրինը պայուսակից հանեց փայլուն մի տուփ։

— Այս խաղաթղթերը նվիրում եմ Ձեզ. գուշակեք Զեր բախտը։

— Օ՛, սա հիանալի է. ի՞նչ սքանչելի նվեր, — ասում եմ, — սեղանի թատերախաղ։

Խաղաթղթերը ներկայացնում են XVIII դարի «Կոմեդի ֆրանսեզը», ըստ Ժամանակի թատերական նկարիչներ Լանկրեի, Կուապելի, Լենուարի, Կաստելի, Լեկլերկի, Ֆեշա-Ռւիրսկերի, Շառլի գրավյուրների ու գունանկարների՝ պատմականորեն կոնկրետ դերակատարների պատկերներով։ Այսպես կարելի է հրատարակել և՛ Շեքսպիրը, և՛ հատկապես Վերածնության դարաշրջանի խապանական թատրոնը՝ ֆեոդալ արքաներով, որի ու թիկնոցի ասպետներով, ճակատագրական սիրահարներով։

Մաղմուազել Կատրինը խոսում է այսօրվա ներկա-

յացման գլխավոր դերակատարի՝ Ժակ Սերեի մասին։
— Ահա և նա։

Առույգ քայլվածքով մեզ է մոետնում բարեկիրթ, ճաշակով հագնված, միջահասակ, ալեխառն մազերով մի տղամարդ, մոտ վաթսուն տարեկան։ Զեռքին գրքեր ու թղթեր կան։ Տեսքը մտավորականի է և արտիստի։ Օդը պաղ է ու խոնավ, բայց նա առանց վերարկուի է, բաց դարչնագույն, ամառային բածկոնով։ Սալոնային կատակերգության ասպետը մեզ բարեում է զվարթ ու ժպտագեմ։

— Ծանոթացեք, — ինձ է ներկայացնում Կատրինը, — թատերական քննադատ Հայաստանից։

— Զափազանց ուրախ եմ, հիանալի է, — ասում է Ժակ Սերեն այնպիսի մի հրճվալից տոնով, կարծես հենց ինձ էր սպասում։ «Կոմեդի ֆրանսեզը» ամեն ինչ հիանալի է, պակասում է միայն հայ թատերախոսը։ Ես արդեն գիտեմ՝ ինչ է նշանակում ֆրանսիացի արտիստի ժպտագը։ Դա սոսկ առօրյա բարեկրթության այցետում չէ։ Ֆրանսիացի արտիստները և՛ համեստ ու նրբանկատ են, և՛ ուրախությամբ են ընդունում իրենց գործով ու արվեստով հետաքրքրվող մարդուն։ Այդ ժպիտը հնուց է գալիս որպես բարոյական միասնության նշան, երբ բեմական արվեստի մարդիկ, օտարված աշխարհիկ հասարակությունից ու գործնական կյանքից, հեգնում էին այս աշխարհի տերերին։ Նրանք պատրաստ են խոսք ու զրույցի մեջ մտնելու իրենց համքարությանը՝ «տերունական չարչարանքների եղբայրությանը» պատկանողի՝ հետ և ծիծաղել աշխարհի վրա, ինչպես իրենց պապը՝ Ժան Բատիստ Մոլիերը։

Մեր զրույցը սակայն կարճ է տեսում։ Ժակ Սերեն ներողություն է խնդրում, շտապում է գրիմանոց։ Հարցնում է՝ տոմս ունե՞մ, հարմա՞ր տեղ է, թե ոչ։

— Tres bien, — գործի եմ գնում իմ ֆրանսերեն պատիկ բառարանից «Հիանալի» բառը։

Իսկապես հիանալի առաջին կարգ, առաջին տեղ, որ այստեղ նշանակում է երրորդ շարքի կենտրոնական աթոռ։ Դա ամենապատվավոր տեղն է և բնավ քննադատի համար չէ։

— Սա, իհարկե, Ֆրանցիսկ Սարսեի տեղը չէ, — ասում եմ։

Նկատի ունեմ անցյալ դարավերջի սալոնային թատրոնը պաշտպանող ավանդապաշտ քննադատին, որը չընդունեց ոչ մի մոդեռն քայլ, հատկապես Անտուանի նատուրալիզմը և մեռավ 1899-ին, կիսատ թողնելով էժեն Սիլվենի աշակերտ Կարապետ Գալֆայանի ելույթը Համլետի դերում։ «Ինչե՞ն մեռավ Ֆրանցիսկ Սարսե», — գրեց Արշակ Չոպանյանը։ Այս պատմությունն էի պատմում Կարա Գլադիչևային, և վարագույրը բացվեց, բեմ մտավ ժակ Սերեն՝ Դյուչուտելի դերով։

Ներկայացումը, որի բեմադրիչն է իվ Պինյոն, նկարչը՝ Արտյուր Աբալեն, իսկապես սալոնային է և ավանդական։ Դեկորը և զգեստները պատմականորեն հավաստի են, մանրամասնորեն մշակված, բեմը լուսափոր է, անցումներն ու դիրքերը կանոնիկ, շարժումը թեթև, ուիթմիկ, տոնը աշխույժ, գործողությունն արագընթաց։ Խաղի մեջ զգացվում է տեմպառիթմային հավասրակշռություն և չափ։ Խոսքը փայլուն է մշակված։ Դարձվածքը, բառն ու հնչյունը դաշլիճ են ընկնում անկորուստ։ Սա բեմական վարպետության կատարյալ դպրոց է։ Ընդհանուր նկարագրով այս ներկայացումը հիշեցնում է «Ատելիե» թատրոնի «Սկիլյան սափրիչը», որ տարիներ առաջ բեմադրել էր Անդրե Բարսակը։ Տիպաբանությունը նույնն է, բայց այստեղ անհամեմատ ավելի գրավչություն կա և ավելի նուրբ թատերայնություն։ Կարծես երգում է ծանօթ մի երգ, նրբորեն գործիքափորված և դյուրասահ, պարզ, ինչպես Բերանմեի երգերը։ Ամեն պիես այս ոճով խաղալ, իհարկե, չի կարելի։ Բայց եթե Մոլիերն ու Բոմարշեն այսպես են

ներկայացվում, և սա է ֆրանսիական կոմեդիայի ավանդական ոճը, պետք է միայն հիանալ «Կոմեդի Ֆրանսեզով», որքան էլ դա համարվի հնացած ու պահպանողական թատրոն։ Ես կարող եմ վիճելի համարել մեկ բան։ Ամեն ինչ ներկայացվում է ըստ խոսքային իրադրության, խոսքի իմաստից գուրս իրականություն կարծես չի պատկերացվում։ Սա իսկապես ակադեմիզմ է՝ հետեւ հեղինակի տառին, չմտահոգվելով այն ոեալ իրականությամբ, որ գոյություն ունի պիեսից ու թատրոնից գուրս, այն է՝ ինչ մտքերով ու հույզերով է թատրոն մտել հանդիսատեսը, և ինչ է թելադրում բեմից գուրս գործող իրականությունը։ Սա նուրբ կետ է։ Բայց եթե «Կոմեդի Ֆրանսեզը» գուրս գա իր կանոնից, նա կլինի արգեն այլ թատրոն, որպիսիք կան Փարիզում։ Այս թատրոնը թերեւս պետք է հավատարիմ մնա իր սկզբունքին ու նպատակներին։ Թող լինի այդպես, բայց եթե արտաքին կերպերը ամրացված չեն ներքին ձևում, մնում է գերադասել ուսւական դպրոցը։

Ժակ Սերեն բոլոր առումներով «Կոմեդի Ֆրանսեզի» դերասան է, բարետես, ճկուն, ներքուստ հավասարակշու, մինչև վերջ կերպավորվող և միաժամանակ դերի հետ խաղացող դերասան։ Նրա կատարումն պիելին է խոստանում, քան այս պիեսի և այս դերի ընձեռած հնարավորություններն են։ Նրա տարերքը, եթե ձիշտ կարողացա նկատել, Մոլիերն ու Բոմարշեն են։ Պատկերացնում եմ նրա Արգանը, Ժուլիետը, Բարթոլոն։ Մոռվի տեսնում եմ նրան Ֆիգարոյի դերում, եթե խաղացել է։ Իր այսօրվա տարիքի համեմատ ժակ Սերեն շատ ճկուն է և արագաշարժ, թեթև, պլաստիկորեն արտահայտիչ, ունի բեմական իրադրության նուրբ զգացողություն, հոգեբան է, և ինչպես ամեն ֆրանսիացի, թաքցնում է հոգին։ Դրամատուրգիական իրադրությունը, որում գործում է Դյուչուտելը, բնավ ինքնատիպ չէ, նույնիսկ ստանդարտ է, հուշում է վոդեկլային խաղ։

Բայց Սերեի խաղը վողեկլային չէ և, ինչպես ամբողջ ներկայացումը, գրոտեսկային ընդգծումներ չունի:

Այսպես, Դյուշոտելը որսի է գնում՝ երեսում է, թե ուր է գնում՝ սիրուհու մոտ և բռնվում է, ընկնելով մի նոր թյուրիմացության մեջ: Նա հագել է որսորդական զգեստը, վերցրել է հրացանը, բայց ամեն ինչ պարզ երեսում է: Նա խաղում է իր երկատված կյանքը և կյանքի հետ: Այդ կյանքը լուրջ չէ իր ոչ տեսանելի, ոչ էլ անտեսանելի շերտերով: Դերասանն ինքն էլ որոշակի վերաբերմունք ունի իր հերոսի և նրան թելադրված իրադրությունների հանդեպ: Դա յուրահատուկ օտար-վածություն է: Դյուշոտելն ապրում է կարծես մեխանիկորեն, կրկնում է կյանքի շաբլոնը ոչ որպես ներքին պահանջ, այլ կենցաղի նորմ, ինքն էլ չգիտե, թե ինչու, ընկնում է անպատճ վիճակների մեջ և ոչ վախենում է, ոչ էլ շփոթվում: Ծերացող լովելասի համար սա առաջին դեպքը չէ: Նա սովոր է իր երկատված կյանքին, սովոր է օրինաչափությանը և կրում է այդ որպես ճակատագիր: Հիշում եմ Տոլստոյի Ստիվա Օբլոնսկու խոսքը՝ «ի՞նչ արած»: Վիճակի արտասովորության ոչ մի ակնարկ և ոչ մի չափազանցում: Կաշառում է ամենից ավելի չափի զգացումը ըստ բովանդակության, և ըստ արտաքին խաղի: Այս ամենը, որպես սկզբունք, հատուկ է ամբողջ ներկայացմանը: Նույն ոճով ու զգացողությամբ են գործում նրա խաղընկերները՝ Պոլ Նոելը Լեոնտինայի գերում և Պատրիկ Կուրտուան Գոնտրանի գերում:

Որքանո՞վ է պահպանողական «Կոմեդի ֆրանսեզը»:

Այնքան էլ պահպանողական չէ, ինչպես ներկայացնում են իրենք՝ թատրոնի մարդիկ: Պահպանել XVII—XVIII դարերի բեմական ո՞ճը: Դա անհնար է: Թատրոնը ոչ գրականություն է, ոչ երաժշտություն, ոչ էլ գեղանկարչություն, որ հնարավոր լինի ընդօրինակել: Թատրոնում պահպանողական լինելն ավելի դժվար է, քան

նոր լինելը: Կյանքի կենդանի շարժումը, ինչ էլ լինի, մտնում է թատրոն, թեկուզ այնքանով, որ գերասանը բեմ է մտնում իր ապրած իրականությունից, իր առօրյա հոգով ու հույզով: Ինչ զգեստ էլ նա հագնի, ինչպիսի դեկորներով էլ շրջապատվի, ինչպիսի խոսքեր էլ արտասանի, նա միշտ ավելի այժմեական է, քան պատմական:

«Կոմեդի ֆրանսեզը» պահպանողականությունը, որի մասին շատ է գրվել և որն ընդգծում են շատերը՝ և՛ թատրոնում, և՛ թատրոնից դուրս, բնավ այն չէ, ինչ մենք ենք հասկանում, ասելով «պահպանողական»: Դա յուրահատուկ ավանդապաշտություն է, որին չեն հետեւում փարիզյան շատ թատրոններ: Ոմանք դա հարգում են, ոմանք ոչ: Այսպես, «Օրանժերի դե Սո» թատրոնի դերասանուհիներից մեկը (որի անունը ես չիմացա) ինձ հարցրեց, թե Փարիզի որ թատրոնում եմ եղել: Ես տվեցի «Կոմեդի ֆրանսեզը» անունը:

— Բայց դա առաջադիմական թատրոն չէ, հետևում է հին ավանդների, — ասաց նա:

— Թեկուզ և այդպես, — պատասխանեցի: — Ինձ, որպես թատերագետի, հետաքրքրում է ֆրանսիական ազգային ավանդական դպրոցը: Հինը ինձ հետաքրքրում է որպես հին, նորը որպես նոր: Մի՞թե հետաքրքիր չէ թատերական անցյալի պահպանումը:

— Այո՛, իհա՞րկե, ես հասկանում եմ, — ասաց նորագույն թատրոնի դերասանուհին ինչ-որ տարակուսանքով: Բայց երբ ես շատ հիացա իրենց ներկայացումով, նրա դեմքը պայծառացավ:

— Դուք ֆրանսերեն հասկանո՞ւմ եք:

— Հազիվ երեսուն բառ, — ասացի, — բայց թատրոնի լեզուն հասկանում եմ:

Ի դեպ, այդ դերասանուհին խոսում էր ոռւսերեն, դժվարությամբ, բայց համեմատաբար հեշտ, քան Կատրինը, և հնարավոր էր մտքեր փոխանակել: Նա թերեւ իրավունք ուներ հակասություն տեսնելու «Կոմեդի

Ֆրանսեզի» և իրենց թատրոնի միջև: Բայց այդ մասին հետո:

«Կոմեդի ֆրանսեզը» հետևում է պարզ սկզբունքի և դրամատիկական արվեստի ստուգված օրենքներին: Ի՞նչն է վիճելի: Թերեւս այն, որ այստեղ ավելի նշանակություն է տրվում հեղինակային մտահղացմանը և տեքստային գործվածքին, քան դրամատուրգիական երկի օբյեկտիվ բովանդակությանը, նրա կենդանի կյանքին՝ տարբեր ժամանակների հետ տարբեր կերպ խոսելու հատկությանը: Բայց վիճելի չէ այն, որ թատրոնը հավատարիմ է մնում վերարտագրվող իրականության ոգուն ու ոճին, դարաշրջանի արտաքին նշաններին, պահպանում է չափի զգացումը, ոչինչ չի անում ընդդեմ ճաշակի, չի փնտրում դրության ու բովանդակության հետ անհամեմատելի լինելու առիթներ, չի գիմում կոպիտ արդիականացման, չի ենում օրվա կյանք ունեցող հարցերից: Իմ տեսած ներկայացումը նման էր կատակային երգի և չուներ օպերետային տարր, շարժումն այնտեղ թեթև էր ու ճկուն, բայց չուներ պարային ոճավորում: Այստեղ ոչինչ չկար հավաստիության սահմանը խախտող, ոչինչ պիեսից ու նրա ժանրային նկարագրից դուրս: Ընդունել այս ամենը որպես բեմական արվեստի միակ ու անհերքելի սկզբունք: Բայց թատրոնի այս տիպը (պահպանողական համարենք այն, թե մի այլ կերպ) չպետք է մոռացվի, ինչպես գեղանկարչության մեջ չպետք է մոռացվեն կոմպոզիցիան, գույնը, գիծը, երաժշտության մեջ՝ մեղեղին ու ներդաշնակությունը: Արվեստը նայում է հեռուն, և պետք է այդպես լինի, բայց չի մոռանում իր հիմքերը, որուշ դեպքերում՝ կանոնները, որոնք պարտադիր չեն, որ երեան կամ ի ցույց դրվեն, բայց պարտադիր չեն, որ լինեն:

«Կոմեդի ֆրանսեզը» ի վերջո կենդանի թանգարան է: Իսկ թանգարան ասվածը պահպանում է ոչ ամեն պատահական բան: Թանգարանում ապահովան

գտնում ոչ անպայման կենսունակ, բայց ստուգված արժեքները: «Կոմեդի ֆրանսեզը» ծառայում է ստուգված ավանդների պահպանմանը: Առանց դրա թատրոնը կդիմազրկվի, և կժուղանա գրականության ու թատրոնի դաշինքը:

Դուրս եկա «Կոմեդի ֆրանսեզից» այս մտքերով և իհարկե այն գիտակցությամբ, որ ֆրանսիական քեմական արվեստի հնագույն օջախը դպրոց է, գրեթե մասնակից չէ արդիականությանը և նպատակ ունի ներդործելու ոչ այնքան կյանքի, որքան արվեստի վրա: Այն, ինչ եղել է և կա ֆրանսիական նոր ու նորագույն թատրոնում, կապ ունի Մոլիերի տան հետ, եթե անգամ հակադրված է նրան: Հակադրությունն էլ նոր չէ՝ սկսվել է ոռմանտիզմի շրջանից, Հյուգոյից և Դյումայից հանգել մելոդրամային ու բուլվարային թատրոններին, այնտեղից՝ նատուրալիզմ, հոգեբանական ռեալիզմ, ինտելեկտուալիզմ, ավանդարդիզմ, և դարձյալ՝ հետադարձ անդրադարձումներ, նոր հասկացություններ, անսպասելիորեն հին թեմաներ:

«ԼԻՌՆԻ ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻ ԳՈՐԾԸ»

Թատրոնը Փարիզում գրեթե չի ռեկամվում: Ամեն թատրոն ունի իր հանդիսատեսը: Եթե այդպես է, իմաստ չունի ռեկամի վրա ծախս անելը: Թատրոններ կան, որոնց անունները չեն երեսում անգամ սովորական, գրպանի ծրագրերում, բեմադրություններ, որոնք չունեն ոչ մի տեսակի ափից: Բայց ահա, «Լիոնի սուրհանդակի» ափիշներն ամենուրեք են: Ափիշը մեծ չէ, բայց ամեն տեղ է՝ օճանելիքների, մրգահյութերի, սպորտային կոչկների, մոտոռոլերների և ուղիղ աչքերիդ նայող քնքուշ ու հանդուգն պչուճիների պատկերների հարեւանությամբ: Սա բուլվարային թատրոնի հիշատակն է, թե՞ ինչ-որ հեգնանք:

Բուլվարային՝ այսօր նշանակում է մասսայական:

Դոմյեի «Մելոդրամայի» տեսարանը հին է. արցունքու դեմքեր, սենտիմենտալ էքստագ, բեմում ատրճանակ և ճշացող կերպարանքներ: Հիմա այդպես չէ: «Լիոնի սուրհանդակը» խաղում են սպորտի պալատում, «ամենաջահելների և ամենատարեցների համար», ինչպես կատակով հայտարարեց բեմադրիչ Ռոբեր Օսեյնը:

Շրջանաձև դահլիճը, որ երեք հազար մարդ է տեղավորում, ազատ տեղեր ունի առաջին շարքերում:

Հանդիսատեսը խայտաբղետ է՝ երիտասարդներ, տարեցներ, դպրոցականներ: Աղմուկ է, զվարթ, անվնաս աղմուկ: Պաղպաղակ ու քաղցրավենիք է վաճառվում: Մտնում է XIX դարասկզբի զգեստով մեկը, հաստափոր գիրքը թեկի տակ: Հեղինակն է: Մափահարություններ, սուլոցներ, աղմուկ: Հեղինակը ձեռքով ողջունում է և սուլոցների ուղեկցությամբ գնում նստում բարձր մի տեղ, բացում իր մատյանը և սկսում կարգալ: Հսող չկա: Միայն սուլոց ու ծիծաղ: Գալիս է Ռոբեր Օսեյնը:

— Բարի երեկո, տիկնայք և պարոնայք, բարի երեկո, օրիորդներ, բարեւ ձեզ, երեխաններ: Մագամ, — դիմում է վերջին կարգում նստած մի տիկնոջ, — նստեցեք առջեւմ, ազատ տեղեր կան: Առաջ եկեք, վերջին կարգերի հանդիսականներ, շուտ, արագ:

Սկսվում է նոր աղմուկ ու իրարանցում: Վերջապես լուս են, և բեմադրիչը պատմում է հին մելոդրամայի սյուժեն: Ժողեփ Լեսյուրկը (այս դերն անցյալ դարում խաղացել է Աղամյանը) կողոպտել է Լիոնի փոստը և սպանություն է գործել. ի՞նչ անել նրան. բերել գիլյուտինը և գլխատե՞լ: Զահել հանդիսատեսը, որ մեծամասնություն է դահլիճում, պահանջում է պատժել չարտործին:

— Շատ բարի, կպատժենք: Դուք կբավարարվե՞ք դրանով:

— Այո՛, — աղմկում է դահլիճը:

— Կպատժենք, — պատասխանում է բեմադրիչը: — Դուք էլ կհանգստանաք ու կգնաք տուն: Ոչ մի ներկայացում չի լինի:

Պահանջում են սկսել ներկայացումը: Քվեարկում են: Ո՞վ է դեմ, ո՞վ է կողմ, հայտնի չէ: Աղմուկի մեջ սկսվում է ժողեփ Լեսյուրկի գործի քննությունը: Սա այն մելոդրաման չէ, այլ նոր պիես՝ դատական ավանդուրա: Դատում են աֆերիստ Դեբյուսկին, Լեսյուրկն արդարանում է: Ներկայացումը ռեալիստական է, պատմականո-

բեն ճիշտ զգեստներով, խաղը մասամբ ցուցադրական, մակերեսային, երբեմն խարակտերային սուր գույներով, մեկ-երկու բնափորության ընդգծումով։ Խաղահրապարակը նման է անտիկ թատրոնի օրինատրային, իսկ երբ ձիասայլ է մտնում, վրան՝ շղթայակապ ավագակ Դերյուսկը, շրջապատված հրացանակիր ոստիկաններով, և այս «շքախումբը» պտտվում է հրապարակի շուրջը, խաղավայրը նմանվում է կրկեսային մանեժի։

Միջավայրը պատմական-կերպարային է. հիշեցնում է անցյալ դարի արկածային վեպերի աշխարհը։ Իրավիճակը սկանդալային թյուրիմացություն է, որն աղերս ունի այսօրվա ոստիկանական վեպերի ու դետեկտիվ կինոնկարների հետ։ Շիռթմունք է տեղի ունեցել։ Մեծ ճանապարհների ավագակ Դերյուսկը արտաքինով նման է պանդոկապան Ժերոմի որդուն՝ Ժոզեֆ Լեսյուրկին։ Թյուրիմացության մեջ են և՛ ոստիկանները, և՛ դատարանը, և՛ Լեսյուրկի հայրը։ Պիեսում մելոդրամատիկ կետեր կան։ Օրինակ. դատավարությունից առաջ Ժերոմը ատրճանակը հանձնում է «մեղավոր» որդուն և ստիպում ինքնասպան լինել։ Այդ տեսարանը հանգած է։ Դրա փոխարեն գրված է դատաքննական մի երկար տեքստ, որը փաստորեն նոր պիես է կամ հին պիեսի նորօրյա քննարկումը։ Այս է պատճառը, որ հեղինակին լսող չկա, և պատանի հանդիսատեսը սուլում է նրան, որպես թյուրիմացության հեղինակի։ Ասել է, թե ինչո՞ւ ես շփոթել անմեղ մարդուն հանցագործի հետ։ Ներկայացումը մասսամբ հեղինակի դատն է։ Եվ ի՞նչ է խաղի բովանդակությունը։ Հետապնդում և հարցաքննություն, զարմանք, վախ, տագնապ, երազի մեջ տեսնվող մահապատիճ՝ գիլյոտինը կտրում է մահապարտի գլուխը։ Այս ամենը համեմված է կատակերգական տեսարաններով։ Ամբոխի մեջ մեկը մեկին ծաղրող խոսք է ասում, ծաղրվողը՝ գլուխը սափրած տխմարակերպ մեկը, բամփում է ծաղրողի գլխին, դատախազը մեղամենը և ուրիշ ոչինչ։

արտասանում է խրատող, խելք սովորեցնող քեռու տոնով։ Հանցագործության ամբողջ տրամաբանությունը նրա համար պարզ է, սյուժեն բազում անգամ կրկնված, և նա արտասանում է մի ճառ, որը, ինչպես նկատում ենք, նա շատ է կրկնել, և հիմա խրատ է տալիս մարդկային տոնով։ Նուրբ կատակերգակ է Պոլ Լուպերսոնը, կոմիկ-սերյոզ, մեր Մուրադ Կոստանյանի էլեգանտ տեսակը, ունի ներքին մեծ հմայք, ճշմարտության բացառիկ զգացում։

Ներկայացումն ընթանում է կինոնկարի տեմպառիթմով (Օսեյնը կինոդերասան է), տեսարանները փոխվում են մի քանի վայրկյան տեսող մթությամբ, արագ ու անձայն, շրջանաձև, բոլոր կողմերից դիտվող հրապարակի պտույտով։ Սա յուրահատուկ շրջանակենտրոն խաղ է, ամբոխային ատյան, արկածախաղային, թատերական դետեկտիվ պատանիների համար։

Այս է անցյալ դարի բուլվարային թատրոնների հեղնախառն հիշատակը։

Ժամանակին Ֆրեդերիկ Լեմեթրը մելոդրամային չարագործի՝ Ռոբեր Մակերի դիմակից անսպասելիորեն դուրս բերեց ծաղրանկար և մելոդրաման վերածեց գրոտեսկային կատակերգության։ Լեմեթրը հեղափոխությամբ հաղթահարեց XIX դարի թատրոնի քաղքենիական բարոյախոսությունն ու ճաշակը։ Օսեյնը նույն գիծն է շարունակում նոր պայմաններում և այլ հանդիսատեսի համար ամենևին ոչ էսթետիկական հեղափոխություն անելու միտումով։ Այս բեմադրությունն ի վերջո ոչ ճաշակի չափանիշ է, ոչ էլ ուղղություն։ Դա փարիզյան թատերական կյանքի առօրեական մի էպիզոդ է ընդամենը և ուրիշ ոչինչ։

«ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ» ԼԱՏԻՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

Սեն-Միշել բուլվարից մտնում ենք Լյուքսեմբուրգ-յան այգի, դուրս գալիս Վոֆիրար փողոցը։ Լատինական թաղամաս՝ Փարիզի մտավորականության և ուսանողության կենտրոնը դեռ հնուց։ Դարձյալ ծանոթ բան կա, ծանոթ պատմությունից ու գրականությունից։ Ո՞ւր մնացին այսպես կոչված ժամանակակից կյանքի նշանները՝ հարուստ ու գունագեղ ռեկամներ, շքեղ վաճառատներ, մարդու աչքն զբաղեցնող և հոգին ամայացնող արվեստական լույս։ Լատինական թաղամասը կարծես այլ իրականություն է, թերեւս իմ փնտրած Փարիզը։

«Օդեոնի» մուտքի մոտ հավաքված հասարակության տեսքը խայտարղետ է՝ պարզ ու անշուք հագնված մարդիկ, համեստ գեմքեր, երիտասարդություն, միջին տարիքի մարդիկ, ծերեր, տարեց կանայք, պառակած ընկերուհիներ։ Թատրոնի ճեմարահում ու դահլիճում զգացվում է հնացած շքեղության շունչը։ Մթնոլորտը սալոնային չէ։ «Օդեոնը» նման է աղքատացած ազնվականի։ Շատերն առօրյա հագուստով են, ինչպես իրենց աշխատանքում կամ տանը։ Ոմանք, և պարտերում, և օթյակներում, նստած են վերարկուներով, շատերը վերարկուները գցել են աթոռներին։ Հանդերձարանը

վճարովի է, տոմսերը, մեր գների հետ համեմատած, քառակի թանկ, և ոչ մեկի գործը չէ՝ մարդը մրսում է, թե շոգում։ Մտիր թատրոն ինչ հագուստով ուզում ես։ Հագուստը վաղուց սոցիալական վիճակի նշան չէ, զուգված ու զարդարված թատրոն գնալը հնացած բան է։ Մարդիկ շքեղ ու հարուստ հագնված գնում են կաբարե, «Մուլեն-Ռուժ», «Լիբո», համենայն դեպս՝ ոչ «Օդեոն»։ Թատրոնի հասարակության համար արվեստն իսկապես առօրյա է, կենցաղի ու հոգսի բնական շարունակություն, ոչ տոն, արտասովոր վիճակ, ոչ զվարճալիք, ոչ էլ ինքնահարկադրանք, բարեկրթվելու կամ այդպես երեալու ճիգ։ Թվում է, այս ամենը չպետք է լինի անսովոր, և ես պետք է զգամ ինձ այս հասարակության մի մասը։ Բայց մենք սովոր ենք մեր թատրոնների հանդիսատեսի խնամված տեսքին և այն խավի ներկայությանը, որ ներքուստ առնչություն չունի թատրոնի ու գրականության հետ, հանդիսավայրեր է գնում իր հասարակական վարկը ներկայացնելու կամ ճշգրտելու համար։

Հին, քանդակագարդ ճեմարահի մի անկյունում, բուֆետի անմիջական հարեանությամբ, գրավաճառանոց է, թատերական գրականությունը հարուստ ու հետաքրքիր։ Իմ ուշադրությունն է գրավում գերասանական պլաստիկայի պատմական ու ժամանակակից փորձի բացառիկ մի ուսումնասիրություն՝ է։ Բարդի և Ն. Սավարեի «Դերասանի անատոմիան»։ Զնայելով գրանիս համեստությանը, գնում եմ այդ գիրքը, նաև Լուի Ֆուվեի «Դասական ողբերգությունը XIX դարի թատրոնում» նեղ մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող աշխատությունը։ Հարուստ ու մանրամասն են նաև թատերական ծրագրերը։ Դրանք ընդարձակ տեղեկություններ են պարունակում պիեսների բեմական պատմության ու ներկա մեկնությունների շուրջ։ «Վենետիկի վաճառականի» ծրագրում Շայլոկի գերակատար ժամ-Լյուկ Բուտեի լուսանկարին առընթեր

դրված են էդմունդ Քինի, Հենրի Իրվինգի, Դանիել Սորանոյի, Լոռուրենս Օլիվյեի նկարները։ Կապը պատմական անցյալի հետ, հեռու լինի, թե մոտ, ինչպես նկատում եմ, չի մոռացվում այստեղ։

«Վենետիկի վաճառականը» Լյուկա Ռոնկոնին բեմադրել է որպես դրամա՝ որոշ ողբերգօնական տոնայնությամբ, մասամբ օպերային բեմավիճակների ակնարկով։ Ռոնկոնին հայտնի է որպես Փարիզի լավագույն օպերային ռեժիսորներից մեկը։ Դերակատարների հիմնական կազմը «Կոմեդի Ֆրանսեզից» է, մյուսները, նաև բեմադրողը «Օղեռնից»։ Ուրեմն, այս ներկայացումով կարելի է պատկերացում կազմել ֆրանսիական թատրոնի այսօր ակադեմիական համարվող ոճի մասին։

Բեմադրության արտաքինը կարծես ավանդական է, գեղանկարչական պատկերը (գեկորատոր՝ Մարգարետ Պալլի, զգեստների նկարիչ՝ Վերա Մարցո)՝ պայմանական-խորհրդանշական։

— Ի՞նչ է նշանակում, ի վերջո, «տրադիցիոն», — ասում է կողքիս նստած կիւցի ռեժիսոր Վիկտոր Կիսինը։

— Դա ինձ համար պայմանական բառ է, — ասում եմ։
— Այնքան պայմանական, որ ավելի լավ է հանել գործածությունից։

— Թերևս, — պատասխանում եմ ես և մտածում, որ կան նաև մողեռն նախապաշարումներ։ Կայունացված որակումները մեզ կարող են մղել երբեմն մտքի շտամպների և գուցե սխալ վերաբերմունքի։

Ռոնկոնիի բեմադրության լույսը մեղմ է, գույները ռեմբրանդտյան, ընդհանուր նկարագիրը, եթե հետևենք բեմական ծանոթ դիբքերին ու անցումներին, թանգարանային։ Աս «Կոմեդի Ֆրանսեզի» ոգին է։ Դեկորը սակայն չի հուշում ակադեմիզմ։ Քարե ծանր, ստվարանիստ այուները գորշ ու դեղնավուն են, ինչպես փարիզյան հին շենքերի և միջնադարյան տաճարների ու պա-

լատների քարը։ Վենետիկյան միջավայր չի երևում։ Կարծես Սեն-Դենի դարպասի կողային մի հատվածը դրվել է բեմում, և գործողության վայրը Փարիզն է։ Ակադեմիական չէ նաև առարկաների թատերային խորհրդակերպումը (սիմվոլացում)։ Երեք անհայտ խոստումների տուփերը՝ ոսկե, արծաթե, կապարե, որոնք Պորցիայի թաքնված բախտի խորհրդանիշն են, այստեղ խոշորացված են, վերածված սնդուկների և, սա իմաստուն վճիռ է, կախված են օդում։ «Ով որ ինձ ընտրե, կշահե ինչ որ իղձն է շատերի»։ Ոսկե տուփի այս մակագրությունը վերաբերում է երկրային գանձին, որպես դժբախտության աղբյուրի։ Կապարե տուփի մակագրությունը բարոյական անձնագոհություն է ակնարկում։ «Ով որ ինձ ընտրե, պետք է ինձ համար տա և վտանգե իր բոլոր կայքը»։ Շեքսպիրի այս խոսքն էլ դարձել է ներկայացման միջանցիկ գործողությունը։

Զգեստները մուգ են՝ սևի ու դարչնագույն-շագանակագույնի գերակշռությամբ։ Պորցիայի զգեստը կապույտ է, երկնագույնի մոտ, մագերը՝ ոսկեգույն ալիքավոր։

— Այստեղ մի հրեշտակ ոսկե անկողնում պառկած է ներսը. տվեք բանալին, այս եմ ընտրում ես։

Մարքի իշխանի այս խոսքերը կարծես բեմադրողին մղել են խորհրդակերպ վճիռների։ Եվ ի՞նչ է տեղի ունենում բեմական արտաքին վիճակների խորքում։ Կոփվ կույր բախտի, մարդկային ճակատագիրը շրջող դիպվածի դեմ։ Պորցիայի դասական կեցվածքում և ողբերգական տոնայնության մեջ է մարմնանում այս գաղափարը։ Երկնագույնի ու ոսկեգույնի համադրվածությունը սրում է դիտողի ընկալունակությունը, առաջացնում հարմարավետության ձգտում, երկնային հեռավորության, պարզության ու լուսվյան գագում։ Բայց կա նաև գույնի պայմանական խորհուրդ, որ հին է։ Կապույտն ընդունվում է որպես երկնային արդարության, և ոսկեգույնը՝ աստվածային լույսի խորհրդանիշ։

Գունային այս խորհրդակերպությունը միջնադարյան է և արդարանում է ըստ վերարտադրվող իրականության ու դարաշրջանի:

Առարկայորեն խորհրդակերպված է նաև միջնադարյան հրեա վաշխառուի միջավայրը: Շայլոկը (ժան-Լյուկ Բուտե) նստած է մի մեծ սեղանի մոտ, որը ծածկված է արկելյան հնամաշ գորգերով: Սեղանի վրա երկու կշեռք կա, որոնցով նա կշռում է աշխարհի վաշխը: Ոսկու գաղափար-խորհրդանիշը ներկայացման մեջ գործում է երկու հակոտնյա իմաստներով՝ նյութական զորություն և երկնքից իջնող արդարության լույս, բախտի հրեշտակ՝ կերպավորված Պորցիայի ոսկեվարս երկությով: Դարձյալ հիշենք Մարոքի իշխանի խոսքը. «Անգլիայում կա մի ոսկե դրամ, հրեշտակի պատկեր վրան դրոշմած. այնտեղ հրեշտակը ոսկու վրա է»: Այստեղ և՛ ոսկին է երկիմաստ, և՛ կշեռք՝ շահի գաղափար և արդար դատաստանի գաղափար: Մարանք ինչ-որ պատահական նշաններ չեն ոչ պիեսում, ոչ էլ ներկայացման մեջ: Բեմադրողը Շեքսպիրին դիտել է իր իսկ խորանում դրված կանթեղով, խուսափել է կոպիտ արդիականացումից, չի փաթաթել նրա վզին մեր ժամանակի բարոյա-հոգեբանական հարցադրումները: Շեքսպիրի թիկունքում պատմական իրականություն կա. դա միջնադարն է, բայց ոչ այս հասկացության պատմա-ազգագրական, թանգարանային իմաստով: Ուսնկոնին հավերժական դաղափարների դիրքից է մոտեցել վերարտադրվող իրականությանը և գրական նյութին: Բեմադրությունն այս առումով բացառիկ է և իր ավանդական գույներով իսկ վայել XX դարավերջի թատրոնին:

Իսկ ո՞վ է դրամայի հերոսը. ոչ Վենետիկի վաճառական Անտոնիոն, որն ըստ հեղինակի, մարդկային դրական նախամկիզը է ակնարկում, ոչ էլ հրեա վաշխառու Շայլոկը, որի կերպարում բեմադրողները և դերասանները հաճախ զոհի գաղափար են փնտրել: Այս ներկա-

յացման հերոսը Պորցիան է՝ ճակատագրին կռիվ հայտարարած կինը: Բեմադրողն ընտրել է ամենաակտիվ գործող անձին և ձեռքը դրել է պիեսի ամենախոր ու խորհրդավոր կետին: Շեքսպիրի իմաստային խորքն անսահման է, և այնտեղ կարելի է շատ գաղափարներ գտնել: Խնդիրը գաղափարի գեղեցկությունն է: Ներկայացման գեղարվեստական բովանդակությունը շատ առումներով դրանով է պայմանավորված: Բեմադրողն այդ սկզբունքով է ղեկավարվել և ընտրել է իսկապէս գեղեցիկ գաղափար:

Պորցիայի դերակատարուհին՝ Քրիստինա Ֆերսանը քեմ է մտնում անհանգիստ ու սկեռուն, տագնապալի նախազգացումներով, հույսի խարիսխներ փնտրելով: Նրա տոնի ու կեցվածքի մեջ ընդգծված են ողբերգականի և դասականության ակնարկները: Դերասանուհու խոսքը երգային է, շեշտերն ամուր, քայլվածքը սահուն, դադարներն ու հենման կետերը որոշակի: Նա ձգում է ձայնավորները, անցնում մեղմ տոների, տոնային կոնտրաստներ ստեղծում, լուս: Դերասանուհու արտաքին վարքագծի տպավորությունն այնպիսին է, թե նրա հերոսուհին հենակետ է փնտրում: Նա ժամանակ առ ժամանակ հենվում է ծանրանիստ, քարե սյուներին, որպես անհաղթահարելի արգելքների: Սենտիմենտալ ակնարկներ չկան: Մեղմությունը նույնպես պակաս է: Մեղմ է նրա կողքին կանգնած ներիսան (Նատալի Ներվալ), որը կարծես Պորցիայի լիրիկական ստվերը լինի:

Այս Պորցիան նման է անտիկ ողբերգությունների հերոսուհու: Նրա տոնը և պլաստիկան հիշեցնում են Մեղեա: Այսպես է երեւում լեզվական շերտին անհաղթող հանդիսատեսիւ: Եվ կարծես չեմ սխալվում: Քրիստինան և՛ ողբերգականի նախասիրություն ունի, և՛ կերպավորման ոռմանտիկական գույներ: «Կոմեդի ֆրանսեզի» բեմում նա խաղում է Մեղեա (Եվրիպիդեսի ողբերգությունում), Մարի Թյուդոր, Մարի Սոյուարտ:

Քրիստինան լայն դիապազոնի դերասանուհի է: Նրան հավասարապես մատչելի են և՝ Մարիվոյի հոգեբանական կատակերգությունները, և՝ Գորկին, և՝ Բրեխտը, և՝ Մաքս Ֆրիշը: Դերասանուհու հոգեբանական ճկունությունը երևում է այս ներկայացման երրորդ մասում (IV գործողություն), երբ հայտնվում է տղամարդու զգեստով, որպես երիտասարդ փաստաբան, ամրաքայլ, թեթև ու վճռական և լուծում է Անտոնիոյի բախտի մուլթ հանգույցը: Բասանիոն, որին դերասան Ռիշար Ֆոնտանը ներկայացնում է նույնպես վճռական, բայց անշրջահայտ բնավորություն, անելանելի վիճակներում սրտնեղող, ենթարկված է Պորցիայի կամքին: Դժվար է ասել, սա միայն խաղայի՞ն վճիռ է: Որքանով է ճիշտ իմ տպավորությունը, չգիտեմ: Մի պահ թվաց, որ Ռիշարի խաղը դեկավարում է Քրիստինան: Տեսարաններից մեկում Ռիշարը մեկ փայրկյան ուշացրեց մուտքն ու ռեպլիկը, և խաղընկերուհին դժգոհ շշուկով մի ասաց՝ «ո՞ւր ես կորել», կամ նման մի խոսք: Խաղային սայթաքումը պատահական էր, իհարկե: Հստ բեմադրական իրադրության, Բասանիոն իմաստավորվում է Պորցիայի գոյությամբ, և պիեսում էլ դրա հիմքը կա:

Պորցիայի ախոյանը չար դիպվածն է՝ եվրիպիթեսյան «տյուխեն», փոթորկի վերածվելիք պատահականությունը, որը պիեսի առաջին տեսարանում ակնարկվում է Սալարինոյի խոսքերով և ապա իրականանում որպես Անտոնիոյի դժբախտությունը: Մարդը կարող է խաղալիք դառնալ դիպվածի ձեռքին, բայց պետք է ի վերջությունի պատահականության հանգույցը: Պորցիան հանդես է գալիս որպես կամքի ազատության կրող: Սա կատարելապես ռենեսանսյան և շեքսպիրյան հայացք է: Իսկ նախախնամությունը նստած է օդից կախված երեք սնդուկներում և եռաղեմ է, ինչպես շահի աստվածությունը՝ Յանուսը, որի անունը տրված է պիեսում, և բեմադրողը բռնել է այդտեղից: Յանուսն է Պորցիայի,

Անտոնիոյի ու Բասանոյի ռեալ ախոյանը, որ գործում է վաշխառու Շայլոկի տեսքով:

Բեմադրության մեջ Անտոնիոն և Շայլոկը ներկայանում են որպես բարոյական հակոտնյա սկզբունքների մարմնավորում, և եթե բախտն աներեսույթ է, ապա շահը կոնկրետ է: Մի կողմում կանգնած է Քրիստոսի նահատակը, մյուս կողմում քրիստոսավաճառը: Ուկեմազ ու լուսաղեմ Անտոնիոն (իվ Լամբրեխտ) նման է անպաշտպան կանթեղի, որ փչելով կարելի է հանգժնել: Շայլոկը (Ժան-Լյուկ Բուտե) սեազգեստ է, նիհար, ձեռնափայտով քայլող, քառասուն տարեկանից ոչ մեծ, եռանգուն ու հանգիստ, վստահ, զուսպ և ներքուստ անպատկառ: Բուտեն զուսպ դերասան է, ներքին կերպավորման վարպետ, ոճով ռեալիստ և այժմեական: Նրա Շայլոկը վտանգավոր էակ է, չքացահայտված, ինչպես պաղած օձ: Կարծես ասում է՝ հեռու մնացեք ինձանից, չտրորեք ոտքս: Խղճի գոյության ոչ մի նշան: Ոչ մի կետում նա չի բացում հոգին, իր վիրավորվածությամբ կարեկցանք չի հայցում և չի էլ պարտվում: Նա համառ է, ամուր, արհամարհում է զոհին և հեռանում է նրա ճանապարհից ոչ հարկադրված (թեպետ նրան հարկադրում են), այլ այնպես, կարծես չի էլ տեսնում իրեն արգելակող ուժը: Թվում է անգամ, որ նա հարազատ հայրը չէ Ձեսիկայի՝ ջրի կաթիլի նման պարզ ու արծաթաձայն աղջկա (Պաուլինա Մարսիա): Դերասանը դրամատիկական շեշտը առաջին պլան չի բերում, չի դարձնում խաղային մոտիվ: Նա պարզապես ներկայացնում է մարդկային մի բնավորություն, որ վիրավորվածության արդյունք է: Վաշխառուն չարագործ է, և նրա դրսերումը պետք է կանխվի: Այս է թերևս բեմադրողի ու դերասանի միտքը: Բուտեն իհարկե միապլան վարքագծի դերասան չի և ներհար է բաց խաղին: Նրա ցույց տված դրամատիկական անհանգստությունը խաղի չի վերածվում և ավելի շատ վիճակի ակնարկ է,

քան բնավորության հատկանիշ։ Այս Շայլոկը մաղձուտ է, հավասարակշիռ, անտարբեր, և դերասանի խաղում չկա թատերային ընդգծում, միտումը ամեն գնով տեսանելի դարձնելու նշան։ Բուտեն ավելի շատ պոտենցիալ, քան ակտուալ վիճակների նախասիրություն ունի՝ դերասանի կատարելապես այժմեական նկարագիր։

Տպավորիչ է դատի տեսարանը բեմադրական և գեղանկարչական առումներով։ Անտոնիոն ճերմակ, կուրծքը բաց չափիկով, ինչպես անպաշտպան նահատակ, պառկած է սեղանին։ Սա կարծես Քրիստոսի գոհասեղանը լինի։ Անտոնիոն հաշտ է մահվան հետ, փակել է կյանքի հաշիվները։ Նա ոչ թե պառկած է, այլ դրված է սեղանին որպես դիակ, բարոյականության գոհ։ Դերասան իվ Լամբրեխտը խոսում է այս տեսարանում մեղմ, քաղցրաձայն։ Անտոնիոն իր ճակատագրին է հանձնվել կամազոր և թվում է՝ պատրաստվում է համբարձման։ Սեղանը շրջապատել են սևազգեստ, անտարբեր դատավորները։ Պատկերը հիշեցնում է Ռեմբրանդտի «Դոկտոր Տյուլպի անատոմիան»։ Բժիշկ-վարդապետի դեմքը բազմացված է, և հոգու իրավունքից ազատված մարմինը շրջապատել են իրավունքի մագիստրոսները։

Սա, ըստ իս, ներկայացման ամենազորեղ պատկերն է, ավելի իմաստալից ու լեցուն, քան անտիկ ողբերգություն հիշեցնող առաջին տեսարանները, քան ներկայացման ավարտակետը։ Երջանիկ հանգուցալուծումը հանգում է վերջին երջանիկ տեսարանին, որ ընդամենը գրական սյուժեի ավարտն է՝ ըստ կատակերգության միջնադարյան և ռենեսանսյան կանոնի։ Իսկ բեմական բովանդակության ամենալեցուն կետն այս է։ Դրամատիկական ակտիվության կրողն այստեղ Գրացիանոն է (Բեռնար Բուլե), որ պոռթկացող, անհավասարակշիռ իտալացու նման կորցնում է հավասարակշռությունը։ Դերասանի ներսում իսկապես էմոցիոնալ թափ կա և

դա պոռթկում է ներկայացման այնպիսի պահի, երբ հանգույցը լուծված է։ Գրական սյուժեի սահմանում գործում է դերասանական մեկ ինքնուրույն խաղային սյուժե՝ հոգեբանորեն անսպասելի և բոլոր առումներով արդարացված։

Ըստ տեքստային բովանդակության, Շայլոկը երկու սայր ունի։ Նա գալիս է ինչ-ինչ արդարացումներով՝ ցեղային ու կրօնական վիրավորվածության մոտիվներով և միաժամանակ նենդ մտադրությամբ։ Ներկայացման մեջ Շայլոկի ճակատագրին դրամատիկական նշանակություն չի տրված և բարոյական հաղթանակ չի ակնարկվում։ Դրամատիկական կենտրոնը Անտոնիոն է, հերոսուհին՝ Պորցիան, գործող ուժը՝ ճակատագիրը։ Կույր բախտ, չարազետ դիպված և՝ փրկության հրեշտակի հայտնություն։ Ասել է՝ ո՞վ մարդ, հեռու մնա հախ ու հաշվից, պարտք ու խոստումից, մի դիր կյանքդ խաղաքարտի վրա, հեռու այն աշխարհից, որը քոնը չէ և հայտնի չէ, թե ինչ է թաքցնում։ Սա իրականության կատակերգական իմաստավորում է, կատակերգություն ողբերգականի հնարավորությամբ։

Ներկայացումն ավարտվեց։ Ծափահարություններին ի պատասխան վարագույրը բացվեց դժվարությամբ։ Վարագույրը բացվեց տեսական ծափահարություններից հետո, երբ համոզվեցին, որ հանդիսատեսն իսկապես բեմ է հրավիրում դերասանին։ Ոչ մի նախապես բեմադրված խոնարհման տեսարան։

Թարգմանչուհի Մարտինե Ներոյի ուղեկցությամբ անցա կուլիսներ։ Մի քանի սիրալիր խոսք՝ դերասան Ֆրանսուա Շոմեթի հետ, որ խաղում էր Արագոնի իշխանի դերը։ Նա կլիներ վաթունն անց։ Համեստ ու զվարթ բնավորության մարդ էր։ Անակնկալ ծանոթությունը նրան մի քիչ շփոթեցրեց։

— Այսպես լավ չեղավ, — ասաց, — մենք պետք է շամպայն իսմեինք։

Նա ցանկություն ուներ երկար խոսելու, բայց ուշ ժամ էր արդեն: Մաղմուազել Մարտինեն, նկատելով, որ ինձ շատ է տրամադրել ներկայացումը, ասաց.

— Հենրիկ, թերևս տրամադրի եք հոգված գրելու այս բեմադրության մասին:

— Գրելու եմ, իհարկե, — պատասխանեցի:

Դրսում, գերասանական մուտքի սանդուղքների վրա Մարտինեն ինձ ներկայացրեց Ժան-Լյուկ Բուտեին: Զուսպ, ամոթիւած ու մտահոգ էր երեսում Շայլոկի դերակատարը: Կլիներ մոտ քառասուն տարեկան: Զեռքին նույն ձեռնափայտն էր, ինչ բեմում: Նայում էր ինձ հոգնած ու կարծես մեղավոր հայացքով: Ես սեղմեցի նրա ձեռքը շնորհակալության ընդհանուր խոսքերով, թեպետ ավելի շատ բան ունեի ասելու: Կիսամութի մեջ ինձ էր նայում կարծես Հենրի իրվինգի նկարը:

— Նման եք իրվինգին, — ասացի:

Նա ժալտաց հոգնած ու տիսուր: Չիմացա, դուր եկավ նրան իմ ակնթարթային տպավորության տակ ասված խոսքը: Երկար խոսելու տեղը չէր: Քաղաքավարական ընդհանուր խոսքերով բաժանվեցինք:

Լյուքսեմբուրգյան այգու կողքով քայլեցինք մինչև Ռոստանի հրապարակ: Ներկայացման իմ ընկալումը մաղմուազել Մարտինեն համարեց հնարավոր, յուրօրինակ և սուլյեկտիվ: Ես չառարկեցի:

— Որքան էլ պիեսը լավ իմանամ, — ասացի, — դորձողության խոսքային շերտն ինձ համար մնում է անմատչելի: Հնարավոր է, որ իմ սեփական մտքերը վերագրում եմ ներկայացմանը: Եթե անդամ այդպես է, դարձյալ քիչ է փոխվում վիճակը. Ներկայացումը համահնչուն է լեզվական շերտը չըմբռնող հանդիսատեսի մտքին:

— Հնարավոր է, — ասում է նա, — յուրաքանչյուր ոք հասկանում է յուրովի:

— Անպայման, — պատասխանում եմ, — և լեզվական շերտն էլ շատ անդամ դեր չի կատարում. նայած ով

ինչ է կրում՝ մտավոր կամ հուզական ինչ բեռով է մտնում թատրոն: Արվեստի երեսույթը մեզ հնարավորություն է տալիս փնտրելու կամ հայտնագործելու մեր սեփական մտքերը, ոգեկոչելու նիրհած զգացմունքները: Այս դեպքում բեմադրողի մտահղացումը և իմ ըմբռնումը կարող են իսկապես տարբեր լինել:

— Այն, ինչ մտածում եք, — ասում է Մարտինեն, — դրեք և ուղարկեք մեզ. կհրապարակենք:

— Թերևս, — պատասխանում եմ, — եթե դա կարող է հետաքրքիր լինել:

Խարհը՝ տաճար: Այո, բայց «տուն աղօթի՞ց», թե՞ սոսկ գործատուն, աշխատանքի տեխնիկական միջավայր:

Մտնում ենք մի քառանկյունի, մեծ սրահ: Տասնյոթ մետր երկարություն, տասնչորս լայնություն, վեց ու կես մետր բարձրություն և երկու հարյուր տեղ: Սա փոքր դաշլիճն է: Այստեղ գերիշխում են գորշ, սև, գորշակապտավուն գույները: Ամեն ինչ կարծես հարմարավետ է, կենտրոնացնող, չգրգռող, բայց պաղ: Երկու կողմերից անկյուն են կազմում հինգ կարգ, աստիճանաձև, փափուկ նստարանները: Երկու աղատ պատերի անկյունում կախված կուլիսային վարագույրները հիշեցնում են, որ բեմական տարածությունն սկսվում է անկյունից և միտում է կենտրոն: Տեսարանը ենթադրում է երկու «հայելի» առանց կամարակապի՝ պորտալային շրջանակի: Հրապարակի կենտրոնում կանգնած դերասանը լինելու է անկյունահայաց վիճակում: Դա բացառում է, այսպես կոչված, բալետային երրորդ դիրքը, որ ավանդական, հարթապատկերային բեմահայելու թելագրանքն է: Հիշենք թատրոնի հին վարպետների լուսանկարները՝ մի ոտքն առաջ, մյուսը ետ, աջ ուսն առաջ, հայացքը դիմացի միջին բարձրության օթյակին կամ պարտերի առաջին կարգից դեպի բենուար, անորոշ ներշնչանքի դիմախաղով: Այս դաշլիճն ինքնին բացառում է ավանդական հարթապատկերային միզանսցենը և դերասանի կեղծ դիմահայեցությունը: Ես ծոցատերում գծում եմ դաշլիճի պատկերը:

— Կարող եք և չգծել, — ժպիտով ինձ է դիմում թատրոնի դիրեկտորը՝ Ժորժ Լավելին, — մենք ձեզ կտանք բոլոր տեխնիկական տվյալները:

Լավելին մոտ է միջին տարիքի, թերեւս հիսունից պակաս: Դեմքը հանդիսաւ է և լուրջ, ժպիտներ չի շռայլում:

— Եթե այստեղ չկա որևէ մեկը «կոմեդի ֆրանսեղ»՝ ասում է, — կարող ենք աղատ խոսել:

ԱՎԱՆԳԱՐԴԻՍԸԸ

Մալտե-Բրյուն փողոցում, Պեր-Լաշեզի բլրից ոչ հեռու կառուցված է Փարիզի հինգերորդ պետական դրամատիկական թատրոնը՝ «Թեատր դե Լակոլին», որ կարելի է թարգմանել «Բլրամերձ թատրոն»: Սա առաջին պետական էքսպերիմենտալ թատրոնն է Ֆրանսիայում, գուցե և ամբողջ եվրոպայում: Էքսպերիմենտալ թատրոններ շատ կամ հայտարարված և չհայտարարված: Այս մեկը հայտարարված է և պետական: Եթե ֆրանսիայի առաջին պետական թատրոնը՝ «Կոմեդի ֆրանսեղը» փորձարարության վայր չէ, ապա այս մեկն էլ ավանդականության ապաստան չէ:

Մուտքը, նախարարակը, սանդուղքները և ամբողջ ներքին միջավայրը հիշեցնում են գործարան, լաբորատորիա, հաշվողական կենտրոն կամ որևէ նման բան՝ ի հեճուկս ավանդական թատրոնի հիշատակի: Իսկ երգծանոթացանք ու զրուցեցինք թատրոնի դիրեկտոր և դլխավոր բեմադրիչ ժորժ Լավելիի հետ, ինձ համար պարզ դարձավ, որ այստեղ ամեն ինչ արված է ի հակադրություն «Կոմեդի ֆրանսեղի»:

Թատերական էքսպերիմենտն սկսվում է շենքից: Դա կյանքի ու աշխարհի ներփակ պայմանաձևն է, դերասանի հոգու տաղավարը, գաղափարի խորհրդակերպ աշ-

Լավելին «Կոմեղի Ֆրանսեզում» հասունացած բեմադրիչ է: Կորնեյջի «Պոլիկտոսը», որ նրա բեմադրությունն է, ոճով դասական է և խաղացվում է գրեթե ամեն շաբաթ: Լավելին այժմ հեռացել է իր մայր թատրոնից, և առաջին իսկ խոսքից երևում է, որ ձախ ուղղության արվեստագետ է, ավանդարդիստ:

— Զեր երկրում կա՞ն էքսպերիմենտալ թատրոններ,— հարցնում է նա:

Տիրում է անորոշ ու անհասկանալի լուռեթյուն: Իհարկե կան: Փարիզ թռչելուց առաջ Մոսկվայի մետրոյի կայարաններից մեկում մի երիտասարդ փակցրել էր աֆիշը պատին՝ իոնեսկոյի «Ճաղատ երգչուհին», և տոմսերի կապոցը ձեռքին կանչում էր՝ «անտիդրամա, անտիդրամա...»: Չէր մոռանում նաև հիշեցնել՝ «Էքսպերիմենտալ, երիտասարդական»:

Լուռեթյունը խզում եմ.

— Երկու էքսպերիմենտալ թատրոն կա երևանում:
— Պետակա՞ն, թե՞ մասնավոր,— հարցնում է Լավելին:

— Պետական:

Լավելին ավելի լրջացավ ու նայեց ինձ ներքին հարդանքով, որպես թատերական նորագույն ձգտումների վկայի: Կա մի տեղ, ուրեմն, որտեղ ձախ փորձարարներն ավելի շուտ են պետական հովանավորություն ստացել: Այստեղ են ասում «տվել անցել ենք»:

— Ի՞նչ պիեսներ են բեմադրվում ձեր էքսպերիմենտալ թատրոններում,— շարունակեց Լավելին,— դասակա՞ն, թե՞ այժմեական:

— Եվ դասական, և այժմեական,— ասացի, — ինդեռը ըմբռնումն ու վերարտադրության սկզբունքն է:

— Հասկանալի է,— ասաց Լավելին:

Հասկանալի չէ, մտածեցի: Եվ իհարկե չասացի, թե անհասկանալի է ինձ համար մեզանում գործող երկու նկուղային և կիսանկուղային թատերական միավորների

բուն նպատակը, ոչ գեղարվեստական ծրագրի առումով: Ջրույցը ժորժ Լավելիի հետ տևեց մեկ ժամից ավել:

Նրա հիմնական միտքն այն էր, որ էքսպերիմենտ նշանակում է դրամատուրգիական նոր, բեմական ավանդներով չծանրաբեռնված նյութի փորձարկում, բեմադրական նոր սկզբունքների որոնում բեմ չտեսած պիեսների, ոչ թե դասական գործերի հիման վրա: Նա թվարկեց բեմադրության պատրաստվող պիեսների անունները. Լորկա՝ «Հասարակություն», Կոպի՝ «Անժամանակ այցելություն», Գերտ Հոֆման՝ «Բալզակի ձին», Արաբալ՝ «Կայսրության մետամորֆոզը», Բուրգե՝ «Ունկնդրում», Իոնեսկո՝ «Աթոռներ»: Ի դեպ, այս վերջինի բեմադրողն է Ժան-Լյուկ Բուտեն՝ Շայլոկի դերակատարն «Օղեռնում»: «Կոմեղի Ֆրանսեզում» նա բեմադրել է Մոլիեր՝ «Քաղղենին ազնվական», ավանդական համարվող ոճով: Բուտենի խաղի սկզբունքն ինձ համար հասկանալի է և ընդունելի՝ զուսպ, կոնկրետ, նպատակալաց, պարզ, հավասարակշիռ, հուզական ցույցերից և անհարկի ընդգծումներից հեռու: Եթե դերասանական այս մաներայի կրողն ընդունելի է Լավելիի թատրոնում, և դա կարող է գառնալ ելակետ, ամեն ինչ հիանալի է: Բայց թատրոնը նոր է բացվում, և չենք դիմել ոչ մի փորձ կամ ներկայացնում: Խոսքից ու դիմովող լուսանկարներից բացի մեզ ոչինչ չի մնում: Լուսանկարները հուշում են դրամատիկական սրություն, դիմամիզմ, ձեերի սյուրուեալիստական շեշտվածություն: Բայց ահա «Պոլիկտոսի» տեսարանները հուշում են կլասիցիզմ: Հստ երեսույթին, եթե նկատի առնենք նաև Լավելիի խուսափելը դասական պիեսների թիկնոցից ու քղանցքից, դասականները ենթակա չեն էքսպերիմենտի: Փորձեցի ծշտել իմ կուահումը.

— Մյուսյե Լավելի, ձեր թատրոնում ընտրված բեմադրական սկզբունքներն ինչո՞վ են տարբերվում «Կոմեղի Ֆրանսեզի» սկզբունքներից:

— Դա պիեսից է կախված, — պատասխանում է Լավելին:

— Հնդունո՞ւմ եք հոգեբանական ճշմարտությունը որպես դերասանի արվեստի տեխնոլոգիական հիմք:

— Հոգեբանության դրսեղորման չափերն ու ձևերը տարբեր են, — պատասխանում է Լավելին: — Իմ ելակետը պիեսն է: Ես ելնում եմ խոսքային կառուցվածքի թելադրած հոգեբանությունից:

Զգիտեմ, ճի՞շտ է թարգմանվում մեր զրույցը, թե ոչ: Թվում է, Լավելին հետեւում է ֆրանսիական թատրոնում մինչ այժմ ընդունված ու պաշտպանվող սկզբունքին՝ հեղինակային խոսքը որպես հիմք, դերասանական վարքագծի կողմնորոշիչ: Այդ էր ասում «Կոմեդի Ֆրանսեզի» դերասանուհի Կատրին Մալվիան: Նույն էր հաստատում «Օրանժերի դե Սո» թատրոնի ռեժիսոր Ժակ Նիշեն: Ես փորձում եմ անուղղակի ճանապարհով մոտենալ խնդրին.

— Ի՞նչ կարծիքի եք Մաղլեն Ռոբինսոնի մասին: Բատիս, նա հոգեբան է և՛ Ռասինի, և՛ Կոկտոյի ու Մարտրի պիեսներում:

— Այո, Մաղլեն Ռոբինսոնը մեծ դերասանուհի է, — ասում է Լավելին:

— Նրա տիպի դերասանուհին տեղ կունենա՞ր ձեր թատրոնում:

— Մաղլենն ունի իր թատրոնը:

Լավելին խուսափում է կոնկրետ պատասխանից: Ես մտածում եմ, որ այստեղ առանձնապես ցանկալի չեն նախաձեռնող դերասանները, պետք են ռեժիսորական մտահղացմանը ենթարկվողներ: Բայց համառում եմ, իմանալով, որ դարասկզբի բեմական արվեստի նորարարները բեմադրական սկզբունքներ մշակելուց առաջ և նոր հեղինակների դիմելուց բացի, թարմացրել են դերասանական խաղի տեխնոլոգիան: Անդրե Անտուանից մինչեւ Շառլ Դյուլեն խաղը պարզեցվել ու պարզեց-

վել է, թոթափել բոլոր սալոնային պայմանական զարդարանքները, նատուրալիզմից հասել հոգեբանական ու եալիզմի մաքրության, հանգել ինտելեկտուալիզմի: Իսկ Ժան Վիլարը, Ժան Լուի Բարրոն, Մաղլեն Ռոբինսոնը, որոնք Դյուլենից են գալիս, մնացել են կենսունակ: Փափազյանն էլ է հիացել Մաղլենի արվեստով:

Հնտրում եմ այլ համեմատական՝ Դյուլենի դպրոցի հետեւորդ Բարսակին:

— Նա հետպատերազմյան շրջանը սկսող արվեստագետ է, — պատասխանում է Լավելին:

— Նրա թատրոնը համարում եք Հնացա՞ծ:

— Այո:

Զրույցը շարունակելն ավելորդ էր: Անդրե Բարսակը ավանդարդիստների կողքին ավանդարդիստ չգարձավ, մնաց հոգեբանական ու եալիզմի հետեւորդ: Լավելին, ըստ երկույթին, չէր ուզում շատ տարածվել կամ հակադրվող երկալ: Ֆրանսիացու նրբանկատություն: Նկատել էի, որ այստեղ բանավեճերն առանձնապես ընդունված չեն: Արվեստի մասին ամեն խոսակցություն սկսվում է այն ժամանակ, երբ առկա է բուն արդյունքը:

— Չեմ նախանձում այն դերասաններին, — ասաց Վիկտոր Կիսինը, — որոնք աշխատելու են այս թատրոնում: Սա, ինձ թվում է, ռեժիսորական նպատակների, ոչ թե դերասանական արվեստի թատրոն է:

— Թերեւս, — ասացի, — չշտապելով համաձայնել նրա հետ:

Մեր զրուցակիցը դարձավ թատրոնի ինժեները՝ Նոել Նապոն, մի ինքնամոռաց էնտուզիաստ, էությամբ իսկական արտիստ: Նոելը մեզ տարավ մեծ՝ 757 տեղանոց դահլիճը: Տեխնիկապես կատարյալ բեմ, բարդ պլանշետով ու աշտարակով: Հարթակները կարող են իջեցվել, բարձրացվել, առաջ քաշվել, դուրս բերվել բեմատուփից, զբաղեցնել պարտերը: Շտանկետները կախված են պտու-

վող առանցքներից և կարող են շրջվել, պտտել դեկորային պատկերը և դնել ցանկացած անկյունով։ Բեմն ունի իր ջրմուղ համակարգը, ներքին ավազանով, որը կարող է բարձրացվել վեր։ Նոելը ներշնչված է իր գործով, ձգտում է ցույց տալ ամեն ինչ, պատմել ամեն ինչի մասին։ Եվ խոսում է ու խոսում՝ ֆրանսերեն, անգլերեն, մի քիչ էլ ուսերեն։

Չնաելով բեմի ու դահլիճի բոլոր անկյունները, զարմանալով տեխնիկական հնարամտությունների վրա, դիտելով դերասանական զարդասենյակները, դեպի բեմ տանող, անխափան աշխատող վերելակները, մտանք տեխնիկական լաբորատորիան, ապա՝ էլեկտրոնային կառավարման կենտրոն։ Հարցրեցի, թե հնարավո՞ր է արդյոք ներկայացման տեխնիկական պարտիտուրը (վարագույր, դեկորների փոփոխում, լույս, ձայն) ենթարկել էլեկտրոնային ավտոմատ կառավարման։ Դա շատ պարզ բան է և չի սպառնում դերասանի ստեղծագործական ազատությանը։ Էլեկտրոնային մեքենան կարող է ծրագրում ունենալ ինչպես ներկայացման բոլոր պայմանանիշերի, այնպես էլ դերասանական ռեալիզների կողերը և գործել հետեւելով խաղի տեմպառիթմին։

Նոելի համար անհնարին ոչինչ չկա, և ամեն հարց ունի իր սպառիչ պատասխանը։

— Այսպիսի թատրոն չեք տեսնի ոչ մի տեղ, — ասում է նա, — սա բացառիկ է, առայժմ միակը Եվրոպայում։ Ես խոսում եմ տեխնիկայի մասին։ Ինչ կլինի արվեստը…

Նոելը տարածեց ձեռքերը.

— Դա կտեսնենք հետո։

— Որքա՞ն է ծախսվել այս թատրոնի կառուցման վրա, — հարցրեց մելք։

— Հարյուր միլիոն ֆրանկ։

Այս խոսքերով մեզ ճանապարհեց նորագույն թատրոնի էնտուզիաստ ճարտարագետը, մեր ձեռքը տալով

տեխնիկական գրավոր տվյալները և շենքի աքսիոնոմետրիկ կտրվածքի պատկերը։

* * *

Հ. Գ. Ժամանակ անցավ՝ մեկ ու կես տասնամյակ, և Փարիզի պետական էքսպերիմենտալ թատրոնը նոր եղանակ չստեղծեց, եղավ սովորական մի թատրոն Փարիզի հարյուրից ավել թատրոնների շարքում։ Այժմ այնտեղ ամեն երեկո ներկայացվում է Զեխովի «Իվանովը», Ալեն Ֆրանկովի միզանացենով։ Նոր ժամանակների անորոշության մեջ ի՞նչ է մնացել ավանդարդիստ արվեստագետին, եթե ոչ քննել ինքնապանության փիլիսոփայությունը, որին նյութ են տալիս XIX դարավերջի ուսւահենակն ու ներկայիս նուսաստանը։

* * *

Իսկ ի՞նչ էր անում «Կոմեդի Ֆրանսեզից» հեռացած մյուս «ավանդարդիստը»՝ ժան-Պիեռ Վենսանը Վիյորքանի «Ազգային հանրամատչելի թատրոնում»։

Լիոնի Յակոբինյան հրապարակից մինչև Վիյորքան ավտոբուսը դանդաղ ընթացքով հասավ յոթ ըսպեկտ։ Սա կարծես քաղաքի մի թաղամասն է՝ առանձին քաղաք իր առանձին մունիցիպալիտետով։ Լիոնը Փարիզի պրովինցիան է, Վիյորքան՝ Լիոնի պրովինցիան Լիոնի կենտրոնում, իր իսկապես պրովինցիալ թատրոնով…

Պարոն Վենսանը մեզ՝ «ոռւսներիս» չընդունեց։ Մեզ դիմավորեց նրա ասիստենտը բեմի կիսախավարում և ոտքի վրա երկար-բարակ պատմեց ավստրիացի գրամատուրգ Թոմաս Բերնհարդտի «Թատրոնի մարդը» պիեսի սյուժեն։ Վերջին փորձն էր սկսվելու, և նա մեզ տարավ հանդիսարակած։ Վենսանը նստած էր ոեժիսորական սեղանի մոտ։ Ասիստենտը նրան հիշեցրեց մեր մասին։

Վենսանը երեսն անգամ չշրջեց: Նա փայտե մուրճիկը երեք անգամ խփեց սեղանին և չոր ու բարակ ձայնով հրաման արձակեց.

— Entrez.

Վարագույրը բացվեց: Տեսարանը ներկայացնում էր գավառական հյուրանոցի մի սենյակ, աղքատ ու անհրապույր, և դա դեկորների մաշվածքն ու աղքատությունն էր, ոչ թե նկարչի գործը: Նույնքան անգույն ու անհետաքրքիր էր բեմադրությունը՝ մաշված, կրկնված միզանացեն, խոսքի անհետաքրքիր տոն. պիեսի հերոսը խոսում է ու խոսում, և՝ ոչինչ խոսքից գուրս, իսկ մյուս գործող անձինք, որ հերթով ելումուտ են անում, լսում են անվերաբերմունք ու անարտահայտիչ: Բոլորի խաղից բուրում է հոգնածություն ու ձանձրույթ: Այսպես խաղում էին մեր Արտաշատի թատրոնում քառասուն տարի առաջ: Ահա քեզ «ավանդարդ»: Դահլիճում նստած դերասանները շատ գոհ էին, հիացած: Մեր դիմաց պարոն Վենսանի թիկունքն էր ու բարակ վիզը: Նա նստած էր անշարժ, փայտե արձանի նման: Փորձը ոչ մի անգամ չընդհատեց: Գործողության վերջում միայն, երբ մոռացել էին փակել վարագույրը, նա իր չոր ու բարակ ձայնով ճչաց.

— Entracte.

Այս էր:

— Ի՞նչ եք կարծում, — շշուկով մեզ դիմեց Միխայիլ Շատրովը, — մնա՞նք, երկրորդ գործողությունն էլ տեսնենք: Ես գնում եմ, դուք կարող եք մնալ:

— Գնանք, գնանք, — ասացի:

Ոչ մեկը ցանկություն չուներ տեսնելու երկրորդ գործողությունը, մանավանդ, որ դիրեկտոր-բեմադրիչն էլ ցանկություն չուներ մեզ տեսնելու: Սուսուփուս դուրս եկանք առանց այդ մարդու երեսը տեսնելու: Իսկ Լիոնի Գասպարեն փողոցում, ուր մեր հյուրանոցն էր, ներկայացում էր: Բարակ մաղում էր անձրես, և թաց

սալահատակին գլխապտույտ ցատկում էին, միմյանց ուսերի վրա բարձրանում կրկեսի արտիստները, շրջանաձև պտտվում էր ճերմակաձի աղջիկը, բոժոժները զնդզնդացնելով փող էին հավաքում երկու ծաղրածու, և թմբուկ էին զարկում ու սաքսոֆոն փչում երաժիշտները:

— Ահա քեզ թատրոն, ի՞նչ ավանդարդ, ի՞նչ բան...

ԱՐԵՎԱՅԻՆ ԹԱՏՐՈՒՆ

«Դյու Սոլեյ» նշանակում է արևային: Ի՞նչ արև, Փարիզում հիմա աշուն ու անձրև է: Խոնավ, ամպամած երեկոյին հեռացել ենք մեծ քաղաքի կենտրոնից, թողել բուլվարներն ու հրապարակները, գունագեղ ոեկամների արվեստական լույսը: Ո՞ւր ենք եկել: Ի՞նչ թատրոն այս մութ, թաց ծառուղիներում:

Ինչ-որ ծածկի տակ կանգնած է մի ավտոմեքենա: Երկու երիտասարդ անիվն են փչում:

— Որտե՞ղ է թատրոնը, — հարցնում է մեր ուղեկցուհին՝ Մարինա Ստանիսլասը:

— Այստեղ է, մադամ:

— Այստե՞ղ...

— Մի քանի քայլ և աջ:

Կանգ ենք առնում անորոշ մի շինության երկաթե դռան առջև: Մարինան սեղմում է զանդի կոճակը: Դուռը բացում է մի տարեց մարդ, ճաղատ ու կլորադեմ:

— Օ, ներս համեցեք, մադամ, — ասում է նա հին ծանոթի նման: — Եկեք, եկեք, պարոնայք, այստեղ տաք է:

Մտնում ենք ընդարձակ, վատ լուսավորված և անշուք մի սրահ: Անկյունում գրքած են դատարկ շշերի արկղեր: Դուան կողքին վառվում է երկաթե գլանած վառարանը: Երկու հոգի տաքանում են վառարանի

մոտ: Սրահում տարածված է եփվող բրնձի հոտ: Ճանապարհը կորցրել, ուրիշ տեղ ենք ընկել:

— Թեյ, թեյ խմենք, պարոնայք, — ասում է մեր անձանոթ հյուրընկալը, գնում է բաժակներ բերում և մեծ թերմոսը դնում մեր առջեւ:

— Հնդկական թեյ:

Մթնոլորտն այնքան շփոթեցնող չէ, որքան զվարճալի: Մեր ընկերներից մի երկուսն սկսում են թեյ խմել՝ շփոթված, ճարահատյալ ու տարակուսած: Հնդկական թեյ, կաթով ինչ-որ գորշագույն, տաք հեղուկ: Ի՞նչ եղավ թատրոնը:

Սրահի ներսի դուռը բացվում է, մտնում է մի երիտասարդ, բարեկում ֆրանսիացու սիրալիր ժպիտով և ցածր, կարծես ներողություն խնդրող տոնով դիմում մեր հյուրընկալին:

— Թույլ տվեք ներս հրավիրել պարոններին. ներկայցումն սկսված է:

Անցնում ենք կիսամութ ու մաքուր մեծ սրահով: Դարձյալ բրնձի հոտ: Երկաթե այուներն ու առաստաղի հեծանները հիշեցնում են գործարանի արտադրամաս: Մի ջանել աղջիկ ու մի երիտասարդ, երկուսն էլ ջինսերով, նստած են հատակին ծալապատիկ և փլավ են ուտում: Նրանց դիմացի պատին Հնդկաստանի լայնածավալ քարտեզն է, և աղջիկն ու տղան զբաղված են աշխարհագրությա՞մբ, թե՞ քաղաքականությամբ: Մյուս պատի տակ, սեղանի վրա տեսնում եմ փարիզյան թատրոնների արդեն ծանոթ ծրագրերը և թատերական գրականություն՝ նույն պատկերը, ինչ «Օդեոնի» գրավաճառանոցում: Անցնում ենք փլավի ու ձվածեղի ամանների, գարեջրի, կոկա-կոկայի շողշողուն շշերով զարդարված բուֆետի կողքով, մտնում կիսամութ մի սրահ: Մեր գիմաց հայտնվում են վեց ճերմակաղթեստ, ուսաբորիկ հնդիկներ, ուսերին մի մեծ, փաթաթված գորդ և անաղմուկ, թեթև ու համաշափ վազքով անց-

նում են, գորգը տանելով դեպի բաց, լուսավոր բեմահարթակը։ Կուլիսներում մուտքից առաջ դերասանին հանդիպելն այնքան էլ հարմար բան չէ, բայց պարզվում է, որ այս թատրոնում դա բնական վիճակ է։

Բարձրանում ենք ամֆիթատրոնի վերջին հարկը։ Դաշլիճը լեփ-լեցուն է, լուռ, լուրջ և ուշաղիր։ Գորգի մոտ կանգնած խոսում են կիսամերկ, ճաղատ ու ակնոցավոր Մահամբա Գանդին և իր ծանոթ թասակով, բոլոր կոճակները կոճկած Զավահարլալ նեհրուն։ Ինչ են խոսում, հայտնի չէ, բայց անհնար է չլսել։ Լուսավոր, աղյուսածածկ, մերկ հրապարակում տեղի է ունենում աներեակայելիորեն ճշմարիտ կյանք։ Այլևս ոչ մի Փարիզ։ Սա Հնդկաստանն է։ Արեւոտ երկրի գույնը, ձայնն ու շունչը լցվում է հոգիդ, և աշխարհ է ծնվում, կարծես ծանոթ ու ճշմարիտ և բացարձակորեն արվեստային։

Սա, իհարկե, թատրոնի շենք չէ, այլ օդանավերի նորոգման արտադրամաս, որ հարմարեցված է թատրոնին, ինչպես և թատրոնը՝ իրեն հակոտնյա այս միջավայրին։ Աղյուսածածկ բեմի միակ դեկորը ճերմակ պատն է՝ մի մեծ և մի փոքր դուռով։ Խաղացվում է ժամանակակից ֆրանսուհի թատերագիր Հելլենե Սիսյուի «Ինդիադա» պիեսը, որ վերարտադրում է Գանդիի և Նեհրուի ժամանակի ազատագրական շարժումը՝ ի ջատագովումն արեւելքի երկրների ինքնուրույն ազգային կեցության։ Աշխարհն անպաշտպան է, բաց երկնքի տակ։ Աշխարհի գլխին ծածկ չկա, չկա արարիչ, չկա փրկիչ։ Դրամայի հին հնդկական տեսությունը՝ Բհարաթի «Նաթյաշաստրան» ասում է, թե կյանքում գործում են երեսուներեք մարդկային կրքեր՝ ցափ, գութ, նախանձ, հրաժարում, սեր, զայրույթ, զղջում և այլն։ Այս է աշխարհը։ Մի գորգ, մի ճերմակ ներքնակ, երկու մութաքա ժամանակ առ ժամանակ տանում ու բերում են վեց ճերմակազգեստ, ոտաբորիկ հնդիկները, և բեմում ճառագում է կյանքն իր ամենաբազմազան գույներով։ Պլաստիկան

ոճավորված է և նուրբ, շարժումն ու տոնայնությունն արկելյան, հույզերը ճշմարիտ, առավել քան ճշմարիտ։ Եթե այստեղ դեկոր լինի, լույս ու ստվեր, եթե միջավայրը ներկայանա տեսանելի բնության թեկուզ փոքր մի ակնարկով, կիսաթարվեն մեր գիտակցության մեջ և արվեստը, և կյանքը։ Աշխարհն ու տիեզերքը հնդիկի ինքնաղարձ հայեցողության մեջ են։ Սա պարզ է։ Բայց այս անսպասելի թատերական աշխարհի հեղինակը՝ Արիանա Մնուշկինան ունի մեկ ուրիշ գաղտնիք, որ իրենն է։ Ինչպես է նա ստեղծել կրքի այս անաղմուկ հեղեղը։ Մենք գիտենք՝ ինչ է իմպրովիզացիան կատակերգության մեջ։ Ողբերգական իմպրովիզացիան աներևակայելի է և հանկարծ մտնում է դահլիճ։

— Բարեկամս, — ողբով ու աղաղակով հնդկուհին շարքերն է մտնում մուրացիկ հնդկուհին և խոսում է ֆրանսերենին անգլերեն խառնած, — նայիր ինձ հետ իմ երազների Հինդուստանին…

Արիդագի անունով մուրացիկ կինը, իր հնոտի անկողինը շալակած, պղնձե թեյամանը կողքից կախ շրջում է դաշլիճում, բարձրանում ամֆիթատրոնի աստիճաններով, ողբում ու արտասկում։ Ո՞վ է այս դերասանուհին, որ եկել, կանգնել է դիմացս, ուղիղ աչքերիս է նայում, ճում, արցունք թափում։

Դերասանուհու անունն է Բայա Բելալ։ Բայց որտեղ է թաքնված նրա ֆրանսուհի անձը։ Նայում եմ նրա աչքերին, ինքն էլ սկեռված նայում է ինձ, ու չեմ տեսնում գերասանուհուն։ Սա վերապրում է, ինկարնացիա, յոգիզմի դրամատիկական դրսերում, թե՞ մի այլ բան։ Թվում է, նա եկել է արեւելքի շոդ փողոցներից, և դրսում էլ ոչ թե փարիզյան արվարձանն է, աշնանային անձրեսու գիշեր, այլ արեւելքի կիզիչ արևել։

Ասում են ֆրանսիացի գերասանը հուզական չէ։ Բայց ո՞ւր է թողել Արիանա Մնուշկինան Դիզրոյի «Պարագորս» ու Կոլենի վաղեմի դատողությունները։

Այս թատրոնում դերասանը կալանավորում է հանդիսատեսին իր հուզականության դաշտում, և հնարավոր է, որ նա լինի ներքուստ հանդիսատ, կողմնորոշված ու շրջահայաց: Գիտենք, որ այդպես է: Դերասանը կարող է տակնուվրա անել հանդիսատեսին իր դիտված զգացմունքների ցույցով, զգալ նրա ներկայությունն ու բավականություն ստանալ խաղից: Նկատեցի, որ դերասանուհուն դուք եկավ հանդիսատեսիս վերաբերմունքը, տեսա՝ ինչպես հրճվեց ու հանգստացավ: Իմացա՞վ, թե ոչ, որ ես ավելի շատ իր վարպետությանն էի հետեւում: Նա գնաց բեմ, թիյամանը դրեց կրակին՝ բեմառաջքի խողովակածե լապտերին, նստեց ու խաղաղ ժպիտով սկսեց նայել իմ կողմը, ստեղծելով նոր վիճակ՝ իրականի ու պայմանականի սահմանում:

Այս թատրոնում դերասանն է միջավայր ստեղծում, դատարկ բեմում զգացնել տալով աշխարհի ու բնության ներկայությունը: Լուսային-գեղանկարչական ոչ մի պատրանք, բացի զգեստների ու առարկաների ազգագրական ճշգրտությունից: Բեմ մտավ Արևելքը, արևն այրեց, անձրև եկավ, հեղեղ հոսեց, մարդիկ շոգեցին ու մրսեցին, տառապեցին, ողբացին, երգեցին, կոտորվեցին: Բեմը լցվեց դիակներով: Զահել մի կին սարսոալով տեսավ՝ ինչպես մորթեցին ամուսնուն: Տեսավ նա, ոչ մենք: Կինը դահլիճ էր նայում, և աչքերում երևաց պատկերը: Բեմում սրախողխող եղավ մի մեծ, սե արջ ու մեռավ լուռ ու մունջ: Աշխարհ էր կործանվում: Վշտի ու ողբերգական շփոթմունքի փակուղում փլուզվում էր Գանդիի «տառապանքի ճշմարտությունը», և ինչպե՞ս էին դողում ու ծալվում առաքյալի ծնկները: Հոյակապ էր դերասանը՝ Անդրե Արայան: Աչքիս առջև է նեհրուի դերակատարը՝ ժորժ Բիգոն, արցունքը կոկորդում սեղմած, զուսպ, տառապագին, իմաստալից:

Ներկայացման վերջում ես ծափահարել չկարողացա:

Թվաց, որ շարժում պետք չէ, և ձեռքերս, որ պիտի ծափահարեին, բարձրացան վեր: Դերակատարները նկատեցին: Բայա Բելալը բեմում գտնվողների ուշադրությունը հրավիրում էր տարօրինակ հանդիսատեսի վրա: Այդ հանդիսատեսը փարիզյան չէր, ոչ էլ երևանյան: Մի քանիսը մոտեցան ու սեղմեցին ձեռքս: Եվ չգիտեին, որ այդ տարօրինակ հանդիսատեսը հազիվ յոթ բառ էր հասկացել ներկայացման տեքստից:

Գրիմանոցը բաց էր, ճեմարահի անկյունում, ամֆիթատրոնի աստիճանների տակ: Դերասանները նստած էին խսիրե թախտերին, հանգստանում էին, մեկը սուրճ էր խմում, մյուսը գարեջուր: Ժորժ Բիգոն կանգնած էր, նայում էր դեպի սրահ: Մեր հայացքները հանդիպեցին, երկուսս էլ ժպտացինք: Մոտեցա, սեղմեցի ձեռքը և անհամարձակ անգլերենով ասացի:

— Սա թատրոն չէ, կյանք է: Գիտե՞ք, ես ֆրանսերեն չեմ հասկանում. ինչ է խոսվում բեմում, չգիտեմ, բայց ինձ համար ամեն ինչ հասկանալի է այստեղ:

— Ռուս եք, — հարցրեց:

— Հայ, — ասացի:

— Հա՞յ, — ուրախացավ նա, — սպասեցեք մի ըռպե, բարեկամո, մի ըռպե:

Նա շտապ գնաց գրիմանոցի խորքը և զուսպ ու զգույշ ձայնով կանչեց.

— Միմոն, Միմոն, Աբգարյան...

Եկավ այն դերասանը, որ խաղում էր երեք պարսիկի դեր՝ Հայթիրայ Սեն, Հայաթ խան, Գյաֆար խան և մի մինիստր, թե կոնդրեսմեն: Հիշեցի, թե քանիսին էր բեմում մորթել ու փրթել: Մոտեցավ Միմոն Աբգարյանը, կանգ առավ երկու քայլի վրա, մի տեսակ հապաղեց և ցածր ու վախվորած շշնջաց.

— Հա՞յ եք...

Կանչեցին Աբգարյան Մնուշկինային: Ժպտագեմ, մեղմ ու ամոթիսած կին՝ միջին տարիքի, գրեթե ճերմակած

մազերով, հագուստը սպորտային: Ծանոթացանք:
Ժպտում էր մեղավորի նման, ինչպես բոլոր օժտված
մարդիկ:

Եկան դերասանները, խոսք ու զրույց եղավ մի կես
ժամի չափ: Մնուշկինան՝ այդ հարավային փոթորկի
հեղինակը խոսում էր կարծես ամաչելով ու թաքցնելով
զարմանքը իրեն տրվող տարօրինակ ու այլամերժ հար-
ցերի վրա: Ես չունեի ոչ մի հարց: Եթե գործը հասել է
արվեստի, հարցերն ու դատողություններն ավելորդ են:
Գեղարվեստական ճշմարիտ արժեքի բացատրությունը
երբեմն շատ բարդ է, անհնարին, որքան էլ այդ է մեր
մասնագիտության նպատակը:

Մնում էր ինձ մի խոսք և այդ էլ ասացի.

— Ծափահարությունը, որպես գոհունակության
նշան, թերևս հնացել է: Զեր ստեղծած էմոցիոնալ դաշ-
տում ես մոռացա իմ հանդիսատես լինելը, և ձեռքերս
բարձրացան վեր:

Դրսում օդը խաղաղ էր, խոնավ: Թաց, կիսամութ
ծառուղիով դուրս եկանք ճանապարհ: Ծառերի սև
զանգվածը փակել էր գիշերվա հորիզոնը, և չէր պատ-
կերացվում ոչ մի Փարիզ: Հետաքրքիր է, ի՞նչ տեսք
ունի այստեղ բնությունը օդը ցերեկով, արևի տակ:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ ԿԵՍԳԻՇԵՐԻՆ

Այն ժամին, երբ երևանում մոտ է կեսգիշերը, Փարի-
զում դեռ երեկո է: Եվ ահա այդ ժամին, երբ նոր է
սկսվում Փարիզի գիշերային կյանքը, թատրոն ենք
փնտրում մեծ քաղաքի հարավ-արևմտյան արվարձա-
նում: Կարելի էր գնալ «Կոմեդի ֆրանսեզ»: Այնտեղ
հիմա Մոլիեր է ներկայացվում: Բայց գերազասեցի ան-
ծանոթ թատրոնը՝ «Օրանժերի գե Սո», որ ունի երկրորդ
մի անուն և՝ «Տասներեք քամիների թատրոն»:

Գնում ենք իմաստասիրական զրույց լսելու միջնա-
դարյան դղյակի ջերմոցում, այն էլ կեսգիշերին: Շանա-
պարհը մութ է, թաց, անձրև է մաղում: Երևանում
հիմա կեսգիշեր է, աչքերս փակվում են...

Ինձ արթնացրին.

— Հասել ենք:

Անձրեսու կեսգիշերին ներկայացումն էր պակաս: Մարդիկ ժամանակ են գտել ոգու և բնության հարցը
քննելու: Ուժ գործադրելով բացում եմ աչքերս և
թմրած ու անտրամադիր իջնում ավտոբուսից:

Երկաթե ճաղաշարով մեծ դարպաս, արձաններ, որ
լավ չեն երևում, և դիմացը՝ մթության մեջ սրածայր
գմբեթներով մի շենք: Գոնե ցերեկ լիներ, իմանայինք՝
ուր ենք եկել:

եվ այսպես, առանց բնությունն ու աշխարհը տեսնելու, անցանք թաց ծառերի տակով, մութ, անձրեից ծեծող ընդարձակ մի տարածությամբ ու մտանք մի ոչ մեծ սրահ, անհրապույր ու պաղ: Կլասիցիստական ոճի որմնագարդերը ծածկված են կրի սպիտակ շերտով: Սրահում մարդիկ են հավաքված. կարծես եկել են ինչոր առօրյա գործով և լուրջ ու համբերությամբ սպասում են: Ես արդեն ծանոթ եմ այս պարզ հագնված թատերական հասարակությանը: Փիլիսոփայական զրոյցը կեսդիշերին (ես ապրում եմ Երևանի ժամանակով), իհարկե, ոչ զվարճալիք է, ոչ էլ տոն: Իսկապես, ի՞նչ տոն. տոնն այնտեղ է՝ մեծ քաղաքի լույսերի ծովում: Կարարեներ, «Ֆոլի-Բերժեր», «Մուլեն-Ռուժ», «Լիդո». այնտեղ իսկապես տոն է, և կյանքը թվում է թեթև ու զարդարուն, հոգսը ոչնչացված: Այստեղ սպասվում է մեկ ուրիշ տոն՝ մտքի ու ոգու խնջույք:

Մեզ ընդառաջ եկան մի քանի գերասաններ ու դերասանուհիներ՝ պարզ, անմիջական ու ժպտագեմ մարդիկ: Մի քանիսը քչից-շատից խոսում են ոռւսերեն: Բայց այս առույգ, ժպտագեմ, բարյացակամ ու համակրելի հայացքների առջև հազիվ եմ կարողանում բաց պահել աչքերս: Ես գրեթե քնած եմ ու կարծես երազի մեջ լսում եմ բեմադրող ռեժիսոր ժակ Նիշեին: Հստ նրա պատմածի, ներկայացման բովանդակությունը կազմում է երկու փիլիսոփաների՝ Դիդրոյի և Դ'Ալամբերի վեճը՝ մատերիալիզմի և իդեալիզմի, նյութի և գաղափարի հարաբերության շուրջ: Պիեսը կազմված է Դիդրոյի երեք տրամախոսություններից՝ «Դ'Ալամբերի երազը», «Դ'Ալամբերի զրոյցը Դիդրոյի հետ», «Զրոյցի շարունակությունը»: Սրանք կազմում են բեմադրական մի տեքստ, որ վերնագրված է «Դ'Ալամբերի երազը»: Ժակ Նիշեն ոչինչ չասաց բեմական բովանդակության մասին, և կարելի էր մտածել, թե եկել ենք ոչ թե թատրոն, այլ իմաստասիրական լսարան: Տարակուսանքներս բազմա-

պատկվեցին, կոպերս ավելի ծանրացան, հոգնածությունս ու ձանձրույթս վերածվեցին սրտնեղության:

— Չեմ պատկերացնում, — ասացի, երբ մտնում էինք սրահ, — ի՞նչ բեմադրություն կարող է ստացվել փիլիսոփայական դիալոգից:

— Գրված ամեն մի տեքստ, — առարկեցին ինձ, — կարող է վերածվել ներկայացման:

— Զգիտեմ, — շարունակեցի, — եթե կարող է նպատակ դառնալ ոչ թե միտքը, այլ…

— Ուրեմն, չի՞ կարող միտքը նպատակ դառնալ թատրոնում:

— Կարող է, — ասացի, — եթե միտքը ոչ թե տեքստում է, այլ իրազրության մեջ կամ ծնվում է հանդիսատեսի գլխում, որպես բեմում ներկայացվող վիճակի չնախատեսված արդյունք:

Ինձ հակադրվողը՝ վրաց թատերագիտուհի Իրինա Գոգոբերիձեն, ինչպես նկատեցի, սովոր չէր տրամախոսական դատողության, մտածում էր հայտարարություններով: Ուստի, վեճը շարունակեցի մտքումս: Իմաստասիրական տրամախոսությունը մտքերի հարաբերություն է, ոչ թե վիճակների: Եթե բեմադրողը մտքերի թիկունքում հայտնաբերել է վիճակներ կամ բնավորություններ կամ միտքը վերածել է դրության ու հոգեվիճակի, իմաստ ունի թատրոնի բեմ տեղափոխել փիլիսոփայությունը:

Բեմը ներկայացնում էր կանաչ տախտակամած, առաջին պլանում հարթ, հորիզոնական, երկրորդում՝ թեք, դեպի մութ վարագույրով ծածկված բեմի հայելակամարը (պորտալ): Տախտակամածի երկու կողմերը բաց են, և ջերմոցի բարձր, անվարագույր լուսամուտներից նայում է աշնանային պաղ գիշերը: Տախտակամածի թեք մասում դրված է XVIII դարի մի մահճակալ: Դա միակ դեկորն է: Մահճակալին քնած է փիլիսոփան: Երանելի վիճակ այս կեսդիշերին: Եթե նա ամբողջ ներ-

կայացման ընթացքում այդ դիրքով չի մնալու, թող ինձ զիջի իր տեղը. ես պատրաստ եմ ննջել մինչև լուսաբաց:

Բեմը վատ էր լուսավորված: Զգացվում էր խորին գիշեր: Այդպես էլ սկսվեց ներկայացումը:

Բեմում արտասանվեց երկու, թե երեք նախադասություն, և զգացի, որ անհնար է չհետեւ ենթադրվող գործողության ընթացքին, գործողություն, որը չի արտահայտված ոչ մի տեսանելի էֆեկտով, աչքի համար չէ, այլ հոգու տեսողության: Մոռացա հոգնածությունս, միտքս պայծառացավ, աչքերս բացվեցին, և միանգամից ներսումս հառնեց այն գիտակցությունը, որ մարդկային միտքը իրականության բարձրագույն գոյածն է: Կողքիս նստած դերասանուհին փորձեց թարգմանել, բայց նկատեց, որ բեմից եկող խոսքն ավելի ուշադիր եմ լսում, քան իրեն:

— Դուք քրանսերեն հասկանո՞ւմ եք, — հարցրեց:

— Ոչ, — պատասխանեցի, — ես տոնի մեջ ընկալում եմ իրավիճակը:

Նա մի տեսակ զարմացավ, թաքցրեց զարմանքը, տարակուսեց, չըմբռնելով, թե լեզուն չհասկացող հանդիսատեսն ինչո՞ւ է այդքան ուշադիր լսում իմաստասիրական տրամախոսությունը և ի՞նչն է լսում: Քաղաքավարական պարտավորվածությամբ նա թարգմանեց ևս երկու նախադասություն: Ես խնդրեցի չանհանգստանալ և դարձյալ նկատեցի նրա թաքնված զարմանքը:

— Հետաքրքիր է, հոյակապ է, զարմանալի է ձեր թատրոնը, — շշուկով ասացի նրան:

Մաղմուազելը շոյվեց իմ խոսքերից: Ես նկատեցի, որ ուզում է հասկանալ ինձ ու չի հասկանում: Փորձեցի կարճ բացատրել ներկայացման իմ ըմբռնումը:

— Միտքը մարդու գոյության ձեն է, և մարդը, որքան էլ ցանկանա, չի կարող ազատվել իր էությունը քննելու և ճանաչելու ձգտումից: Փիլիսոփայական

խնդիրները կյանքից դուրս չեն, և մարդը չի կարող դրանք մասնակից չդարձնել իր կենցաղին: Մարդկային կյանքն անհնարին է առանց մտքի, առանց ինքնաճանաչողության ձգտման: Այս է, ըստ իս, այս ներկայացման բովանդակությունը, բեմական գործողության բովանդակությունը: Ես դա տեսնում եմ առանց խոսքային շերտն ըմբռնելու:

Մաղմուազելն զգաց, որ ինձ համար լեզու չարչարելն անօգուտ է, որ ես իմ հարաբերությունն եմ ստեղծել ներկայացման հետ, և բառային կոնկրետ նշանակություններն արժեք չունեն ինձ համար:

Բեմական խոսքն ինձ համար իր իմաստաբանական (սեմանտիկական) շերտով երբեմն հավասար է զրոյի, եթե նրա թիկունքում չկա խոսքից, խոսքային իրավիճակից, բառային նշանակություններից վեր մի իրականություն: Եթե իրադրությունը հասկանալի է առանց լեզվական թարգմանության, եթե իմ ներքին տեսողությունը գործում է չունենալով իր առջև «տեսանելի աշխարհ» ակնարկող ոչ մի առարկա, արտաքին տպագործությամբ ներգործող ոչ մի իրավիճակ, նշանակում է՝ իմ առջև բեմական գործողության ամենամաքուր որակն է՝ թատրոնի լեզուն, այս հասկացության նրբագույն ու խորագույն իմաստով: Ասում են՝ քրանսիսիական թատրոնը խոսքի թատրոն է: Այդպես են ասում և ավանդապաշտները, և նորարարները: Ես դժվարանում եմ համաձայնել այդ սկզբունքի հետ: Ինձ ավելի է տրամադրում ժամանակակից թարրոյի այն հայտարարությունը, որ թատրոնը մարդկային կենդանի վարքագծի արվեստն է: Սա ավելի խորը տեսակետ է, և եթե այս լույսով ըմբռնենք խոսքի սկզբունքը պաշտպանողներին, հակասության մեջ չենք ընկնի: Ֆրանսիական բեմական արվեստի ամբողջ նրբությունն այն է, որ վարքագիծը կարողանում են արտահայտել առանց տեղից շարժվելու, խոսքի տոնայնությամբ: Այս է թերևս նշանակում խոս-

քի թատրոն։ Ֆրանսիական դերասանը մարդկային վարքագիծ է ցույց տալիս, չխախտելով խոսքային գործվածքի ոչ մի թելը, չկորցնելով ոչ մի բառ ու հնչյուն։ Եվ նրան հեշտ է հասկանալ։ Ես այդպես ժամանակին հասկացել եմ Անդրե Բարսակի բեմադրությունները, Մադլեն Ռոբինսոնի հոյակապ խաղը Սարտրի «Փակ դուռ», Ռենարի «Տնական հաց», Կոկտոյի «Մարդկային ձայն» պիեսների բեմադրություններում, որոնցում չկար աչքը զբաղեցնող ոչ մի տեսարան։ մարդիկ խոսում էին, և շարժվում էր ներքին կյանքը, շարժվում էր ողին։ Այդպես ես հասկացա դատախազի մեղադրական ճառը Ռոբեր Օսեյնի բեմադրած «Լիոնի սուրհանդակը» արկածային մելոդրամայում։ Մարդը խոսում էր, հայտնի չէ՝ ինչ բառերով, բայց այնքան հետաքրքիր ու զվարճալի էին խոսողի բնավորությունն ու վիճակը, այնքան կատակերգական նրա խրատական-բարոյախոսական տոնը։ Այո, տոնը որպես վիճակի ու բնավորության դրսերում։ Սա բեմական արտահայտության անհամեմատ բարդ և նուրբ եղանակ է, քան արտաքին շարժումը։

Այս ամենը հասկանալի է և տեսականորեն, և գործնականորեն։ Բայց «Դ'Ալամբերի երազը» պարագոքս է։ Ի՞նչ վիճակ կարող է ստեղծվել փիլիսոփայական տրամախոսության ընթացքում, որի մասնակիցների ոչ թե բնավորությունը, այլ հայացքներն են ինձ ծանոթ։ Ի՞նչ կարող է ասել հանդիսատեսին այն, որ Դիդրոն մատերիալիստ է, իսկ Դ'Ալամբերը անհետեղական իր մատերիալիզմի մեջ։

Այս բեմադրության մեջ կա մի նուրբ հայտնություն, որի մասին թերեւս չի մտածել բեմադրող Ժակ Նիշեն։ Միտքն այստեղ ի հայտ է գալիս որպես վիճակ, տրամադրություն, կյանք։ Այսպես, Դ'Ալամբերի դերակատար Ժակ Էշանտիոնը հոգեպես անհանգիստ է։ Տարակուսանքը իմաստասերին զրկել է հանգստից։ Դ'Ալամբերը ձգտում է ներդաշնակ վիճակի, հանգստության։

Բայց մտքի հակասությունը նրա համար վերածվել է հոգեվիճակի հակասության։

— Դժվար է ընդունել գոյությունը մի էակի, — ասում է նա, — որն առկա է որևէ տեղում և տարածության ոչ մի կետի հետ հաղորդակցություն չունի, մի էակի, որն անտարածական է, բայց տարածություն է գրավում, գտնվում է տարածության յուրաքանչյուր մասի մեջ…

Փիլիսոփայական առումով, սա միտք է, բեմական առումով՝ վիճակ։ Դերասանի դիրքից, շարժումից, նյարդային տոնից, սրված ու խուսափողական հայացքից, տոնի անվստահությունից ու համառությունից զգում եմ, որ իմաստասեր Դ'Ալամբերը փախստականի վիճակում է։ Նա թեպետ նայում է Դիդրոյի դերակատար Մարկ Բերմանի աչքերին, բայց ներքուստ խուսափում է իր ընդդիմախոսի հայացքից։ Սա արդեն ոչ թե ինտելեկտուալ վիճակ է, այլ իռացիոնալ-դրամատիկական։ Այստեղ վերջանում է փիլիսոփայությունը և սկսվում է հոգեբանությունը։ Ինչի՞ց է փախչում Դ'Ալամբերը։ Նա փախչում է այն հակասական հոգեվիճակից, որի մեջ ներքաշվել է ակամա, իրականության այն զգացողությունից, որը հակասում է իր մտքին, այն վիճակից, որը թելադրվում է իրեն, հաղթում է մտքին և խախտում իմաստասերի հոգեկան անդորրը։ Եվ ի՞նչ։ Մարդն ապրում է երազի և իրականության սահմանագծում։ արթուն ժամանակ ձգտում է նինջի ու երազի, քնած ժամանակ՝ արթնության։

Դերասանը և բեմադրողը հանգել են մեծ ճշմարտության, գտել այդ ճշմարտության բեմական-հոգեբանական աղեկվատը։ Ինձ մտքի արժեքը չի զարմացնում, այլ կյանքի անծանոթ շերտի հայտնագործումը թատրոնում։

Իսկապես տարբեր է բեմական Դիդրոյի վիճակը։ Նա տարակուսանք չունի, հանգիստ է ու լավատես, ինչպես առհասարակ մատերիալիստները։ Իր հանգստությամբ

ու առույգ հայացքով նա բառացիորեն գրոհում է տարակուսյալի հոգու վրա: Նա վստահ ու անողորմ հետապնդում է իր «զոհին», անընդհատ որոնում է իր զրուցակցի հայացքը, ուզում է շարժում հաղորդել անշարժությանը:

— Մարմնի ճանապարհից վերացրեք արգելքները, — ասում է Դիդրոն, — և նա կտեղափոխվի: Նույնը կասեմ նաև մեր սեփական մարմնի մասին:

Այս խոսքի հետ դերասանը ետ է մղվում թիկունքով, կարծես հենարան է փնտրում և, չգտնելով այդ հենարանը, թիկունքը գետին է դնում, ոտքերը բարձրացնում և նստում նախկին դիրքով: Մտքի կենտրոնացում և ֆիզիկական բացառիկ ճկունություն: Սա միայն ֆրանսիական բեմում կարելի է տեսնել:

Ի՞նչ կապ ունի սակայն փիլիսոփայական ճշմարտությունը կյանքի ու մարդկային կեցության հետ: Այս ներքին հարցով է բեմ մտնում մաղմուազել Լ'Էսպինասի դերակատարուհին՝ էմանուելա Գրանժեն: Ես չգիտեմ, թե հոգեբանական ինչ ծրագրով է գործում դերասանուհին, բայց նկատում եմ, որ նրա տոնայնության մեջ մի քանի հոգեբանական շերտ կա: Զգիտեմ, դա դերասանական խաղի ակամա^o արդյունքն է, թե՝ մտածածք: Դերասաններ կան, որոնք չեն կարող միապլան վիճակներ ներկայացնել, այսպես կոչված, «բաց խաղի» դիմել: Մաղմուազել Գրանժեն դրանցից է: Նրա արտիստական խառնվածքը, ըստ իս, բարդ է: Նա այն դերասանուհիներից է, որոնք բեմում գործում են կարծես ակամա, առանց նշանակություն տալու իրենց անձին կամ ներկայացվող պերսոնաժի վիճակին: Մաղմուազել Գրանժենի խաղում չկա ոչ մի ջանք, ոչ մի ընդգծում, ոչ մի հավակնություն կամ միտումնավոր շեշտ: Նա հեռու է արտաքին էֆեկտներից, տպավորություն ստեղծելու բոլոր տեսակի ջանքերից: Նա խոսում է, և զգում ես, որ ներքին կյանքն ավելի հարուստ է, և հոսում է այդ

կյանքն ինքնին, խոսքից ու տոնից դուրս: Ներկայացումը փիլիսոփայական է, և թվում է, դերասանուհին պետք է շատ նշանակություն տա արտաքին խոսքին: Բայց բնավ այդպես չէ: Մաղմուազել Գրանժեն չի ձգտում մտածող երևալ, ընդհակառակը՝ կարծես խուսափում է մտքի իրականությունից և այնուամենայնիվ իրեն գտնում է այդ իրականության մեջ: Նա մտածում է ոչ մտածելու համար: Մտածում է, քանզի չի կարող չմտածել:

Ես այժմ թերթում եմ Դիդրոյի երեք տրամախոսությունների հայերեն թարգմանությունը, փորձում եմ տեքստում գտնել էմանուելա Գրանժենի լրադիները և չեմ գտնում: Ըստ տեքստի, մաղմուազել Լ'Էսպինասը հանդես է գալիս անմիջական հնտաքրքրասիրությամբ և հաճույքով ներքաշվում մտքի ոլորտը: Ներկայացման մեջ նա ակամա է հայտնվում այդտեղ: Սա դերասանական նուրբ վճիռ է: Հայտնի է, որ մաղմուազել Լ'Էսպինասը այն սալոնի տիրուհին էր, ուր հանդիպում էին Դիդրոն և Դ'Ալամբերը: Հայտնի է, որ նա ակամա մասնակից է դարձել իմաստասիրական զրույցների և հետագայում ինդրել է Դիդրոյին ոչնչացնել իրենց զրույցների գրառումները: Դիդրոն որպես թե ոչնչացը է: Ներկայացումից ես այն տպավորությունն եմ ստանում (գուցե դա սուբյեկտիվ է), թե այս փաստը դարձել է բեմական վարքագծի մոտիվ բեմադրողի ու դերասանուհու համար: Դիդրոյի տեքստում Լ'Էսպինասը հարցաներ է և ակտիվ, այստեղ՝ ոչ: Ըստ իս, սա ավելի հետաքրքիր վիճակ է խաղային-հոգեբանական առումով:

Ներկայացման գործողության հոսանքում կա նաև չորրորդ գիծը, որ կարծես հավասարակշռում է մտքերի ընթացքը առողջ բանականության հիմքի վրա: Դա բժիշկ Բորդյոն է՝ դերասան Գարբիել Մոնեի կատարմամբ: Նրա համար կյանքը տարրական մասնիկների

շարժում է, մասի և ամբողջի ֆիզիոլոգիական հարաբերությունն: Բժիշկը ոչ մի տարակուսանք չունի, չունի ոչ մի անհանգստացնող միտք և նման է կշեռքի նժարին, որի աջ ու ձախ թեքումից չի փոխվում գործիքի էությունը:

Այսպիսով, ստեղծվել է նոր ու յուրահատուկ դրամատիկական մոդել, իրականության մի տրամաբանություն, որը նորություն է թատրոնում: Կյանքի այս պայմանածեր կարծես ծանոթ է գրականությունից, մշտապես մեր կողքին է ու մեզ հետ, բայց նրա դրամատիկական-թատերական լիցքը կամ պոտենցիալը չէինք նկատել մինչեւ այժմ: Փիլիսոփայական տրամախոսությունը անսպասելիորեն վերածվում է դրամայի, դառնում յուրահատուկ թատերական ունիվերսում: Սա դրամատիկական բոլորովին նոր ձեւի հայտնագործում է: Մարդը մտածելով գոյություն ունի և չի կարող անտարբեր լինել իր գոյաբանության (օնտոլոգիա) գիտակցության հանդեպ: Սա այն միտքն է, որ չկա Դիդրոյի տեքստում, ներկայացման մեջ է հասունանում կամ ակամա ծնվում է հանդիսատեսի գլխում: Եվ ահա, այդ մտքի հասունացման հետ լույսը սկսեց բացվել: Ճերմոցի պատուհանները գարձան բաց թանաքագույն, ապա կաթնագույն, և առավոտյան լույսը ողողեց դերակատարներին ու հանդիսատեսին: Պատրանքն այնքան իրական էր, որ մի պահ նայեցի ժամացույցին: Ժամը տասնմեկն անց էր երեսուն րոպե, Երևանի ժամանակով՝ երկուսն անց երեսուն րոպե: Լույսը բացվելուն դեռ շատ ժամանակ կար: Սա ուրիշ լույս էր՝ թելադրված ներկայացման սիմվոլիկայով: Լույսը թափանցում էր աջ ու ձախ պատուհաններից միաժամանակ և հավասար: Արեւ չի կարող երկու կողմից ծագել: Այս լույսը մարդկային մտքի արթնացումն էր խորհրդանշում:

Ներկայացման վերջում դարձյալ հանդիպեցինք բեմադրող ժակ Նիշեին: Այդ համեստ արտաքինով, իր

պարզ խոսելակերպով ու կեցվածքով ոչինչ թատերային չուշող երիտասարդը աչքիս մեծացել, դարձել էր իմաստուն և ամենակարող: Ես նրան ասացի այն, ինչ մտածել ու մտածում էի իր բեմադրության մասին: Նա լսեց ուշադիր, հանգիստ: Մեր թարգմանչուհին՝ մադմուազել Մարտինեն հիանալի թարգմանում էր, և զրույցը ժակ Նիշեի հետ շատ հեշտ էր:

— Այս ներկայացման ընթացքում, — ասացի ես, — հիշում էի Ռաֆայելի «Աթենական դպրոցը». Պատոնը ցույց է տալիս երկինքը, Արիստոտելը՝ հողը: Չե՞ք մտածել այդ մասին:

— Զեմ մտածել, — ասաց ժակ Նիշեն:

— Իսկ չե՞ք մտածել, — շարունակեցի ես, — բեմադրել Պատոնի դիալոգները: Սոկրատն այնտեղ հետաքրքիր է որպես գեղարվեստական կերպար, դրամատիկական դեմք: «Ապոլոգիան», «Կրիտոնը», «Ֆեդոնը» միասին առնված կազմում են մի ամբողջական ողբերգություն:

— Արեւ թերեւ մտածել այդ մասին, — պատասխանեց ժակ Նիշեն:

Մեր զրույցին միացավ Դիդրոյի գերակատար Մարկ Բերմանը: Ես գրեթե նույն ասացի նրան և ընդգծեցի, որ ամենից ավելի տպավորված եմ էմանուելա Գրանթեի խաղից: Բերմանը նույնպես երիտասարդ է, շատ նման իր ներկայացրած կերպարին: Այնտեղ նա իմաստուն էր, այստեղ առույգ, ժպտադեմ, լավատես և, ինչպես բոլոր ֆրանսիացի գերասանները, համեստ ու անհավակնոտ: Նա նույնիսկ փորձեց պաշտպանվել իմ գովեստից.

— Դուք շոայլ քննադատ եք, — ասաց նա ամոթիսած ժպտով:

— Երեւանում իմ մասին հակառակ կարծիքը կա, — պատասխանեցի ես և ջանացի բերել ամենահամոզիչ փաստարկը: — Հիմա ժամը տասներկուսին մոտ է, Երևանի ժամանակով՝ կեսդիշերն անց: Երբ այստեղ էինք գալիս, աչքերս փակվում էին: Ինձ համար ծանր

Է այս ժամին արթուն լինելը: Բայց ձեր ներկայացումը առաջին իսկ պահից միտքս այնպես պայծառացրեց, ես այնպիսի առույգություն զգացի, ինչպես երբեք չէի զգացել թատրոնում: Նկատի ունեցեք, որ ես ֆրանսերեն չեմ հասկանում և մտքի ընթացքին չեմ հետևել: Բայց ես լսում էի ու ներքուստ հրճվում: Ինչո՞վ բացատրել իմ ուշադրությունը:

Երկուսն էլ ծիծաղեցին: Իմ բերած փաստարկն անառարկելի էր: Խոսքի շարունակության մեջ ժակ նիշեն ավելացրեց.

— Ինդրում եմ ինձ ավելի ճիշտ հասկանալ, չհակադրել թատերական ավանդությանը: Ես ավանդարդիստ չեմ ոչ մի չափով: Ես ժան Վիլարի դպրոցի հետևողդն եմ: Ինձ համար գոյություն ունի հեղինակային տեքստ և դերասան: Այս է իմ հասկացած թատրոնը: Դեկորն ավելորդ եմ համարում: Դուք դեկորի կարիք զգացիք: Չեզ չհամոզեց լուսաբացը...

Ճանապարհը տանում էր մեծ քաղաքի կենտրոն, դեպի գունագեղ լույսերի ծովը: Իսկ լուսաբացին մնում էր դեռ մի քանի ժամ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՆԱՊԱՍՊՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼՈԴՐԱՄԱՆ ՄԻՍՏԵՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ

Տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում. 1988, թիվ 1:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԺԵՔ է

Տպագրվել է «Երեկոյան երևան» թերթում. 1982 թ., հունիսի 7:

Ի՞նչ է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԱՅՍ ԿՈՄԵԴԻԱՆ

Գրվել է 1987 թ. հունիսին: Զի ընդունվել «Սովետական արվեստ» ամսագրում և «Սովետական Հայաստան» թերթում: Տպագրվում է առաջին անգամ:

ԱՆԱՍՎԱԾՈՒԹՅԱՆ ՊՏՈՒԴՆԵՐԸ ԿԱՄ ՄԵՐՈՐՅԱ ՈՂՔԵՐ-ԳՈՒԹՅՈՒՆ

Տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում. 1988 թ., հուլիսի 19:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵԳԱՆԱԳԸ ԹԱՏՐՈՒԻ ԼԵԶՎՈՎ

Տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում, «Սոցիալական հեղնանքը թատրոնի լեզվով» վերտառությամբ. 1983 թ., թիվ 4:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱՄԱՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում «Բարոյական բախում» վերտառությամբ. 1988 թ., մայիսի 7:

ԹԵՄԱԴՐՈՂԸ ԹԱՔՆՎԱԾ ԴԵՐԱՍՍԱՆ Է

Տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում. 1989 թ., թիվ 8:

ՈՐՏԵ՞Ղ Է ՄՈՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԵՏԸ

Տպագրվել է «Սովետական Հայաստան» թերթում. 1990 թ., օդուստոսի 26:

ՈՃԱՎՈՐՎԱԾ ԳՐՈՏԵՍԿ

Տպագրվել է «Բեմ» հանդեսում. 1990 թ., հուլիս-օգոստոս:

ԻՆՉՈՒ ԷՐ ՏԵՌԻՐ ՊԱՐՈՆՅԱՆԸ

Տպագրվել է «Գարուն» ամսագրում. 1988 թ., թիվ 9:

ՍԱԼՈՆԱՅԻՆ ԱՂՄՈՒԿ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅԱՆ ՇՈՒԻՐԸ

Տպագրվել է «Մունետիկ» շաբաթաթերթում. 1990 թ., հոկտեմբերի 6:

ՈՍԿԵ ԹՌՉՈՒՆԸ ԹԱՌԵԼ Է ԿՈՅՈՒՂՈՒ ԽՈՂՈՎԱԿԻՆ

Տպագրվել է «Երկիր» օրաթերթում. 1992 թ., հունիսի 3: Խմբագրությունը, խուսափելով մերժողական կարծիքի պատճինացնելու մեջ՝ հայտնաբերելով այսպիսի պատճինացնելու մեջ առաջարկությունից, հոդվածը տվել է գրախոսության Պ. Զեյթունյանին և վերջինիս ընդդիմաճառը հրապարակել նույն էջում՝ «Զգույշ, ազատություն է» վերնագրով: Հեղինակիս պատասխանը հրապարակվել է նույն թերթի հունիսի 20-ի համարում (տե՛ս այս գրքի 249–254 էջերը):

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏԵՍՔ

Տպագրվել է «Արար» ամսաթերթում. 1995 թ., թիվ 7:

ՔԱՂՔԵՆԻԱԿԱՆ ՄԻՍՏԵՐԻԱ ԳԵՐԵԶՄԱՆՈՅԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Տպագրվել է «Առավոտ» օրաթերթում. 1997 թ., սեպտեմբերի 24:

ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

ՀՐԱՋՅԱՆ ՆԵՐՍԻՄՅԱՆԻ ԴԵՐԱՍՍԱՆԱԿԱՆ ԽԱՐԻՆՎԱՄՄՔԸ

Վերծանված է 1995 թ. նոյեմբերի 12-ին Երևանի Գրականության և արվեստի թանգարանում գերասանի հարյուրամյակին նվիրված ցերեկույթում ունեցած բանագործույթից: Տպագրվել է «Ազգ» օրաթերթում. 1995 թ., դեկտեմբերի 2:

ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆԻ ԴԵՐԱՍՍԱՆԸ. ՎԱՂԻՆԱԿ ՄԱՐԳՈՒՆԻ

Տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում. 1986 թ., 6:

ՈՂԲԵՐԳԱԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Տպագրվել է «Երկիր» օրաթերթում. 1992 թ., հունիսի 17: Երկրորդ ապագրությունը՝ «Ժողովրդական արտիստը» հուշերի գրքում (Երևան, 2003, էջ 32–34):

Շարունակությունը ձայնագրվել է փողոցում, արտիստի մահվան օրը, և տպագրվել «Երկիր» օրաթերթում. 1993 թ., դեկտեմբերի 30:

ՊԱՆՏՈՄԻՄԻ ԴԵՐԱՍՍԱՆՈՒՅՆԻՆ. ՌՈՒԶԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Գրվել է որպես լրագրային հոդված և չի հանձնվել հրապարակման: Համառոտ տարբերակն օգտագործվել է հեղինակիս «Դերասանի արվեստի բնույթը» տեսական աշխատությունում (Երևան, 2002 թ., էջ 279–282):

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԹԱՏՐՈՆԸ

Տպագրվել է հայ-ֆրանսիական “Armion” հանդեսում. 2001 թ., 2:

**ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՏԻՍՏԸ. ՄԻՔԱՅԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
Տպագրվել է «Գարուն» ամսագրում. 2002 թ., 1:**

Հրապարակախոսություն և բանավեճ

**ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՎԱՃԱՌԱՇԱՀՈՒԹՅՈՒՆԸ
Տպագրվել է «Արար» ամսաթերթում. 1998 թ., 1:**

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ RES NULLIUS

Համառոտ տարբերակը (11 էջ) կարդացվել է ՀՀ ԳԱԱ Հումանիտար գիտությունների բաժանմունքի նիստում, 1996 թ. Հոկտեմբերին: Շարադրանքն ընդարձակվել է համաձայն դիտուֆոնային ձայնագրության, որի հիման վրա էլ տեքստ են ներմուծվել ակադ. էդ. Զրբաշյանի ռեպլիկներն ու հարցը:

¹ Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք իմաստասիրականք, Երևան, 1980, էջ 30:

² Р. Ахейм, Искусство и визуальное восприятие, М., 1974, էջ 19:

³ Н. Гартман, Эстетика, М., 1958, էջ 170:

⁴ Խ. Թեոլոյան, Սփյուռքի մեջ (ժող.), Փարիզ, 1980, էջ 255:

⁵ А. Веселовский, Собр. соч., том I, СПБ., 1918, էջ 30:

⁶ И. Кант, էջ 318, 322, 327, 329, 350:

⁷ Նոր բառդիրք հայկագեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, էջ 273:

⁸ В. Виноградов, О теории художественной речи, М., 1974, էջ 28:

⁹ Տե՛ս Ա. Մօլի, Իսկականություն և արվագույնություն, Մ., 1975 թ. 15–94:

¹⁰ Կ. Յոհե, Իսկականություն և արվագույնություն, Մ., 1996, էջ 10:

¹¹ Տե՛ս Գ. Զամելի, Արվագույնություն, Մ., 1996 թ. 294:

¹² Տե՛ս Գ. Շպետ, Թատրոն ու արվագույնություն, Մ., 1922 թ. 1:

¹³ Ս. Յօրսկի, Կոդ արվագույնություն, Մ., 1989 թ. 284–288.

¹⁴ Խ. Թեոլոյան, նշվ. աշխ., էջ 257:

¹⁵ Հմմտ. Հ. Հովհաննիսյան, Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Երևան, 1990, էջ 146–160:

¹⁶ Խ. Թեոլոյան, նշվ. աշխ., էջ 258:

ԹԱՏՐՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԸ

Տպագրվել է «Ար» շաբաթաթերթում. 1993 թ., մայիսի 4:

ԿԱՌՈՒՅԹՅԻ ԿԱՌՈՒՅԹՅԸ

Տպագրվել է «Արար» ամսաթերթում. 1996 թ., 2:

ԳԳՈՒՇԱՑԵՔ ՔԱՂՔԵՆՈՒՅՑ

Տպագրվել է «Երկիր» օրաթերթում (1992 թ., հունիսի 20), որպես պատասխան Պ. Զեյթունյանի «Զգույշ, ազատություն է» իր անհացե հակածառության, որից մի քանի հատված անհրաժեշտ եմ համարում վկայաբերել:

«Հիմա մողայիկ է դարձել վաստակաշատ մարդկանց գանակոծումը, մամուլի կարճամիտ ու անհեռատես արշագինքը նրանց դեմ <...> կարծես հանրահայտ արվեստագետի, գիտնականի կամ առհասարակ մտավորականի դեմ վարկագիրիչ հոդված գրելով, ինքդ էլ գոնե մի փոքր բարձրանում ես նրա աստիճանին: <...> ինչո՞ւ եք մոռանում, ո՞վ է ձեզ իրավունք տվել մոռանալու, թե ով է ձեր առաջ: Խոչոր մի իրավունք տվել մոռանալու, թե ով է ձեր առաջ: Խոչոր մի առաջատականություն (Խորեն Աբրահամյանը – Հ.Հ.), մեր արվեստի հպարտություններից մեկը <...> մայիս ամսին (մեկ առաջի առաջ – Հ.Հ.) թատրոնը, հակառակի պես, «անժամանակ» հաջողություն ունեցավ՝ ցուցադրելով իրենի «Դոկտորնական» հաջողությունը: Հոյակապ մի ներկայացում, նորովի ընթերցված, Ստոկմանը»: Հոյակապ մի ներկայացում, նորովի ընթերցված, նորովի բեմադրված և մանավանդ գլխավոր դերակատարի՝ նորեն Աբրահամյանի փայլուն դերակատարմամբ: Ես դարձյալ առիթ եմ ունեցել գրելու, որ անգլիական «Գարդիան» թերթը ոչ «Պրավդա» է, ոչ էլ «Ռաբոչայա տրիբունա», աշխարհի ամենահեղինակավոր թերթերից մեկն է: Եվ աշխարհի այդ ամենահեղինակավոր թերթերից մեկը ոչ թե սովորական գովեստով արտահայտվեց իրենի հայրենիք՝ նորվեգիա հյուրախաղերի մեկնած սունդուկյանցիների այս նոր ներկայացրախաղերի մեկնած սունդուկյանցիների այս նոր ներկայացման առթիվ, այլ գերադրական աստիճանի հասնող բուռն

Հիացումով: Իսկ մեր հայրենական մամուլը, նախքան «Գարդիանի» հոգվածի արտառապումը հայերեն՝, ընդգծումն իմն է – Հ.Հ.) անպարկեցտ ծաղրանքով անփստահություն արտահայտեց հայ թատրոնի ցնցող հաջողության մասին: <...> որևէ ուրիշ ժողովուրդ իրեն երբեմից թույլ կտա՞ր նման անպատկառ վերաբերմունք իր իսկ հաջողության հանդեպ: <...> Ցավում եմ, շատ եմ ցավում, որ այսօր տվյալ հարցում ես անդիացիների կողմն եմ և ոչ թե իմ հայրենակիցների» («Երկիր», 1992, 3 հունիսի):

Ակնհայտ իրողությունն այն է, որ իմ «անպարկեցտ» ու «անպատկառ վերաբերմունք» հրապարակ է եկել օրաթերթի նույն համարում և նույն էջում՝ ընդդիմախոսիս ելույթի հետ միասին, այն է ոչ «նախքան «Գարդիանի» հոգվածի արտատպումը», ինչպես ցանկացել է տեսնել ընդդիմախոսս, այլ դրանից հետո: Մարդը ծանոթացել է խմբագրություն հանձնված հոգվածին ու մոռացել, որ շաբաթն ուրբաթից հետո է:

ՈՎ Է ՓԱԿԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ

Տպագրվել է «Ազգ» օրաթերթում. 1996 թ. փետրվարի 14:

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՄԻ ԽՐԱՏԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ

Տպագրվել է «Լրագիր-օր» օրաթերթում (1996 թ., մայիսի 2) ի պատասխան Լևոն Հախվերդյանի «Զի կարելի, ոչ մի դեպքում չի կարելի» հոգվածի («Ազգ», 1996 թ., ապրիլի 4): Ընդդիմախոսս մի թեթև համաձայն է ինձ հետ. «Մի քանում Հ. Հովհաննիսյանը միանգամայն իրավացի է. թատրոնի անկումը միանգամից չէ, որ կատարվեց. քայլքայման ու անկման նախանշանները երևում էին շատ տարիներ առաջ: Եվ դրանք պարզ նկատվել ու նշվել են ոչ միայն հիմա, այլ հենց նույն այդ տարիներին»: Իսկ բուն անկումը Լ. Հախվերդյանը բացատրում է Խորեն Աբրահամյանի «անհանդուրժող, արվեստակիցներին հեռու վանող, եսապաշտ ու եսակենտրոն ընավորությամբ» և եզրակացնում. «Խորեն Աբրահամյանը չէր կարող երազել ավելի անձնազո՞չ մի դատապաշտպան, քան թատերագետ Հ. Հովհաննիսյանն է»: Խնդիրը տեղափոխելով անձնական պայքարի ասպարեզ, Հախվերդյանը ջանում է

պարզել իմ մեկնահիմքը և հարց է տալիս. «Ի՞նչն է պատճառը... գեղագիտական կուրությո՞ւնը, պարզ չկամությո՞ւնը (՞ – Հ.Հ.), ժամանակակից թատրոնի թյուր ըմբռնո՞ւմը, թե՞ մի ուրիշ բան (պատճառն անհնար է գտնել)»: Հարց է տալիս և շրջանցելով իմ Հրապարակված պատասխանը, վերահրատարակում է իր հոգվածը Բեյրութում («Մենք և մեր ժամանակը», 1996, էջ 120–125), այնուհետև՝ նույնությամբ երրորդ անգամ («Մենք և մեր դժվար օրերը», Երևան, 2000, էջ 117–124):

2050 – ԿԵՂԾ ՀՈԲԵԼՅԱՆ ԵՎ ՇԻՆԾՈՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթում. 1998 թ., հունվարի 21:

ՀՈՒՉԱՊՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴԸ. ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆ

Տպագրվել է «Հայություն» ամսաթերթում (1996 թ., օգոստոս, սեպտեմբեր. 5–6), այնուհետև՝ Լ. Հախվերդյանի կազմած «Վարդան Աճեմյանը ժամանակակիցների հուշերում» գրքում (Երևան, 1997 թ., էջ 235–265) խմբագրական քմահաճ միջամտություններով: Աֆեկտիվ գործողությունների մասին իմ տեսակետը, նոր տողից չերպելով, վերագրվել է Աճեմյանին (էջ 243), իսկ «Մառերը կանգնած են մահանում» պիեսի գործող անձ Մառուրիսիո անունը հոլովելով (Մառուրիսիոյի) ընդունվել է որպես պիեսի հեղինակի անուն (էջ 254): Խմբագիրը, ոմն Ս. Հայրապետյան՝ թատրոնից ու թատերագիտությունից հեռու մարդ, անուշադիր է թողել հեղինակիս ուղղումները:

ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻ ԴՊՐՈՑԸ

Համառոտ տարբերակը գետեղված է հեղինակիս «Թատրոն. Հին և նոր արժեքներ» գրքում (Երևան, 1986, էջ 162–184): Վերահրատարակում է որոշ հավելումներով:

ԻՆՉԻՑ է ՍԿՍՎՈՒՄ ԴԵՐԱՍԱՆԻ ԱՐՎԵՍՏԸ. «ՓՈՔՐ» ԴԵՐ

Շարունակությունն է նախորդ ակնարկի: Առանձին չի տպագրվել: Օգտագործվել է հեղինակիս «Դերասանի արվեստի բնույթը» աշխատությունում (Էջ 147–150):

ԿՐԿԵՍԸ ԴՐԱՄԱ է, ԻՐԱԿԱՆ ԴՐԱՄԱ

Կերծանված է դիկտոֆոնային ձայնագրությունից: Առանձին չի տպագրվել: Օգտագործվել է «Դերասանի արվեստի բնույթը» աշխատությունում (Էջ 121–125, 132–134):

«ՄԻԵԴՐԻՌՈՒՆԻ»

Տպագրվել է «Ար» շաբաթաթերթում «Ճերմակ ճիավորի առասպելը կամ զրույց գողական թեմաներով» վերնագրով: 1993 թ., Հուլիսի 6: Վերահրատարակվում է կրճատումներով:

Փարիզյան Էջեր

ՄՈՒՏՔ ԵՎ «ԿՈՄԵԴԻ ՖՐԱՆՍԵԶ»

Տպագրվել է «Գարուն» ամսագրում «Փարիզյան Էսքիզներ» վերնագրով: 1988 թ., 5, Էջ 65–71:

«ԼԻՌՆԻ ՄՈՒՐՃԱՆ ԴԱԿԻ ԳՈՐԾԸ»

Տպագրվել է «Գարուն» ամսագրում «Փարիզյան Էսքիզներ» վերնագրով: 1988 թ., 5, Էջ 65–71:

«ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ» ԼԱՏԻՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

Գրվել է 1987 թ., ներկայացվել «Սովետական արվեստ» ամսագրի Խմբագրություն և մերժվել բանավոր պատճառաբանությամբ: «Հի համապատասխանում մեր գաղափարախոսությանը»: «Հոդվածը, թե՞ ներկայացումը», – հարցրել եմ: «Ներկայացումը և քո չեղոքությունը», – պատասխանել է պատասխանատու քարտուղարը: Վեց տարի անց՝ 1993-ին տպագրվել է «Արար» ամսաթերթում (թիվ 2–3):

ԱՎԱՆԳԱՐԴԻՍԸ

Ծոցատերի գրառում է (1987 թ., դեկտեմբերի 2): Տպագրվում է առաջին անգամ:

ԱՐԵՎԱԹԻՆ ԹԱՏՐՈՆ

Ծոցատերի գրառում (1987 թ., դեկտեմբերի 23): Տպագրվել է «Սովետական արվեստ» ամսագրում: 1988 թ., 8:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ ԿԵՍԳԻՇԵՐԻՆ

Տպագրվել է «Գարուն» ամսագրում: 1989 թ., 2:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	5
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ	7
ՄԵԼՈԴՐԱՄԱՆ միստերիայի սահմանադին	9
Ճշմարտությունը արժեք է	18
Ի՞նչ է նշանակում այս կոմեդիան	24
Անաստվածության պառուղները կամ	
մերօրյա ողբերգություն	29
Քաղաքական հեգնանքը թատրոնի լեզվով	36
Քաղաքական դրաման պատանեկան թատրոնում	45
Բեմադրողը թաքնված դերասան է	51
Որտե՞ղ է մոռացության գետը	59
Ոճավորված գրոտեսկ	68
Ինչու էր տիսուր Պարոնյանը	73
Սալոնային աղմուկ Պարոնյանի	
կատակերգության շուրջ	81
Ոսկե թուչունը թառել է կոյուղու խողովակին	88
Գեղարվեստական ճշմարտություն, թե՝	
ապրանքային տեսք	94
Քաղքենիական միստերիա գերեզմանոցային	
եղանակով	103

ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ	109
Հրաչյա Ներսիսյանի դերասանական խառնվածքը	111
Բնավորությունների թատրոնի դերասանը.	
Վաղինակ Մարգունի	117
Ողբերգա-կատակերգական Մհեր Մկրտչյանը	127
Պանտոմիմի դերասանուհին. Ռուգան Հակոբյան	133
Վարդան Պետրոսյանի թատրոնը	139
Անցման շրջանի արտիստը. Միքայել Պողոսյան	148
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՎԵՃ	171
Արվեստը և վաճառաշահությունը	173
Արվեստագիտությունը՝ <i>res nullius</i>	181
Թատրոնը և ազգը	201
Կառույցի կառույցը	214
Զգուշացեք քաղքենուց	222
2050 – կեղծ հոբելյան և շինծու	
Հայրենասիրություն	228
Ով է փակել ազգային թատրոնը	236
Ի պատասխան մի խրատական գրության	244
ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ	251
Թատրոնի մարդը. Վարդան Աճեմյան	253
Արմեն Գուլակյանի դպրոցը	302
Ինգից է սկսվում դերասանի արվեստը.	
«Փոքր» գեր	336
Կրկեսը ամենաիրական դրաման է	351
«Մխեղը իոնի»	363
ՓԱՐԻԶՅԱՆ ԷՃԵՐ	373
Մուտք	375
«Կոմեդի Ֆրանսեղ»	379
«Լիոնի սուրհանդակի գործը»	390

«Վենետիկի վաճառականը» լատինական	
թաղամասում.....	394
Ավանդարդիստը	406
Արևային թատրոն	416
Իմաստափրական զրույց կեսպիշերին	423
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	435

Հովհաննիսյան Հ.
Հ 854 Թատրոն և թատերախոսություն
– Եր.: Սարգիս Խաչենց, 2004 – 447 էջ

Ժողովածուն ընդգրկում է հեղինակի հիմնականում վերջին մեկուն կես տասնամյակում հրապարակած հոդվածները, նաև որոշ անտիպ նյութեր, հուշագրական ակնարկներ՝ ընդհանուր թեմատիկ հարցադրումով. ինչ է թատրոնը որպես անձի հրապարակային ներկայության արվեստ, հասարակական գիտակցության դրասորում, մտածողություն և խաղ. Ծոշափվում են բնեմական արվեստի տարրեր ոլորտներ՝ դրամա, էստրադա, կրկես, ստուդիական փորձ և այլն: Այս գիրքը յուրահատուկ ամփոփումն է հեղինակի թատերական գեղագիտության:

Հ 4907000000
849(01) - 2004

ԳՄԴ 85. 33

Սարգիս Խաչենց հրատարակչություն ՍՊԸ
375010, Երևան, Արամի փ. 1, Ազգային պատկերասրան
հեռ./ֆաք. (374 1) 56-36-61, e-mail: skhach@nga.sci.am

Համակարգչային շարվածք՝ Սամվել Խաչատրյան
Համակարգչային էջադրում՝ Անժելա Մանուկյան

Սարգիս Խաչենց հրատարակչության տպարան
375010, Երևան, Արամի փ. 1, Ազգային պատկերասրան
Հեռ. 58-27-03

Տպարանի վարիչ՝ Արթուր Բաբայան
Տպագրիչ՝ Սերգեյ Շոշանյան
Կազմարարներ՝ Լուսիկ Բալասանյան,
Լիդա Ցականյան, Վարդուհի Ավետիսյան
Սոնյա Վարդանյան